



Գ.Մ ՊՐԵՏՐՈՒՅՅՈ.

ՀԱՅ ԵՎ ՎՐԱՅ  
ՃԱՄԿՈՒՐՔԵՐԻ  
ՀԱՅԱԼՐԴԱՆՑՈՅՑՈՒՆ  
ՇԶՈՒՏԻՎՈՒՆ  
ՊԵՍՏԱԿԱՐԱԿՈՒՆ  
ՊԱՅԱՄՈՒՆ









ՀԱՅԱՍՏԱՆԻ  
Ազգային  
Գրադարան

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР  
ИНСТИТУТ ИСТОРИИ

В. М. МАРТИРОСЯН

СОТРУДНИЧЕСТВО  
АРМЯНСКОГО И ГРУЗИНСКОГО НАРОДОВ  
В ОСВОБОДИТЕЛЬНОЙ БОРЬБЕ

(20-е ГОДЫ XVIII ВЕКА)

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР  
ЕРЕВАН

1971

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԽԱՏԻՏՈՒՏ

Վ. Մ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՅԱՅ ԵՎ ՎՐԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ  
ՅԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ  
ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐՈՒՄ

(XVIII դ.ս.բի 20-Ական թվականներ)

A 11329



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿ ՀՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ

1971

Աշխատությունը նվիրված է հայ և վրաց ժողովուրդների պատմության առավել ուշագրավ ժամանակաշրջաններից մեկին, երբ այդ ժողովուրդները, Ծոսաստանի գալիք օգնությունից գոտեանդած, պալքարի ելան պարսիկ բռնակալների ու թուրք զավթիչների դեմ:

Աշխատությունը դրված է արխիվային և այլ բնույթի նյութերի հիման վրա: Հեղինակը լուսաբանել է հայ և վրաց ժողովուրդների համագործակցության պատմությունը աղատազրական պայքարում, ինչպես և շարադրել Ծոսաստանի քաղաքականությունը Անդրկովկասի նկատմամբ:

Աշխատությունը նվիրված է հայ և վրաց ժողովուրդների պատմության առավել ուշագրավ ժամանակաշրջաններից մեկին, երբ այդ ժողովուրդները, Ռուսաստանի դալիք օգնությունից գոտեալիքած, պայքարի ելան պարսիկ բռնակալների ու թուրք զավթիչների դեմ:

Աշխատությունը զրված է արխիտեկտոնի և այլ բնույթի նյութերի հիման վրա: Հեղինակը լուսաբանել է հայ և վրաց ժողովուրդների համագործակցության պատմությունը աղատազրական պայքարում, ինչպես և շարադրել Ռուսաստանի քաղաքականությունը Անդրկովկասի նկատմամբ:

XVIII դարի 20-ական թվականները առանձնահատուկ տեղ են գրավում Անդրկովկասի ժողովուրդների պատմուրյան մեջ: Այդ մի ժամանակաշրջան էր, երբ հայ և վրացի եղբայրական ժողովուրդները ելել էին ազատագրական պայքարի պարսկական բռնակալների և բուրք զավթիչների դեմ՝ ապավիճած Ռուսաստանի ռազմա-քաղաքական գալիք օգնուրյանը:

Պետրոս 1-ինի պարսկական արշավանդի օրերին Հայաստանում և Վրաստանում բռնկված համաժողովրդական ազստամբուրժյուններն ու տասնամյա համառ կոլիվները պայծառ էշեր են Անդրկովկասի ժողովուրդների կողմից բուրք-պարսկական տիրապետուրյան դեմ մղած պայքարի տարեգրուրյան մեջ:

Ներկա ուսումնասիրուրյան նպատակն է ուսվագծել XVIII դարի սկզբներին Անդրկովկասում տիրող իրադրուրյունը, վեր հանել տնաեսական և քաղաքական նպատակները, պատճառներն ու շարժառիրները, որոնցով պայմանավորված էր ռուսական կառավարուրյան ժաղաքականուրյունը Մերձավոր Արևելքում և, մասնավորապես, Անդրկովկասում: Աշխատուրյան մեջ փորձել ենք բացահայտել այն պատճառները, որոնք դրդում էին Ռուսաստանին և Անդրկովկասի ժողովուրդներին գտնելու ռազմա-քաղաքական համագործակցության եզրեր, աշխատել ենք ցույց տալ նիշյալ ռազմա-քաղաքական համագործակցության նաևապարհին ընկած խոշնդուտներն ու անբարենպատ հանգամանքները, որոնք այդ ժամանակ խանգարեցին հայ և վրացի ժողովուրդներին ձերբագատվելու բուրք-պարսկական լծից:

Անդրկովկասի ժողովուրդների այս ժամանակաշրջանի պատմության կարևոր առանձնահատկություններից մեկը օտարերկրյա նվաճողներին նրանց ցույց տված համատեղ դիմադրությունն է, ուզմա-քաղաքական միասնությունը: Բախտակից ժողովուրդների ազատագրական պայքարի այս բնորոշ կողմը ցարդ հատուկ ուսումնասիրության չի արժանացել, քեզ դրա գիտա-քաղաքական անհրաժեշտությունը կասկածից վեր է:

Սույն աշխատությունը մի համեստ փորձ է լրացնելու այլ բացը:



ԴՐԱԽԹՅՈՒՆՆ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ  
XVIII ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՔԱՌՈՐԴՈՒՄ

XVIII դարի առաջին քառորդում Արևելյան Անդրկովկասը գտնվում էր պարսկական տիրապետության ներքո: Վրաստանը ֆեոդալական-ճորտատիրական երկիր էր՝ մասնաւված առանձին թագավորական-իշխանական տների, միհանգամանք, որը պայմանավորված էր երկրի սոցիալ-տընտեսական վիճակով: Արևելյան Հայաստանը բաժանված էր առանձին խանությունների՝ Երևանի, Նախիջեանի և Ղարաբաղի:

Արևելյան Անդրկովկասի սոցիալ-տնտեսական զարգացումը խոշնուառող պատճառներից մեկը XIII—XV դարերում թուրք և պարսիկ զավթիչների գերիշխանությունն էր, զավթիչներ, որոնք ֆեոդալիզմի զարգացման առավել ցածր աստիճանի վրա էին գտնվում, քան Հայաստանը և Վրաստանը: Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը բաղմիցս նշել են այն հանգամանքը, որ բարբարոսական ներխուժումները կարող են

քայլքայել որևէ երկրի զարգացած արտադրողական ուժերը և հարկադրել վերսկսել ամեն ինչ նորից<sup>1</sup>:

Արևելյան Անդրկովկասում թուրք-պարսկական տիրապետության հաստատումը ուղեկցվել է երկարատև պատերազմներով, որոնք ծանր են նստել տեղի ժողովուրդների վրա: XVI դարից սկսած Հայաստանը, Վրաստանը և Աղբեցանը Պարսկաստանի և Թուրքիայի կատաղի պայքարի թատերաբեմ էին դարձել: Այդ պետությունները ձգտում էին տիրել Անդրկովկասը և Հայաստակեցնել տեղի ժողովուրդներին: XVI դարի կեսերին Թուրքիան և Պարսկաստանը Անդրկովկասը բաժանեցին միմյանց միջև:

1555 թ. Թուրք-պարսկական պայմանադրի համաձայն, Քարթլին, Կախեթը, Սամցխե-Սաաթաբեզոյի մեծ մասը, ինչպես և Արևելյան Հայաստանը՝ Արարատյան գաշտավայրը, Սյունիքն ու Արցախը անցան Իրանին, իսկ իմերեթիայի թագավորությունը, Դորիայի և Մինդրելիայի իշխանությունները և Արևմտյան Հայաստանը՝ Թուրքիային:

Սակայն Անդրկովկասի ազատասեր ժողովուրդները Հաշտվեցին օտար տիրապետության հետ և առաջին իսկ օրից հերոսաբար պայքարում էին իրենց ազատության համար: Դրան դեմ հանդիման թուրք-պարսկական իշխանությունները սկզբից ենթ գործում էին համատեղ և չնայած նրանց միջև հղած հակամարտություններին, միմյանց օգնության էին դալիս՝ Անդրկովկասի ժողովուրդներին հնագանդեցնելու համար:

<sup>1</sup> Տե՛ս Կ. Մարկս և Փ. Էնգելը, Ըստ., տ. 3, Մ., 1955, стр. 54.

1555 թվականի Հաշտությունից հետո էլ մի քանի անդամ բռնկվեցին թուրք-պարսկական պատերազմներ՝ Անդրկովկասը տիրելու նպատակով. ի վերջո 1639 թ. Թուրքիան և Պարսկաստանը Հաշտություն կնքեցին և կրկին բաժանեցին Անդրկովկասը. Արևմտյան Հայաստանը, Արևելյան և Հարավային Վրաստանը բաժին ընկան Թուրքիային, իսկ Արևելյան Վրաստանը և Արևելյան Հայաստանը, Աղբեջանը և Դաղստանը՝ Իրանին: Օտար նվաճողները, սակայն, պարզորոշ կերպով զգում էին, որ փոխադարձ համաձայնություն կնքելը դեռևս չի նշանակում այս երկրներում ազատորեն իշխել, քանզի Անդրկովկասի ժողովուրդները պայքարում էին ազատության և անկախության համար: Իրենց տիրապետությունը պահպանելու համար նրանք զիմում էին վայրագ միջոցների: Բնակչության ֆիզիկական բնաջնջումը, հայրենիքից ժողովուրդների զանդվածային տեղահանումը, քաղաքների և զյուղերի ավարառումը, այսինքն ոչնչացումը, կուլտուրայի հուշարձանների ավերումը, օտար սովորույթների, նիստուկացի պարտազրումը, բռնի կրոնափոխությունները, շխոսելով այլևս ծանր հարկերի մասին, որ զրվում էին նվաճված երկրների վրա,— առա այն միջոցները, որոնցով նվաճողները ձգտում էին հպատակության մեջ պահել Անդրկովկասի ժողովուրդներին:

Պարսից տիրապետողները Վրաստանում կենտրոնական իշխանությունը թուլացնելու նպատակով հովանավորում էին ֆեոդալական երկպառակությունները և ջլատում երկրի դիմադրի ուժերը: Նրանց կողմից հովանավորվող ֆեոդալները վրաց թագավորների համար անձեռնմխելի էին դառնում և ծառայում հայրենիքի զալթիշների բռնատիրության ամրապնդմանը: Ինչ վերաբերում է Արևելյան Հայաստանին, ապա

այստեղ վազուց վերացված էր աղքային պետականությունը, և այդ երկիրը կառավարում էին պարսից շահի կողմից նշանակված խանիրն ու բեղլերեգերը:

Օտար տիրապետությունը, միջֆեոդալական կոխվները, ծանր հարկերը, կամայականությունները, կողոպուտն ու անմարդկային շահագործումը, աղքային և կրօնական հալածանքներն ու բոնությունները Անդրկովկասում անհնար էին դարձնում արտադրողական ուժերի բավարար զարգացումը: Իշխում էր բնատնտեսությունը: Խոկ սա խանգարում էր առեւտրա-արհեստավորական տարրերի կաղմավորմանը և հղուրացմանը, որոնց զարգացումը կիսթաներ այդ երկրների տնտեսական առաջընթացը և կնպաստեր պետական միասնության ստեղծմանը: Վրաստանի սոցիալ-տնտեսական կյանքի հետամնացության համոզիչ օրինակ էր կիսաանկախի իշխանությունների՝ թավագությունների սիստեմի հաղթանակը, որը վերջնականապես ձևավորվեց XV դարի վերջերին և իր գոյությունը պահպանեց մինչև XIX դարի սկիզբը: Երկրի կենտրոնաձիգ ուժերը պարտվել էին: Դա ֆեոդալական ուղակցիայի հաղթանակն էր, որի հետևանքը եղավ Վրաստանի քաղաքական մասնատվածությունը: Սակայն չէր դադարել պայքարը ֆեոդալական մասնատվածության դեմ՝ հանուն երկրի պետական միասնության վերականգնման: Վրաստանի առաջադիմ գործիչները լավ էին հասկանում, որ ֆեոդալների իշխանությունը մեծ վնաս էր հասցնում երկրին: Կանչայեթի ճաշոցի XVIII դարի առաջին կեսին վերաբերող հիշատակարանում ընդգծվում է, որ ֆեոդալական երկարակությունները մեծապես վնասում էին հայրենիքին: Հիշատակարանում ասված է. «Մուխրանի իշխանը, Արագվայի, Քսանի էրիս-

թավները (իմա իշխանները—Վ.), Ամիլախվարը, սրանք էլ միմյանց թշնամի և քինախնդիր էին: Ոչ միմյանց էին հանգիստ տալիս և ոչ էլ երկրին, և այդ իսկ պատճառով թշնամին ավելի ուժեղացավ և երկիրն ավերեց, այլապես, եթե սրանք միասիրտ լինեին, թշնամին ոչինչ չէր կարող անել, ոչ էլ մի ուրիշ թշնամի կկարողանար որևէ բան զավթել<sup>2</sup>:

Անդրկովկասի ազատազրական պայքարի գոծիշները շանում էին համախմբել եղբայրական ժողովուրդների ընդ-վրզումները օտար զավթիշների դեմ, սակայն այս ամենը բավարար չէր թշնամու դեմ վճռական ու վերջնական հաղթանակ տանելու համար: Անձրաժեշտ էր հուսալի և հզոր դաշնակից, որը շահագրգոված լիներ պայքարելու Անդրկովկասի ժողովուրդների թշնամիների դեմ և ի վիճակի լիներ օգնելու այդ ժողովուրդներին: Հայաստանը և Վրաստանը քանից մորձել էին այզպիսի օգնություն ստանալ արևմտաեվրոպական պետություններից: Այդ նպատակով հայ և վրաց քաղաքական գործիշները բանակցություններ էին վարել Հռոմի պատի, Խոպանիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի միապետների հետ, սակայն այս պետությունները շարդարացրին նրանց հույսերը: Բանակցությունների ընթացքում պարզվել էին, որ արևմտաեվրոպական պետությունները ամենենին էլ շահագրգոված չէին Անդրկովկասի ժողովուրդներին ազատագրելու գործով: Ավելին, նրանց համար ձեռնտու էր Անդրկով-

<sup>2</sup> Сборник материалов для описания местностей и племен Кавказа, вып. XXIX, 1901, стр. 135—136, Е. Такаишвили, Канчаетский „Жам-гулани“ и исторические приписки его кинклоса. Տե՛ս նաև Ճ. Ճառշամբարյան, Խոյստ-Սայարտցելով շրոտոյթուածու ուժուածուածու, Թիֆլիս, 1960, զ. 42.

կասում ստեղծված դրության պահպանումը։ Նրանք ձգտում էին համաձայնության գալ թուրքական և պարսկական կառավարությունների հետ և զրանով իսկ ձեռք բերել Արևելքում շահավետ տնտեսական գործարքներ կատարելու իրավունք։

Անգրկովկասի ժողովուրդները արդեն XVII դարի վերջերին և XVIII դարի սկզբներին համովում են, որ ազատագրական պայքարում իրենց իսկական դաշնակիցը կարող է լինել միմիայն Ռուսաստանը, որի քաղաքական նկրտումները համընկնում էին Հայ և վրաց ժողովուրդների պայքարի հետ ընդում թուրք-պարսկական տիրապետության։ Ուստի Հայու վրացի առաջադեմ քաղաքական գործիչները ուղիներ էին որոնում Ռուսաստանի հետ դաշնակցելու համար։

Հարցուրամյակների պատմություն ունեն Հայ-ռուսական և վրաց-ռուսական կապերը։ Հին դարերի խորքերից է ակունք առնում Հայ-վրացական համագործակցությունը։ Վրաստանի քաղաքական գործիչները սկզբից ենթ պատշաճորհն դնահատեցին Մոսկովյան պետության հզորացումը և ի դեմս նրան տեսան իրական դաշնակցին։ Ռուսաստանի քաղաքական շահերի և Վրաստանի քաղաքական ձգտումների համընկնման արդյունքն էր XVI դ. 80-ական թվականներին (1585—1589 թթ.) կնքված դաշնագիրը սուսաց թագավոր Ֆեոդորի և Կախեթի թագավոր Ալեքսանդրի միջև։ Վրաստանի գործիչները Ռուսաստանի հետ մշակեցին թուրք-պարսկական լծից ազա-

<sup>3</sup>Տե՛ս Ե. ծ ց թ ց օ լ լ օ, Խոյսետ-Սայա՞րտցըլու յո՞րտօյ՞րտօնօն օսტոռոնօդան XVI—XVII և այլ տարբերակներ։ Թագավորական մասաւորության մասին պատմություններ, Երևան, 1944.

տագրվելու համատեղ պայքարի ծրագիր. սակայն իրականացնել այն հնարավոր չեղավ:

Պարսիկ և թուրք նվաճողները, որոնք Անդրկովկասի ժողովուրդներին կամենում էին ստրկացնել, ամեն կերպ ձգտում էին թուզ շտալ այդ երկրների մերձեցումը Ռուսաստանի հետ: XVII դարում նրանք սաստկացրին իրենց բռնությունները Անդրկովկասում, որի ժողովուրդները հերոսական պայքար էին մղում թշնամու դեմ: Օրինակ, XVI դարի վերջին և XVII դարի առաջին կեսին օտարերկրյա նվաճողների դեմ հսանգուն պայքար էր սկսել Կախեթի թագավորությունը, որը ձգտում էր դաշն կնքել Ռուսաստանի հետ: Ի հակագիռ դրան պարսից շահը փորձեց վերջնականապես ավերել Վրաստանը: Շահ Աբաս 1-ինի բարբարոսական ծրագիրը նախատեսում էր Վրաստանից արմատախիլ անել տեղական բնակչությանը և այնտեղ վերաբնակեցնել թուրք-թաթարական քոչվոր ցեղեր: Ճիշտ է, վրաց ժողովրդի հերոսական պայքարը ձախողեց թշնամու այդ ծրագրի լրիվ իրագործումը, սակայն դա ծանր նստեց Վրաստանին: Երկիրը մեծ կորուստներ կրեց: Գա շտեսնված դժվարությունների ժամանակաշրջան էր հայ և վրաց ժողովուրդների պատմության մեջ: Պարսկական ասպատակությունների հետևանքով առանձնապես տուժեցին Կախեթը, Արարատյան դաշտավայրը, Շիրակը: Ամայացան այդ երկրները: Ռուս գեսպանները, որոնք Վրաստանում եղել էին XVII դ. 30-ական թվականներին, Կախեթի մասին, օրինակ, գրում էին. «Վրաց երկիրը ավերված է, և շատ վայրեր անտառով են ծածկվել»<sup>4</sup>: Տեղահան

<sup>4</sup> «Материалы по истории грузино-русских взаимоотношений 1615—1640 гг.», Тбилиси, 1937, стр. 331.

արված և բոնությամբ Պարսկաստան գաղթեցված հայերի և վրացիների թիվը մի քանի հարյուր հազարի էր հասնում:

XVIII դարի 20-ական թվականներին, օգտվելով Պարսկաստանում ստեղծված քաղաքական իրադրությունից, Անդրկովկասի ժողովուրդները վճռական քայլ կատարեցին Ռուսաստանի հետ դաշն կնքելու և թշնամու լուծը թոթափելու ուղղությամբ: Նշանակալից էր, մանավանդ, Քարթլիի թագավոր Վախթանգ 6-րդի դերը: Քարթլին տնտեսական առավել բարված վիճակում էր գտնվում, քան Վրաստանի մյուս մասերը: Տնտեսական կյանքի աշխուժացումը սկսվել էր տակավին XVII դարի 2-րդ կեսից, որ պայմանավորված էր հրկրում տիրող համեմատական խաղաղ վիճակով: Աշխուժացել էին ոյուղանտեսությունը, առևտուրը, արհեստը և քաղաքային կյանքը, նկատելիորեն աճել էր բնակչության թիվը, վերակենդանացել էին ավերված ոյուղերն ու ավանները: Քարթլիի տնտեսական ամրապնդման գործում առանձնահատուկ նշանակություն ունեցան նաև կենտրոնական իշխանության ձեռնարկած միջոցառումները զյուղանտեսության, ինչպես և տնտեսական շինարարության, օրենսդրության ու անհնագանդ իշխաններին հաղատակեցնելու ուղղությամբ: Վախթանգ 6-րդի կենսագործած մի շարք միջոցառումների շնորհիվ Քարթլին թե՛ տնտեսապես և թե՛ քաղաքականապես նշանակալիորեն ամրապնդվեց: Երկրի տնտեսական բարգավաճումը, բնականաբար, նպաստում էր նաև նրա կուտարայի զարգացմանը: 1709 թ. Թբիլիսիում հիմնվում է առաջին տպարանը, «Ռւայալ մարդկանց» օգնությամբ ստեղծվում է Վրաստանի պատմության հավաքածուն, որն ընդգր-

կում էր XIV դարի սկզբից մինչև XVIII դարը, հրատարակվում է Շոթա Ռուսթավելու «Բնձենավորը» և այն:

Կուտուրայի դարգացումը իր հերթին նպաստում էր ժողովրդի ինքնապիտակցության բարձրացմանը, երկրի աղաւագրական ուժերի համախմբմանը:

Դալով երկրի արտաքին դրությանը, նշենք, որ 1632 թվականից մինչև 1744 թվականը Քարթլին հարկադրված էր ճանաչելու իրանի գերիշխանությունը: Քարթլիի և Պարսկաստանի միջև հարաբերությունները այդ ժամանակաշրջանում ունեին հետևյալ պատկերը.

1. Քարթլիի թագավորը նշանակվում էր Պարսկաստանի շահի կողմից.

2. Քարթլիի թագավորը կարող էր լինել միայն վրաց բազրատունիների դինաստիայի ներկայացուցիչը այն պայմանով, եթե վերջինս ընդունում էր մահմեդականություն.

3. Քարթլիի թագավորը Պարսկաստանում բարձր պաշտոն պետք է ունենար.

4. Քարթլիի թագավորը համարվում էր «վալի» (շահի տեղակալ) և շահից սոճիկ էր ստանում.

5. Շահը Քարթլիից հարկ էր վերցնում, որը ճշտորեն սահմանված չէր. նա վերցնում էր նաև նվերներ.

6. Պարսկաստանի պահանջով Քարթլին պարտավոր էր նրան զորք տրամադրել.

7. Թթիլիսիի ամրոցում մշտապես պարսկական կայազոր պետք է լիներ.

8. Քարթլիի թագավորը պարտավորվում էր բանակցություններ չսկսել այլ պետությունների հետ առանց շահի համաձայնության.

9. Պարսկաստանի շահը պարտավորվում էր չմիջամտել Քարթլիի ներքին գործերին և շհալածել քրիստոնեական կրոնի դավանումը Վրաստանում<sup>5</sup>:

Սովորաբար այս պայմանները չէին պահպանվում, քանի որ յուրաքանչյուր կողմ ավելին էր ցանկանում: Պարսկաստանը ձգտում էր լրիվ գերիշխանության, իսկ Վրաստանը՝ նվաճողների լծից ամբողջովին ազատագրվելուն:

Պարսկական տիրապետության ճանաշման առաջին իսկ օրից վրաց ժողովուրդը ուղիներ էր որոնում թոթափելու պարսից շահերի լուծը: Սակայն կոնկրետ պատմական պայմանների հետևանքով XVII դ. երկրորդ կեսին բացահայտ և ուղղակի պայքար սկսելը վրաց քաղաքական գործիշների համար հնարավոր չէր և այդ պատճառով պայքարը սքողված բնույթ էր կրում: Քարթլիի թագավորները հարկադրված էին գործել գաղտնի և զգուշորեն՝ սպասելով նոպաստավոր ժամանակի:

Դիորդի 11-րդի ապստամբությունը Պարսկաստանի դեմ XVII դարի վերջերին մի անգամ ևս ապացուցեց, որ սեփական ուժերով, առանց հզոր դաշնակցի օգնության, Քարթլին չի կարող հաղթող դառնալ: Այդ իսկ ուստինառով Քարթլիի թագավորները գահը պահպանելու և իրանից կախվածությունը մեղմացնելու համար հարկադրված էին կատարել իրենց վասալական պարտավորությունները:

Շահական դահի համար պայքարողներից հաճախ նա էր հաղթող դուրս գալիս, ում կողմը որ պահում էր վրաց թա-

<sup>5</sup>Տե՛ս օջ. և ջ հ ջ լ ա ծ յ, Տայարուցքուս Տաճելմֆուցուս զա Տաճարուցքուս օսթորուուսատզուս, տօնուուս, 1952, 116—126, նաև Գ. Գ. Պակ ճ ա-ձ ե, նշվ. աշխ., էջ 51 (վրացերեն):

զավորը: Պարսից շահերը լավ էին հասկանում Քարթլիի-նշանակությունը և ըստ ամենայնի ջանում էին այն օգտագործել իրենց նպատակների համար: Պատահական չէ, որ շահի տոնական ընդունելությունների ժամանակ Քարթլիի-թագավորին պատվավոր տեղերից մեկն էր հատկացվում<sup>6</sup>: Աղբյուրներում և գիտական գրականության մեջ բազմիցս նշվել են վրացական զորքի ռազմական բարձր ունակությունները և նրա գերը Պարսկաստանի շահի իրավունքների ամրապնդման գործում<sup>7</sup>:

Վախթանգ Ե-րդը նկատելով Պարսկաստանում գոյություն ունեցող ճգնաժամը և շահի շահագրգուվածությունը վրաց զորքի օգնության մեջ, որոշում է վերացնել Իրանի կողմից պարտագրվող այն պայմանը, ըստ որի Քարթլիի-թագավորը պարտավոր էր մահմեդականություն ընդունել: 1712 թվականին, երբ Վախթանգ Ե-րդը ուղևորվեց Պարսկաստան թագադրվելու, նա բացարձակորեն հրաժարվեց իսլամություն ընդունել, սակայն շահը, օգտագործելով Վրաստանի միջֆեոդական երկպատակությունները, Վախթանգ Ե-րդին հակագրեց թագրատունիների տոհմից մեկ այլ թեկնածուի<sup>8</sup>:

6 «Сочинения и переводы к пользе и увеселению служащие», СПб., 1760, стр. 37. Известия о находящихся с Западной стороны Каспийского моря между Астраханью и рекою Куром народах и землях и о их состоянии, в 1728 г. сочиненное полковником артиллерии И. Г. Гербером.

7 D. M. Lang. Georgia and the Fall of the Safavi Dynasty, Bulletin of the school of Oriental and African Studies, University of London, v. XIV, part 3, 1952.

8 Տե՛ս „Թօմոմենլություն“, Ծ. III, տօլուսո, 1953, զ. 32—38. Յ. Շահ-Ջուա, զաքըանց VI-ու գրունթյունու և շահարտցյունու ձոլությունը (1712—1745).

1714 թվականին շահը Վախթանգին Քիրման ուղարկեց, ուր նա պահպում էր իբրև գերի, իսկ Քարթլիի թագավոր հաստատեց նրա կղբորը՝ մահմեդականացած ինսեին: Սակայն գերության մեջ Վախթանգ Ե-րդին հաջողվում է կապ հաստատել Քարթլիի քաղաքական գործիչների հետ: Վախթանգին գերությունից ազատելու և նրան դահ վերադարձնելու նպատակով վրաց գործիչները դիմեցին արևմտահվրովական երկրների օգնությանը: 1713 թ. Հոռմ և Փարիզ ուղարկվեց Սովորան Սաբա Օրբելիանին: Նա մի քանի անգամ Վրաստանի գործերի վիճակը ներկայացրեց Ֆրանսիայի կայսրին և Հոռմի պապին: Սակայն նրա բոլոր ջանքերը զուր անցան: Հուսախարլած Սաբա Օրբելիանին վերադարձավ հայրենիք:

Զրկվելով՝ դրսից օգնություն ստանալու հեռանկարից, վրաց հայրենասերները ստիպված համաձայնեցին, որպեսզի Վախթանգ Ե-րդը ընդունի մահմեղականություն, և 1716 թ. նրանք այս խնդրանքով դիմեցին իրենց ապագա թագավորին: Վախթանգը ընդունեց մահմեղականություն, և շահը նրան հաստատեց Քարթլիի թագավոր, շնորհեց սպասալարի պաշտոն և նշանակեց պարսկական բանակի գլխավոր հրամանատար<sup>9</sup>: Վերջին հանգամանքը ստիպեց Վախթանգին մինչև 1719 թ. մնալ Պարսկաստանում: Միշանկյալ այդ շրջանում վրաստանի կառավարիչ էր նշանակված նրա որդի Բակարը: «Ուղարկեցին (Վախթանգին—Վ.) Թագրիզ, որ զորք տանի և ուրասան և տվեցին Քարթլիի կառավարումը Բակարին՝ նրա որդուն»<sup>10</sup>:

<sup>9</sup> ვა პუ შტი, ცხოვრება ქართლისა, გვ. 79.

10 Նույն տեղում:

Պարսկաստանում Վախթանգ Ե-րդը առավել համոզվեց, որ շահական պետությունը ապրում է անկայուն վիճակ: Սեփյան Պարսկաստանը XVII դարի վերջերից սկսած, իրոք, ապրում էր տնտեսական և քաղաքական ծանր ճգնաժամ: Անկման զիսավոր պատճառը աշխատավոր ժողովրդի նյութական ծանր դրությունն էր: Գյուղացիության և քաղաքի աշխատավոր մասսաների ֆեոդալական ծանր շահագործումը խոչընդոտում էր արտադրողական ուժերի զարգացումը: Իշխանավորները և ֆեոդալները իրենց եկամուտների նվազումը փորձում էին փոխհատուցել հարկերի և տուրքերի ավելացմամբ, մի բան, որ ավելի էր քայլայում գյուղատնտեսությունը, արհեստն ու առևտուրը:

Մուսական գիտպան Ա. Վոլինսկին Պետրոս 1-ինին գրում է, որ Աղբբեջանում՝ «Պարսկաստանի շահմարանում, յոթ տարվա ընթացքում հողերը անմշակ էին մնում, երկրում տիրում էր սովոր, իսկ թավրիդի փողոցներում մարդկանց դիակներ էին ընկած և մուրացկանների խմբեր էին թափառում»: Վոլինսկին ընդգծում է, որ Պարսկաստանը «...հարըստության փոխարեն մեծ աղքատության մեջ է. շահի հպատակները... մեծ հարկերով են ծանրաբեռնված, և վճարում են անշափի մեծ տուրք, սակայն դրանից ավելի շատ օգտվում են կառավարիչները, քան թե թագավորը, որին նրանք միայն թիկիրն են տալիս, իսկ բուն պտուղները իրենց են պահում, մի բան որ արգեն նրանց համար սովորություն է դարձել, և այդ բանում թշվառ հպատակների նկատմամբ գթություն չունեն... կառավարիչները... ավելի շատ իրենց, քան թե պետության եկամուտին են հետամուտ լինում, և իրենց արարքներով այնպիս են զայրացրել ժողովրդին, որ քիչ տեղեր

են մնացել, ուր վիճեն խոռվություններ։ Եվ այսպիսով, կարձասած, արդեն այժմ Պարսկաստանը դրանից գեղի վերջնական քայլայում և անկում է գնում»<sup>11</sup>։

Պարսկաստանում ծայր առած ֆեոդալական զանազան խմբավորումների պայքարը և պալատական խարգախությունները ապաշնորհ շահ Սուլթան Հուսեինի (1694—1722թթ.) օրոք ընդունեցին անսահմանորեն մեծ շափեր։ Շահ Սուլթան Հուսեինը խաղալիք էր պալատական ավագանու ձեռքին։ Պալատականներն էին վարում երկրի ներքին և արտաքին քաղաքականությունը։ Ժամանակակիցների վկայությամբ, Սուլթան Հուսեինը միանդամայն զուրկ էր պետական գործի կարողություններից։ Ա. Վոլինսկին գրում է. «Այստեղ այնպիսի մի գլուխ է այժմ իշխում, որ ոչ թե տեր է հպատակների վրա, այլ իր հպատակների հպատակն է, և կարծում եմ, նման հիմարի հաղիվ թե կարելի լինի գտնել հասարակ մահկանացուների, այլ ոչ թե թագակիրների մեջ»<sup>12</sup>։ Անգլիացի ճանապարհորդ Հանվեյի վկայությամբ «Արտակարգ ծովությունն ու կանանց և զինու նկատմամբ ունեցած թուլությունը խլում էին նրանից պետությունը կառավարելու ընդունակությունը։ Այս արատավոր հատկությունների հետեւանքով նա շահ էր սոսկ անվանապես։

Բանակում ընկած էր կարգապահությունը, ոռճիկները մեծ ուշացումով էին վճարվում։ Ավագակները վիտում էին ամենուրեք և խանգարում տռետրին։ Պաշտոնյանները անողո-

11 Հին ակտերի կենտրոնական պետական արխիվ (ՀԱԿՊԱ), ֆ. 77, 1715—1718, գ. 2, թ. 577—578։

12 Նույն տեղում, թ. 200։

քարար կողոպտում էին բնակչությանը: Արդարագատությունը բուն մայրաքաղաքում աճուրդի առարկա էր դարձել»<sup>13</sup>:

Առավել ծանր էր նվաճված երկրների ժողովուրդների վիճակը, որոնք ենթարկվում էին ֆեոդալական անխնա շահագործման ու բացարձակ կողոպտափառությունի կրող հարկածանման: Դնալով սաստկանում էր գյուղացիների շահագործումը ինչպիս առանձին ֆեոդալների, այնպիս էլ սեփյան պետության կողմից:

Հսկայական շափերով տճել էին աշխատավորությունից դանձվող հարկերը: Դեպքերին ականատես ու մասնակից պատմիչ Եսայի Հասան Զալալզանցի վկայությամբ պարսից զորքը՝ ցրված նվաճված շրջանները, հարկերը դանձում էր ամենայն դաժանությամբ: «Եւ ցրուեցան զօրքն (պարսից) ընդ երեխրս և ընդ գիւղօրայս ի թիւ արկեալ զրովն, և քանզի յոյժ ծանր էր լուծն և ոչ կարէին տանել, վասն որոյ շարշարէին և կիղեքէին և զարդելով առնուին: Նոյնպէս ի վաճառականաց և յամենայն արհեստաւորացն առին: Եւ այսպէս ամ ըստ ամի զգլովսսն համարէին, և հարկածանքն եկեալ ճշգիւ ասնուին: Յետ այսորիկ միւս ևս կերպիւ հարկս եղին, և անուանեցին զայս ապաքուրան, դարձեալ միւս եւս եղին և զայն ասացին շահզադի ախրաջաթ, միւս ևս յաւելին և անուանեցին շեշտինար և զայս երեքպատկեցին: Եւ դարձեալ կրկին ևս եղեւ հրաման ելանել և զրել զամենայն սահմանս երկրի, գիւղօրէից և ապարակաց, դհող, զջոր, զայդի, զանդաստան,

<sup>13</sup> J. Hanway. Beschreibung der neuesten Reichsveränderung in Persien, I Abteilung, II Teil, Hamburg und Leipzig, 1754, seite 25—26.

զծառ, զտունն, և ղամենայն ինչ որ պիտոյ է մարդկան՝ առհասարակ... Զայս ամենայն, զոր գրեցաք՝ նորահնար շարիք էր, զոր եղին ի վերայ առաջնոց սահմանեալ հարկացն, որ և առաջինն ևս ծանրագոյն էր բեռն ի վերայ ժողովրդեան»<sup>14</sup>:

Հարստահարումներն ու կողոպուտը, հալածանքներն ու դաժանությունները Արևելյան Հայաստանում լիակատար սանձարձակության հասան մանավանդ XVIII դարի առաջին քառորդում, շահ Սուլթան Հուսեինի օրոք: Ղաղար Զահկեցու 1726 թվականի հիշատակարանում տրված է պատմական այդ ամբողջ շրջանի դատական ու ոստիկանական մարմինների գործունեության մոայլ պատկերը: «Պարսից երկդիմի գաղանոց» մասին Զահկեցին գրում է. «Զարաշար և զանազան տառապանօք ջանիւ, կեղեքմամբ և զանազան տառապանօք անբարշտացան ընդ ազգս Հայոց, թարց ամբաստանութեան և վկայի լմբոնէր զանմեղս և կապէր զարդարս պրկեցուցանելով ի վերայ յերկրի, ակցի և բոքնցի: Խոշոր և ստուար փայտօք կբուէին և հարկաճանէին, զոմանս զընկունս ոտիցն հանէին և զոմանս մատունս և զթաթս ի զարշապարաց թափէին, զոմանց զսրունքս և զբարձս խորտակէին և զայսպիսի անողորմ և դառն ջանիւ տանջանօք կիսամահ արարեալ եղեալ ի բանդի, առնէին զինչս և վաճառէին զտունս և զամենայն կարասիս տանն ի վաճառանոցս յղեցուցանէին: Ի խանութս և ի շուկայս կիսազին ծախմամբ զգինս վաճառելոցն առնէին և ապա արձակէին զբանտարկեալսն: Քանզի զարդարն ընդ ամբարշտին կորուսանէին և զանմեղսն ընդ մէղանշականին

<sup>14</sup> Եսայի կաթողիկոս Հասան-Զալալեանց, Պատմութին համառօտ Աղուանից երկրի, Երուսաղեմ, 1888, էջ 56:

պատմէին: Զի ոչ զոյ քննութիւն անօրէնութեան որով գործեցին ի յորբս և յայրիս. ի վանս և ի յանապատս, ի կարգաւորս և ի ճպնակիր կրօնաւորսն Աստուծոյ, և ո՞ կարողացի բաւել զանշափութիւն շարհաց շանց կատաղելոց»<sup>15</sup>:

Անդրկովկասի ժողովուրդների համար իսկական շարիք էին թուրքական կողմնորոշում ունեցող Դաղստանի ֆեոդալների ավարառության և գերեվարության նպատակներով հաճախակի կրկնվող ասպատակությունները: Մսկուրի հայկական 12 գյուղերի բնակչությունը վախթանգ 6-րդին ուղղած մի դիմումի մէջ նշում էր. «ԺԲ (12) գեղ էմք, այդ ժԲ (12) գեղում դաւար, ձի, գոմէշ, չի մնացել՝ շորեղէն, բրինձեղէն, արծաթեղէն, արկաթեղէն չի մնացել. մեր և օղլուշաղի կեցէն շոր հանել են, մեր օղլուշաղն մեր ձեռքէն առել են, գիշեր ու ցերեկ խրեանց մոտն է. ասում են, թէ մհնք զնալիս կուտանենք, գարի, դարման, ցորեն, բրինձ, շալթուք չի մնացել, մեր տներ փուլ են ածել, այրել, եկեղեցիք թօվլայ են շինել, էլ մեղանում սիրաթ չի մնացել, էլ մին իբրմին չի մնացել, որ մին փող աժենալ... մարդկոց վերայ կարմիր միս չի մնացել շատ թակելէն. անտէր և անճար ենք մնացել...»<sup>16</sup>: Պատահական չէ, որ Դաղստանի ֆեոդալների այս ասպատակությունները հաճախակի բնույթ էին ընդունել հենց XVII դարի

15 Ա. Հովհանն իսյան, Դրվագներ հայ աղատազրական մտքի պատմության, հ. 2, Երևան, 1956, էջ 538—539, տե՛ս նաև Մաշտոցյան մատենագրան, ձեռ. № 2121, Երև 367ա:

16 Գ. Ա. Թօօվ, Сношения Петра Великого с армянским народом, СПб., 1898, стр. 415, տե՛ս նաև Ա. Աբրամյան, Մի էջ Անդրկովկասի ժողովուրդների և հայ-ուստական հարաբերությունների պատմությունից, Երևան, 1953, էջ 18—19:

վերջերին և XVIII դարի առաջին քառորդում։ Եխնելով սովորական թուրքիայի գործակալներ, Դաղստանի ֆեոդալները նույն թուրքիայի Հրահրմամբ իրենց ավերիչ ասպատակություններով ձգտում էին թուրքացնել, քայլայել տեղի ժողովուրդների դիմադրողական ուժը, բարոյալքել նրանց, որպեսզի դրանով իսկ հեշտացնեն սովորական թուրքիայի կողմից այդ ժամանակ ձևանարկվող զավթողական ծրագրերի իրականացնումը։

Տնտեսական ու քաղաքական ծանր պայմանները, բնականաբար, Անդրկովկասի քաղաքական գործիչներին մղում էին ելք փնտրելու ստեղծված գրությունից դրսու զալու համար։ Այդ ելքը նրանք տեսնում էին Ռուսաստանի զինված օդնության, սուսական զորքերի աշակցությամբ Անդրկովկասը ազատագրելու մեջ։ Ահա թե ինչ է դրում սուսական կառավարությանը Իմերեթի թագավոր Արշիլը 1703 թ. «Եթե կամենում եք այն տեղերի մասին իմանալ, ապա այդ մասին հաղորդում եմ կարճառոտ կերպով։ Ընկած ծառը ամեն ոք կթալանի. մեր երկիրը աստծո իսլամությամբ այժմ երկու մասի է բաժանված, մի մասը պարսիկին, մյուս մասը սովորականին և ակամայից ծառայում։ Սովորանին բաժին ընկած վայրերը հարուստ և ամուր են, որոնց անուններն են Իմերեթ, Սամցին, Սաաթաբանդե (իմա Սաաթաբեղու—Վ. Վ.), Մինդրելիսա, նաև Օդիս (Օդիշ) կամ Կոլխի, Գուրիա, Աբաղիա և Զիխեր։ Սամցին և Սաաթաբեղոյում քաղաքներին և վայրերին տիրում է թուրքը, և վոյենդները նրանցում թուրքերն են, իսկ մյուս այլ կարգի մարդիկ և զյուղացիները մեր ուղղափառներն են, կամ հայեր և հրեաներ և բացի այս երկու երկրներից, վերը հեշտակված ոչ մի երկրում թուրք սեփակա-

նատեր չկա, այլ բոլորը ուղղակիառ քրիստոնյաներ են, բացի Քութայսից, իսկ պարսիկի ձևոք տակ են այժմ Քարթլին և Կախեթը, որոնց տիրում է Նիկոլայ Դավիդովիչը՝ որը լրիվ մահմեղականացել է: Մեր քաղաքներում, որոնք թուրքի լծի տակ են, մարդիկ ծառայող, առետրական ու արհեստավորներ են, բոլորը սեփական զենք ունեն, և, եթե ներքին կոփլներ են լինում, կովի են գուրս գալիս բոլորը՝ հարյուր հազար և ավելի մարդ, իսկ արտաքին պատերազմի՝ ավելի քիչ են գուրս գալիս, մյուսները տանն են մնում, տները, քաղաքները և ամրոցները ամուր վայրերում են գտնվում...»: Այնուհետև շարունակում է, որ «Եթե նույնիսկ օդի մի փոքր հոսանքի շափ օգնություն լինի քրիստոնյա թագավորից (իմա Պետրոս 1-ինից—Ն. Մ.), ապա բոլորին հայտնի է, որ երկու կողմերից կմիանանք և երկու թշնամիների հետ էլ մինչև արյան վերջին կաթիլը հանուն հայրենիքի կկոլինք»<sup>17</sup>: Նույն ոգով էր գործում նաև հայ աղատագրական շարժման ուահվիրա Խորայի Օրին, որը բանակցելով ուսւական կառավարության հետ, Հայաստանի աղատագրումը օտարերկրյա նվաճողներից կապում էր ուսւական զինված օգնության հետ, միաժամանակ մեծ տեղ հատկացնելով նաև հայ և վրաց ժողովուրդների համատեղ պայքարին:

Պիտի հնթաղրել, որ Խորայի Օրին և Արչիլ թագավորը հանդիպումներ են ունեցել Մոսկվայում, միասին քննարկել իրենց երկրները օտարերկրյա զավթիչներից աղատագրելու ծրագրերը: «Անցյալ 1701 թ. մեկնեցի ես Մոսկվա իմ ընկերոջ՝ Խորայի Օրիի հետ միասին,—զրում է Մինոս վարդապետը—

17 ՀԱԿՊԱ, վրացական գործեր, 1700—1741 թթ., ֆ. 110, դ. 15, թ. 482, 484:

և բոյարին Յեղոդոր Ալեքսեևիչը Գուլովկինի և նրա թարգմանիչը Նիկոլայի (Սպաֆարիի) միջոցով՝ գաղտնի բանակցություններ էին տեղի ունենում՝ ոռուսական շահերին վերաբերող, և այդ բանակցությունների խնդրում (վրաց) թագավոր Արշիլը համաձայն էր նրա հետ, և... Պետրոս 1-ինը ողորմածաբար էր այդ ընդունում»<sup>18</sup>:

1701 թ. հուլիսի 25-ին ոռուսական կառավարությանը ներկայացրած իր հուշագրում Օրին, մասնավորապես, շեշտում էր Հայ-վրացական զինված ուժերի համագործակցության անհրաժեշտությունը՝ Անդրկովկասը օտարերկրյա զավթիչներից ոռուսական զենքի օգնությամբ ազատագրելու խնդրում<sup>19</sup>: Պետրոս 1-ինը Պարսկաստանի ներքին զրությունն ուսումնասիրելու և հայ ու վրաց քաղաքական գործիշների հետ իր կապերն ամրապնդելու նպատակով 1707 թ. իսրայել Օրուն ուղարկում է Պարսկաստան:

Էջմիածնի կաթողիկոս Ալեքսանդր Ջուղայիցին մեծ սիրալիրությամբ ընդունեց Օրին և 1709 թ. գոհունակությամբ առկեցուն մի նամակ հղեց Պետրոս 1-ինին: «...Քո հրամանոցդ որպիսութիւնն, և կատարեալ սէրն որ ունիս առ յազգս մեր՝ ամէնն մի լստ միոցէ պատմեաց (Օրին—Վ. Մ.) մեղ՝ և մեք ուրախացեալ ցնծացաք և քո հրամանքդ օրհնելով օրհնեցաք զոր տէր աստուած զքեղ հաստատ և պայծառ պահեսցէ ի պարծանս աղջիս բրիստոնէից»<sup>20</sup>:

18 Գ. է դ ո վ, նշվ. աշխ., էջ 455 (ոռուսերեն):

19 «Հայ-ոռուսական հարաբերությունները XVIII դ. առաջին երեսնամյակում» փաստաթղթերի ժողովածու, հ. 2, մ 1, Երևան, 1964, էջ 210—216, վավերագիր 85, նաև սույն ժողովածուի առաջարանը, էջ 17:

20 Գ. է դ ո վ, նշվ. աշխ., էջ 263 (ոռուսերեն):

Թուրքիան աշակուրջ հետևում էր Պարսկաստանում տիրող գրությանը և աշխատում էր ժամանակին օգտվել սեֆյան Պարսկաստանի քաղաքական փլուզումից: Թուրքերը մտադիր էին, հայտնում էր անցքերին քաջատեղյակ Ա. Բ. Զերկասկին, «ամբողջ Կովկասն իրենց տիրապետության տակ առնել, բնդհուալ մինչև Պարսկաստանի սահմանները»<sup>21:</sup>

Կովկասի նվաճմանն ուղղված Թուրքիայի նախապատրաստական աշխատանքները Պետրոս I-ինին հարկադրում են արագացնելու իր արեկելյան ծրագրերի իրականացումը, որի նախապատրաստմանը պիտի նպաստեր նաև Վոլինսկու գեսպանությունը: Հայերի ու վրացիների՝ նույսաստանի հետ ուղմա-քաղաքական դաշինք կնքելու գործում Վոլինսկու գեսպանությունը իրոք հատուկ դեր խաղաց: Նրան հանձնարարված էր «Տեղեկություններ հավաքել հայ ժողովրդի մասին, որքան է թվով և ինչ տեղում է բնակվում: Նրանց մեջ կա՞ն նշանավոր մարդիկ ազնվականներից կամ վաճառականներից և ի՞նչ վերաբերմունք ունեն ցարական մեծության նկատմամբ: Սիրով ու քաղցր վարվել նրանց հետ և բարեկամություն հաստատել»<sup>22:</sup>

Ա. Վոլինսկու գեսպանությունը դեռ Շամախիումն էր, երբ Պետրոս I-ինը 1716 թ. Մինաս վարդապետին Արևելյան Հայաստան է ուղարկում: Մինաս վարդապետի այցը Անդրկովկաս նույն նպատակներն էր հետապնդում, ինչ և Վոլինսկու գեսպանությունը, այն է՝ հետախուզել և զրա հետ միասին նախապատրաստել ու կազմակերպել հայ ժողովրդին աջակ-

21 С. М. Соловьев, История России, т. X, М., 1878, стр. 663.

22 Նույն տեղում, լ. 664:

ցելու սուսական դորքերին և ընդունելու Մուսաստանի հովանավորությունը։ Անդրկովկասում Խորայիլ Օրու և Մինաս վարդապետի քաղաքական գոծունեության ու Մուսաստանի օգնությամբ Հայաստանը և Վրաստանը աղատագրելու մտքի ջերմ պաշտպանն էր Գանձասարի կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանը։ Նա մեծ աշխատանք է ծավալում Հայերին և վրացիներին համատեղ աղատագրական պայքարի նախապատրաստելու, Հայ-վրաց-սուսական դաշինք ստեղծելու ուղղությամբ։

Խորհրդակցելով Հայ մելիքների հետ, 1716 թ. օգոստոսի 10-ին Եսայի Հասան Ջալալյանը հետեւալ նամակն է գրում Պետրոս 1-ինին։ «Իսկ այժմ կրկին առաքեալ ի մեծէ թագաւորութենէդ եղբայրս մեր զՄինաս վարդապետս, որ ի յաղզէ մերմէ, եկն եհաս երկիրս մեր և առ մեզ. և զբարի և աստուածահանոյ կամք և խորհուրդ քաջազօր թագաւորութեանդ ծանուց մեղ. և մեր լսելով զուարձացաք և ցնծացաք ի հոգի և ի մարմին, և յօժար սրտի կամիմք ընդ հովանեա թեսց քոց լինել, եթէ հաճեսցի տէրութիւն քո ի մեզ, և զթասցիս ի վերաթշւառութեան մերում, մեր պատրաստ էմք ընդ առաջ քո ըստ խմում կարողութեանս և մեր նահանգիս մէլիքովք, մեծամեծովք և փոքրումբբ...»<sup>23</sup>։

Գտնվելով Մոսկվայում, Արշիլ թագավորը կենդանի կապ էր պահպանում Վրաստանի քաղաքական գործիչների հետ, տեղեկանում էր Անդրկովկասում տիրող իրադրությանը և այդ մասին իրազեկ դարձնում սուսական կառավարությանը։ Նա պարբերաբար իր մարդկանցից այս կամ այն պատրվակով

23 Գ. է դ ո վ, նշվ. աշխ., էջ 316, գաստաթուղթ 205 (սուսերնն)։

ուղարկում էր Վրաստան՝ հատկապես Վախիթանգ 6-րդի մոտ։ Հենց այդ ժամանակվանից է, որ Խորայել Օրու և Արշիլի կողմից նախապատրաստական աշխատանքներ են տարիում ապագա հայ-ռուս-վրացական դաշինքը ստեղծելու ուղղությամբ։ XVIII դարի առաջին տասնամյակի վրացական արխիվային գործերը լի են ոռուական կառավարությանը Արշիլի դրած դիմումներով, որոնցով նա խնդրում էր թուլատրել իր մարդկանց Վրաստան ուղերձելու համար։ Այսպես, 1711 թվականի մայիսի 14-ի հրամանագրով Պետրոս 1-ինը, ինչպես սովորաբար, այս անգամ էլ տալիս է իր համաձայնությունը՝ թուլատրել Արշիլի մարդկանց Վրաստան ուղերձել<sup>24</sup>։

Գտնվելով Պարսկաստանում, Վախիթանգ 6-րդը հորեղբոր ընտանիքի միջոցով շարունակում էր կապ պահպանել ոռուական արքունիքի հետ։ 1715 թվականին Արշիլի գուստը Դարեցանին գրած նամակներից մեկում նա ափսոսանք է հայտնում, որ դեռևս շվեդների գեմ պատերազմը ավարտված չէ, որ եթե Պետրոս 1-ինը բարեհանձի տիրելու այս կողմի երկրներին, ապա այդ կարելի է կատարել հինգ հազարանոց մի զորամասով<sup>25</sup>։

Արշիլի մշտական կապը Վրաստանի քաղաքական գործիչների, ինչպես նաև վերջիններիս և Խորայել Օրու կապը ոռուական կառավարության հետ այն կարեոր միջոցներից էին, որոնք նախապատրաստեցին ոռու-վրաց-հայկական ռազմա-քաղաքական դաշինքը XVIII դարի 20-ական թվականներին։

24 ՀԱԿՊԱ, ֆ. 110, գ. 1, թ. 70ա—70բ, նաև գ. 1, թ. 48—56։

25 Նույն տեղում, գ. 3, թ. 2։

## ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՌՈՒՍ-ՎՐԱՅ-ՀԱՅԿԱԿԱՆ ՌԱԶՄԱ-ՔԱՂԱՔԱԿԱՆ  
ԴԱՇԻՆՔԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ 1721—1724 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

XVIII դարի 20-ական թվականներին ծավալված հայ և վրաց ժողովուրդների ազատագրական պայքարը սերտորին կապված է 1722—1723 թթ. ռուսական զորքերի պարսկական արշավանքի հետ։ Այս հարցի ամբողջական լուսաբանումը կարևոր է ոչ միայն ազատագրական պայքարի կողմնորոշումը ընկալելու, այլև որոշ շափով նաև նրա շարժառիթները բացահայտելու տեսակետից։

Դեպի Բալթիկ ծովը ելք ունենալու խնդրի լուծմանը զուգընթաց և մանավանդ այդ խնդիրը լուծելուց հետո ռուսական դիվանագիտությունը մեծ ուշադրություն էր դարձնում Արևելքին։ Սակայն Կասպից ծովի ափերին ռուսական շահերը ասպահովելու ուղղությամբ ցարական կառավարությունը վճռական միջոցների դիմեց միայն բալթիական պրոբլեմի լուծումից հետո։ Արևելքում, XVIII դարի առաջին քառորդում, Ռուսաստանի շահերի պաշտպանության գործում

կարևոր միջոցառում էր դեպի Կասպից ծովի առափնյա շրջանները կատարած արշավանքը:

Ռուսաստանի արդյունաբերության զարգացումը ամենից առաջ պահանջում էր հումքի աղբյուրների և վաճառահանման շուկաների ընդլայնում: XVIII դարի առաջին քառորդում Ռուսաստանում գոյություն ունեցող մանուֆակտուրաների մեջ նշանակալից էր մետաքսի արտադրության մանուֆակտուրաների տեսակարար կշիռը: Սկզբանաձևության մեջ հաշվվում էր 52 մանուֆակտուրա, գունավոր՝ 17, մահուդի և բրդեղենի արտադրության մեջ՝ 15, կտավի արտադրության մեջ՝ 11, մետաքսի արտադրության մեջ՝ 15 մանուֆակտուրա և այլն<sup>1</sup>: Մերձկասպյան հարուստ շրջանների միացումը կնպաստեր Ռուսաստանի արդյունաբերությունը զանազան հումքով, զլիավարապես, հումք մետաքսով և բամբակով ապահովելուն:

Ռուսաստանում XVIII դարի սկզբին մետաքսի մանուֆակտուրային արտադրության զարգացումը պայմանավորված էր թանկարժեք մետաքսեղենի նկատմամբ իշխող դասակարգերի պահանջարկի աճմամբ և մերկանտիլիզմի քաղաքականությամբ: Դրությունը նույնն էր ձեւավորման պրոցեսում դտնվող բամբակի գործվածքեղենի արտադրության ընապավառում:

Մերձկասպյան շրջանները հարուստ էին նաև այլ տեսակի հումքով (շինանյութեր, դանաղան մետաղներ, նավթ և այլն): Այդ էր հիմնական պատճառներից մեկը, որ ստի-

1 Е. И. Заозерская, Мануфактуры при Петре Первом, М.—Л., 1947, стр. 10, 157, 184.

ողում էր Պետրոս 1-ինին նախատեսել և իրագործել Մերձկասպյան շրջանների գրավման ծրագիրը: Էր ուժորմներով Պետրոս 1-ինը շատ բան արեց Ռուսաստանում կալվածատերի դասակարգի հզորացման և առևտրի զարգացման համար: Դա իր հերթին առաջ բերեց իշխող դասակարգերի պահանջմունքների աճ նաև այն սպառման առարկաների նկատմամբ, որոնք Ռուսաստանում չէին պատրաստվում: Մեծապես աճեց թանկարժեք իրերի, սպասքի, արդուղարդի առարկաների, համեմունքների, գինու, մրգերի, շաքարի, բրնձի, սուրճի, ինչպես նաև դորգերի, մետաքսի, բրդյա և բամբակյա դործվածքնեղենի և այլ ապրանքների պահանջարկը:

Այս ապրանքների մեծ մասը, ինչպես հայտնի է, Ռուսաստան էին բերվում Մերձկասպյան երկրներից, նաև՝ Միջին Ասիայից ու Հնդկաստանից:

Մերձկասպյան շրջանների նվաճմամբ ոռոսական կառավարությունը ձգտում էր նաև ստեղծել պետական եկամտի նոր աղբյուրներ: Պետրոս 1-ինը մեծ հետաքրքրություն էր ցուցաբերում այն եկամտի նկատմամբ, որ Մերձկասպյան շրջաններից մանում էր շահի գանձարանը: Այս հետաքրքրությունը ցուցաբերվում էր ինչպես արշավանքի նախապատրաստման, այնպես էլ բուն արշավանքի տարիներին:

Հայտնի է, որ Ռուսաստանի տնտեսական հզորությունը ամրապնդելու գործում Պետրոս 1-ինը մեծ նշանակություն էր տալիս արտաքին առևտրին, որի կազմակերպմանը նա առանձնահատուկ ուշադրություն էր գարձնում: Սև, Բալթիկ և Կասպից ծովերը գրավում էին Պետրոս 1-ինի ուշագրությունը նաև որպես այլ երկրների հետ առևտրի ուղիներ: Նա

ձղտում էր աշխուժացնել ոռոսական առևտուրը արտաքին աշխարհի հետ և այդ նպատակով հետեւղականորեն պայքար էր մղում դեպի Բալթիկ, Սև և Կասպից ծովերը ելք ունենալու համար:

Պարսկաստանի հետ կատարվող առևտուրը ընդլայնելու նպատակով Պետրոս 1-ինը դեռևս 1711 թվականի մարտի 2-ին իջեցրած Հրամանագրով նորաստեղծ պետական սենատի համար սահմանեց առանձնահատուկ ուշագրության արժանի մի շաբք հարցեր և խնդիր դրեց «բազմապատկել պարսկական առևտուրը, իսկ հայերին, որքան հնարավոր է, փաղաքշել և դցուրացնել, որտեղ հարկն է, որպեսզի դրանով իսկ նրանց շահագրգռենք ավելի հաճախ գալու»<sup>2</sup> (Ռուսաստան — Վ., Մ.):

Ռուսական կառավարությունը ձգտում էր այն բանին, որպեսզի Պարսկաստանից արտահանվող հիմնական ապրանքը՝ հում մհետաքսը, ամբողջապես Եվրոպա տարվեր Ռուսաստանի վրայով, չրային ճանապարհով: Այս բանին նպաստելու էր 1708 թ. փորված Վիշնեվոլոցկի ջրանցքը, որով ստեղծվել էր միասնական ջրային ճանապարհ՝ Աստրախանից մինչև Պետերբուրգ:

Հնդկաստան տանող ծովային ճանապարհի հայտնագործումից հետո, Պարսկաստանը, որ թեև ասիական շուկաների մեջ կենտրոնական դիրք չէր գրավում, համենայն դեպս չկորցրեց իր անտեսական նշանակությունը և վրոպական առևտրականների համար: Պարսկաստանի հում մհետաքսի, բամբակի

<sup>2</sup> «Полное собрание законов Российской империи» (ПСЗРИ), т. 4, № 2330, стр. 643.

և մհտաքսի գործվածքեղենի արտահանումով շահագրգույած էին գրեթե եվրոպական բոլոր երկրները։ Սակայն եվրոպայի և Պարսկաստանի միջև գոյություն ունեցող առևտրական ճանապարհները անհարմար էին։ Շուրջաֆրիկյան ճանապարհը երկար էր ու դժվար հաղթահարելի, իսկ երկրորդ ճանապարհը, Թուրքիայի վրայով, տնտեսապես ձեռնտու չէր, այս ճանապարհով զնացող վաճառականները մեծ մաքսեր էին վճարում մաքսատներին։ Սրանից զատ, այդ ուղին խիստ վտանգավոր էր՝ վաճառականները հաճախ էին ևնթարկվում ավաղակային հարձակումների։ Դրա համար էլ XVI—XVII դարերում եվրոպացիները համառորեն փորձում էին ձեռք բերել Ռուսաստանի վրայով տարանցիկ առևտուր անելու հնարավորություն։ Այն ժամանակ այս ճանապարհը դնում էր Կասպից ծովով, Վոլգայով, Սովորնայով, Հյուսիսային Դվինայով՝ դեպի Արխանգելսկ և այնուհետև Հյուսիսային ծովով դեպի Եվրոպա։

Սակայն եվրոպացիների կողմից վալվյան ճանապարհի լայն օգտագործումը վնասում էր ոռու վաճառականների շահերին։ Դրա համար էլ մոսկովյան կառավարությունը ամուր պահպանում էր դեպի Պարսկաստան տանող տարանցիկ ուղին և միմիայն այս կամ այն տնտեսական ու քաղաքական պատճառներով պայմանավորված անհրաժեշտության դեպքերում էր եվրոպացիներին տալիս տարանցիկ առևտրի իրավունք՝ երբեք չզոհաբերելով սեփական շահերը։ Այսպիս, XVII դարի երկրորդ կեսին, ոռու-թուրքական հարաբերությունների բարդացման շրջանում, ենելով կեհաստանը Թուրքիայի դեմ համատեղ պայքարի դաշնակից ունենալու խնդրից, ոռուսական կառավարությունը նբան տրամադրեց Պարսկաստանի հետ

տարանցիկ առևտուր անելու իրավունք<sup>3</sup>: Քաղաքական նույն շարժառիթներով ոռւսական կառավարությունը օժանդակում էր պարսկական առևտուրին Ռուսաստանում: Մասամբ նույնանման նպատակներ էր Հետապնդում 1667 թ. Նոր Զուղայի հայ վաճառականների հետ կնքված պայմանագիրը:

Ռուսական կառավարությունը, տարանցիկ առևտուրի իրավունք ընձեռելով այս կամ այն երկրին, փորձում էր, մի կողմից, աշխատացնել ոռւս-պարսկական առևտուրը, Ռուսաստանը դարձնելով միջնորդ պարսկա-և վրոպական առևտուրի մեջ, մյուս կողմից միտում էր Հենց գրանով տնտեսապես վնասել թուրքիային:

Ռուս վաճառականությունը պարսկական մետաքսի առևտուրից իրոք նշանակալից եկամուտներ էր ստանում: «Գնում են անզլիացիք և հոլանդացիք գեպի Ղզլբաշների երկիրը՝ թուրքական հողով և առնում են ղզլբաշների երկրում հում մետաքսը, ու մետաքսի առևտուր է անում նրանց հետինքը շահը», — ասված է XVII դարին վերաբերող փաստաթղթերից մեկում: Իսկ նրանք ղզլբաշների երկրում հում մետաքսը ձեռք են բերում փութը 15 կամ 16 ոռուբլի, և երբ նրանք տանում են թուրքի երկրով և թուրքի սուլթանի օգտին մարս են նրանցից գանձում մեկի փութ մետաքսից այնքան, որրանով նրանք գնել են ղզլբաշներից (այսինքն՝ 100 տոկոսով): Իսկ այն թագավորական մարդիկ (իմաստ վաճառականները — Վ. Մ.) մետաքսը գնում են Ղզլբաշների երկրում նույն դնով՝ 15 կամ 16 ոռուբլով և նրանք գալով Յարոսլավլ՝ վաճառում են դերմանացիներին (իմաստ եվրոպացիներին)

<sup>3</sup> ПСЗРИ, т. I, № 420, стр. 732, т. 2, № 1186, стр. 740.

փութը 50—60 ռուբլով, իսկ Արխանգելսկ քաղաքում նույնիսկ փութը 70 ռուբլով և ավելի...»<sup>4</sup>:

Ահա թե ինչո՞ւ Պետրոս 1-ինը շահադրգաված էր, որպես-  
վի պարսկական ողջ մետաքսը Եվրոպա արտահանվի միայն  
Ռուսաստանի վրայով, մի բան, որ նպաստում էր մերկան-  
տելիզմի քաղաքականությանը: Սակայն Արքելքի և Եվրոպա-  
ցի միջև կատարվող առևտրում միջնորդ դառնալու ռուսական  
կառավարության ձգտումը հանդիպում էր արևմտահվրովա-  
կան երկրների և Թուրքիայի դիմադրությանը:

Աստրախանը այն զլիսավոր վայրն էր, որտեղ առևտուր  
էր կատարվում Ռուսաստանի և Արքելքի միջև: Մշտապես այս  
քաղաքն էին դալիս պարսիկ, հայ, բուխարացի և Հնդիկ  
առևտրականներ: Ժամանակակցի բնորոշմամբ Աստրախա-  
նը «... նշանակալից առևտուր է անում Պարսկաստանի, Խի-  
վայի, Բուխարայի և Հնդկաստանի հետ: Այս զանազան ժողո-  
վուրդների վաճառականներն այնտեղ ունեն բնդհանուր քար-  
վանսարա կամ հյուրանոց, որտեղ նրանք ապրում և վաճա-  
ռում են իրենց ապրանքները: Հայերը կատարում են պարս-  
կական առևտրի մեծագույն մասը, որովհետեւ պարսիկները  
շատ հազվագել են իրենց երկրից դուրս դալիս»<sup>5</sup>:

Ռուսական առևտրի ոչ պակաս կարեոր կենտրոն էր  
Գիլանի շրջանը, հատկապես Ռեշտ քաղաքը, որը Եվրոպայի

<sup>4</sup> Е. С. Зевакин и М. А. Попиевкотов, К истории При-  
каспийского вопроса, Тифлис, 1933, стр. 2.

<sup>5</sup> Д. Бель, Белевые путешествия через Россию в разные азиат-  
ские земли, а именно: в Испагань, в Пекин, в Дербент и Константи-  
нополь, ч. I, СПб., 1776, стр. 34.

և Ասիայի ողջ ապրանքների կուտակման վայր էր<sup>6</sup>: Սակայն ուս վաճառականները միայն Շամախում, Ռեշտում և Նիզարադում չէին առևտուր անում: Նրանք ձգտում էին թափանցել ինչպես բուն Պարսկաստան, այնպես էլ Անդրկովկաս ու այլ վայրեր<sup>7</sup>:

Սակայն Ռուսաստանը Անդրկովկասի և Իրանի հետ կապող առևտրական ուղին, ուներ նաև բացասական կողմեր: Նախ, գոյություն ունեցող նավահանգիստները անհարմար էին: Պետրոս I-ինը ձգտում էր ստեղծել նոր նավահանգիստներ, բայց սրան դիմագիր էր լինում Պարսկաստանը: Եղագական վաճառականները, որոնք երթևեկում էին այս ճանապարհով, ենթակա էին լեռնական դաղստանցիների մշտական հարձակումների վտանգին և պարսիկ կառավարիչների կամացականություններին:

Ռուսական դեսպան Ա. Պ. Վոլինսկին, որին հանձնարարված էր կնքել ուսւապարսկական առևտրական պայմանագիր, պարսկական կառավարությունից խնդրում էր վերջ դնել ուս վաճառականների նկատմամբ առևտուր կառավարիչների դաժան վերաբերմունքին և ուսւների վրա լեռնականների հարձակումներին:

Պարսկաստանում ուսւական առևտրին խանգարող պատճառները վերացնելու համար Վոլինսկին առաջարկում էր ստեղծել «Պարսկաստանի հետ առևտուր անելու ընկերություն» և ուսւական հյուպատոսություն, որը 1725 թ. հիմնվեց:

<sup>6</sup> Ф. И. Соймонов, Описание Каспийского моря, стр. 105.

<sup>7</sup> М. Чулков, Историческое описание Российской коммерции, М., 1735, т. II, кн. 2, стр. 5—7.

Բայց քանի որ պետությունը ծանր ձգնաժամ էր ապրում, պարսկական կառավարությունը անզոր էր հոգալու ուստի վաճառականների անվտանգությունը։ Գլխավոր վեհիր Ֆաթալի խանը ստիպված էր խոստովանել, որ շահը ի վիճակի չէ կատարելու այդ, քանի որ լեզգինները, ըստ իրենց սովորության, իրենց երկրի մոտակայքում խորտակված նաևիրի անձնակազմն ու ապրանքը համարում են իրենցը, չեն խնայում ոչ միայն սուսներին, այլև շահի անմիջական հպատակներին<sup>8</sup>։

Մուս վաճառականների վրա հարձակումները ոչ միայն շգագարեցվեցին, այլ ընդհակառակը, հաճախակի դարձան, մանավանդ աֆղանների ներխուժման և շահի դեմ դադստանցի լեռնականների ապստամբության ժամանակ։ Մուսական առևտրի անվտանգությունը ապահովելու անհրաժեշտությունը նույնպես Պետրոս 1-ինի առջև խնդիր էր գնում տիրանալու Կասպից ծովի արևմտյան ափերին, մի խնդիր, որի լուծումն իր հերթին կը նույնականացներ ու կամրապնդեր արևելյան երկրների հետ Մուսաստանի առևտրա-տնտեսական կապերը։ Զանալով ընդլայնել առևտրական կապերը, Պետրոս 1-ինը նպատակադրվել էր Կուրի դիտարերանի մոտ նույնիսկ մի մեծ առևտրական քաղաք Հիմնել, որը պետք է դաւնար հայերի, վրացիների և պարսիկների հետ առևտուր անելու կենտրոն<sup>9</sup>։ Այդ կապակցությամբ նույնիսկ որոշ գործնական քայլեր ձեռնարկվեցին։

8 ՀԱԿՊԱ, ֆ. Մուսաստանի հարաբերությունները Պարսկաստանի հետ (ՌՀՊ), գ. 2, թ. 279։

9 Ֆ. Ի. Սովորոնով, նշվ. աշխ., էջ 240—241 (սուսերեն)։

Այսպիսին էին պարսկական արշավանքի տնտեսական շարժառիթները: Սակայն, 1722 թ. ոռուսական բանակի արշավանքը պայմանավորված էր նաև ռազմա-քաղաքական նկատառումներով, Պարսկաստանում ստեղծված ծանր դրությամբ և այդ դրությունից օգտվել ջանացող Թուրքիայի ազրիսիվ նկատառումներով:

Կասպից ծովի արևմտյան ափերը, որոնցով շահագրգրոված էր Ռուսաստանը, գտնվում էին Պարսկաստանի տիրապետության տակ: Սեֆյանների պետությունը, որը զարգացման տարբեր աստիճանների վրա գտնվող ժողովուրդների խայտաբղետ մի կոնգլոմերատ էր, XVIII դարի սկզբին տընտեսական և քաղաքական անկում էր ապրում, անկում, որն սկսել էր ակնհայտ դառնալ արդին XVII դարի վերջերից:

Հակառակությունը մի կողմից ֆեոդալների և զյուղացիների, մյուս կողմից նվաճված ժողովուրդների և սեֆյանների միջև առանձնապես սրվեց XVIII դարի սկզբին: Երկրի մի շարք շրջաններում պարբերաբար բռնկվում էին ապստամբություններ: 1716—1717 թթ. ապստամբական շարժումը ընդդրկել էր Թավրիզի և Ղազվինի շրջանները:

Հատկապես լայն ծավալ էին ընդունել նվաճված ժողովուրդների ապստամբությունները: 1711 թ. ապստամբություն սկսվեց Գալստանում և Աղրբեջանի Հյուսիսային շրջաններում: 1717 թ. արաբները գրավեցին Պարսից ծոցի մի շարք կղզիներ և սկսեցին հարձակումներ պարսկական ափերի վրա: Ռուսները գրավեցին Խորասանը, իսկ քրդերը տեր ու տնօրին էին դարձել Համադանի շրջանում:

Սեֆյանների համար հակատագրական էր հատկապես աֆղանների ապստամբությունը:

Ղանդահարում պարսիկների դանձած բարձր հարկերը և գործադրած կամայականությունները նոր դժգոհությունների պատճառ դարձան։ Աֆղանական ուժեղ ցեղի՝ հիլզայների ավագանին, Միր-Վեյսի գլխավորությամբ (որը ցեղապետն էր և Ղանդահարի քալանթարը), որոշեց օգտագործել ժողովրդական մասսաների դժգոհությունը և սկսել ապստամբություն։ Սակայն Ղանդահարի բեղլարքեդ Գուրզի խանը (Քարթլիի թագավոր Գիորգին) կանխեց նրան։ Նրա հրամանով Միր-Վեյսը ուղարկվեց Սպահան և շահի պալատում պահվեց որպես պատվավոր գերի։ Սակայն ճարպիկ Միր-Վեյսը շուտով իրազեկ դարձավ արքունիքում տիրող իրադրությանը, կարողացավ ձեռք բերել Սուլթան Հուսեինի վստահությունը, ամբաստանել Գիորգի 11-րդին և ի վերջո, 1708 թ. հաջողացնել ուղևորությունը Մեքքա՝ իբր թե աղոթելու, իրականում Պարսկաստանի դեմ պայքարելու և Թուրքիայի հետ դաշն կնքելու նպատակով։ Միր-Վեյսը վերադարձավ Սպահան, այնուհետև իր հայրենիքը։ 1709 թ. դավադրությար սպանեց Գիորգի 11-րդին, գրավեց Ղանդահարը և իփաստորեն անկախ իշխան դարձավ։ Ղանդահարը կրկին գրավելու ուղղությամբ Պարսկաստանի փորձերը անհաջողությամբ վերջացան։

1715 թ. Միր-Վեյսին հաջորդեց նրա եղբայր Միր-Աղալահը, սակայն 1717 թ. նրան սպանեց Միր-Մահմուդը, Միր-Վեյսի որդին։ Միր-Մահմուդի դրոշի ներքո միավորվեցին աֆղանական շատ ցեղապետներ։ 1720 թ. նրանք արշավեցին գեպի Պարսկաստան։ 1721 թ. վերջերին Միր-Մահմուդը երկրորդ անգամ ներխուժեց Պարսկաստան՝ այս անգամ հասնելով մինչև Սպահան։ 1722 թ. մարտի 8-ին Միր-Մահմուդը

պարտության մատնեց պարսկական զորքին և սկսեց Սպահանի պաշարումը: Երկարատև պաշարումից հետո, 1722 թ. Հոկտեմբերի 12-ին շահ Հուսեինը հանձնվեց Միր-Մահմուդին: Մայրաքաղաքից հաջողվեց փախչել միայն գահաժառանգ Թահմաղին:

Թուրքիան տեղյակ էր շահի գեմ Միր-Վեյսի դավադրությանը և պաշտպանում էր աֆղանների ապստամբությունը: Արդեն այն ժամանակ Թուրքիան փորձում էր օգտագործել Պարսկաստանում ստեղծված իրազրությունը և ընդարձակել իր սահմանները: Կոստանդնուպոլսի ոռւսական դեսպան Ալեքսեյ Դաշկովը 1720 թ. գեկտեմբերի 17-ին գրում էր. «Հայտնում եմ, որ այստեղի արքունիքը հավաստի տեղեկություններ ունի, որ Թուրքմենյան կամ Թուրքմանյան (Թեմուրլանկի կամ Թեմիրակսանի) սերնդի թաթարները հավաքվելով բազմաթյամբ հանկարծակի հարձակում են գործել Պարսից երկրի վրա, արդեն գրավել են որոշ ամրոցներ... և այսպիս աշխատ էն դատում. ինչ էլ որ եղած լինի, միենույն է Հուսով են, թե Բ. Դուռը դրանից օգուտ կրաղի՝ մի բան, որ ժամանակը ցույց կտա»<sup>10</sup>:

Ուստաստանի ռեգիդենտ Ի. Նեպլյուկը 1722 թ. փետրվարի 8-ին Կոստանդնուպոլսից հայանում էր, թե Թուրքիան քաջատեղյակ է Պարսկաստանի թուլությանը և նպատակ ունի «իր հովանավորության ներքո վերցնել Դառնդ-բեկին ու Սուրխային»<sup>11</sup>: Ահա թե ինչու Կոստանդնուպոլսում պարսկական

10 Թուստանի արտաքին քաղաքականության արխիվ (ԽԱՔԱ), ֆ. Թուստանի Հարաբերությունները Թուրքիայի հետ (ԽՀԹ), 1720, գ. 7, թ. 175—176:

11 ԽԱՔԱ, ֆ. ԽՀԹ, 1722, գ. 6, 1, թ. 30:

դեսպանի՝ աֆղանների և լեզգինների դեմ հարձակողական և պաշտպանողական դաշինք կնքելու վերաբերյալ առաջարկությանը Թուրքիան վճռականորեն բացասական պատասխան տվեց պատրվակ բոնհլով, թե իբր ապստամբները հավատակիցներ են (այսինքն՝ սունիներ), և այդ պատճառով Թուրքիան չի կարող նրանց դեմ արշավել<sup>12</sup>:

Ի. Նեպլյուկը 1722 թ. մարտի 8-ի իր գաղտնի զեկուցագրում հայտնում էր, որ «ամսի 2-ին Բ. Դուանը խորհրդակցություն կար, ուր ներկա էր մուֆտին և այդ խորհրդակցությունից հետո այն պարսից ապստամբներին դրավոր պատասխան տվեց... այդ պատասխան նամակում հրահրում էին ապստամբներին, որ նրանք Պարսկաստանի հետ իրենց գործերը վարեն աներկյուղ, քանի որ պարսից թագավորին Բ. Դոնից օգնություն չի տրվի»<sup>13</sup>:

Նոր տերիտորիաներ գրավելու թուրքիայի մտադրությունների մասին տեղեկություններ է տալիս Ի. Նեպլյուկը նույն թվականի մայիսի 9-ի իր զեկուցագրում: Պետրոս 1-ինը իր պատասխան-հրովարտակում նեպլյուկին հանձնարարում էր աշալուրջ հետևել «թուրքական արարքներին» և «նրանց իսկական մտադրություններին» և «հաճախակի զեկուցել» այդ մասին<sup>14</sup>:

Թուրքիան, որ հրաժարվում էր Միր-Մահմուդի դեմ մղլող պայքարում օգնել պարսից շահին և ձգտում էր ապրատամբին վերցնել իր հովանավորության տակ, միտում էր

12 Նույն տեղում, թ. 72—73:

13 Նույն տեղում:

14 Նույն տեղում, գ. 4, թ. 42:

այդ անել նրա կողմից թուրքական սովորական գերիշխանությունը ձանաշելու պայմանով<sup>15</sup>: Իր տիրապետությունն ընդարձակելու նպատակով Թուրքիան հռանդուն գործունեություն ծավալեց Կաբարդայում, Դաղստանում և Աղրբեջանում: Օսմանցիների կողմից կաշառված առանձին տեղական ֆեոդալներ այս վայրերում հանդես էին գալիս ուղղակի թուրքական գործակալների գերում:

1722 թվականի լեզգիների հակապարսկական շարժման թուրքական օրիենտացիան՝ իրական դարձրեց Մերձկասպյան շրջանները գրավելու հնարավորությունը Թուրքիայի կողմից, մի բան, որ բացահայտորեն հակասում էր Ռուսաստանի պետական շահերին: Կասպից ծովի առափնյա շրջաններին տիրելը Թուրքիային հնարավորություն կտար խափանել Ռուսաստանի առևտրական կապերը այդ շրջանների ու Պարսկաստանի հետ, մանավանդ որ Թուրքիան բացահայտորեն դեմ էր պարսկական մետաքսը Ռուսաստան արտահանելուն և շահադրգոված էր, որպեսզի մետաքսը Եվրոպա արտահանվի Թուրքիայի վրայով: «Սովորականը պահանջում է շահից, — ասված է ժամանակի փաստաթղթերից մեկում, — որպեսզի Գիլանի ամբողջ մետաքսը տարվի իր երկիրը, այլ ոչ թե Կասպից ծովով՝ Ռուսաստան»<sup>16</sup>: Տիրելով Մերձկասպյան շրջաններին՝ Թուրքիան վտանգ էր ստեղծում նաև Ռուսաստանի հարավ-արևելյան սահմանների համար<sup>17</sup>:

15 Նույն տեղում, գ. 6, մաս 1. թ. 156:

16 А. Н. Попов, Сношения России с Хивою, СПб, 1855, стр. 129.

17 В. Г. Лысцов, Персидский поход Петра Первого, 1951, стр. 91—164.

Այսպիսով, Մերձկասպյան շրջաններում թուրքական տիրապետության հաստատումը Ռուսաստանի համար վտանգ էր ստեղծում՝

- ա) Արևելքի հետ առևտրի խափանման,
- բ) Կովկասովմ քաղաքական և ստրատեգիական դիրքերի թուլացման և

գ) Հարավ-արևելքան թույլ պաշտպանված սահմանների վրա հարձակման տեսակետից:

Մերձկասպյան շրջաններում Թուրքիայի տիրապետության հաստատմանը դիմագիր լինելը և նրա ծրագրերը վիճեցնելը Ռուսաստանի համար, այսպիսով, զարձել էր պետական կարևոր նշանակություն ունեցող հարց, որի լուծումը հնարավոր էր միայն այդ շրջանները պրավելու և դրանք Ռուսաստանի տիրապետությանը ենթարկելու միջոցով:

Նախապատրաստվելով արշավանքի, Պետրոս 1-ինը, անշուշտ, չեր կարող շիմանալ, որ Անդրկովկասում ուստական պորքերի գործողությունները բարդացնելու ևն ոռու-թուրքական հարաբերությունները Դրա համար էլ նա անհրաժեշտ համարեց վաղօրոք միջոցներ ձեռնարկել Թուրքիայի հետ խաղաղ հարաբերություններ պահպանելու ուղղությամբ։ Այդ նպատակին էր ծառայում «Հավիտենական հաշտության» համաձայնագիրը, որ կնքել էր Կոստանդնուպոլսում 1720 թ. ուստական դեսպան Ա. Դաշկովը։ Վավերացնելով այդ համաձայնագիրը, Թուրքիան բարոյական պատասխանատվություն էր վերցնում իր վրա՝ Ռուսաստանի հետ խաղաղ հարաբերությունները պահպանելու համար։ Համաձայնագրի պայմաններով նախատեսված ուստական դեսպանի նշանակումը Կոստանդնուպոլսում ամենից առաջ ծառայում էր ոռու-թուրքա-

կան հարաբերությունների խաղաղ կարգավորման գործին: Հետագա իրադարձությունները եկան հաստատելու Պետրոս 1-ինի այս քայլի ճշտությունը:

1721 թվականի հունվարի 22-ին Կոստանդնուպոլսում ոռոսական գեսպան (ռեզիդենտ) Ա. Դաշկովին փոխարինեց ի. ի. Նեալյուելը, որը պետք է հետևեր Թուրքիայի կողմից համաձայնագրի պայմանների կատարմանը:

Տեղեկություններ ստանալով 1721 թ. օգոստոսի 7-ին Շամախիում տեղի ունեցած գեղքերի մասին, Պետրոս 1-ինը որոշեց սկսել պատերազմական գործողություններ և անհրաժեշտ համարեց պաշտոնապես այդ մասին տեղեկացնել թուրքական կառավարությանը: Սակայն Թուրքիային վազօրոք չհայտնվեց ոռոսական զորքերի արշավանքի մասին: Այդ կարող էր արագացնել թուրքական զորքերի ներխուժումը Անդրկովկաս, մանավանդ, որ Թուրքիան նախապատրաստվում էր այդ ուղղությամբ՝ հավատարիմ գործակալներ ունենալով ի գենս Դառւդ-բեկի և Սուրբայ-խանի: Աշխարհագրական նպաստավոր դիրքի շնորհիվ Թուրքիան կարող էր կանխել ոռոսական զորքերի մուտքը Անդրկովկաս, զորք մտցնել այնտեղ և Ռուսաստանի հետ «բարեկամ» լինելու պատրվակով «առաջարկել», որ ուստի վաճառականներին Շամախիում թալանողներին պատժելու խնդիրը թողնեն իրեն:

Սակայն Պարսկաստան և Անդրկովկաս ներխուժելու հարցում Թուրքիայում էլ լրիվ միաձայնություն շկար, մի բան, որը զգալիորեն դանդաղեցնում էր թուրքական աղքահսիայի սկսելը: Թուրքիայում պարսկական հարցի շուրջը միմյանց դեմ պայքարում էին երկու խմբավորում: Թրանցից մեկը ներկայացնում էր մուֆտիներին և ենիշերիներին. սրանք

պահանջում էին իրանի դեմ անհապաղ սկսել պատերազմական գործողություններ։ Երկրորդ խմբավորումը զլխավորում էր վեղիրը, որը համառորհն պահանջում էր գործել գաղտնապես և սպասել հարմար ժամանակի<sup>18</sup>։

Եվրոպայում և Մերձավոր Արևելքում, ինչպես նաև բուն Ռուսաստանում տիրող ընդհանուր քաղաքական իրադրությունը հարկադրում էր Պետրոս 1-ինին արտակարգ զգուշություն ցուցաբերել Թուրքիայի նկատմամբ<sup>19</sup>։ Թուրքիայի հետ հարաբերությունների վատացումից խուսափելու նպատակով նա որոշեց կանխապես Թուրքիայում հող նախապատրաստել ռուսական զորքերի կողմից Մերձկասպյան շրջաններում պատերազմական գործողություններ սկսելու վերաբերյալ պաշտոնական հայտարարության համար։ Առաջին քայլը, ինչպես նշվեց, թուրքական կառավարությանը 1721 թ. օգոստոսի 7-ին Շամախիում տեղի ունեցած գեղերի մասին տեղեկացնելն էր։

1721 թ. նոյեմբերի 20-ին Նեպլյուկին տված հրովարտակում ասված էր. «... Հարկավոր է պարսկական շահի երկրում մեր հպատակների առանց որևէ պատճառի հասցված մեծ վիրավորանքների մասին տեղյակ դարձնել թուրքերին և այլոց, ինչպես և Բարձր Պուան թարգմանչին այնպիսի ձեռով, որպես թե դրանք նորություններ են, այլ ոչ թե այնպես, որ կարծեն, թե դու այդ անում ևս համաձայն մեր

<sup>18</sup> Записки графа Бассевича, «Русский архив», М., 1865, стр. 206.

<sup>19</sup> «Հայ-ռուսական հարաբերությունները XVIII դ. տուաչին երեսնամյակին», փաստաթղթերի ժողովածու, էջ 28։

Հրովարտակի, որպեսզի այդտեղ Պարսկաստանի կողմից մեղ հասցված վիրավորանքներին իրազեկ լինեն: Իսկ եթե քեզ հարցնեն, արդյոք դրա դիմաց որևէ վրեժինդրություն չի ձեռնարկվի մեր կողմից, դու պետք է պատասխանես, որ այդ մասին քեզ ոչինչ հայտնի չէ»<sup>20</sup>: Դրա հետ միասին նեպլյուսին հանձնարարվում էր խնդրել Թուրքիային, որպեսզի վերջինս իր հովանավորության տակ շվերցնի լեզգիներին, մի բան, որին ոռուական դեսպանը հասավ 1722 թվականի ապրիլի 21-ին վեզիրի հետ ունեցած տեսակցության ժամանակ: Թուրքերը երկյուղ կրելով Ոռուաստանի և Իրանի դժգոհությունը առաջացնելուց, ձևականորեն նման պարտավորություն ստանձնեցին, սակայն իրականում շարունակում էին լեզգիներին հովանավորել:

Պետրոս 1-ինը միայն 1722 թ. մայիսի 13-ին, Մոսկվայից Աստրախան ուղևորվելուց առաջ, հնարավոր գտավ պաշտոնապես Թուրքիային հայտնել պարսկական արշավանքը սկսելու մասին: Այդ մասին առաջինը հայտնվեց այն ժամանակ Մոսկվայում գտնվող Մուստաֆա աղային<sup>21</sup>: Համանման պաշտոնական հայտարարություն արեց 1722 թ. հովիսին նեպլյուսը սուլթանական արքունիքում:

Այսպիսով, ժամանակ շահվեց և Թուրքիան այլևս չէր կարող կանխել սուսական զորքերի մուտքը Մերձկասպյան շրջանները: Թուրքերը ոչ մի կերպ չէին հաշտվում իրենց այդ ձախողման հետ, իսկ ոռուական զորքերի հաջողությունները

20 ՌԱ. ֆ. Թուսաստանի հարաբերությունները Թուրքիայի հետ (ԹՀԹ), գ. 7, թ. 145—146:

21 ՌԱ. ֆ. ԹՀԹ, գ. 3, թ. 36—37:

Մերձկասպյան շրջաններում նրանց ավելի էին կատաղեցնում։ Թուրքիան որոշեց անհապաղ սկսել ակտիվ գործողություններ և ամեն կերպ խանգարել Ռուսաստանի՝ Անդրկովկասում հիմնավորվելու քայլերին։

Ռուս-թուրքական հարաբերությունների սրման խնդրում առանձնահատուկ դեր կատարեցին արևմտաեվրոպական երկրների կառավարող շրջանները, որոնք գիտակցաբար հրահրում էին Թուրքիային Ռուսաստանի դեմ։ Անգլիայի, Վենետիկի և Սվատրիայի դեսպանները ամեն կերպ ձգտում էին թուրքական կառավարությանը ահարենքել նրանով, թե Վրաստան և Հայաստան ոտք դնելուց հետո, Պետրոս I-ինը կհարձակվի։ Թուրքիայի վրա և Օսմանյան կայսրությունը կքայլալի<sup>22</sup>։ Ռուսական դեսպանի 1722 թ. հունիսի 18-ի զեկուցագրում ասված էր. «Անգլիական դեսպանը, վենետիկյան և կայսերական դեսպանները ներշնչում են թուրքերին, որ Զերդ մեծությունը բարեհաճել է 100.000-անոց զորքով Պարսկաստան դնալ խոռվարարների վիրավորանքի պատրվակով։ Իսկ երբ ուստական միապետը կգրավի Եիրվանը և Երևանը, ինչպես և Վրաստանի մի մասը, այն ժամանակ թուրքական վրացիները և Հայերը ինքները կմտնեն ուստական Հովանավորության ներքո, այնուհետև մոտ է Տրավիդոնը և գուցե ժամանակի ընթացքում ոչ միայն վնաս լինի Օսմանյան կայսրությանը, այլ ծայրահեղ քայլացում»։ 1722 թ. օգոստոսի 22-ի զեկուցագրում նեպլյուկը հայտնում էր. «Մեծ դժվարություններ են ինձ համար հարուցում օտարերկրյա մինիստրները իրենց ներշնչումներով (բացի հոլանդականից)։

22 ՌԱՔԱ, ֆ. ՌՃԲ, գ. 6, թ. 1, թ. 93։

Բարձր Դուանը ներշնչում են, որ սուսական միապետը խելացի է և ձեղ խաբում է հաշտությամբ, այժմ նա միայն Պարսկաստանից է որոշ մարզեր կամ ենում դրավել տիրապետելու, և եթե դրանում դուք նրան զենքով դիմադիր չլինեք, ապա նա դրավելով այդ մարզերը, շուտով կհարձակվի հենց այդ երկրներից<sup>23</sup>:

Ուրեմն, արևմտաեվրոպական երկրները, որոնք տեղյակ էին Պետրոս 1-ինի արշավանք նախապատրաստելուն, գեռևս սուսական զորքերի Աստրախանից դուրս գալուց առաջ ձգտում էին խանգարել Ռուսաստանին: Եվրոպական թերթերը մեծ աղմուկ բարձրացրին և դիտակցարարութացրին արշավանքի համար նախապատրաստվող զորքերի բանակի մասին տվյալները: Ի. Նեպլյուկը 1722 թ. հունիսի 18-ին զեկուցագրով տեղեկացնում էր, որ հունիսի 7-ին Վիեննայից ստացվեց մայիսի 16-ի լրագիրը, ուր ասված էր, որ Պետրոս 1-ինը անձամբ գտնվում է Աստրախանում և այդտեղից մտադիր է Մերձկասպյան շրջանները ուղարկել 105 հազարանոց մի բանակ:

Նշված հանգամանքներից ելնելով, Պետրոս 1-ինը որոշեց Նեպլյուկին հատուկ ցուցումներ տալ, որպեսզի նա հերքինման բոլոր լուրերը և դրանով իսկ վնասազերծի եվրոպական դիվանագիտության նկրտումները: Ռուս-թուրքական հարաբերությունները սրել ցանկանում էր հատկապես Անգլիան: Ռուսական պետության հզորացումը, նրա դուրս գալը դեպի Բալթիկ ծով և ուղմա-ծովային հզոր տերություն դառնալը, նրա տնտեսության ծաղկումը և ազգեցության աճը հարևան

23 Նույն տեղում, թ. 235.

երկրներում շփոթ էր առաջացնում անզլիական կառավարող շրջաններում։ Դեռևս Հյուսիսային պատերազմի տարիներին անզլիական դիվանագիտությունը փորձում էր Ռուսաստանի դեմ ստեղծել պետությունների դաշինք։ Ռուսաստանի հաջողությունները Անդրկովկասում և նրա հիմնավորվելը Կասպիականի ափերին երկյուղ էին ներշնչում անզլիական կառավարությանը, քանի որ այդ բոլորի հետևանքը պետք է լիներ Ռուսաստանի արտաքին առևտուրի ծավալի մեծացումը։ Իսկ Անզլիան ձգտում էր, որպեսզի Մերձավոր Արևելքի ամբողջ առևտրական մենաշնորհը իր ձեռքում լինի, և Ռուսաստանի արտաքին առևտուրը ամբողջապես կախալ վիճակում մնա Անզլիայից։ Կոստանդնուպոլսի անզլիական դեսպանը այդ օրերին ներշնչում էր մեծ վեղիրին, որ իրը թե Ռուսաստանը կամենում է պատերազմել Դանիայի դեմ, դրա համար էլ դաշինք է կնքում Վիեննայի արքունիքի հետ, մի քան, որ վտանգավոր է ինչպես Անզլիայի, այնպես էլ Թուրքիայի համար։

Ռուսական դիվանագիտությունը հմտորեն օգտագործում էր Եվրոպայում ստեղծված միջազգային դրությունը և անզլիական դիվանագիտության դեմ մղած իր պայքարում օգտագործում Անզլիայի և եվրոպական այլ պետությունների՝ ֆրանսիայի, Հոլանդիայի ու իսլանդիայի միջև դոյություն ունեցող հակասությունները։

Նեպլյումը փորձեց օգտագործել ֆրանսիական դեսպան Դե-Բոնակի միջնորդությունը։ «Ֆրանսիան ցանկանում էր թույլ շտալ, որ գժտություն ծագի Ռուսաստանի և Թուրքիայի միջև, որովհետև Վիեննայում համառեն խոսում էին Ռուսաստանի հետ քրիստոնյաների ընդհանուր թշնամու գեմ

դաշն կնքելու մասին, նշում էր կոմս Բասկիչը: Թուրքիայի թուրքության պատճառով Ավստրիան հեղտությամբ կկարողանար ի հաշիվ Թուրքիայի ընդարձակել իր տիրապետությունը, որի հետևանքով ավստրիական պետության քաղաքական կշիռը կաճեր ելքուղական գործերում: Դե-Բոնակը սկսեց բանակցությունները»<sup>24</sup>:

Թուրքական կառավարությունը առանձնապես երկյուղ էր կրում, որ Հայաստանը և Վրաստանը կընդունեն Ռուսաստանի հովանավորությունը և ոռւսական զորքերը կմիավորվեն Հայկական և վրացական ուժերի հետ: Այդ կնշանակեր, որ Թուրքիան վերջնականապես կորցնելու է Անդրկովկասը: Ոեթև էֆենդիի քարտուղարը գաղտնաբար տեղեկացրել է ոռւս թարգմանիչ Մալցեին, որ «...Բարձր Դուռը մտադիր է, իհարկե, պահպանել Հավիտենական Հաշտությունը Ռուսաստանի միապետի հետ ...սակայն այն պայմանով, եթե ոռւսական միապետը, բացի Շամախի քաղաքից, չի ցանկանա Պարսկաստանում մեծ առաջխաղացումներ անել, որովհետեւ եթե Շամախին զրավի էլ, ապա կարող է դա պատճառաբանել ոռւսական վաճառականներին լիզզիներից հասցված վիրավորանքով, մի բան, որ Բարձր Դուռը կհանդուրժի, թեպետ և այդ նրան հաճելի չի լինի, իսկ եթե ոռւսական միապետը Շամախին զրավիլուց հետո կմտադրվի իր տիրապետությանը ենթարկել վրացիներին, որոնք այժմ Պարսկաստանի հպատակության տակ են դտնվում, այդ բանին Բարձր Դուռը ոչ մի կերպ չի համաձայնվի, դատելով, որ այդ պատճառով Բարձր

<sup>24</sup> Записки графа Бассевича, «Русский архив», М., 1865, стр. 227.

Դուանը շար բարդություններ կպատահեն, որա համար էլ վաղօրոք պետք է սահամանափակի իր քայլերը (ոռուական միապետը—Վ. Մ.), որովհետև Բարձր Դուռը մտադիր էր այդ վրացիներին միացնել իր իշխանության ներքո գտնվող այլ վրացիների հետ, որոնք այժմ օսմանյան պետությանն են ենթակա: Իսկ եթե պարսկական վրացիները ոռուական հովանավորությունն ընդունեն, ապա հնարավոր է, որ մերոնց էլ կորցնենք, և որա համար էլ Բարձր Դուռը մտադիր է կանխել Ռուսաստանին այդ հարցում: Այդ մասին նա (Ռեփու էֆենդիի քարտուղարը—Վ. Մ.) հաստատապես դիտի, միայն թե կնային, թե այս ամառ ինչ անդի կունենա, քանի որ Բարձր Դուանը ամեն կողմից ներշնչում են, որ ոռուական զորքերը Պարսկաստանում մեծ առաջխաղացումներ պիտի ունենան, որից ժամանակի ընթացքում Բարձր Դուանն էլ վտանգ կսպաննա»<sup>25</sup>:

Թուրքիան, մյուս կողմից, ամեն ինչ անում էր, որպեսզի ստիպի Վախթանգ Երդին ընդունելու իր հովանավորությունը: Սակայն Քարթլիի թագավորը միշտ հրաժարվում էր համաձայնվել: Այս հանգամանքը մի անգամ չէ, որ նշում է Վախտիշտին: Նեպլյուկը 1722 թ. հունիսի 25-ի վեկուցագրում նշում էր. «Անցյալ օրը՝ հունիսի 21-ին, ինձ մոտ լինելով Բարձր Դուան թարգմանիչը, ասաց, որ արդեն 40 օր է անցել այն ժամանակվանից, ինչ հրամանագրեր են ուղարկված Բարձր Դունից էրդրումի փաշային, որպեսզի նա Վրաստանում թիգլին (իմա Թբիլիսի—Վ. Մ.) և Հայաստանում Երևանը որպան հնարավոր է ուղամական ուժով միացնի թուրքական:

25 ՌԱՔԱ, ֆ. ՌՀԲ, գ. 6, մ. 1, թ. 237—238:

կայսրության տիրապետությանը, խռովարարներից հովանավորելու պատրվակով։ Եվ ևս նրան որպես գաղտնիք, հայտնեցի, որ մեր միապետները կամենում են պահպանել հավիտենական հաշտությունը, սակայն, եթե Բարձր Դուռը պատերազմով այդ երկրները մտնի, չտեղեկացնելով այդ մասին... Հնարավոր է, որ դրանից գժտություն առաջանա, ուստի բարվոք կլինի խուսափել նման դեպքերից, որովհետև անըսպասելիորեն կարող է գժտություն ծագել։ Եվ նա ասաց, որ հրամանազրերը ուղարկված են, իսկ ինչ որ կպատահի, այն ժամանակը ցույց կտա, և ով ինչի կտիրանա, իրավունք էլ կունենա պահպանելու...»<sup>26</sup>:

Եվ պատահական չէ, որ թուրքական կառավարող շրջանները հետաքրքրվում էին Սուլիլի գուստը Դարեջանի գործերի որպիսությամբ Մոսկվայում, որը առանձնահատուկ դեր կատարեց Պետրոս I-ինի և Վախիթանգ 6-րդի բանակցություններում։ Նեպլյումը գրում էր. «Ես հաստատապես տեղյակ եմ, որ վեղիրը մերալեմին, որը եղել է Մոսկվայում (խոսքը Մուստաֆա աղայի մասին է—Վ. Ա.) հարցրել է իմերեթի արքայադստեր մասին, ինչպես է նա պահպանվում Ռուսաստանում և արդյոք նամակագրություն ունի վրացիների հետ, որին նա պատասխանել է, թե իրեն հայտնի է, որ արքայադստերը բնակվում է Մոսկվայում, բայց նամակագրության մասին ոչինչ չգիտե»<sup>27</sup>:

Սրեմտաելրուպական դիվանագետները դիտեին, որ Ռուսաստանի մերձեցումը Հայաստանի և Վրաստանի հետ

26 Ա.Ա.Ք. ֆ. ԹՀԹ, գ. 6, մ. 1, թ. 190:

27 Խույն տեղում, թ. 235:

երկյուղ է ներշնչում Թուրքիային, և ամեն կերպ ձգտում էին Հրահրել ոռուս-թուրքական պատերազմ, նրանք դիտմամբ սրում էին Թուրքիայի ուշադրությունը այս հարցի վրա:

Թուրքիայի համար հայ-վրաց-ոռուսական դաշինքի վտանգավորության մասին բազմիցս սովորական հայտնում էին Դրիմի խանը և Աղովի փաշան<sup>28</sup>: Մուսական դեսպանը, որին հայտնի էր Հայաստանի և Վրաստանի հարցում թուրքական կառավարության դիրքը, որոշեց այդ առթիվ Պետրոս 1-ինին հայտնել իր սեփական նկատառումները, այն է՝ Պետրոս 1-ինը, արդ եթե որոշել է ինչ գնով էլ լինի իր հովանավորության տակ առնել Հայաստանը և Վրաստանը, պետք է 1722 թ. ուղամական կամպանիայի ընթացքում զորքով մտնի այդ երկրները: Գրելով այս, Նեպլյուսը նկատի էր առնում, որ ուշ աշնանը և ձմռանը թուրքերը չեին համարձակվի սկսել ուղամական գործողություններ, իսկ զարնանը արդեն Պետրոս 1-ինը ժամանակ կշահեր և կկարգավորեր հարաբերությունները թուրքիայի հետ, կամ, ծայրահեղ զեպքում, լավ նախապատրաստված կլիներ պատերազմի համար<sup>29</sup>:

\* \* \*

« Մերձկասպյան շրջանները զրավելու խնդիրը իրականացնելու համար 1722 թվականին մուսաստանի համար, այնուամենայնիվ, ստեղծվել էր նողաստավոր վիճակ: Պարսկաստանում ստեղծված իրադրության պայմաններում Պետրոս

<sup>28</sup> Հին ակտերի կենտ, պետ. արխիվ, ֆ. Պետրոս 1-ինի կարինետ, 2-րդ բաժանմունք, գիրը 59, թ. 679, 767—787:

<sup>29</sup> ԲԱՔԱ, ֆ. ԲՀԲ, դ. 6, մ. 1, թ. 239:

1-ինը կարող էր հիշյալ շրջանները Ռուսաստանին միացնել՝ առանց Պարսկաստանի հետ խաղաղությունը խախտելու: Այնուհետև, ի դեմք հայերի և վրացիների՝ Ռուսաստանն ուներ հուսալի գաշնակիցներ: Վերջապես, 1721 թ. Հյուսիսային պատերազմից Ռուսաստանը դուրս էր հկել հաղթանակով: Նիշտադի հաշտությունը ազատ էր արձակում Պետրոս 1-ինի ձեռքերը և հնարավորությունը ընձեռում Մերձկասպյան շրջաններում սկսելու ռազմական գործողություններ:

Ռազմական գործողություններ սկսելու համար Ռուսաստանը ուներ բավարար հիմք՝ 1721 թ. օգոստոսի 7-ին Շամախիում կողոպտեցին ուսւ վաճառականներին:

Նշեցինք, որ Ռուսաստանի տնտեսական ու ռազմաքաղաքական շահերի միասնությունը այն շարժառիթն էր, որը ստիպեց Պետրոս 1-ինին 1722 թ. վճռական քայլ կատարելու Կասպից ծովի արևմտյան և հարավային ափերին տիրելու ուղղությամբ: Պետրոս 1-ինի արևելյան քաղաքականության բնական շարունակությունն էր Մերձավոր Արևելքի նկատմամբ: Տարբերությունը միայն այն էր, որ Պետրոս 1-ինը Ռուսաստանի թագավորներից առաջինն էր, որ ճիշտ գնահատելով ստեղծված իրադրությունը, կոնկրետ միջոցների դիմեց արևելյան երկրների հետ Ռուսաստանի առևտուրը զարգացնելու և Անդրկովկասը իր հովանավորության տակ առնելու ուղղությամբ: Ֆ. Էնգելսը Պետրոս 1-ինի արտաքին քաղաքականությանը տվել է հետեւյալ բնորոշումը. «Այդ հիրավի մեծ մարդը... առաջինը լիովին գնահատեց այն իրադրությունը, որ զարմանալիորեն բարենպաստ էր Ռուսաստանի համար, և սկսեց իրագործել Ռուսաստանի քաղաքա-

կանության հիմնական գծերը Շվեդիայի, Թուրքիայի, Պարսկաստանի և Լեհաստանի նկատմամբ»<sup>30</sup>:

Սկսելով արշավանքը, Պետրոս 1-ինը նպատակագրովել էր տիրել Կասպից ծովի արևմտյան և Հարավային ափերին, սակայն այդ գեռ չի նշանակում, որ նպաստավոր պայմանների դեպքում նա կրավարարվեր միայն Հիշյալ շրջաններով: Բայց Պետրոս 1-ինը ստիպված էր հաշվի նստել առաջացած իրադրության ողջ բարդության հետ և առաջին հերթին իրականացնել միայն մերձավորագույն խնդիրը՝ տիրել Կասպից ծովի ափերին:

Մուսական դորքերի պարսկական արշավանքը օբյեկտիվորեն համապատասխանում էր Անդրկովկասի ժողովուրդների շահերին, որոնք համառորեն օգնություն էին խնդրում՝ պարսկական լծից ազատվելու և թուրքական զավթիչներից պաշտպանվելու համար:

Պետրոս 1-ինի արշավանքը նոր թափ հաղորդեց Անդրկովկասի ժողովուրդների ազատազրական պայքարին:

Ի դեմս Մուսաստանի, Անդրկովկասի բախտակից ժողովուրդները տեսնում էին միջազգային մեծ հեղինակություն ունեցող հզոր մի ուժի, որի օգնությամբ կկարողանան աղատազրութել թուրք-պարսկական դաժան տիրապետությունից: Մուսաստանի և Անդրկովկասի ժողովուրդների շահերի միասնությունը XVIII դարի 20-ական թվականներին հանգեցրեց այդ երկրների միջև ռազմա-բազաքական դաշինքին, որի նախապատրաստումը սկսվել էր դեռևս նույն դարի սկզբներից: Դաշինքի գլխավոր նպատակներից էր Մուսաստանի

<sup>30</sup> Կ. Մարկս և Փ. Էնգելը, Ըստ., տ. XVI, ս. 2, ստ. 12.

օգնությամբ Արևելյան Հայաստանի և Վրաստանի ազատադրումը պարսից տիրապետությունից, Ռուսաստանի հովանավորության ներքո Հայ-Վրացական միացյալ թագավորության ստեղծումը, որը ի վիճակի կլիներ ապահովելու Անդըրկովկասի և ռուսական մերձկասպյան տիրույթների անվտանգությունը թուրքական զավթողական նկրտումներից<sup>31</sup>:

Թե հատկապես երրվանից էր Պետրոս 1-ինը մտադրվել արշավել դեպի Կասպից ծովի արևելյան ափերը, դժվար է ստույգ ասել:

Հայտնի է, որ դեռևս XVII դարի վերջերին նա առանձնահատուկ հետաքրքրություն էր ցուցաբերում Վրաստանի նկատմամբ և իր հովանավորության տակ էր առել Իմերեթիայի թագավոր Արշիլին: Վերջինս, թուրք և պարսիկ զավթիչների հետապնդումից խուսափելով, ամբողջ ընտանիքով և մեծ շքախմբով բնակություն հաստատեց Ռուսաստանում: Դրանով իսկ Մոսկվայում ստեղծվեց վրացական դադութ, որը հետագայում ռուս-վրացական հարաբերությունների պատմության մեջ նշանակալից դեր խաղաց:

Արդեն 1680 թ. Արշիլը ռուսական արքունիքին ներկայացնում է Վրաստանը ազատազրելու իր ծրագիրը: Նա խընդրում էր իրեն տրամադրել 15 հազարանոց մի զորաբանակ: Ընդումին նշում էր, որ այդ բանակը պարենի նեղություն չի կրի, որ ինքը՝ Արշիլը պատրաստ է հարկերը հավաքելուց հետո ցույց տալ դրամական օժանդակություն հիշյալ զորքը առաքելու համար: Արշիլը նշում էր այնուհետեւ, որ Ռուսաստանը

31 «Հայ-ռուսական հարաբերությունները XVIII դ. առաջին երեսնամյակին», Փաստաթղթերի ժողովածու, էջ 29:

Թուրքիայի հետ բանակցություններ վարելիս առանձնակի կետով անդրադառնա Վրաստանի խնդրին:

Արշիլի այս առաջարկին ոռուսական արքունիքը պատասխանում է, թե զորք ուղարկել առաջմ հնարավոր չէ, քանի որ Ռուսաստանը Թուրքիայի հետ պատերազմի մեջ չէ, իսկ եթք ծագի նման պատերազմ, ապա այնժամ Վրաստանը մոռացության չի տրվի<sup>32</sup>: Ռուսական կառավարության այս պատասխանը վկայում է, որ այդ ժամանակ Ռուսաստանը մտադիր չէր ակտիվ կերպով միջամտելու Անդրկովկասի գործերին:

Ռուս-վրացական, ինչպես տնտեսական-առևտրական, այնպես էլ քաղաքական հարաբերություններում գործուն մասնակցություն ունեին Վրաստանում բնակություն հաստատած հայերը<sup>33</sup>:

1701 թ. Մոսկվա ժամանեց հայ աղատագրական պայքարի երախտավոր Խորայել Օրին, որը ծանոթացավ և բարեկամացավ Մոսկվայում գտնվող Արշիլ թագավորի հետ: Խորայել Օրին Պետրոս 1-ինին հանձնեց Անգեղակոթի գաղտնի ժողովի մասնակիցների խնդրագիրը՝ Պարսկաստանի դեմ պայքարելու համար օգնություն ստանալու մասին: Ռուսական կառավարությունը ըստ արժանվույն գնահատեց Խորայել Օրու նախաձեռնությունը և պարտավորվեց շվեդների դեմ պատերազմը ավարտելուց հետո ուղղմական օգնություն ցույց տալ հայերին:

Բոլոր պարագաներում, 1710 թվականին արդեն Ռուսաստանում վերջնականապես հասունացել էր դեպի Կասպիական

32 ՀԱԿՊԱ, ֆ. Ռուսաստանի հարաբերությունները Վրաստանի հետ (ԲՀՎ) գ. 1, թ. 69—70:

33 ՀԱԿՊԱ, ֆ. ԲՀՎ, գ. 1, թ. 56, թ. 57:

ափերը արշավելու դադախարը: Ծուսաստանում Դանիայի դեսպան Գեորգ Գրունդը իր կառավարությանը 1710 թ. գրում էր, որ Պետրոսը պարզորոշ հայտարարում էր շվեդների դեմ պատերազմը ավարտելուց հետո Պարսկաստանի դեմ պայքարելու իր պատրաստակամության մասին, մի բան, որը, Գրունդի կարծիքով, դժվար իրագործելի չէր, եթե ուստական թագավորը աննկատելիորեն զորք հավաքեր Աստրախանում և այդտեղից հանկարծակի սկսեր ռազմական գործողությունները. դրանով Պարսկաստանը կզրկվեր պատասխան միջոցառումներ ձևոնարկելու հնարավորությունից: Թեպիտե, Գրունդի ասելով, հարցի այդ կողմը այնքան էլ չէր մտահոգում Պետրոսին, որովհետեւ նա կարող էր Մերձկասպյան մարզերը գրավել ավելի արագ, քան այդ մասին լուրերը կտարածվեին Եվրոպայում<sup>34</sup>:

Ա. Պ. Վոլինսկին «Արդարացում պարսկական գործի մասին» գրության մեջ նույնպես նշում է, որ նախքան իր պարսկական դեսպանագնացությունը, Պետրոսը որոշել էր Կասպից ծովի առափնյա շրջանները միացնել Ծուսաստանին: «Մի քանի տարի առաջ, նախքան իմ այնտեղ (Պարսկաստան — Վ. Մ.) գնալը, — գրում էր նա, — արդեն, հարկավ, նորին կայսերական մեծությունը ուներ իր այդ մտադրությունը. բացի ինձանից և ինձանից առաջ նորին կայսերական մեծությունը Պարսից պետության վիճակին բավականաշափ տեղյակ էր Վրաց թագավոր Արշիլից և հայ կաթողիկոսներից, որոնք, չցանկանալով ասլրել Պարսից լծի տակ, բազում ան-

<sup>34</sup> М. А. Полиевктов, Проект Бругемана и русская оккупация прикаспийских областей в 20-х годах XVIII в., Тифлис, 1934, стр. 35—36.

գամ նորին կայսերական մեծությանը, որպես քրիստոնյա երկու ժողովուրդների՝ վրացիների և հայերի փրկարարի, խնդրում էին վաղուց, և այդ խնդրանքով հայերից և վրացիներից դադար պատվիրակներ են ուղարկված եղել նորին կայսերական մեծության մոտ, որի մասին այժմ էլ արտաքին գործերի կողեզիայում տեղեկություններ կարելի է գտնել»<sup>35</sup>:

1715 թ. Պարսկաստանում գեսալան նշանակված Արտեմի Վոլինսկին, ինչպես ասվեց, պաշտոնապես պետք է առևտրական պայմանագիր կնքեր և Կասպից ծովում նոր նավահանգիստներ կառուցելու թույլտվություն ձեռք բերեր, որովհետեւ գոյություն ունեցող նավահանգիստները հարմար չեին, Վոլինսկին պետք է նաև պարսից կառավարությունից ստանար ուսւ վաճառականների կրած վնասի հատուցումը:

Սրանից զատ, Վոլինսկուն տրված էր զաղտնի Հրահանդ, 12 կետից բաղկացած<sup>36</sup>, Այդ Հրահանդով հանձնարարված էր նրան դադար ու ազմական, քաղաքական, տեղագրական բնույթի տեղեկություններ հավաքել Պարսկաստանի վերաբերյալ:

Վոլինսկին պետք է պարզեր նաև թուրք-իրանական հարաբերությունների պատկերը: Հրահանդի իններորդ կետի համաձայն Վոլինսկին պետք է վերահասու լիներ և Պետրոս 1-ինին տեղյակ պահեր օտարերկրյա գեսալանների գործունեության մասին, իսկ ութերորդ և տասներկուերորդ կետերով նա դաշն պետք է կնքեր հայերի և վրաց թագավոր Վախթանգ Երդի հետ:

35 «Оправдение о персидском деле». Чтения в обществе истории и древностей Российских, М., 1868, кн. III, стр. 112—113.

36 ՀԱԿՊԱ, ֆ. ԲՀՊ, գ. 1, թ. 46—52:

Ծուսական գեսպանությունը 1717 թվականի մարտի 14-ին հանդիսավոր կերպով Սպահան ժամանեց: 1717 թ. հունիսի 30-ին, կնքվեց առևտրական համաձայնագիր, որը բաղկացած էր 10 կետից և հայտնի է «ասեկուրացիա» (Հռուսագրում) անունով: 1717 թ. սեպտեմբերի 1-ին Վոլինսկին Սպահանից Գիլանի վրայով ուղևորվեց Շամախի:

Զնայած անբարենպաստ պայմաններին, Վոլինսկին, Պետրոս 1-ինի պաշտոնական հանձնարարությունը հաջողությամբ կատարեց և հաջողեցրեց Ծուսաստանի համար շահավետ առևտրական համաձայնագրի կնքումը իրանի հետ: Նույնպիսի հաջողությամբ Վոլինսկին կատարեց գաղտնի հրահանգով նախատեսված ոչ պաշտոնական հանձնարարությունները:

Սպահանում նա ուսումնասիրեց իրանի ներքին դրությունը, հավաքեց հետաքրքիր տեղեկություններ, որ զրի է առնված օրագրում ու ծածկագրի նամակներում:

Ելնելով Պարսկաստանում տիրող դրությունից, Վոլինսկին առաջարկում էր սկսել ուղղմական գործողություններ Կասպից ծովի ափերին: «Թեալետ ներկա մեր պատերազմը (Հյուսիսային պատերազմը Շվեդիայի դեմ—Վ. Մ.), մեզ կխանգարեր,—դրում էր նա, —սակայն ինչպես ես այստեղի թուլությունը տեսնում եմ, մենք առանց որևէ երկյուղի կարող ենք սկսել, քանզի ոչ միայն ամբողջ մի բանակով, այլև փորբաթիվ դրաբաժնով այս երկրի մեծ մասը առանց դժվարության Ծուսաստանին կարելի է կցել»<sup>37</sup>: Պարսկաստանից վերադառնալիս Վոլինսկին ուսումնասիրեց Գիլանի մարզը,

37 ՀԱԿՊԱ, ֆ. 77, գ. 2, թ. 201:

իսկ Շամախիում յոթ ամիս մնաց՝ պատճառաբանում էր, որ վտանգավոր է այդ ժամանակ Կասպից ծովով նավարկելը: Իրականում նա այստեղ շարունակում էր տեղեկություններ հավաքել: Շամախիում ժամանակը ապարդյուն չանցավ:

Վոլինսկին հավաքեց կարեոր տեղեկություններ և ձեռք բերեց Դերենդի ամբոցի պլանը: Շամախիում նա մնաց մինչև 1718 թ. Հուլիսի 25-ը և միայն օգոստոսի 5-ին ժամանեց Աստրախան:

Պարսկաստանում ժողոված բոլոր նյութերը Վոլինսկին բերեց Պետերբուրգ, որտեղ երկարատև զրուց ունեցավ Պետրոս I-ինի հետ: Վերջինս գոհ մնաց գեսպանության արդյունքներից և Վոլինսկուն շնորհեց գնդապետի, ապա նաև գեներալ-ադյուտանտի կոչում:

Այս տեղեկությունների հավաքման գործում Վոլինսկուն մեծապես օգնեց այն, որ դաշն էր կնքել Հայերի և վրացիների հետ, համաձայն իրեն արված հրահանդի:

Տակավին Պարսկաստան գնալիս Շամախիում Վոլինսկին սկսեց տեղեկություններ ժողովել վախթանգի և նրա վիճակի մասին: Շամախիի խանի կողմից իր մոտ ուղարկած ներկայացուցիչներից մեկից՝ Բեծան բեկից<sup>38</sup> նա իմացավ, որ վախթանգ 6-րդը մահմեղականացել է<sup>39</sup>:

Այս հանգամանքը, հարկավ, շփոթեցրեց ուստ գեսպանին և կտոկածներ առաջացրեց նրա մոտ, առավել ևս այն բանից

38 «Առավոտչան գեսպանի մոտ եկավ մեհմանդարը, Շամախիի խանի կողմից ուղարկված և նրա հետ գեսպանի մոտ եկավ խանի մարզը՝ ծագումով վրացի՝ Բեծան բեկը (բրիտանյա) խանի շնորհավորանքներով հանդերձ» նույն տեղում, ֆ. 77, գ. 2, թ. 13—14:

39 Նույն տեղում, թ. 15—16:

Հետո, երբ ժամանելով Սպահան՝ պարսից կառավարությունը թշնամաբար դիմավորեց նրան։ Հասկանալի է, որ Վոլխնսկին առանձնահատուկ զգուշությամբ պետք է գործեր Պարսկաստանում եղած վրացիների հետ, հատկապես Վախթանգ Ե-րդի հետ ունեցած բանակցությունների ժամանակ։ Ոչ պակաս զգուշություն էր անհրաժեշտ նաև Վախթանգ Ե-րդին, քանզի շահը համոզված էր, որ վրաց թագավորը նրան հավատարի չէր կարող լինել և արթուն հետեւում էր նրա յուրաքանչյուր քայլին։ Սակայն չնայած նման ծանր իրադրությանը, Ռուսաստանի դեսպանի հետ հայերը և վրացիները կարողացան կապ հաստատել։ Իր օրագրում Ա. Վոլխնսկին գրում է. «ամսի 20-ին (1717 թ. մարտ—Ն. Մ.) դեսպանի մոտ եկավ մի կապուշին, որը այստեղ է բնակվում։ Եվ ծածուկ հայտարարեց, որ իրեն ուղարկել է կուլարազասի Ռուստոմը (որը հարազատ եղբայրն է վրաց արքայազն Վախթանգի, իսկ Վախթանգը ընդունելով մուսուլմանական դավանանք, նշանակված է սպասալար)։ Կապուշինը իր մասին հայտարարեց, որ ցանկանում է, դեսպանի բարեկամը լինել և խոստանում է ծառայություն մատուցել ինչով ի վիճակի կլինի, որին դեսպանը պատասխանեց, որ նա շափազանց ջնորհակալ է նրա սիրո համար և ուրախ է նրա բարեկամությանը, ի պատասխան դըրան, ինքը նույնպես խոստանում է նրա հավատարիմ բարեկամը լինել։ Այնուհետև հարցրեց կուլարազասու մասին, նա ինչ ազդեցություն ունի, կարող է արդյոք որևէ հարցի շուրջ բարեխոսել էհթիմա դովլեթի առջեւ։ Դրան նա պատասխանեց, որ դեսպանին ճշմարտությունն է հայտարարում, որ ինքը հույս չունի, թե կուլարազասին համարձակվի որևէ բարեխոսություն անել, միայն լսածը կարող է իր միջոցով հայտնել՝

դաղտնապահության պայմանով։ Դեսպանն ասաց, որ ինքը խիստ գոհ կլինի, եթե իրեն իմացած գաղտնիքները հայտնեն։ Բնդսմին խոստացավ, որ այդ գաղտնիքները չեն հրապարակվի<sup>40</sup>։

Սպահանում Վոլինսկին քանիցս հանդիպում ունեցավ նաև հայազգի Փարսադան բեկի՝ Վախթանգ Ե-րդին մերձավոր մի անձնավորության հետ։ Փարսադան բեկը մինչև Ռեշտ ուղեկցեց Սպահանից վերադարձող գեսպանին, ուր այնուհետև կանգ առավ այն հարկի հավաքման համար, որը պատկանում էր Վախթանգ Ե-րդին, որպես իրանի պլիավոր զորահրամանատարի<sup>41</sup>։

Ռեշտում հարկ ժողովելը Փարսադանի համար սոսկ պատրվակ էր իրականում նրա ճանապարհորդության հիմնական պատճառը ուսւ գեսպանի հետ բանակցություններ ունենալն էր ինչպես Վոլինսկին էր նշում իր օրագրում — Փարսադանը նախքան Ռեշտից մեկնելը ուսւ գեսպանին խնդրեց, որ «... նա առանց կասկածի իր միջոցով (Փարսադանի միջոցով — Վ. Մ.) զրի սպասալարին ինչ կամենում է։ Հայտարարելով, որ նա շատ սիրով կընդունի և դրանով իսկ իր փրկության հույսը սրտում կվերակենդանացնի և որ նրան ուսւերեն, ոչ թե այլ լեզվով գրի, հայտնելով իբր թե նա՝ սպասալարը, միշտ իր մոտ ունի այնպիսի վրացի մարդիկ, որոնք եղել են Ռուսաստանում և բավական սովորել են ուսւերեն»<sup>42</sup>։ Սակայն Վոլինսկին, որը շատ զգույշ էր գործում,

40 ՀԱԿՊԱ. ֆ. 77, 1715—1718, № 2, թ. 126։

41 Գ. Գ. Պահանձե, նշ. աշխ., էջ 70 (վրացերեն)։

42 ՀԱԿՊԱ. ֆ. 77, 1715—1717 թթ. զ. 2, թ. 422։

որոշեց Վախիթանգին միայն անձնական բնուլիթի նամակ գրել. «Եվ թեպետ այս Փարսադանը հաստատապես հուսադրում էր դեսպանին, սակայն նա չէր կարող համարձակվել գրել այլ բան, բացի սիրալիր խոսքերից և ափառանքից, նամակը գրեց ուստերեն և տվեց Փարսադանին»<sup>43</sup>:

Հետագայում (1718 թ. մայիսին) Փարսադանը Շամախիում դարձյալ մի քանի անգամ հանդիպում ունեցավ Վոլինսկու հետ: Նա ուստական դեսպանին ուղղակի հայտնեց, որ ստիպված է մեծ զգուշությամբ գործել: Ժամանելով Շամախի, նա հարկադրված էր սկզբից պաշտոնապես դիմել տեղական իշխանությանը, խանի տեղակալին (Շամախու խանը այդ ժամանակ տեղում չէր գտնվում), «...որպեսզի որևէ կասկած հարուցի նրանց մոտ և շիմանային, որ ինքը դեսպանի մոտ է ուղարկված Վախիթանգի կողմից: Որի համար էլ արքայազնը նրան փոստի կառքեր է տրամադրել, պատրիակելով, թե իբր նա այնտեղ է ուղարկվել այլ գործով և ոչ թե դեսպանի մոտ»<sup>44</sup>: Օրագրում Վոլինսկու դրառումների վերլուծությունը, Փարսադանի հետ ունեցած հանդիպումները ցույց են տալիս, որ ուստի դեսպանը և Վախիթանգը մեծ զգուշությամբ էին գործում և խոստափում էին գրավոր կապ պահպանելուց: Միաժամանակ Վոլինսկուն մտահոգում էր այն, որ Վախիթանգը անձամբ նրան ոչինչ չէր գրում: 1718 թ. մայիսի 30-ին Վոլինսկին Պետրոս 1-ինին գրում էր. «Մի քանի օր առաջ Թավրիզից այստեղ ժամանեց Փարսադան բեկ անունով մեկ վրացի, որը ինձ ասում էր, թե իբր ինքը իր արքա-

43 Նույն տեղում:

44 ՀԱԿՊԱ, ֆ. 77, գ. 2, թ. 426:

յազնի կողմից հատկապես ինձ մոտ է ուղարկված, որը և հնարավոր է: Եվ ինձ տվեց նրանից մի նամակ՝ ուղղված իր աղքականութիւնի՝ Խմերեթիացի թագուհուն, ինչպես և համարձակորեն նրանից ինձ որոշ խիստ կարեսը բաներ հայտնեց, և այնշափ համարձակ, որ իբր արքայազնը ցանկանում է Զեր ծառայությունը քննունել, և պարսիկների գեմ մարտնչել, որը ինձ հայտնելով՝ խնդրում է, որպեսզի ես նրան ընդարձակ նամակ գրեմ, թե ինչպես վարվի նա պարսիկների հետ, սակայն ես կարծում եմ, որ ճշմարիտ չէ և մտածեցի, որ այդ արքայազնը ինձանից նամակ է խնդրում, որպեսզի այդ մասին իր արքունիքում հայտնի, և զրանով իսկ ավելի մեծ հեղինակություն ձեռք բերի, քանի որ նրան քիչ են հավատում, որովհետեւ եթե նա նման մտադրություն ունենար, ապա ինքն անձամբ կարող էր այդ մասին ինձ գրել, որին ես որպես Զերդ մեծության վսահելի ծառա, կհավատացի, սակայն, քանի որ ինքը ինձ չի գրում, միայն ինձանից է նամակ խնդրում, զրա համար էլ, ամենաողորմած տեր, մի զայրացեք ինձ վրա, որ ես նման համարձակություն շցուցաբերեցի, որ ես նրան որևէ դադտնիքի մասին չզգեցի, և ոչինչ չեմ համարձակվի անել, քանի դեռ ես իրենց ձեռքում եմ, իսկ երբ գթասիրտ աստված ինձ կազատի, ապա այն ժամանակ հնարավոր կլինի ստուգել նրա խիղճը»<sup>45</sup>:

Ինչ վերաբերում է Վախթանգ 6-րդին, ապա որքան էլ մեծ լիներ նրա ցանկությունը, նա չէր համարձակվի Վոլինսկու հետ զրավոր բանակցությունների մեջ մտնել, քանի որ տակավին ստիպված էր մնալ Պարսկաստանում: Այստեղ

45 ՀԱԿՊԱ, ֆ. ԱՀՊ, գ. 2, թ. 375:

ավելորդ չի լինի հիշատակել, որ Վախթանգ Ե-րդը Պարսկաստանից ոչ Սուլխան Սաբա Օրբելիանուն և ոչ էլ Կոստանդնուպոլսում ֆրանսիական դեսպանին անձամբ նամակներ շեր դրում։ Վախթանգի հանձնարությամբ այս անձանց նամակներ էին գրում վատահելի անձինք<sup>46</sup>։

Չնայած այն բանին, որ Վոլինսկու և Վախթանգի միջև գրավոր կապ չհաստատվեց, այնուամենայնիվ, նրանց միջև դաշինք կնքելու հող նախապատրաստվեց Փարսադանի միջնորդությամբ, որը բանակցեց ուստի դեսպանի հետ՝ պարսից բանակի, դեպի Անդրկովկաս ուստական զորքերի արշավելու, Պետրոս 1-ինի հետ Վախթանգի համագործակցելու, Վախթանգի մահմեղականություն ընդունելու և մի շարք այլ հարցերի շուրջ<sup>47</sup>։

1719 թ. Ա. Վոլինսկին, որպես Պարսկաստանի գործերին լավատեղյակ անձնավորություն, նշանակվեց Աստրախանի նահանգապետ, որպեսզի նախապատրաստի դեպի Կասպից ծովի ափերը կատարվելիք արշավանքը։ Նույն տարվա ապրիլին նա արտաքին գործերի կողեգիա ուղարկեց հատուկ զեկուցագիր, որտեղ ի միջի այլոց, խնդրում էր թույլտվություն Վախթանգ Ե-րդի հետ նամակադրական կապ հաստատելու համար. «...նամանապես ևս կցանկանայի, թեպետ միայն գործից զատ, սակայն ունենալ նամակադրություն նաև վրաց արքայազնի հետ (նախօրոք նրան ոչ մի գաղտնիք

<sup>46</sup>Տե՛ս Թ. Դամառ օ Շցոլո, Օնթոռուա յատոլուցոծուսա յարտցըլու Յորուս, Ծճուլ., 1902, զ. 316—317, նաև Գ. Գ. Պական ձեւ, նշվ. աշխ., էջ 71—72 (վրացերեն)։

<sup>47</sup>ՀԱԿՊԱ, ֆ. ԱՀՊ, դ. 2, թ. 422—432։

Հայտնելով, քանզի նրա հակվածության մասին կարելի է խմանուլ նաև մասնավոր նամակներից), ինչպես և Վրաստանի հոգևոր անձանց հետ, որովհետև նրանք այնտեղ անդոր չեն, հատկապես նրանց պատրիարքը, որը արքայազնի հարազատ եղբայրն էր. դրա համար, եթե բարենպաստ կտտնեք, այդ գործի համար նրանց ժողովրդից՝ իմերեթի թագուհու մարդկանցից մեկին նշանակեք Աստրախանում աշխատելու համար. ավելի լավ կլինի, եթե նշանակված մարդը հոգևոր անձանցից լինի»<sup>48</sup>:

Այս ղեկուցագիրը քննարկեցին պետական կանցլերը, կանցլերի օգնականը և իսկական գաղտնի խորհրդատու Պ. Ա. Տոլստոյը, որոնք 1720 թ. հունիսի 8-ին հետևյալը որոշեցին. «...ջանալ և հոգալ նամակագրության համար, այդ ժողովրդին փաղաքշել և նորին թագավորական մեծության կողմը զրավել: Իսկ ինչ վերաբերում է անձնավորության ընտրությանը, նաև այդ մասին թող ջանք թափի այդպիսին ընտրելու և նրա մասին ղեկուցելու սենատին՝ որոշելու և նրան հուսագրելու համար»<sup>49</sup>:

Այս որոշումը ընդունվել է 1720 թ. մարտի 22-ին Պետրոս 1-ինի Աստրախանի նահանգապետին աված հրահանդի հիման վրա: Պետրոս 1-ինը պահանջում էր. «Վրաց արքայազնին փորձել մեր կողմը զրավել, որպեսզի հարկավոր գեպքում մեղ հավատարիմ լինի, և այդ բանազնացության համար մարդ վերցնել Արշիլի տան վրացիներից»<sup>50</sup>:

48 ՀԱԿՊԱ, ֆ. 77, գ. 5, թ. 2—3:

49 Նույն տեղում, թ. 2:

50 ՀԱԿՊԱ, ֆ. Պետրոս 1-ինի կարինետ, 1-ին բաժանմունք, դիրք 30, թ. 123—124:

Ստանալով Պետրոս 1-ինի թուլավորի թյունը, Վոլինսկին  
գրավոր կապ հաստատեց Վախթանգ 6-րդի հետ, որը 1719  
թվականից արդեն վրաստանումն էր:

Վրաստանի առաջավոր քաղաքական գործիչները ճիշտ գնահատեցին ստեղծված իրադրությունը և որոշեցին, որ հասել է ժամանակը իրականացնելու վաղեմի ցանկությունը՝ Խուսաստանի օգնությամբ աղատագրել Վրաստանը Պարսկաստանի տիրապետությունից և վերադարձնել Թուրքիայի կողմից զավթված վրացական Հողերը։ Սակայն, երբ այս խնդիրը քննարկվում էր Վախթանգ Ե-րդի արքունիքում, խորհրդաժողովի ոչ բոլոր մասնակիցներն էին այս ծրագրին կողմնակից<sup>51</sup>։ Նրանց մի մասը այս ծրագիրը Քարթլիի համար կորստաբեր էր Համարում, պատճառաբանելով, թե Վրաստանի բազմաթիվ թշնամիները կօգտագործեն այդ առիթը և ուստական ըստրերի Անդրկովկաս մտնելուց առաջ երկիրը կողուպուտի և ավերի կենթարկեն։ Սակայն Վախթանգի և նրա համախոռների վճռականության առջև նրանք տեղի տվեցին և համաձայնեցին։ Բայց նրանք խորհուրդ տվեցին Վախթանգին գործել զգուշորեն, ելույթ ունենալ փոքրաթիվ զորքով և Պետրոս 1-ինին ծածուկ օգնություն ցույց տալ:

Վրաստանի առաջավոր քաղաքական գործիչները և նրանց թվում Վախթանգ Ե-րդը, փրկությունը միայն վճռականորեն գործելու մեջ էին տևանում, ինչպես Ռուսաստանի, այնպես էլ Վրաստանի կողմից։ Այս միտքը նրանք փորձում էին անցկացնել միշտ։ Սրա հիման վրա Վախթանգ Ե-րդը մշակեց ուղմական ծրագիր, որի մասին 1721 թ. օգոստոսի 15-ին

Վոլինսկին հայտնեց Պետրոս 1-ինին, Վոլինսկու զեկուցագրից կարելի է եղբակացնել, որ վրացական կողմի պահանջները հանգում էին հետևյալին.

1. Ռուսաստանը տեսք է ուղղակի իր զորքը մտցնի Վրաստան՝ հինգ կամ վեց հազար հոգու սահմաններում և այն տեղավորի զորանոցներում: Զորքի ներկայությունը կվերացներ նաև այս հարցում վրաց աղնվականության մեջ եղած անհամաձայնությունը:

2. Տասնհազարանոց կամ ավելի զորք մտցնել Պարսկաստան՝ Դերբենդը կամ Շամախին գրավելու համար, առանց որի պատերազմի մեջ մտնելը վտանգավոր է:

3. Թերեք դետի վրա կառուցել ամրոց, Կաբարդայի և Գրեբենյան կաղակների բնակատեղերի միջև, այնտեղ տեղավորելով ռուսական կայազոր՝ Վրաստանի հետ աղատ հաղորդակցելու և իրենց պաշտպանելու համար:

Հաղորդելով այս բոլորի մասին, Վոլինսկին ընդգծում էր, որ վրացական կողմի այս առաջարկությունները հիմնավոր են: «Վախթանգը, — գրում էր Վոլինսկին, — պատկերացնում է Պարսկաստանի ներկա թույլ վիճակը և այն օգուտը, որ Դուք անձամբ կունենաք այդ պատերազմից: Եթե Դուք բարեհանեք շահի գեմ պատերազմ սկսելու, նա՝ Վախթանգը, կարող եք ազմադաշտ դուրս բերել իր զորքը՝ թվով 30-ից մինչև 40.000 և այնպես է հուսագրում, որ եթե Ձեր զորքը Վրաստան մտնի, ապա նա միայն իր զորքով աստծո օգնությամբ կհանի մինչև Սպահան, քանի որ նա պարսիկներին կնամարդ է համարում»<sup>52</sup>:

52 ՀԱԿՊԱ, ֆ. Պետրոս 1-ինի կարինետ, 2-րդ բաժանմունք, գիրք 54, թ. 640. С. М. Соловьев, История России... кн. 4, т. XVIII, стр. 668—669.

Նոյեմբերին Պետրոս 1-ինին Վախթանգը հայտնում է, որ ինքը տեղյակ է ոռւսական կողմի առաջիկա ձեռնարկումներին և իր ձեռքի տակ եղած ուժերը գոհունակությամբ ի սպառ է դնելու համատեղ նպատակների իրազործմանը<sup>53</sup>:

Այսպիսով, 1721 թվականին Պետրոս 1-ինի և Վախթանգ 6-րդի միջև փաստորեն դաշն կնքվեց Պարսկաստանի դեմ համատեղ գործելու մասին:

Քաջատեղյակ հայերի ապստամբական տրամադրություններին, Վախթանգը գիտակցում էր, որ հայերի և վրացիների մասնատված գործողությունները դատապարտված կլինեն ձախողման: Այդ իսկ պատճառով նա բանակցությունների մեջ մտավ հայ մելիքների հետ և որոշ միջոցներ ձեռնարկեց նպաստելու հայ զինվորականության կազմակերպման գործին: Հայկական զինվորական ուժ գոյություն է ունեցել ազատագրական շարժումից առաջ: Բայց Զաքարիա Սարկավագի տվյալների՝ պարսից շահերը և խաները հաճախ էին համալրում իրենց զորքը հայերով: Ճանապարհորդ Ադամ Օլեարիի վկայությամբ, նրա Շամախի ժամանելու կապակցությամբ, տեղական խանը քաղաքից «2000-ից ավելի հետեւակ էր հանել, մեծ մասամբ հայ քրիստոնյաներ»<sup>54</sup>: Վերջապես, հայտնի է, որ հայ խոշոր մելիքները ունեին մշտական թիկնառակ զորք, որի օգնությամբ նրանք պահպանում էին իրենց

53 М. Б р о с с е, Переписка на иностранных языках грузинских царей с российскими государями, от 1639 по 1770 г., СПб., 1861, стр. 138.

54 «Описание путешествия Адама Олеария», М., 1870, стр. 526.

տիրուվթները և որով պատերազմի ժամանակ պարտավոր էին օգնության գնալ շահին, խանին<sup>55</sup>:

«Հայկայն հայ զինվորականության միավորումը և ինքնուրույն հայկական զորքի ստեղծումը տեղի է ունեցել հավանաբար XVIII դարի 20-ական թվականների սկզբներին, երբ կազմակերպվեցին հայկական սղնախները»<sup>56</sup>: Հայկական զորքի կազմակերպման զործում նշանակալից է վրաց թագավոր Վախթանգ Ե-րդի դիրք, որը օտարերկրյա զավթիչների դեմ հայ ժողովրդի զինված պայքարի ընթացքում և այդ պայքարը նախաղատրաստելու ժամանակաշրջանում Հայաստան էր ուղարկում զորահրամանատարներ: «Եվ Վախթանգ Ե-րդի կարգադրությամբ մենք սկսեցինք կազմակերպել (զորք)...», — հաղորդում է Եսայի Հասան-Զալալյանը<sup>57</sup>: Վախթանգ Ե-րդը ղեկավարում էր վրաց-հայկական միացյալ այն զորքը, որ եկել էր Դանձակ: Հենց այդ ժամանակ էլ տեղի ունեցավ հայ և վրաց ուժերի միավորումը սեփյանների և թուրք զավթիչների դեմ:

Հարյուրամյակների խորքերից է գալիս հայ և վրաց ժողովրդների բարեկամությունը: Դարեր շարունակ ենթարկվելով օտար նվաճողների բռնություններին և ավերածություններին, բախտակից և կրոնակից հարեան այդ ժողովրդները փայփայել են ազատագրական միենույն նպատակները և

55 Ի. Մ ե լ ի թ ս ե թ - Բ ե կ, Վրացական ազգությունները Հայաստանի և հայերի մասին, Հ. 2, Երևան, 1936, էջ 112:

56 П. Т. А р у т յ ո ն յ ա ն, Освободительное движение армянского народа в первой четверти XVIII в., Ереван, 1954, стр. 156.

57 Ե ս ա յ ի Հ ա ս ա մ ն - Զ ա լ ա լ ի ա ն ց, Պատմութիւն Համառօտ Աղուանից Երկրի, Երուսաղեմ, 1888, էջ 48:

դրանց իրականացման հույսերը տեսել են նաև իրենց համատեղ պայքարի մէջ: Եղել են պատմական պահեր, երբ հարեան վրաստանը ապաստան է դարձել օտար ձնշողների ասպատակությունների հետևանքով զանգվածաբար գաղթի դիմած հայության համար: Թուրք և պարսիկ նվաճողների դեմ մղած դարավոր պայքարը նպաստում էր հայերի և վրացիների բարեկամության ամրապնդմանը:

XVIII դարի 20-ական թվականների իրադարձությունները նշանավորեցին նոր էտապ այդ բարեկամության ամրապնդման գործում, Պետրոս 1-ինի կողմից պատերազմական գործողություններ սկսելուց առաջ արդեն ծնունդ էր առել սուս-վրաց-հայկական ռազմա-քաղաքական դաշինքը: Պետրոս 1-ինի գլխավոր նպատակը Մերձկասպյան շրջանների զրավումն էր, և նա լավ էր հասկանում վրաստանի և Հայաստանի գերն ու նշանակությունը Կասպից ծովի համար սուսպարսկական և սուս-թուրքական առաջիկա զինված պայքարում:

Պետրոս 1-ինը նկատի էր առնում, անշուշտ, վրաստանի և Հայաստանի ստրատեգիական նշանակությունը. այս երկըրների վրայով էր անցնում Թուրքիայից ամենակարճ ճանապարհը դեպի Կասպից ծովի ափերը: Ուստական զորքը, որը պետք է նոր հակառակորդի դեմ պայքարեր, իր համար անսովոր պայմաններում, անծանոթ վայրերում, անհրաժեշտութեն զգալու էր տեղացի ժողովուրդների օգնության կարիքը: Իրական օգնություն սուսական զորքերին կարող էին ցույց տալ միայն վրացիները և հայերը:

Ա. Վոլինսկին, որը հատկապես ուսումնասիրել էր Պարսկաստանի ռազմական ուժերի դրությունը, պատահական չէ,

որ լնդգծում էր վրացական զորքի բարձր ունակությունները: «...Ամբողջ Պարսկաստանում լավագույն զորքը ես վրացականն եմ համարում,—զրում էր նա,—...Վրաստանում և իմերեթում կարելի է ժողովել տասնհինգից մինչև քսան հազար (զորք) և պարսիկները սովորաբար ընտրում են սպասալարներ (կամ գեներալիսիմուսներ) վրաց արքայակներից, նմանապես այլ զորահրամանատարներ՝ մեծ մասամբ վրացիներից են նշանակվում...

Վրացիների մասին ես կարող եմ երդվել, որ եթե նրանց իշխանները և այլ աղնվականները բարի համաձայնության մեջ լինեին միմյանց հետ, հիրավի, կկարողանալին ոչ միայն պարսից հպատակությունից իրենց ազատազրել, այլև նրանցից շատ երկրներ առանց զժվարության նվաճել, իսկ նրանց հեծելազորը (պարսիկներինը—Վ.) վրացիների դիմաց, թեկուղ թվով երեք անգամ էլ շատ լինի, այնուամենայնիվ դիմակայիլ չի կարող, իսկ եթե կանոնավոր քսան էսկազրոն դրանց ավելացնենք, ապա կարելի է համարձակորեն ամբողջ Պարսկաստանով անցնել առանց որևէ երկյուղի»<sup>58</sup>:

Նախապատրաստվելով արշավանքի, ուստական կայսրը փորձում էր ուսումնասիրել այն տեղանքը, ուր ծավալվելու էին ապագա ուազմական գործողությունները: Ինչպես արդին նշվեց, այդ նպատակով հատուկ հանձնարարություն էր տրված Ա. Վոլինսկուն: Դրա հետ միասին, 1720 թ. սեպտեմբերին Պետրոս 1-ինը որոշեց Պարսկաստան ուղարկել հյուպատոս Սեմյոն Ալբամովին, գվարդիայի կապիտան Ալեքսեյ Բասկակովի ուղեկցությամբ: Լուրջ միջոցառումներ

58 ՀԱԿՊԱ, ֆ. 77, գ. 2, թ. 609:

Ճեմարկեցին նաև Կասպից ծովի քարտեղը կազմելու ուղղությամբ: 1715 թ. գարնանը Կասպից ծովի արևելյան ափերը նա արշավախումբ ուղարկեց Բեկովիչ-Զերկասկու գլխավորությամբ:

1716 թ. Հունվարին Կասպից ծովի ափերը հետազոտելու համար ուղարկվեց Ալեքսանդր Կոժինը: 1718 թվականի ամսան ընթացրում Կոժինը և լեյտենանտ Ռուսովը կրկին հետազոտեցին Կասպից ծովի ափերը և կազմեցին նրա արևելյան ափերի քարտեղը: 1719 թ. Կասպից ծով ուղարկվեց նոր արշավախումբ, որի ղեկավար նշանակվեց Վերդենը, իսկ նրան օգնականներ՝ լեյտենանտներ Սոյմոնովը և Ռուսովը, կրտսեր լեյտենանտներ Դարոշենկոն և Զոլոտարյովը: Իրականում այս արշավախումբի ոպին, նրա իսկական ղեկավարը Սոյմոնովն էր: Արշավախումբի աշխատանքի արդյունքը եղավ Կասպից ծովի արևմտյան ափերի քարտեղը, չափվեցին հատակի խորությունները, ծովախորշերը, նկարագրվեցին կղզիները, ջրի հոսանքի ուղղությունը, ստորջրյա խութերը և այլն: 1720 թ. վերջին քարտեղն արդեն պատրաստ էր և հրապարակվեց: Դա Կասպից ծովի՝ գիտական հետազոտությունների վրա հիմնված առաջին քարտեղն էր, որը ընդհանուր ճանաչում գտավ ինչպես Ռուսաստանում, այնպես էլ Արևմտյան Եվրոպայում:

1721 թվականին արևելյան Անդրկովկասում ստեղծված իրադրությունը պահանջում էր ոչ միայն Ռուսաստանի միջամբառությունը, այլև նպաստավոր էր բուն արշավախումբի սկսման համար: 1721 թ. օգոստոսի 7-ին Շամախիում լեզվիների Քարձակումը ուստի վաճառականների վրա և նրանց կողոպուտը

հարմար առիթ՝ էին պատերազմական գործողություններ սկսելու համար:

XVIII դարի սկզբին Դաղստանում և Հյուսիսային Աղբք-ընկանում բռնկվեց Հակապարսկական պատամբություն: Ապստամբության գլուխն անցան Թուրքիայի գործակալներ՝ Դառդ-բեկը և Սուրխաչ-խանը: Ըստ երեսութին, իր նշանակությունն ունեցավ նաև այն Հանգամանքը, որ ինչպես ապրատամբները, այնպես էլ Յուրքերը մահմեդական կրոնի սյունի դավանանքին էին հարում, մինչդեռ պարսիկները՝ շիա դավանանքին:

1721 թ. Պարսկաստանի գրությունը վատթարացավ աֆղանների ներխուժման հետևանքով, որոնց, ինչպես արդեն նշեցինք, ղեկավարում էր Միր-Մահմուդը. պարսից շահ Հուսեինը, որը ուժ շուներ դիմադրելու աֆղաններին, դրամ և նվերներ ուղարկեց շամխալին և խնդրեց շատալ կարգով օդնական զորք ուղարկել: Զորքը հավաքվեց և Սուրխաչ-խանի զիսավորությամբ ուղարկվեց շահին օդնության: Սակայն Շիրվանում Սուրխաչը հանդիպեց Դառդ-բեկին՝ լեզգիների 1000 հոգանոց խմբով: Դառդ-բեկը նրան առաջարկեց շահի դեմ Համատեղ պայքարի ելնել: Սուրխաչը այս առաջարկը ընդունեց և երկուսով հայտարարեցին, որ նրանք «աստծո կողմից կոչված են ազատազրելու սունիներին պարսից լծից և կոչ էին անում բոլոր ճամարիտ մահմեդականներին միավորվելու և ազատություն ձեռք բերելու»<sup>59</sup>:

59 Ի. Գ. Գերբեր, նշվ. աշխ., էջ 228 (առակերեն), նաև Պ. Ռ. Բ յ տ կ օ վ, Մ а т е р и а л ы д л я н о в о й и с т о р и и Կ ա վ կ ա զ , տ . I, СПб., 1869, стр. 8.

Աստրախանի նահանգապետ Ա. Վոլխովին, որը տեղյակ էր Դառնդ-բեկի թշնամական հարաբերություններին պարսից շահի հետ, փորձեց օգտագործել առիթը և առաջարկեց նրան ընդունել Պետրոս 1-ինի հովանավորությունը: Սակայն Վոլխովին շուտով համոզվեց, որ Դառնդ-բեկը վստահելի անձնավորություն չէ: Պետրոս 1-ինին գրած իր նամակներից մեկում Վոլխովին նշում էր. «...ինձ թվում է, որ Դառնդ-բեկը ոչնչի պիտանի չէ. այստեղից նրա մոտ ուղարկեցի պորուշիկին (ինչպես ես սրանից առաջ Զերդ մեծությանը զեկուցել եմ), նա ինձ պատասխանում է, որ իհարկե, ցանկանում է ծառայել Զերդ մեծությանը, սակայն, եթե Գուք բարեհաճեք նրան զորք ուղարկել և բավարար քանակով հրետանի, իսկ ինքը, իհարկե, կգրավի պարսիկներից քաղաքներ, և (դրանցից) որոնք իրեն ձեռնոտու են, կթողնի իրեն (այն է՝ Դերբենդը և Շամախին), իսկ մյուսները կզիշի Զերդ զերազանցությանը, որոնք Կուր գետի այն ափում են գտնվում մինչև Սպահան, մի քան, որ երբեք իր ձեռքը չի ընկնի և այսպիսով կամենում է, որ աշխատանքը Զերը լինի, իսկ օգուտը իրեն»<sup>60</sup>:

Դառնդ-բեկը և Սուրբիայ-խանը ժողովեցին մեծ բանակ և 1721 թ. օգոստոսի 7-ին ասպատակեցին Շամախին, գրավեցին և անողոք կողոպուտի ենթարկեցին քաղաքը: Տուժածների թվում էին նաև ոռւս վաճառականները, որոնք 500.000 ոռություն վնաս էին կրել: Ա. Պ. Վոլխովին լսելով այս լուրը, 1721 թ. օգոստոսի 10-ին գրում էր Պետրոսին. «Բնդսմին, ամենաողորմած տեր, Զերդ մեծությանն եմ հայտնում իմ համեստ կարծիքը, թեպետ որոշ տվյալներով Զեր հպատակներին

60 ՀԱԿՊՍ, ֆ. Պետրոս 1-ինի կարինետ, 2-րդ բաժանմունք, զիրք 54, թ. 641:

սրանից մեծ վնասներ է հասել, սակայն Զեր մտադրությունը սկսելու սրանից առավել օրինական պատճառ չի կարող լինել, նախ, որ կբարեհաճեք ելնել Զերը պաշտպանելու, երկրորդ, ոչ թե պարսիկների գեմ, այլ նրանց և Զեր հակառակորդների դեմ եք ելնում... Եվ այսպիսով, իմ համեստ կարծիքով, Զերդ մեծությունը ողջ աշխարհի առաջ կարող է ցուցալ, որ այդ բանն անելու Դուք իսկական պատճառ ունեք»<sup>61</sup>:

Նույն թվականի գեկտեմբերի 5-ին Պետրոս 1-ինը դրական պատասխան է ուղարկում Վոլինսկուն և հայտնում, որ արդեն զորքեր է տեղափոխում Վոլգայի վրա՝ հաջորդ դարնանը ռազմական գործողություններ սկսելու համար: Միաժամանակ Պետրոսը Վոլինսկու միջոցով հայտնում էր հայերին և վրացիններին, որպեսզի նրանք, մինչև ոռոսական «զորքերի տեղ հասնելը ոչինչ չձեռնարկեն (ըստ այդ ժողովուրդների սովորական հանդգնության), այլ մեզ հետ խորհրդակցելով գործեն»<sup>62</sup>: Այս տեղեկությունները վախթանգին են հասնում Բորիս Թուրքեստանովի միջոցով, որին այդ առթիվ հատուկ ուղարկել էին Վրաստան:

1721 թ. հոկտեմբերից սկսվում է զորքերի առաքումը գեղի Աստրախանի շրջան: 1722 թ. մայիսի 26-ին ինքը՝ Պետրոս 1-ինը, ժամանեց Նիմնի-Նովգորոդ և զորամասերի ուղեկցությամբ այնտեղից մեկնեց Աստրախան, որտեղ հուլիսին արդեն կուտակվել էին ոռոսական զորքերը:

61 Նույն տեղում, թի. 644—646:

62 ՀԱԿՊԱ, գ. Պետրոս 1-ինի կարինեա, I բաժանմունք, գիրք 30, թ. 131:

Պետրոս 1-ինը Աստրախանում արևելյան լեզուներով մանիֆեստ<sup>63</sup> հրապարակեց արշավանքն սկսելու վերաբերյալ: Այդ մանիֆեստով հայտարարվում էր, որ ոռուական զորքերը արշավում են լեզգի ապստամբների դեմ, Մերձկասպյան մարդերի բնակչությանը երաշխավորելով լիակատար անվտանգություն:

Դեռևս հուլիսի սկզբներին, Աստրախանում եղած ժամանակ, Պետրոս 1-ինը անհրաժեշտ գտավ տեղեկացնեք Վախթանգ Ե-րդին արշավանք սկսելու մասին և համապատասխան առաջադրանքներ տվեց նրան:

1722 թ. Հուլիսի 2-ին Վախթանգի մոտ ուղարկվեց Թուրքեստանովը, որի միջոցով հայտնվում էր, թե շուտով Կասպից ծովի ափերը կգան ոռուական զորքեր: Դրա հետ միասին Թուրքեստանովին Պետրոս 1-ինի ստորագրությամբ տրվեց հատուկ գրություն, որի բովանդակությունը նա բանավոր պետք է հաղորդեր Վախթանգին: Այդ գրության մեջ ասված էր.

1. Վախթանգը պիտի արշավի լեզգիների երկրի վրա, երբ այդ հնարավոր կլինի և որքան հնարավոր է շուտ.

2. Լեզգիների դեմ արշավելու ժամկետի մասին տեղյակ պահել Պետրոս 1-ինին:

3. Ռուսական զորքերի հետ միավորվելու համար պարկական տիրապետության սահմանները մտնելիս, մահապատ-

63 Արշավանքի մասնակից Ֆ. Սոյմոնովը գրել է, որ այդ մանիֆեստը կազմել էր Մոլգավիայի նախկին իշխան Դիմիտրի Կանտեմիրը, որին Պետրոս 1-ինը իր հետ էր վերցրել նման գործերում պետքական լինելու համար Կանտեմիրի տրամադրության տակ կար փոքրիկ տպարան՝ արարական տառատեսակներով:

Ժի ենթարկելու հրամանով արգելել բնակչությանը կողոպտելը կամ նեղություն տալը<sup>64</sup>:

Օգոստոսի 3-ին Պետրոս 1-ինը նամակով տեղեկացրեց Վախթանգ 6-րդին Ազգախանի ծոցը իշնելու և դեպի Բաքու շարժվելու մասին: Միաժամանակ նա Վախթանգին առաջարկում էր զորքով հարձակվել Դառնակել Դառնակել վրա, եթե ինքը հուսով է, որ միայն իր ուժերով ի վիճակի է հաշիվը մաքրել նրա հետ, իսկ եթե ոչ, ապա պիտի ջանա մի որեւէ տեղ միավորվել սուսական զորքերի հետ: «Մեր կարծիքն այն է, — զրում է Պետրոս 1-ինը, — որ եթե հնարավոր է Դերբենդի և Բաքվի միջև հանդիպենք»<sup>65</sup>:

Պատասխան նամակում Վախթանգ 6-րդը իր ուրախությունն էր արտահայտում նման բերկրալի տեղեկության համար և Պետրոս 1-ինին լիովին աջակցելու ցանկություն հայտնելով, պարտավորվում էր օգոստոսի 20-ին լինել Գանձակում՝ իր զորքով հանդերձ<sup>66</sup>: Միաժամանակ Վախթանգ 6-րդը զրում էր, որ շահը իրեն է հանձնարարել Աղբբեշանի այն զորքերի հրամանատարությունը, որոնք պիտք է պատժեին ապստամք լեզգի իշխաններին (կառավարիչներին): Այս հանգամանքը նպաստավոր էր թվում ինչպես Վախթանգ 6-րդին, այնպես էլ Պետրոս 1-ինին: Հետագայում, երբ Կասպիականի ափերը գրավելու պատճառով սուս-թուրքական հարաբերությունները սրվեցին, Վախթանգ 6-րդի Գանձակում գտնվելը Պետրոս 1-ինը թուրքական կառավարության առջև հենց շահի նշված հրամանով էր բացատրում:

64 ՀԱԿՊԱ, ֆ. 110, գ. 1, թ. 1—8:

65 ՀԱԿՊԱ, ֆ. 110, գ. 1, թ. 8—9:

66 Մ. Բ ր ո ս ե, նշվ. աշխ., էջ 139 (ուսերին):

Մոտավորապես նույն ժամանակ էրդրումի փաշան թուրքական սուլթանի անունից հայտնեց Վախթանգ 6-րդին, որ թուրքիան մտադիր է պատերազմել Իրանի դեմ և առաջարկում էր անցնել թուրքիայի կողմը: Դրա դիմաց սուլթանը Քարթլիի թագավորին խոստանում էր շնորհել ամբողջ Վրաստանի թագավորությունը: Սակայն Վախթանգ 6-րդը, իր հուսերը կապելով Պետրոս 1-ինի հետ, մերժեց թուրքերի այդ առաջարկությունը: Իրավացի է վրաց ուսումնասիրող Գ. Պահճածին, երբ գրում է. «Մեզ անհրաժեշտ է թվում հանգամանորեն քննարկել այս հարցը, քանի որ նախահեղափոխական պատմագրության մեջ այն սխալ է լուսաբանված»:

«Ծուսական միապետների ու վրացական թագավորների և իշխանների միջև դիվանագիտական հարաբերությունների պատմական տեսություն» աշխատության հեղինակ Ֆ. Պլոենը անդրադառնալով այդ հարցին գտնում է, որ Վախթանգ 6-րդը թուրքական կողմին բացասական պատասխան է տվել, չցանկանալով դավաճանել շահին<sup>67</sup>: Իսկ վ. Ռոմանովսկին ընդհանրապես կասկածի տակ է առնում Վախթանգի կողմից էրդրումի փաշային տված բացասական պատասխանը:

Երկու հեղինակների կարծիքն էլ սխալ է և միայն շփոթության մեջ է գցում ընթերցողին: Պլոենի սխալը բացատրվում է արխիվային նյութերը քննաբար չօգտագործելու պատճառով: Խորամուխ շլինելով իրեն հայտնի աղբյուրի էության մեջ, Պլոենը իր բառերով վերակրկնել է թուրքեստանովի կողմից 1722 թ. սկսած մերժերի 19-ին Պետրոս 1-ինին

67 Պլոենի սուլին աշխատությունը հրապարակված է Մ. Բրոսեի կողմից, ուն «Переписка грузинских царей с российскими государями 1639—1770 гг.». СПб., 1861, стр. XXVI.

զրկած բացատրագրի բովանդակությունը»<sup>68</sup>: Թուրքեստանուլը զեկուցել էր.

«1. Նախքան թուրքեստանովի ժամանելը, էրզրումի փաշան թիֆլիս արքայազն Վախթանգի մոտ մարդ էր ուղարկել թուրքական սուլթանի անունից նրան հայտարարելով, որ նա մտադիր է պատերազմ սկսելու պարսից շահի դեմ և խլելու պարսիկներից Երևանի մարզը, որի համար էլ թուրքական զորքը արդեն ճանապարհ է ելել, որա հետ միասին այդ փաշան համոզում էր արքայազնին, որպեսզի նա վրացական զորքով միանա թուրքականին և պատերազմի մեջ մտնի պարսիկների դեմ և ընդունի թուրքական սուլթանի հովանավորությունը, խոստանալով որա դիմաց, որպես պարզե, տալ բոլոր այն քրիստոնյաների վրա իշխելու իրավունքը, որոնք գտնվում են թուրքիային ենթակա Վրաստանում և իրերիայում. այդ առաջարկի առթիվ արքայազնը հիշյալ փաշային պատասխանեց, որ ինքը պարսից շահին գավաճանել չի ցանկանում»<sup>69</sup>: Պլունը շի նկատել, որ Վախթանգը թուրքերին պատասխանելիս շեշտելով շահին «հավատարիմ» մնալու իր ցանկությունը, սոսկ դիվանագիտական մաներ էր կատարում. դա թելադրված էր ինչպես ուստական, այնպես էլ վրացական կողմերի նպատակներով: Պետրոս 1-ինը խուսափում էր թուրքերի հետ հարաբերությունները վատացնելուց, իսկ Վախթանգի համար տակալին ձեռնտու չէր շահի առջե բացելու խաղաղթերը: Բնորոշ է, որ 1722 թ. հունիսի 2-ին Վախթանգին զրած նամակում Պետրոս 1-ինը ուղղակիորեն

68 «Кавказский вестник», Тифлис, 1905, № 2, стр. 5—6. Տե՛ս

Հակ Գ. Գ. Պալճաճելի նշվ. աշխ., էջ 90—91:

69 ՀԱԿՊԱ, ֆ. 110, գ. 1, թ. 10:

նշում էր. «Միայն թե Դուք պարտավոր եք, որ ձեր ժողովրդից այն քրիստոնյաները, որ այժմ թուրքական իշխանության ներքո հն գտնվում, ոչ մի շարժում չձեռնարկեն, որպեսզի դրանով իսկ այդ պետության կողմից զուր տեղը աստծուց օրհնված այս գործին դժվարություններ շնարուցվի»<sup>70</sup>։

Թուրքերին Վախթանգ 6-րդի տված կատեղորիկ բացասական պատասխանի մասին վկայում է նաև Վախուշտին՝ իր «Պատմության» մեջ. «Դարձյալ եկավ Թուրքեստանովը մեծ կայսեր Պետրոսի կողմից, քանի որ վերջինս եկել էր Սոլախ, որպեսզի թագավորը գնա նրա մոտ՝ Շիրվան, դարձյալ սովորական եկավ հպատակություն պահանջելով, սակայն բոլորին ի բաց հեռացնելով, նա նախընտրեց ոուս թագավորին, և որովհետև կարծում էր, որ կազատագրի եկեղեցին և հավատը քրիստոնեական, որա համար էլ ժողոված զորքով գնաց Գանձակ»<sup>71</sup>։

Վախթանգ 6-րդը ընդունելով Պետրոս 1-ինի առաջարկը՝ Դերբենդի և Բաքվի միջև ոուս և վրաց զորքերի միավորվելու մասին, զորքով ուղեռուից դեպի Գանձակ, որտեղ միացան Հայկական զորամասերը։ Օգոստոսի 16-ին Պետրոս 1-ինը բանակով շարժվեց դեպի Դերբենդ։ Մուսական զորքին դիմադրություն ցույց տվին միայն Ռւտեմիշի և Խայտակի սովորական նայիբը Պետրոս 1-ինին քաղաքից դուրս դիմավորեց և նրան տվեց քաղաքի բանալիները։ Դերբենդում Պետրոս 1-ինը տեղեկություններ ստացավ Բաքվի բնակիչներից, որոնք պատրաստակամություն էին հայտնում ընդունելու մուսա-

70 Նույն տեղում, թ. 7։

71 Յածց ՇԾ օ, Աթոռքից յահովուսա, տօնութ., 1854, Ց. 82.

տանի հովանավորությունը, որովհետեւ լիզգիների ասպատակություններից մհծապէս տուժում էին<sup>72</sup>: Սակայն Պետրոս 1-ինը ոչ մի լուր շուներ անձամբ Բաքվի կառավարչից և դրա համար էլ որոշեց այնտեղ ուղարկել պորուչիկ Լունինին և նրան հանձնել մանիֆեստ, որտեղ ասված էր. «Միապետ կայսրը, որպէս շահի հավատարիմ բարեկամ և դաշնակից, եկել է իր զորքով միայն այն մտադրությամբ, որպեսզի այս վայրերը պաշտպանի խոռվարարներից»:

Դերբենդի նախրը, ընդունելով Նորին մհծությունից այսպիսի մեծ ողորմածություն, շնչառագեց ամենեին այն քաղաքի օգտին ծառայեցնելու համար: Այդ իսկ պատճառով նաև Բաքու քաղաքը իր անվտանգության համար պետք է ընդունի ուստական կայազորին, որին պետք է մատակարարել պարենամթերք»<sup>73</sup>:

Դերբենդից Պետրոս 1-ինը ցանկանում էր ուղեռուվել դեպի Բաքու, իսկ այնուհետեւ դեպի Կուրի գետաբերանը ու այստեղից՝ Թիֆլիս: Արշավանքի մտսնակից Ֆ. Սոյմոնովը գրել է. «Այն ժամանակ բանակում կարծում էին, որ կայսեր նպատակն էր Բաքու քաղաքի մոտով դեպի Կուր գետը գնալ և նրանով վեր գնալ մինչև Թիֆլիսի, իսկ այնտեղից ուղիղ դեպի Թերեք, որպեսզի անձամբ ժողովի ճշգրիտ տեղեկություններ բոլոր այս երկրների մասին: Հայտնի է, որ կայսրը ցանկանում էր վերականգնել քրիստոնեությունը Վրաստանում»<sup>74</sup>:

72 «Походный журнал», 1720, стр. 121.

73 Г. Мельгунов, Поход Петра Великого в Персию, «Русский вестник», т. 110, М., 1874, стр. 42.

74 Ֆ. Սոյմոնով, նշվ. աշխ., էջ 240 (ոռոշերհն):

Պարենի բացակայությունը, բանակում հիվանդությունների տարածումը և ձիերի անկումը՝ վտանգավոր էին դարձնում արշավանքը շարունակելը։ Դեռ ավելին, սրվեցին հարաբերությունները Թուրքիայի հետ։ Ստեղծված իրազրությունից ելնելով, Պետրոս 1-ինը որոշեց հրավիրել ուղմական խորհուրդ, որը կայացավ օգոստոսի 29-ին։

Մազմական խորհրդի մասնակիցները այն կարծիքին էին, որ պարենամթերքի պակասության հետևանքով արշավանքը շարունակելը վտանգավոր կլինի, ուստի որոշեցին մի շաբաթից հետո նահանջել։ Հոկտեմբերի 4-ին բանակի մի մասի հետ Պետրոս 1-ինը վերադարձավ Աստրախան։ Հոկտեմբերի 16-ին Պետրոս 1-ինը սենատին հայտնեց Դերբենդից ետ վերադառնալու և ձմեռը Մոսկվայում անցկացնելու իր մտադրության մասին<sup>75</sup>։

Չնայած այն հանգամանքին, որ Դերբենդ արշավելիս նշանակալից ընդհարումներ թշնամու հետ տեղի չունեցան, այնուամենայնիվ, արշավանքը դյուրին չէր։ Դժվարությունները կապված էին աշխարհագրական պայմանների հետ։ Հենց Պետրոս 1-ինի հայտարարության համաձայն, արշավանքը շափականց դժվարին էր զրի պակասության, անտանելի շողի և ձիերի անկման պատճառով։ Նույն բանը իր օրագրում նշում է արշավանքի մասնակից Բելը<sup>76</sup>։

Այսպիսով, 1722 թ. Պետրոս 1-ինը շկարողացավ դրված նպատակին հասնել։ Այդ տարվա ուղմական կամպանիայի արդյունքը եղավ ուստական զորքերի կողմից միայն Կասպից ծովի գաղտանյան ափերի գրավումը։

75 «Походный журнал», 1722, стр. 80—84.

76 Д. Бель, Белевы путешествия..., ч. III, СПб, 1776, стр. 178.

Պետրոս 1-ինի բանակի վերադարձը Աստրախան ուրախացրեց Ռուսաստանի թշնամիներին, հիասթափություն պատճառելով Անդրկովկասի ժողովուրդներին։ Բայ Պետրոս 1-ինի հետ նախօրոք եկած համաձայնության, Վախթանգ 6-րդը 1722 թվականի օգոստոսի վերջին վրացական դորքով ուղևորվեց դիպի Գանձակ, ուր նրան պետք է միանար հայկական զորքը։ Դրա համար էլ դեռ Գանձակ գնալու ճանապարհին Վախթանգը Աղվանից կաթողիկոս Եսայի Հասան Ջալալյանին ուղարկեց Ղարաբաղ։

Այդ մասին կաթողիկոս Եսայի Ջալալյանը գրում է. «...քանզի պայման ուխտի և ժամադիր եղեալ էր թագաւորն Պիտրոս առ Վախթանգ, զի յայս աշնան ի մուտն հոկտեմբերի ինքնին ի քաղաքն Շամախի հասեալ և դնա անդի պատրաստի գտանել պարա է։ Յայսմ նուագում թագաւորն Պարսից, որ հանդերձեալ էր անկանիլ ի գահոյց և ի բարձրութենէ իւրմէ, փութանակի հրովարտակ մի հասոյց առ Վախթանգ, եթէ «քեզ ետու զամհնայն իշխանութիւն կողմանցդ Գանջայու, և ամհնայն Աստրապատականի, և զքեզ կարգեցի զլուխ և սպարապետ ամենայն իշխեցողաց կողմանցդ այդոցիկ, վասն որոյ շեշտակի զօրս գումարեալ գայցես ի Գանջայ, և պահ կալեալ զգուշացիս կողմանցդ այդոցիկ ի թշնամեաց մերոց։ Եւ իսկոյն հրաման եհան զօրս գումարել, և վաղվազակի ժողովեալ զբազմութիւն զօրաց աղգացն վրաց և հայոց, և ոչ ոք եթող զոր ոչ եբարձ իւր, ընդ որոց և զիս էառ բերել, զի գնալն մեր ան մինչեւ ի դարձս այս սիրով ընդուներ զմեզ. և զսոձիկն մեր ի յինքնէնէ էր հրամայեալ։ Եւ ելեալ ի Տփխիսու անբաւ ամբոխիւ, զորոց որքանութիւնն անբաւ գոլով՝ ոչ կարեցաք զրել, և եկեալ հասաք ի կամուրջն կոտորած՝ զոր

Մնզքորփի ասեն, յաւուր տօնի սրբոյ խաշին։ Եւ ապա ասու  
յայսմ աւուր յառաջ կոչեցեալ զիս՝ Հրամայեաց նախքան  
դինքն յառաջ ընթանալ յերկիրն մեր Ղարաբաղ, և զՀայկա-  
ղուն զօրսն՝ որ գումարեալ կային անդ ի ձեռն մելիքերաց, և  
շորս զլխաւորք եղեալ երիտասարդացն, որոց անունք են Աւան,  
Շրուան, Շահնի, Սարովան, որ և սոքա Հարիւրապետք և  
իւղաղաշիք կոչէին»<sup>77</sup>։

Այնուհետեւ, Զալալյանը նկարագրում է, թե ինչպիսի  
խանդավառությամբ տեղի ունեցավ վրաց և հայոց զորքերի  
միավորումը. «Այժմս լուհալ սմա զսոցանէ՝ շեշտակի ճե-  
պով յղեաց զմեղ վասն առ ինքն ածելոյ զնոսա կազմ զօրօր։  
Եւ ըստ Հրամանի եկեալ մեր յարդարեցաք զնոսա, անվարժք  
էին զինուորական սպասաւորութեանց, և այսպէս բովանդա-  
կեալ զամենայն, և իբրեւ տասն հազար արս ընտիրս և սպա-  
ռազինս ընդ որոց և զգասս քահանայից և պաշտոնէիցն մերոց  
առեալ մեծաւ ճոխութեամբ և ինձոյիք, համարելով նորա  
նորոգեալ զիշխանութիւն հայոց, և զնացեալ իշաք մերձ ի քա-  
ղաքն Գանջոյ, Զոլակ անուն վայրն, յաւուրս երիս։ Քանզի և  
թագաւորն Վախտանկ բնակեալ էր յայն կողմ քաղաքին՝ ի վե-  
րոյ ջրոյն որ Ղոշաղարիգետ և Ղարաարիս ասեն։ և զկնի երից  
աւուրց ապա Հրաման արար զնալ առ ինքն։ Որ և եկեալ զնա-  
ցաք։ Եւ ի մերձենալ բանակի նորին, ինքն իսկ Հրաման արար  
զօրաց իւրոց ընդ առաջ լինիլ մերայնոցն՝ իբրեւ ողջամբ ըն-  
դունելով զնոսա։

Եւ այսպէս մեծաւ շրով ի հանդիպիլ միմեանց զօրէն պա-  
տերազմի ուազմ կարգեալ ճակատ առ ճակատ, և քաջամար-  
տիկ մանկունք մերոցն զիմաց յառաջ խաղեալ ճախր տոեալ

77 Եսաւ յի Հ. Զալալյանց, նշվ. աշխ., էջ 45—47։

քաջընթաց երիվարք, և զինակալմ զրահիւք պարէին յանդիման ճակատուն, և ի ձայնէ Հրացանոցն որոտայր և թնդար վայրն այն, և փոշէխառն ծուխ նորին, իբրեւ զկալծակնափայլ ամպ արգել զճառագայթս արեգական, մինչև զի զմիմեանս հալիւ տեսանէաք: Եւ այսպիսի ուրախութեամբ հասեալ իջուք մերձ առ բանակի նոցին: Զոր տեսալ Վախտանկին այսպիսի յառաջադիմութիւն մերայնոցս, ցնծացաւ ի հոգի և ի մարմին իւր: Եւ նոյնժամոյն յղեալ կոչեաց առ ինքն զմեղ, և զգլուսս կարգեալ աղայսն և զմելիքսն, և յորդորական բանիւ յուսադրեաց, և զօրացոյց ասելով. «Այսուհետեւ զօրասչիք և քաջ լերուք իբրեւ յորդիս զօրութեան և յուստեքէ և յումերէ մի երկնշիցիք, զի ահա հասեալ է ժամանակ փրկութեան քրիստոնէից: Եւ դարձուցեալ զբանն առ մեղ, և յոյժ շնորհակալ եղեւ զմէնչ, և ի վաղին զամենեցուն զգլաւառուն խիլայեաց, և այսպէս մնացուք առ նմա իբրեւ աւուրս քսան եւ հինգ»<sup>78</sup>:

Վրաց-հայկական զորքերի ժամանումը Գանձակ դաղըստանցի ֆեոդալներին ստիպեց փախուստի դիմել: Վրաց-հայկական միացյալ բանակը սկսեց պայքարել Իրանին և շահին հավատարիմ ֆեոդալների դեմ, մասնավորապէս Գանձակի խանի դեմ:

Գանձակում Վախսթանգ 6-րդը սպասում էր Պետրոս 1-ինի հետագա ցուցումներին՝ ուսական բանակի Շիրվան մտնելու և զորքերի միավորման մասին: 1722 թ. հոկտեմբերին Պետրոս 1-ինին ուղարկած նամակում Վախսթանգը գրում էր.

«...Այն որ մեղ հրամայել էիք դալ և պատերազմել լիդդիների դեմ, եկել ենք և բավական ժամանակ՝ այստեղ Ղարա-

78 Նույն տեղում, էջ 48—49:

բաղում ենք: Այստեղ եղած լեզգիները, վախից իրենց տներից դուրս չեն դալիս: Մի սովորան կա, այն էլ հաշտություն է խնդրում, սակայն Կախեթի իշխանը, որ մեզ հետ երկպառակություն և թշնամություն ունի, սրան մեջք է կանգնում, ուզում է, որ մեր ծառալությունը թագավորի մոտ չերևա: Սակայն հուսով ենք աստուծո և Զեր երջանկությամբ, որ սրանց ոչինչ չի հաջողվի: Մենք այսքան ժամանակում Շիրվան էլ եկած կլինեինք, սակայն Զեղանից հրամանը որ չեկավ, այդ է ստիպում մեզ հապաղել: Արդ, մենք Զեղ որոշում և բացատրություն տալը պատշաճ չենք համարում, սակայն որքանով այս վայրերին քաջ տեղյակ եմ, դրա համար էլ բացատրում եմ: Այս վայրերի համար ուշանալ չի կարելի, որովհետեւ այստեղի գործերը խառն են և այնպիսի մի բան կարող է ստացվել, որ տեղիս գործը զլուխ չի գա: Եթե կայսրը այդտեղի գործերով է դեռևս զբաղված և այստեղ ժամանել հապաղում է, գեթ այս պետք է անի, որ իր զորամասերից Շիրվան ուղարկի: Այս կողմից մենք կլինենք, կժողովվենք և ողջ զործը կկարգավորվի աստղով, սկսած Երևանից ամբողջը կդրավենք և հուսով ենք, որ Երևանն էլ կդրավենք»<sup>79</sup>:

Վերը բերված տողերը հասկանալի և միանգամայն պատճառաբանված են դարձնում այն հանգամանքը, որ հայ-վրացական միացյալ զորքի հրամանատարությունը նախընտրել էր սպասել ոռւսական զորքի դեպի Շամախի շարժվելուն:

Ըուսական բանակի գործողությունների մասին տեղեկությունների բացակայությունը մտահոգում էր Վախթանգ Եղիշին։ Դրա համար էլ նա մի քանի անգամ զրեց ոչ միայն

<sup>79</sup> М. Броссе, Переписка..., стр. 142—143.

Պետրոս 1-ինին, այլև Թուրքեստանովին, որին նա ուղարկել էր ոռուսական բանակի ճամբարը և խնդրում էր տեղեկացնել իրեն գործերի ընթացքին։ Թուրքեստանովին գրած իր նամակներից մեկում Վախթանգը ընդգծում էր, որ ահա երրորդ մարդն է, ինչ ինքն ուղարկում է, սակայն ոչ մի լուր շունի։ Նույն Թուրքեստանովին նա հանձնարարում էր Պետրոս 1-ինին բացատրել վրաց-հայկական զորքերի գրությունը և որ երկար ժամանակ բանակը միևնույն տեղում մնալ չի կարող՝ պարենի սակավության պատճառով<sup>80</sup>։

Գանձակի և ոռուսական բանակի միջև դժվար էր ուղղակի կատ հաստատելը, որովհետեւ, նախ հեռավորությունը բավական մեծ էր, և երկրորդ, որը և հանդիսանում էր հիմնական արգելքը, հանապարհը տեղ-տեղ անցնում էր թշնամաբար տրամադրված ֆեոդալների տիրութներով։ Դրա համար էլ անհրաժեշտ էր գնալ շրջանցումներով, իսկ դա մեծ ժամանակ էր պահանջում։ Այսպիս, օրինակ, նույն Թուրքեստանովը, որին Վախթանգը ուղարկեց Պետրոս 1-ինի մոտ, գեռես 1722 թ. օգոստոսին Թիֆլիսից հասավ Ազրախանի «ռետրանշամենտը» և միայն սեպտեմբերի 10-ին տեսակցություն ունեցավ Պետրոս 1-ինի հետ, որը այդ ժամանակ արդեն Դերբենդից էր վերադառնուում<sup>81</sup>։

1722 թվականի սեպտեմբերի 29-ին Ազրախանի «ռետրանշամենտից» Պետրոս 1-ինը Վրաստան ուղարկեց գվարդիայի պոդպորուշիկ Իվան Տոլստոյին, Թուրքեստանովի ուղեկցությամբ, հետեւյալ հանձնարարությամբ։

80 ԲԱՔԱ, ֆ. ԱՀՎ, գ. 1, թ. 23։

81 Նույն տեղում, թ. 17, 19—20։

1. Մշտապես գանվել Վախթանգ Ե-րդի մոտ և Վրաստանից գուրս գալ միայն Պետրոս 1-ինի հատուկ թուլտվությամբ:

2. Հասնել այն բանին, որպեսզի Վախթանգ Ե-րդը հանձն առնի լինել միջնորդ Ռուսաստանի և Իրանի միջև կայանալիք բանակցություններում ու իր մարդը ուղարկի շահի մոտ: Այս վերջինը պետք է բացատրեր շահին, թե Պետրոս 1-ինը արշավանքը ձեռնարկել է միայն Պարսկաստանը խորտակումից փրկելու համար, քանի որ Դառնդ-բեկը և Սուրխայը օգնություն են խնդրել՝ թուրքիայից, որը ձգտում է տիրել ողջ Իրանին, մի բան, որ Ռուսաստանը երբեք չի հանդուրժի: Տուստույին հանձնարարվում էր. «Պարսից շահի գործի մասին արքայաղնին (իմա՞ Վախթանգ Ե-րդին—Վ. Մ.) բացատրել իր սեփական օգուտը, քանի որ եթե շահը ինքը զիջի, ապա ադեն ոչ որ այդ գործին խառնվել չի կարող, իսկ շահը լինելով նման կարիքի մեջ, ինչու չպետք է մեր առաջարկը ընդունի, քանզի լավ է քիշը կորցնել, քան ողջ պետությունը, և գուցե նույնիսկ սեփական կյանքը»<sup>82</sup>:

Ռուսական կողմը Վախթանգին խորհուրդ էր տալիս, որ եթե նա նպատակահարմար գտնի, ապա թող շահին առաջարկություն անի նաև բոլոր քրիստոնյաներին իր հպատակությանը հանձնելու մասին՝ որպես փոխհատուցում շահին խոստանալով օգնություն ընդդեմ խոռվարաների: Վախթանգին աննպաստ վիճակի մեջ չդնելու նկատառումով ռուսական կողմը իր վրա էր վերցնում նաև շահի հետ այդ խնդիրների շարքը բանակցելու և պայմանագիր կնքելու նախաձեռնու-

82 ՀԱԿՊԱ, ֆ. 9, դ. 30, թ. 243:

թյունը<sup>83</sup>: Պետրոս 1-ինը երկյուղ էր հայոնում, որ Պարսկաստանի հետ նման համաձայնության կարող է գալ Թուրքիան, որին խռովարարների դեմ պայքարելիս օգնություն ցուց տալու դիմաց շահը կարող է զիջել Անդրկովկասը<sup>84</sup>:

Ի. Տոլստոյը պետք է տեղեկացներ Պետրոս 1-ինին, թե ինչպես կնդուներ Վախիթանդ 6-րդը այս առաջարկությունները: Հակառակ դեպքում ինքը անձամբ պետք է սկսեր բանակցությունները շահի հետ<sup>85</sup>:

Ի. Տոլստոյին հանձնարարված էր նաև հայտնել Վախիթանդ 6-րդին 1722 թ. արշավանքի և Պետրոս 1-ինի վերադարձի պատճառները<sup>86</sup>: Այդ նպատակով ի. Տոլստոյին հանձնընթեց հատուկ գրություն «Հայտարարություն սույն կամպանիայի գործողությունների մասին» վերտառությամբ: Այդ «Հայտարարության» մեջ ընդգծված էր, որ նախօրոք մշակված ծրագրի համաձայն արշավանքը որոշված էր սկսել 1723 թվականին, սակայն Մերձկասպյան մարզերը գրավելու թուրքական վտանգը ստիպեց արշավանքը մեկ տարով արագացնել, որի պատճառով հնարավոր չեղավ համակողմանիորեն բանակը և նախապատրաստել<sup>87</sup>:

Այնուհետև նշվում էր այն միջոցառումները, որոնք անց էին կացվում գրաված վայրերը ամրապնդելու համար:

1723 թվականի արշավանքի ծրագրերի մասին «Հայտարարության» մեջ ասված էր. «...սկսելով այս գործը, թողնել

83 ՌԱՔԱ, ֆ. ՌՀՎ, գ. 3, թ. 3:

84 Նույն տեղում:

85 Նույն տեղում:

86 Նույն տեղում, թ. 4:

87 «Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 1962, № 4:

շեք կամենում, ինչպես ինքներդ կարող եք դատել, թե նորին մեծությունը ինչպիսի ծանր և արյունալի պատերազմ էր վարում շվեդների գեմ 21 տարի: Սակայն այն բաց շթողեց ձեռքից մինչև բարեհաջող ավարտը, իսկ այստեղ այսպիսի թեթև և շահավետ պատերազմը ինչո՞ւ չպետք է վարի, և ողջ աշխարհում կիսայտառակվի և բոլոր անհավատներին դրանով իսկ իր գեմ կքաջալերի»<sup>88</sup>: Ե. Տոլստոյը պետք է նաև հավաստիացներ արքայազնին, որ «այդ գործում նրանք նորին կայսերական մեծության ողորմածությանը հավատան, և որ նորին մեծությունը երբեք նրանց չի լրի, և որ Վախթանգին կտրվի այնտեղի բոլոր քրիստոնյաներին իշխելու իրավունքը»<sup>89</sup>: Նա Վախթանգ 6-րդին միաժամանակ տեղեկացնելու էր Պետրոս 1-ինի մտադրություններին՝ եկող տարում Շամախին գրավելու, առաջին հերթին կասպիական ափերին ամրապնդվելու և պարենային պահեստներ հիմնելու մասին, որպեսզի ապահովի ոռւսական զորքերի հաջողությունը Անդրկովկասում:

Կոստանդնուպոլսի ոռւսական դեսպանից ստացված տեղեկության համաձայն, Թուրքիան ձգտում է դիվանագիտական միջոցներով գրավել Երևանը: Տոլստոյը պետք է հայտներ Վախթանգ 6-րդին, որպեսզի վերջինս խանգարեր թուրքերին իրականացնելու իրենց այդ մտադրությունը:

Քանի դեռ ոռւսական զորքերը չեին գրավել Շամախին և մերձկասպյան այլ քաղաքները, Վախթանգ 6-րդը պետք է

88 «Պատմա-բանասիրական հանդես», 1962, № 4, տե՛ս նաև ՌԱՔԱ, ֆ. ԽՀՎ, գ. 3, թ. 9:

89 Նույն տեղում:

գործեր իրանի շահի անունից, և որպես նրա դաշնակից, պայքարեր ապստամբ լեզգիների և այլ հակառակորդների դեմ՝ մինչև ոռւսական բանակի գալը<sup>90</sup>: Իսկ ինչ վերաբերում է Երևանին, Պետրոս 1-ինը որոշել էր քաղաքը տալ Վախթանգին<sup>91</sup>:

Սիամամանակ Տոլստոյը պետք է ոռւսական արքունիքին հայտներ հետեւալ տեղեկությունները.

1. Ինչպիսի՞ն է ժողովուրդը և նրանց զինվորական ուժը, ինչպիսի՞՝ զենք ունեն և ի՞նչ քանակով զորք կարող են հավաքել:

2. Ամբո՞ղջ ժողովուրդն է քրիստոնյա, թե կան նաև այլաղավաններ, որ գավանանքին՝ որքա՞ն են պատկանում:

3. Ինչպիսի՞ կարգ և ի՞նչ հնազանդություն ունեն արքայազնին և այլոց, ուժե՞ղ է արդյոք նրա իշխանությունը:

4. Վախթանգը առանց ոռւսական զորքի վախենո՞ւմ է, գործը սկսել. ի՞նչ վտանգ կա, ո՞ւմից է այդ, արդյո՞ք ներքին երկարառակությունից է այդ վտանգը:

5. Հնարավո՞ր է արդյոք տեղացիներից գտնել այնպիսիներին, որոնք կցանկանային բնակվել Դերբենդի և Շամախու մոտակայքում և նրանցից արդյոք կարելի է ընդունել ոռւսական ծառայության մեջ, եթե այս, առա ինչպիսի վարձատրությամբ<sup>92</sup>:

1722 թ. Հոկտեմբերի 17-ին Տոլստոյը ժամանեց Թիֆլիս: Նրան դիմավորեց Վախթանգի որդի Վախուշտին, որովհետեւ հայրը դեռևս Գանձակում էր գտնվում: Վախուշտին ան-

90 ՌԱՔԱ, գ. ՌՀԿ, դ. 4, թ. 10:

91 Նույն տեղում:

92 ՀԱԿՊԱ, գ. 9, դ. 30, թ. 245:

Հապաղ տեղեկացրեց թագավորին Տոլստոյի Վրաստան ժամանելու և նրա Թիֆլիս վերադառնալու անհրաժեշտության մասին։ Տոլստոյը հայտնում էր, որ ոռոսական զորքերի վերադարձի լուրը ծանր վիշտ է պատճառել Վախուշտիին։ Վերջինիս մտահոգում էր այն, որ թուրքերը Վրաստան կարող են արշավել ոռոսական զորքերի գնալուց առաջ, օգտագործելով Պետրոս 1-ինի վերադարձի լուրը, որը տարածվելով՝ վրացիների ու հայերի մեջ հուսալքում է առաջացրել։

Նոյեմբերի 22-ին Վախթանգ 6-րդը վերադարձավ Թիֆլիս և 24-ին ընդունեց Տոլստոյին։ Իր բանակցությունների մասին նա մանրամասն տեղեկություններ հաղորդեց Պետրոս 1-ինին՝ 1722 թ. գեկտեմբերին գրած նամակում<sup>93</sup>։ Վախթանգ 6-րդը ընդունել է Տոլստոյից նամակները (Հրովարտակները), ծանոթացել նրանց և համաձայնել Պետրոս 1-ինի առաջարկներին։ «Արքայազնը, որ այս հանձնարարությունը հաճույքով ընդունեց... և ասաց, որ Զեր Հրամանը կկատարի... իր մարդը կուղարկի շահի որդու մոտ, որովհետև նա է կառավարում և որը այժմ Ղաղվինում է»<sup>94</sup>։

Չնայած դրան, Վախթանգը համոզված չէր, որ բանակցությունները շահի հետ կունենան դրական արդյունք։ Նրա կարծիքով, միայն ոռոսական զորքերի գալը կարող է ստիպնել շահին վիշել։ Այս առթիվ Վախթանգը ուղղակի հայտարարեց Տոլստոյին, որ եթե Պետրոս 1-ինը ինչ-ինչ պատճառներով անձամբ չի կարող Անդրկովկաս գալ, ապա անհապաղ զորք պետք է ուղարկի։ Ի. Տոլստոյը ինքն էլ բաժանում էր Քարթ-

<sup>93</sup> Նոյեմբեր, թերում, թ. 18—20:

<sup>94</sup> Տե՛ս Յան Շնորհական թագավորության պատճենական գաղտնաբառը, թ. Յ. Յ. 83.

լիի թագավորի կարծիքն ու առաջարկությունները: «Եվ իմ կարծիքն այստեղի իրադրության մասին, ամենաողորմած տեր,— հայտնեց նա Պետրոս 1-ինին,— ուրիշ ոչինչ չէ, քան որքան կարելի է շուտ ուղարկել զորք այնշափ, որչափ Զերդ մեծությունը նպատակահարմար կգտնի, միայն թե դրանով այստեղի մարդկանց խիստ կհուսադրեք, թեկուզ և թուրքական զորքը գա, նրանք այդ ժամանակ ավելի համարձակորեն կգործեն... Այստեղի ժողովուրդը, որքան որ կարողացա նկատել, բոլոր գեպքերում շատ բարյացակամ է Զերդ մեծության նկատմամբ, և առանց աղոթքի շեն հիշում Զեր բարձր անունը և երբ ինձ փողոցում տեսնում են, ապա ձեւքերը վեր են բարձրացնում և խնդրում աստծուն, որպեսզի ավելի շատ ուսւներ տեսնեն»<sup>95</sup>: 1722 թ. գեկտեմբերի սկզբներին Վախթանգի մոտ եկալ շահ Թահմազի կուրարաղասին, որը պաշտոնապես հայտնեց աֆղանների կողմից Սպահանի դրավման և շահ Հուսեինին գերելու մասին. նա խնդրեց, որպեսզի Քարթլիի զորքը ուղարկվի շահին օգնության:

Քարթլիի թագավորը որոշեց խորհրդակցել Տոլստոյի հետ: Վերջինս խորհուրդ տվեց այդ ամենը հայտնել Պետրոս 1-ինին և սպասել նրա ցուցումներին: Սակայն նկատի առավ նաև Վախթանգի դրության բարգությունը, և այն, որ Պետրոսի պատասխանը կուշանար, իսկ ստեղծված իրավիճակը պահանջում էր անհապաղ որոշում ընդունել, Տոլստոյը Վախթանգ 6-րդին խորհուրդ տվեց հնարավոր գեպքում Պարսկաստան ուղարկել վրացական զորքի մեկ քառորդը կամ մեկ երրորդը, իսկ հիմնական մասը պահել տեղում: Վախթանգը

95 ՀԱԿՊԱ, ֆ. 9, գ. 66, թ. 89:

ընկավ դժվար կացության մեջ։ Տոլստոյը դեկտեմբեր ամսին Պետրոս 1-ինին գրած նամակում հայտնում էր այդ առթիվ Վախիթանգի տված պատասխանի մասին. «Եթե այդքան քիչ ուղարկենք՝ հնարավոր չէ,—ասել էր նա Տոլստոյին,—իսկ եթե ոչինչ չուղարկենք՝ վտանգավոր է, քանի որ շահը կարող է թշնամանալ իրեն, այդպիսով, երբ նա կտեսնի, որ ևս իրեն օգնություն չեմ ցույց տալիս, ապա ի՞նձարկե, կսկսի օգնություն խնդրել թուրքից, և եթե նա (Թուրքիան—Վ. Ֆ.) շմերժի և սկսի նրան օգնություն ցույց տալ, ապա իմ մարդիկ կվախենան կովկա թուրքի և շահի դեմ, և իմ երկրում խառնակություն կընկնի, որից փրկվելու այլ միջոց չկա, բացի այն, որ Զերդ կայսերական մեծությունը հրամայի որքան հնարավոր է շուտ Շամախի որոշ քանակի զորք ուղարկել, որն իր գալով կհուսազրի այստեղի երկիրը, ինչպես և հայերին, իսկ եթե թուրքերը ձեզ կանխեն իրենց գալով և երեանը գրավեն, այն ժամանակ շատ հայերի կտիրեն. այստեղի երկիրը կարող են ավերել, դրա համար էլ նորին պայծառափայլությունը սուր-հանդակ է ուղարկում Զերդ կայսերական մեծության մոտ իշխան Զուրաբին Զեղնից որոշում ստանալու նպատակով... ընդումին շահի որդու նամակը, որով նա օգնություն է խընդ-րում»<sup>96</sup>:

Խորհրդակցելով Տոլստոյի հետ և կշուդատելով բոլոր հանդանքները, Վախիթանգը ընդունեց կայում որոշում՝ Պարսկաստան զորք չուղարկել և սպասել ուստական զորքերի գալստյանը։ Դեռևս Դերբենդում եղած ժամանակ Պետրոս 1-ինը միջոցներ ձեռք առավ, որպեսզի 1723 թ. կամպանիան

96 Ա. Ք. Ա. թ. ԱՀԿ, դ. 4, թ. 25—26:

Հաջողությամբ անցկացվի, որի մասին նա տեղյակ պահեց Վախթանգ Ե-րդին:

Պետրոս 1-ինը սկսեց առանձին ուազմական արշավախմբեր ուղարկել, որոնք, սակայն գործում էին Կասպից ծովի արևմտյան և Հարավային ափերում, նպատակ ունենալով կարծ ժամանակում տիրել առավինյա այդ շրջանները, մանավանդ Կասպից ծովի արևմտյան և Հարավային ափերի զլիսավոր քաղաքները: Դրա համար էլ նա սկսեց միաժամանակ գործել Բաքվում և Գիլանում:

Պետրոս 1-ինը առանձնահատուկ նշանակություն էր տալիս Բաքվին: Նա նշում էր, որ Բաքվի գրավումը կարևորագույն խնդիրներից մեկն է: Նա Մատյուշկինին հատուկ հրահանգ տվեց, թե ինչպես պետք է գործել Բաքու մտնելուց հետո<sup>97</sup>:

Ուշտի կառավարիչը բացահայտ ուազմական գործողություններ սկսեց Շիպովի ջոկատի դեմ: Նա ժողովից 15 հազարանոց զորք, միացավ այլ երկու քաղաքների կառավարիչների հետ և Հարձակում գործեց ոռւական զորքի վրա, սակայն ձախողվեց: Հենց այդ ժամանակ զորքով Ուշտ ժամանեց բրիգադիր Էնաշովը, որը իսկույն ձեռնամուխ հղակ ամրությունների կառուցմանը և Գիլանը ամրապնդելու ուղղությամբ մի շարք միջոցներ ձեռնարկեց: Ինչ վերաբերում է Վրաստան զորք ուղարկելուն, ապա Պետրոս 1-ինը հենց սկզբից չէր շտապում, քանի որ Անդրկովկասում դիրքերը ամրապնդելու համար անհրաժեշտ էր համարում նախ և ա-

97 ՀԱԿՊԱ, ֆ. 9, դ. 30, թ. 303—304, 340—342, «Русский вестник», М., 1867, т. 68, стр. 598—600.

ուազ Բաքուն գրավել։ Այս միտքը նա պարզորեն արտահայտել է ուսկրիպտում (Հրովարտակում)՝ ի. Տոլստոյի 1722 թ. նոյեմբերի 2-ի և դեկտեմբերի 1-ի ղեկուցագրերին պատասխանելիս։ Այնտեղ ասված էր, որ Տոլստոյը Վախթանգ 6-րդի խնդրանքին՝ զորք ուղարկելու մասին հետեւյալ պատասխանը պետք է տա. «...որ մենք այդ այժմ ոչ մի կերպ չենք կարող անել, քանի դեռ Կասպից ծովի ափերին չենք ամրապնդվել և Բաքուն չենք վերցրել, և դրա համար էլ արքայազնը, ներկա ժամանակիս, ինչպես որ իր հնարավորությունը թուլատրում է, այնպես էլ իրեն պահպանի, իսկ եթե Բաքուն վերցված կլինի, և մենք Կասպից ծովի վրա կամրանանք, ապա այն ժամանակ նրան օգնության կուղարկենք մեր զորքերից որքան որ անհրաժեշտ կլինի, թեկուզ դրանից բանը հասնի թուրքի դեմ պատերազմելուն, սրանում դու պետք է արքայազնին հաստատապես մեր անունից հուսադրես և ջանաս նրան մեզ հետ անխափան բարեկամության մեջ պահել»<sup>98</sup>։

Տոլստոյը պետք է հայտներ Վախթանգ 6-րդին, որ արդեն հրաման է տրված Մատյուշկինին՝ գալիսանամուտին զորքով Աստրախանից մեկնել Բաքու։ 1723 թ. ապրիլի 5-ին Պետրոս 1-ինը ստացավ Տոլստոյի 1722 թ. դեկտեմբերի 30-ի թվակիր նամակը՝ Վրաստանի գրության մասին։ Այնտեղ, ի միջի ալլոց, ասված էր նաև, թե երդումի փաշան զորք է կուտակում Կարսում և մտադիր է գարնանը արշավել Երևանի, ապա Քարթլիի վրա։ Նման լուրեր նրան բերեց նաև Վախթանգի գեսպան Զուրաբ Խերխիսովիձեն։ Այս լուրերը ըստ երեվուցթին, ստիպում են Պետրոս 1-ինին որոշ քայլերի դիմել

98 ԹԱՔԱ, գ. ԲՀՎ, գ. 2, թ. 4։

և նա 1723 թ. ապրիլի 19-ին Հրամայում է կապիտան Բասկակովին 2000 զորքով մտնել Վրաստան։ Բասկակովը նախ պետք է ժամաներ Սվյատոյ Կրեստ և ապա այնտեղից անցներ Վրաստան։ Բայց ամբողջ երկուհազարանոց զորքը միանգամից չպետք է մտներ Վրաստան։

Վրաստանի սահմանների մոտ զորքը թողնելով «անվտանգ մի տեղում», Բասկակովը ինքը պիտի ներկայանար Վախիթանգին, ըստ երկույթին, փոքրաթիվ մի գումարտակի գլուխն անցած։ Նրան Հրամայված էր ամբողջ զորքը Վրաստան մտցնել միայն այն դեպքում, եթե տեսնի, որ Վրաստանում նրանց նկատմամբ տրամադրված են «ջանասիրաբար և մեծ ցանկությամբ»<sup>99</sup>։ Ինչպես ակնարկեցինք, ոռուսական զորքերի այդ ջոկատի Վրաստան մտցնելու հիմնական շարժառիթը թուրքական զորքերին կանխելն էր, «իսկ եթե թուրքերը արդեն փութացել են և մերոնք չեն կարողանա նրանց կանխել, — հրահանգում էր Պետրոս 1-ինը Բասկակովին, — ապա զորքը կվերադարձնես Սուրբ Խաչ (Սվյատոյ Կրեստ) ամրոցը»<sup>100</sup>։ Ռուսական այդ ջոկատին Հրամայված էր Վրաստան շմտնել նաև այն դեպքում, եթե թուրքերը՝ ոռուսական կողմի տռաջարկով կհրաժարվեն շարժվել Վրաստանի և լեզգիների վրա, «որպեսզի ժամանակից շուտ և թուրքերին տված խոստման համաձայն նրանց պատերազմի չղրդել, որը վրացիների համար վտանգավոր կլինի այժմ։ Իսկ երբ կկարդավորենք գործերը պարսիկների և լեզգիների հետ, այն ժոմա-

99 ՀԱԿՊԱ, ֆ. Պետրոս 1-ինի կարինեա, 1-ին բաժ. գիրք 30, թ. 364—365։

100 Նույն տեղում։

նակ, նույնիսկ եթե թուրքերը մի բան ձեռնարկել ցանկանան, չեն կարողանա, քանի որ մենք ի վիճակի կլինենք գործել ամենուրեք»<sup>101</sup>:

Սակայն սուսական զորախումբը այնպէս էլ Վրաստան շմասվ, քանի որ Վախթանգ Ե-րդին արդեն հաղթել էր Մահմեդի Դուլին և գրավել Թրիլիսին: Այդ բոլորի մասին ի. Տոլստոյը 1723 թ. մարտի 14-ի իր նամակով հայտնեց Պետրոս 1-ինին: Տոլստոյի այս նամակը ստանալուն պէս Պետրոս 1-ինը կարգադրեց սկսել արշավանքը դեպի Բաքու: Պետրոս 1-ինը հրամայում էր այդ կատարել առանց հապաղելու, որովհետեւ անհրաժեշտ էր կանխել թուրքերի մուտքը Բաքու, մի բան, որ կրկին անգամ վկայում է այն մասին, թե այդ շրջանում Պետրոս 1-ինին հիմնականում հետաքրքրում էր Կասպիական ափերի գրավումը: Այս էր պատճառը, որ Բաքուն գրավելու հարցում նա շհապաղեց զորք ուղարկել, մի բան, որ բատ էության շկատարեց Վրաստանի և Հայաստանի հարցում: Վրաստանը հպատակեցնելուց հետո թուրքական փաշան շարժվում էր դեպի Շամախի: Բաքվի գրավումը ուսական վերքերի կողմից հեշտանում էր նրանով, որ «պարսկական դեսպանը նամակ էր տվել, որպեսզի Բաքվի բնակիչները չդիմադրեն»<sup>102</sup>:

1723 թ. Դուլիսին Մատյուշկինը 4 դնդով մոտեցավ Բաքվին և քաղաքապետից հպատակություն պահանջեց, սակայն մերժում ստացավ, չնայած պարսկական դեսպանի վերոհիշյալ նամակին: Մատյուշկինը քաղաքը ողաշարեց ծովից

101 Նույն տեղում:

102 ՀԱԿՊԱ, գ. 9, գ. 30, թ. 368:

և ցամաքից, սկսեց Հրետանային կրակ բացել և գրոհի նախապատրաստվել: Հրետանային կրակի հինգերորդ օրը ամբողք վնասվեց, սակայն բանը գրոհին շնչառավ, որովհետեւ բնակչությունը հարկադրեց պարսկական կայազորին զենքը վայր դնել: Հուլիսի 28-ին ոռուական զորքը մտավ քաղաք:

Բաքվում տեղավորվեց ոռուական 4000 մարդուց բազեած կայազորը: Բաքվի պարետ նշանակվեց իշխան Բարյատինսկին: 1723 թ. վերջերին ոռուական զորքերը գրավեցին Կուրի գետաբերանի մոտ Սալիանը և սկսեցին ամրոց կառուցելու պատրաստություն տեսնել: Կասպիականի ափերում ոռուական զորքերի գործելուն զուգընթաց, ոռուական կառավարությունը բանակցություններ սկսեց պարսից դեսպան Իսմայիլ-բեկի հետ՝ Մերձկասպյան շրջանները Ռուսական պատրիարքության կողմէն մասին:

1723 թ. սկսվեմբերի 12-ին Իսմայիլ-բեկը ստորագրեց համաձայնագիր, որով Ռուսաստանին պետք է անցնեին Մերձկասպյան մի շարք մարզեր՝ Դերբենդ, Բաքու և այլ քաղաքներով հանդերձ<sup>103</sup>:

Մերձկասպյան շրջաններում ամրապնդվելու ուղղությամբ Պետրոս 1-ինի միջոցառումներից մեկը բերդ-ամրոցների կառուցումն էր: Առանձնահատուկ նշանակություն ուներ այդ տեսակետից Սուրբ Խաչ ամրոցի կառուցումը, որը նպաստավոր դիրք ուներ: Ծնորհիվ այս ամրոցի Ռուսաստանը ի վիճակի էր հնազանդության մեջ պահել լեղզի իշխաններին: Մի շարք պաշտպանական կառուցումներ իրականացվեցին նաև Դերբենդում: 1744—1748 թթ. Պարսկաստան

<sup>103</sup> ПСЗРИ, т. VII, № 4298, стр. 110—112.

ուղարկված իշխան Մ. Մ. Գոլիցինի դեսպանության ամդամ շոտլանդացի Զոն Կուկը, նկարագրելով Բաքուն, գրում է. «Բաքուն փոքր քաղաք է, կառուցված Կասպից ծովի ափին կիսաշրջանի ձևով՝ պատած բարձր անկանոն ձևի ամուր պարսպով, ամրացված բուրգերով, դրա համար էլ, երբ քաղաքը ուստաների ձեռքումն էր, արտաքին պարիսպը [նրանք] վերակառուցեցին ավելի կանոնավոր ձևով, լավ ամրացված բուրգերով. պարսպից դուրս նրանք փորեցին խոր խրամատ: Սակայն պարսիկները, չհասկանալով այդ շինությունների նշանակությունը, աչքաթող արին դրանք և մնացին միայն միանգամայն անպետք պարսպի ներսը»<sup>104</sup>:

Պետրոս 1-ինը մշակեց Մերձկասպյան շրջանների բնական հարստությունների շահագործման և առևտուրը զարգացնելու մի շարք միջոցառումներ: Մատյուշկինին տված հրամանում Պետրոս 1-ինը հանձնարարում էր նրան՝ ստույգ տեղեկություններ հավաքել պղնձի մասին, ուղարկել շաքար, շորացած միրգ: Պետրոս 1-ինը Մերձկասպյան մարզերում սուսական տիրապետության հաստատման համար կարեւրագույն նշանակություն էր տալիս այնտեղ գտնվող զորքերի մարտունակության բարձրացմանը: Նա շարունակ Հոգ էր տանում նրանց կոմպլեկտավորման, սպառազինման, ուղամթերքով և պարենով մատակարարելու և այլնի մասին: Այսպես, օրինակ, 1723 թ. ուղմական կոլեգիայի որոշմամբ

<sup>104</sup> John Cook, Voyages and Travels through the Russian Empire, Tartary and Part of the Kingdom of Persia, vol. II, Edinburg, 1778, p. 379.

Մերձկասպյան շրջանների բանակը համալրելու նպատակով այնտեղ ուղարկվեցին նորակոչիկներ՝ թվով 4281 հոգի<sup>105</sup>:

1723 թ. փետրվարի 18-ին, ուղմական կոլեգիայի որոշմամբ, Մոսկվայից Աստրախան ուղարկվեց 150 թնդանոթ և այլ զենքեր<sup>106</sup>: Ռազմական կոլեգիա ուղարկված տեղեկությունների համաձայն, 1725 թ. հունվարին Մերձկասպյան շրջաններում եղած ոռւսական զորքի թիվը հասնում էր 20.324 մարդու: Բայց 1725 թվականի հունվարի 18-ի տեղեկությունների, Մերձկասպյան շրջանները արշավելուց հետո Ռուսաստանը կորցրել էր 7950 զինվոր, զլիսավորապես հիմքանդությունների հետևանքով:

Այսպիսով, 1722—1723 թթ. ուղմական կամպանիայի հետևանքով, ոռւսական բանակը գրավեց Կասպից ծովի ամբողջ արևմտյան և Հարավային ափերը: Թեև Բաքուն գրավելու համար ձեռնարկված զործողությունները ծրագրվեցին և իրականացվեցին թուրքական զորքերի հետ հնարավոր ընդհարման նկատառումով, սակայն Պետրոս 1-ինը գիմադիր շկանգնեց Թուրքիայի հարուցած խոշնդուտներին, որոնց նպատակն էր խափանել Անդրկովկասում հիմնավորվելու ոռւսական մտադրությունները: Այդ պատճառով էլ Պետրոս 1-ինի ու Վախթանգ Ե-րդի ուղմա-քաղաքական նախագծումները շիրագործվեցին:

Արդ, ինչով բացատրել այն իրողությունը, որ Պետրոս 1-ինը հրաժարվեց Շամախին գրավելու իր նախնական մտա-

105 Կենտրոնական պետական ուղմա-պատմական արխիվ, ֆ. 2, ց. 1/5, գ. 44—50, թ. 302:

106 Նույն տեղում, թ. 284:

դրությունից: Պետրոս կայսեր այս վարքագիծը միանգամայն հասկանալի է դառնում, եթե նկատի ենք առնում այն հանգամանքը, որ Թուրքիան արդեն 1722 թ. իր հովանավորության ներքո էր վերցրել «Հավատակից» լեզգիներին: Այդ պայմաններում գեղի Շամախի շարժվելը, այնտեղից էլ լեզգիներին վտարելը և քաղաքը ոռւսական զորքով գրավելը համազոր կլիներ Թուրքիային պատերազմ հայտարարելուն, մի բան, որը Պետրոս 1-ինը նպատակահարմար շհամարեց ձեռնարկել: Ծուսաստանին այդ շրջանում, հավանաբար, ամենից ավելի պետք էր իրականացնել Մերձկասպյան շրջանների միակցման խնդիրը, որը լուծեց 1724 թ. ոռւս-թուրքական պայմանագիրը:

## ԳԼՈՒԽ ԵՐԵՌԻ

ՀԱՅ ԵՎ ՎՐԱՅ ԺՈՂՈՎՈՒԹՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ  
ԱԶԱՏՄԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐՈՒՄ

XVIII դարի առաջին քառորդը նոր էտապ էր հայ և վրաց ժողովուրդների աղատագրական պայքարի, նրանց համագործակցության մեջ; Օգտվելով Պարսկաստանում ստեղծված ծանր վիճակից և հուսագրվելով Ռուսաստանի զինված օդնության հեռանկարով, նրանք լուրջ քայլերի և դիմում օտար լուծը թոթափելու համար; Անդրկովկասյան ժողովուրդների համատեղ պայքարը կազմակերպելու նպատակով որոշակի քայլերի դիմեցին աղատագրական շարժման հայ և վրացի ղեկավարները՝ Եսայի Հաստն-Ջալալյանը, Ավան Յուլիբաշին, Քարթլիի թագավոր Վախթանգ Ե-րդը, Կախեթի թագավոր Կոստանդինը, ոռոսական կառավարության պատվիրակ հայազգի իվան Կարապետը և ուրիշներ:

Եսայի Հաստն-Ջալալյանը և Վախթանգ Ե-րդը քաղաքական սերտ կապերի մեջ էին ոռոսական արքունիքի և աղատագրական շարժման մյուս դործիշների հետ; Նրանք հայերի և

վրացիների ապստամբությունը նախապատրաստելու և այն նպատակին հասցնելու գործում հանդես են եկել զեկավարի ու կազմակերպչի դերում։ Աղատագրական շարժման դեկավարները ոչ միայն հուսագրում և ոգևորում էին հայերին ու վրացիներին ոռուական դորքերի մոտալուտ առաջիւաղացումով, այլև միջոցներ էին ձեռք առնում տեղում զինվորական ուժ ստեղծելու, նրանց պարսից հարստահարիչների դեմ սպայքարի հանելու ուղղությամբ։

Հայերի ու վրացիների աղատագրական շարժումը սկըզբ-նական շրջանում, նախքան թուրք զավթիչների ներխուժումը Անդրկովկաս, ուղղված էր սեֆյան իշխանության հետ կապված տեղական խաների ու ֆեոդալների, ինչպես նաև լեզգիների ավերիչ ասպատակությունների դեմ։ Աղատագրական շարժումը զեկավարելու համար սյունյաց մելիքները զիմում են վրացական արքունիքին։ Նրանք Վախթանգ Ե-րդի մոտ հն ուղարկում Ստեփանոս Շահումյանին։ Վախթանգ Ե-րդը Հայաստան է ուղարկում Վրաստանում բնակվող և զինվորական գործին լավատեղյակ մի խումբ մարդկանց՝ Դավիթ-Բեկի գլխավորությամբ։

Աղատագրական պայքարի անմիջական մասնակից ու ականատես Ստ. Շահումյանը Դավիթ-Բեկի Սյունիք գալու մասին տալիս է հետևյալ տեղեկությունը. «Արդ ի սոյնպիսի աւուրս դառնութեան սասանութեան Ստեփաննոս անուամբ ումն ի մերազնեաց ի կողմանցն Կալերու Վանքեցի, խորհուրդ ի մտի գնէր, անցանէր ի Սիսական գաւառ, և երթալ հասաներ յաշխարհն Վրաց. ի քաղաքն Մցխեթ առ Շահնաւազ իշխանաց իշխանն Վրաց, և խնդրել ի նմանէ զայր մի տալ

Երկիրն Խափանու ի զօրագլուխ, և Հրաման տալ նմա զօրաժողով լինելոյ, և զերկիրն ի թշնամեաց պահելոյ»<sup>1</sup>:

Եթե առանց կասկածի ընդունենք աղբյուրի այս տվյալը, ապա պետք է կարծել, որ վրաց արքունիքի հետ կապեր հաստատելու և նրանից ազատագրական պայքարում օգնություն խնդրելու նախաձեռնողը ինքը՝ Ստ. Շահումյանն է եղել, որը, տեսնելով երկրի վիճակը, որոշել է գնալ Մցխեթ՝ Վրաստանի արքայազն Շահնավագի մոտ և նրանից մի զորապետ խնդրել՝ Սյունիքը թշնամիներից պաշտպանելու համար: Շահումյանը, ինչպես ինքն է հազորդում, Սյունիքի հիսուն տանուտերերի անունից մի խնդրագիր է ներկայացնում Շահնավաղին: Ինչեւ վիցե, արխիվային վավերագրերից երեսում է, որ Վախթանգ Ե-րդը, իրոք, տեղում հայերին կազմակերպելու համար ուղարկել է 30—40 մարդ, զինվորական հրահանգիչներ:

Դավիթ-Բեկի անձնավորությունը, մինչև այժմ էլ ծածկված է անցյալի խավարով, նրա մասին իր իսկ պատմիչը միայն այսքանն է հազորդում, որ նա ազգությունը հայ էր, Մցխեթից: Պրոֆ. Աշ. Աբրահամյանը «Մի էջ Անդրկովկասի ժողովուրդների և հայ-ուուսական հարաբերությունների պատմությունից» աշխատության մեջ, հենվելով Մաշտոցյան մատենադարանի մի վավերագրի վրա, հանդում է այն եզրակացության, թե «Դավիթ-Բեկը գեղարքունեցի է, սերվում է Աթաբեկի ցեղատոհմից: Նա ունեցել է Մխիթար անունով մի որդի, որի զավակներն ին ուուս բանակի փոխսպնդապետ Ստե-

1 «Ընտիր պատմութիւն Դավիթ-Բեկին և պատերազմաց Հայոցն խափանու, որք եղեն ընդդիմ թուրքաց ի մերում ժամանակի, այն է յամի տեսան 1722, և Հայոց 1171», Վաղարշապատ, 1871, էջ 3—4: (Այսուհետեւ տե՛ս «Ընտիր պատմութիւն...»):

ժիանոսը և էջմիածնի միաբանության անդամ իստհակ վարդապետը»<sup>2</sup>: Գիտնականի առաջ քաշած այս միտքը Դավիթ-Բեկի անձնավորության վրայից անհայտության քողը վերցնելու ուշագրավ մի փորձ է, այն սրում է հետազոտողների ուշադրությունը այդ ուղղությամբ լրացուցիչ պրապտումներ կատարելու համար:

Թեև եղած աղբյուրները վկայում են, որ Դավիթ-Բեկը Մցխեթից էր, սակայն դրանով դեռ չի լուծվում նրա ծագման և գործունեության հետ կապված ողջ առեղծվածը, որ իրոք Դավիթ-Բեկը Վրաստանից էր, այդ մասին ունենք Շահումյանի վկայությունը հաստատող մի այլ հավաստի աղբյուր ևս: Մենք նկատի ունենք Զաքարիա Նկարչի ձեռագիր ավետարանը, որին կից պահպանվել է թիֆլիսեցի Ղուղանենց Փարսադան-բեկի որդի Թաղիի հիշատակարանը: Այս աղբյուրը արժեքավոր տեղեկություններ է պարունակում Փարսադան-բեկի և նրա փեսա Դավիթ-Բեկի վերաբերյալ<sup>3</sup>:

Այդ հիշատակարանի տվյալներից երեսում է, որ Ղուղանենց Փարսադան-բեկը ոսւսական օրիենտացիա ունեցող մի հեղինակավոր անձնավորություն է եղել Վրաստանում: Փարսադան-բեկի երեք որդիները զորապետներ էին, որոնցից երկուսը՝ Թաղին և Ռաֆայելը, 1724 թ. Ռեշտում մտել էին ոսւսական բանակ՝ ծառայության, իսկ մյուսը՝ Աբղմասենն իր փեսա Դավիթ-Բեկի հետ, վրաց թագավոր Վահիթանդ 6-րդի Հրամանով, գնացել էր Մյունիք՝ զորքեր կազմակերպելու հա-

2 Ա. Գ. Արքահամբան, Մի էջ..., էջ 95:

3 Տե՛ս «Բանբեր Հայաստանի գիտական ինստիտուտի», գիրք Ա, Բ, 1921—1922 թթ., Վաղարշապատ, էջ 136:

մար: Հավանաբար, Վոլինսկու հետ Վախթանգի անունից բանակցություն վարողը հենց այդ Փարսադան-բեկն է եղել, որին Սոլովյով թյուրիմացաբար համարել է «ազգությամբ վրացի և անվանել «Փորսագան բեկ»<sup>4</sup>: Միրզոյանի այս կարծիքը Փարսադան-բեկի մասին մեզ նույնպես համոզիչ է թվում:

Ավելորդ շենք համարում բերել համապատասխան քաղվածք հիշատակարանից. «...և մեր միւս եղբայր Աբդմասեհն որ Վրաստան պարոնի հրամանաւն գնացին տեղն զօրաժողով առնելոյ որ եղբայրս էլ զօրապես էր, որոյ գլխաւորն էր Ալիխանի որդի Դաւուտ պէկն, որ է իմ փեսայ, որք ընդ պարսից և օսմանցոց բազում պատերազմս ետուն, և ի վախճանի անկան ի մարտին, որ իմ եղբօր գերեզմանն այժմ ի Խոտի է, ի Ղափանումն»<sup>5</sup>:

Ինչպես վերևում նշվեց, մինչև թուրքերի արշավելը Անդրկովկաս, հայ և վրաց ժողովուրդների պատագրական պայքարը ուղղված էր տեղի բռնակալ խաների դեմ, որոնք գահազուրկ Շահ-Թահմազի գլխավորությամբ կռիվ էին մղում Քարթլիում և Արեւլյան Հայաստանում դեռ նոր ծագած հայուրացական ազատագրական շարժումների դեմ: Պարսիկ բռնակալները ոչ մի միջոցի առաջ կանգ չէին առնում ձնշելու բախտակից ժողովուրդների ազատատենչ ելույթները:

Դավիթ-Բեկը գալով Ղափան, ձեռնամուխ է լինում հայկական զորքի կազմակերպմանը: Ամրանալով Շնհերում, Դավիթ-Բեկը առաջին հերթին իր մոտ է հրավիրում Տաթեի

<sup>4</sup> Ա. Միրզոյան, Հայ ազատագրական շարժումները Սյունիքում 1722—1730 թթ., Երևան, 1950, էջ 123:

<sup>5</sup> Տե՛ս «Բանքեր Հայաստանի գիտական ինստիտուտի», գիրք Ա, Բ, 1921—1922, էջ 136:

վանքի միաբանության ղեկավար Հովհակիմ եպիսկոպոսին, որը հանդիսանում էր Սյունիքի և Գողթանի հյուսիսային շրջանների հայ հասարակության հոգեոր առաջնորդը: Դավիթ-Բեկը նրան հայտնում է իր առաջիկա նպատակների մասին: «Եւ կոչեալ առ ինքն զառաջնորդն Տաթևու, պատմեաց նմա, թէ յի՞նչ բանս, յի՞նչ խորհուրդս եկեալ է»<sup>6</sup>:

1722 թ. գալով Հայաստան, Դավիթ-Բեկը գլխավորում է Սիսիանում, Ղափանում, Մեղրիում ծավալված ազատագրական շարժումը: Նրա ժամանելուց հետո մելիքները, իշխաններն ու զորապետները երկրի բոլոր կողմերից գալիս են Շինուհայր՝ իրենց հպատակությունն ու պատրաստակամությունը հայտնելու ապստամբության ղեկավարին:

Դավիթ-Բեկի շուրջն է համախմբվում ապստամբ հայ բնակչությունը: «Իրեն ելանէր յերկրէն Վրաց. առ նա ժողովէին ի Հայոց ամենայն արք զորութեանց յամենայն կողմանաց գաւառին, որք լսէին զնմանէ, արք իբրեւ չորէր հարիւր, որք նեղեալք և տառապեալք էին դառն ծառայութենէ այլաղդեաց, արք որք զանձինս իւրեանց եղեալք էին առ ի աղատինելոյ ի լծոյ ծառայութեանն այլաղդեաց...»<sup>7</sup>: Ապստամբ զյուղացիների ղեկավարներին Դավիթ-Բեկը նշանակեց որպես տեղի զորապետներ և նրանց հանձնարարեց գլխավորել տեղական ուժերը, կաղմակերպել ու պայքարի հանել ողջ աղքանակալությունը:

Դավիթ-Բեկի առաջին գործը եղավ տեղական ուժերի կաղմակերպումը և միավորումը, որը նա հաջողությամբ իրականացնում էր: «Զառաջինն ողիմէր գալ առ նա՝ սակաւ արամբ-

6 «Ընտիր պատմութիւն...», էջ 7:

7 Նույն տեղում, էջ 6:

Թորոսն ի Զաւնդուր գաւառէն, և առեալ ի նմանէ ղիշխանութիւն զօրապետութեան դառնայր ի տեղի, ընդ իւր առեալ նաև զՊայինդուր զօրավարն Դաւթի»<sup>8</sup>:

Նույն ձևով վարվեցին նաև շատ ապստամբ գյուղերի տանուտեր-հրամանատարները: Կարճ ժամանակամիջոցում Դավիթ-Բեկի շուրջը հավաքվում են մոտ 2000 մարդ:

Օգտագործելով երկրի լեռնային պայմանները, Դավիթ-Բեկը փոքրիկ խմբերով հանկարծակի հարձակումներ էր դործում աղատազրական շարժման թշնամինների՝ պարսկական իշխանությունը տեղերում իրականացնող ֆեռդալների վրա: Այդօրինակ գործողությունները մեծ կորուստներ էին պատճառում թշնամուն և մշտական հաջողություն բերում Դավիթ-Բեկին: Ստեփանոս Շահումյանը թվարկում է այն խաների ու ֆեռդալների անունները, որոնց գեմ պատերազմել է Դավիթ-Բեկը: Այդ ֆեռդալներն էին՝ Ղափանի Ասլամազ-Ղուկի խանը, Բարգուշատի խան Ֆաթալի սուլթանը, Օրդուբադի, Նախիջևանի, Ղարադաղի խանները, Լեազի իշխող Սեֆի-Ղուկի խանը, Տաթևի մելիք Բաղրը, Ազուկիսի մելիք Մուսան, Արծվանիք գյուղի տեր մելիք Ֆրանգյուլը և ուրիշներ:

Դավիթ-Բեկի զորքը կազմված լինելով հիմնականում տեղի հայ գյուղացիությունից, պատժում էր պարսկասեր խոշոր ֆեռդալներին, բռնազրավում նրանց ունեցվածքը: Դեռևս 1722 թ. գալով Սիսիան, Դավիթ-Բեկը Տաթև և Շինուհայր գյուղերի ներկայացուցիչներին հայտարարեց, որ ինքը եկել է հայոց երկրից այլազդիներին, այսինքն՝ օտարերկրյա իշխողներին վտարելու նպատակով: Նրա զլխավորած ազատա-

8 Նույն տեղում, էջ 8:

պրական պայքարը ստանում էր սոցիալական-դասակարգացին երանգավորում. գյուղացիության լայն մասնակցությունը աղատագրական պայքարին, անշուշտ, իր կնիքն էր դնում այդ պայքարի վրա:

Առաջին հարվածներից մեկը Դավիթ-Բեկը հասցնում է ջեռ բերդին: Նա երեք օր ժամկետ է տալիս «այլաղփաց», որպեսզի սրանք քոշեն Պարսկաստան:

Դավիթ-Բեկը անողոք էր աղատագրական պայքարի թշնամիների նկատմամբ, ոչնչացնում էր ոչ միայն պարսիկ, այլև այն հայ ֆեռդալներին, որոնք համակերպվում էին օտարերկրյա նվաճողների հետ: Այդպես վարվեց Դավիթ-Բեկը, օրինակ, Տաթևի մելիք Բաղրի հետ, երբ վերջինս, ամրանալով Տաթևում, փորձում էր թիկունքից հարվածել ապրատամբներին: Գնալով Տաթև, Դավիթ-Բեկը երկու օր հետո, գերում է մելիք Բաղրին և մահվան դատապարտում նրան, բռնագրավելով նրա ողջ ունեցվածքը. որոշ ժամանակ անց Դավիթ-Բեկը Շինուհայրից տեղափոխվում է Տաթև և հիմնավորվում այնտեղ<sup>9</sup>:

Տաթևից Դավիթ-Բեկը իր ներկայացուցիչներին ուղարկեց Հալիձոր՝ տեղի իշխան մելիք Փարսագանի և Տեր-Ավետիսի մոտ, առաջարկելով միավորվել պարսկական տիրապետողների դեմ համատեղ պայքար մղելու համար: Նրանցից բացասական պատասխան ստանալով և տեղեկանալով, որ նրանք թշնամաբար են տրամադրված ապստամբության հանդեպ, Դավիթ-Բեկը կալանավորում է մելիք Փարսագանին և Տեր-Ավետիսին, նետում բանտ՝ Շինուհայրում, իսկ ինքը մեկնում

<sup>9</sup> «Բնտիր պատմութիւն...», էջ 8—9:

Հալիծոր: «Ապա յետ այսորիկ մէլիք Փարսաղան, և Տէր Աւետիս եկին յողջոյն Դաւթի: Իսկ նորա բարկացեալ ի վերայ նոցա, ասէ, կոշեցի զձեղ, և ընդէ՞ր ոչ եկիք յօդնութիւն մել, և հրամայեաց տանիլ զնոսա ի բերդն Շէնճէր և արկանել զնոսա ի բանտ. և էին նոքա աւուրս հնգետասն ի բանտ անդ»<sup>10</sup>:

Հետագայում նրանք ազատվում են բանտարկությունից, սակայն միայն այն բանից հետո, երբ տալիս են ապստամբների հետ միավորվելու իրենց համաձայնությունը:

Դավիթ-Բեկի գլխավորած շարժման թշնամիներից էր նաև Երիցվանքի մահմեղականացած հայ մելիք Ֆրանգյուլը: Սա դավադրությունն կազմակերպեց Դավիթ-Բեկի ականավոր զորահրամանատարներից մեկի՝ Թորոսի դեմ, ձևանալով նրա բարեկամը և առաջարկելով միասին պայքարել Բարգուշատի Բաթալի-խանի (Յաթալի սուլթանի) դեմ: Սակայն մարտի թեժ պահին մելիք Ֆրանգյուլը, որը գաղտնի կատ էր պահպանում Բաթալի-խանի հետ, թիկունքից Թորոսի զորքի վրա հարձակվեց: Այդ դավաճանության հետևանքով Թորոսը զոհվեց, իսկ ապստամբ հայերը մեծ կորուստներ կրեցին: Բայց ապստամբ հայերին հաջողվում է կալանավորել մելիք Ֆրանգյուլին և գլխատել:

Աղատազրական պայքարի ընթացքում Դավիթ-Բեկի գլխավորությամբ կազմակերպվում են սղնախներ. «... և մենք նուստքս տեղիս փախստական էինք ի ձեռանէ դղլպաշին, և ժողովեալ այլումն տեղաց եկեալ քարաւէժ տեղի սղնախ արարինք»<sup>11</sup>:

10 Նույն տեղում, էջ 10:

11 ՌԱՔԱ, ֆ. ՌՀՀ, գ. 4, թ. 2:

Դավիթ-Բեկի զորքը Դափանում տեղաբաշխված էր հետևյալ վայրերում՝ ամրացված Շինուհայր գյուղում, Որոտան անառիկ բերդում, Զեռ ամրոցում, Մեղրիում, Խնձորեսկ բերդում, ինչպես նաև Հալիձորում, որտեղ Դավիթ-Բեկը նոր ամրություններ է կառուցում։

Ստեփանոս Շահումյանի տվյալների համաձայն, Դափանի ապստամբների զորքը հետևյալ ձևով էր տեղաբաշխված։ Շինուհայրում՝ 550 մարդ՝ հրամանատարներ Բայանդուրի, Պալիի, Մինասի և Ստեփանոսի գլխավորությամբ, Տաթևում՝ 400 մարդ՝ Գիշիի, Այգինի, Եսայիի և տիրացու Սիմոնի հրամանատարությամբ, Հալիձորում՝ 250 մարդ՝ մելիք Փարսագանի և 486 մարդ՝ Տեր-Ավետիսի գլխավորությամբ, Չավնդուրում՝ 2000 մարդ՝ Թորոս, Բայանդուր, Նուբար, Վարդան, Փարսագան, Թովմաս, Թուրինջ և Հովհաննես հրամանատարների գլխավորությամբ, Կալեր բնակավայրում՝ 700 մարդ, որոնց գլխավորում էին Պալին և ինքը՝ Ստեփանոս Շահումյանը, Մեղրիում՝ 400 մարդ՝ Կոստանդինի, Հովհաննեսի, Սարինի և Առաքելի հրամանատարությամբ<sup>12</sup>։ Բացի վերը հիշատակվածներից, Ստ. Շահումյանը հիշատակում է նաև Դավիթ-Բեկի մի շարք այլ հրամանատարների անուններ՝ «ոռղիքն Մաղամելիքին Ջուղայու և որդին Տիլէնջի մականուանելոյն» Հին Ջուղայից՝ 400 ուազմիկներով, Սիսիանի զորապետը՝ 500 ուազմիկներով, մելիք Ղուշին՝ 200 ուազմիկներով, Տեր-Գասպարը՝ 250 ուազմիկներով, փաղաքերդցի Աղամը՝ 150 ուազմիկներով, կուլաքերդցի Ղազարը՝ 110 ուազմիկներով, շվանիձորցի Սարգիսը՝ 250 ուազմիկներով<sup>13</sup>։

12 «Ընտիր պատմութիւն...», էջ 11, 12, 20, 29, 71:

13 Ստ. Շահումյան, Ընտիր պատմութիւն, էջ 76—78։

**Ստ.** Շահումյանի տվյալներով Դավիթ-Բեկի զորքի ընդհանուր քանակը հասնում էր 6600 մարդու, որոնց զեկավարում էին 45 զորապետներ ու հրամանատարներ<sup>14</sup>: Այս հրամանատարների մի մասը Ղափան էին եկել Դավիթ-Բեկի հետ (Մխիթար-բեկը, Գևորգը, Հովհաննեսը, Բայանդուրը, Ավթանգիլը և ուրիշներ), իսկ մյուս մասը տեղի գյուղապետներից էր (Թորոսը, Նուբարը, Վարդանը, Պապը, Աղամը, Սարգիսը և ուրիշներ):

Դավիթ-Բեկի զլիավորած զորքերը ունեին իրենց մարտական դրոշները: **Ստ.** Շահումյանը գրում է, որ թուրքերը, տեսնելով Մեղրիի բնակչությանը օգնության շատապող հայոց զորքին, ասում էին միմյանց. «Իսկ զօրքն թուրքաց ի բանակէ անտի՝ իբրև զբազմութիւն զօրացն Հայոց տեսանէին, ոչ հաւատացին, թե յօդնութիւն իցեն նոցա հասեալք այլուստ, այլ ասէին, թէ Մեղրեցիքն կանանց իւրեանց զգեցուցեալք են զգեստ առնացի, և զղարդ պատերազմի, և տուեալ զբազում սուտ զրօշակս ի ձեռու նոցա առ ի երկեցուցանել զմեղ»<sup>15</sup>:

Դավիթ-Բեկի զեկավարությամբ ապստամբները զախշախեցին Ղափանի, Բարգուշատի և պարսկական ուրիշ խաների

<sup>14</sup> Ինչպես իրավացի կերպով նշում է Պ. Հարությունյանը, բերված տվյալների մեջ չի մտնում Դավիթ-Բեկի զորքին ակտիվ օժանդակություն ցուց տվող բնակչությունը: Այդ իսկ պատճառով դժվար է ստուգի որոշել Ղափանում աղատադրական շարժման մասնակիցների իրական քանակը: Բոլոր գեպբերում, նրանց թիվը շատ ավելի մեծ է եղել, քան Ստ. Շահումյանի նշած 6600 ռազմիկները: Տե՛ս Պ. Տ. Արստոնյան, Օսвободительное движение армянского народа в первой четверти XVIII в., стр. 264.

<sup>15</sup> «Քնտիր պատճութիւն...», էջ 31:

միացյալ ուժերը, աղատագրեցին Ղափանը և սահմանամերձ այլ շրջաններ։ Այդ մասին Մխիթար սպարապետի ուղերձում ասված է. «...զի տերն Քրիստոս ետ մեղ զօրութիւն և կարողութիւն, ընդ զզլպաշին հետ պատերազմեցաք, աստուծով յաղթեցինք զզլպաշն...»<sup>16</sup>:

Հայերի ելույթը թուրք-պարսկական նվաճողների դեմ սերտորեն կապված էր վրաց ժողովրդի աղատագրական պայքարի հետ։ Մի շարք վայրերում հայ և վրացական ուժերը համատեղ պայքարի փայլուն օրինակներ ցուց տվեցին։ Ագուլիսի մոտ, օրինակ, պարսիկների դեմ մղած կռվում հայերի կողքին կռվում էին նաև Վախթանգ Ե-րդի ուղարկած մարդիկ։ Այդ մասին Մինաս վարդապետի տված հաղորդագրության մեջ ասված է. «Շահի որդին, որը այժմ Թավրիզումն է, չորս խանի զորքով ուղարկեց Ագուլսի՝ հայերի դեմ, որը հայերը հավաքվել էին և հրամայեց բոլորին կռտորել, հայերը տեղեկացան նրանց դալու մասին, տեղի ունեցավ ճակատամարտ, և խաները մազապուրծ եղած փախան, իսկ մյուսներից շատերին կռտորեցին, և այդ ճակատամարտին կային նաև վրացիներ, որոնք ուղարկված էին Վախթանգի կողմից՝ օգնության համար»<sup>17</sup>:

Նույն վավերագրից մենք տեղեկանում ենք, որ հայկական զորքը, թվով մոտ 2400 մարդ, գնացել են նախիջեան քաղաքի վրա, պաշարել այն և այնուհետև դրավել։ Այստեղ, անշուշտ, խոսքը վերաբերում է Դավիթ-Բեկի գլխավորած աղատագրական պայքարին, երբ այն ուղղված էր պարսկական

16 ՈՒՅԹԱ, ֆ. ԲՀՀ, գ. 4, թ. 2:

17 Գ. է զ ո վ, նշվ. աշխ., էջ 547, փաստաթուղթ 224 (ռուսերեն):

բոնապետության հենարան հանդիսացող տեղական խաների դեմ, տվյալ դեպքում՝ Նախիջևանի խանի դեմ: Ըստ երեսութին, Դավիթ-Բեկի այդ գործողություններն էին ստիպել տեղական խաներին դիմելու շահ Թահմազի օգնությանը: «Դափանում բազում թվով զինվորական հայեր են ժողովվել և, միավորվելով Նախիջևանի հայկական զորքերի հետ, նեղում են մերձակա շրջանի մահմեղականներին, որոնք եկել են շահին խնդրելու հայերի դեմ զորք ուղարկել, քանի որ նրանցից (հայերից) մեծամեծ վնասներ են կրում»<sup>18</sup>:

XVIII դարի առաջին քառորդին ծավալված ազատագրական պայքարում մեծ էր Արցախում (Դարաբաղում) կազմակերպված հայկական ուղմա-քաղաքական միավորումների՝ սղնախների դերը: Արցախում սղնախների շուրջը համախըմբվել էր տեղական բնակչությունը և հերոսաբար պայքարում էր պարսկական ու թուրքական զավթիչների դեմ:

Սեֆյանների պետության թուրացման և անկման ժամանակաշրջանում որոշ մելիքներ սկսեցին ստեղծել և ամրապնդել իրենց ուղմական ուժերը: 1721—1722 թթ., երբ Դաղստանի ֆեոդալների մի մասը ասպատակություններ էին կատարում Արցախի վրա, հայ մելիքները և գյուղապետները Զարաբերդ (Զրաբերդ), Գյուլիստան և այլ շրջաններում կազմակերպեցին սղնախներ, որոնց մասին այդ շրջանների դեկավարները (շարաբերդցի Սարգիս-Շիրվանը, գյուղիստանցի Եսային, գանձակեցի Հովսեփը) իրենց նամակում հաղորդում են ուստական արքունիքին: Նրանք տեղեկացնում էին, որ միմյանց ձեռք մեկնելով և ժողովելով 10—12 հազար մարդ՝

18 ԱԱՔԱ, ֆ. ԱՀՊ, գ. 6, թ. 12—13:

իրենք պայքարում են մերթ լեզգիների, մերթ թուրքերի դեմ և դրա համար կազմակերպել են սղնախներ՝ անմատչելի տեղերում:

«Ես ծառայից ծառայ Եսայիս և այր ոմն Շրվան անուն ևս Սարգիս անուն, որ այս երկուքս ի Զարապերթու են, ևս Եսայիս Պարտայու և Մելիք Հովսեփի ի Գանձայու, միմեանց ձեռ արկաք Ժ (10) և ԺԲԾ (12000) մարդ ժողովեցաք, պատերազմ մտանք կամ թէ լազդոյ հետ, կամ թէ տանս Աղուանից թուրքաց հետ, ամուր ժայռս քարանց սըղնախ կապեցանք...»: Նամակի հեղինակները նաև հայտնում էին. «յաղթութիւն եմք առեալ ի վերայ թուրքաց», նկատի ունենալով, անշուշտ, Աղվանից երկրի թուրքերին, այսինքն՝ տեղական այն ֆեոդալներին, որոնք պարսկական բռնապետության հենարանն էին Աղվանից աշխարհում: Նամակում նշված էր նաև Վախթանգ Ե-րդի կողմից հայկական սղնախներին ցուց տված օգնությունը, մի հանդամանք, որը ցուց է տալիս հայ և վրաց աղատագրական պայքարի սերտ շաղկապվածությունը: «Եւս Տիփիսիսու Վախթանկ խանն շատ օգնութիւն էհաս մեզ, անթվելի որ զրով չէ պատմելոյ...»<sup>19</sup>:

Աղատագրական պայքարը, ինչպես նշեցինք, սկզբնական շրջանում ուղղված էր պարսկիների և նրանց գաշնակից տեղացի խաների դեմ: Անտոն քահանայի ուստական արքունիքին տված ցուցմունքի համաձայն Հաղբութի մոտ հայերը կովել էին շահի 40000 զորքի դեմ և հաղթել, պարսիկներին հարկադրելով նահանջելու դեպի Խուզափերինի կամուրջը:

19 Գ. է դռվ, նշվ. աշխ., էջ 341, փաստաթուղթ 218 (սուսերեն):

Այդ ճակատամարտը տեղի էր ունեցել 1723 թ. Հոկտեմբերի 20-ին<sup>20</sup>:

Արյունահեղ մարտեր էին տեղի ունենում Ղարաբաղի հայկական սղնախների և Գանձակի մահմեդական ուժերի միջև: Գանձակի մահմեդական բնակիչները, մեծոց մինչև վորքը, թվով 20.000 մարդ 1724 թ. գարնանը հարձակվում են Զրաբերդի վրա: Տեղի մելիք Եսային և նրա եղբայր Աբրահամը իրենց ուժերով զորել զիմադրություն են ցույց տալիս նրանց և հարկադրում նահանջել: Թշնամին մարտի դաշտում թողնում է 400 սպանված<sup>21</sup>:

1722 թ. հայկական զորքը, վերադառնալով Գանձակից, շրբից, այլ ամրացավ բնականից անմատչելի վայրերում: «...Դարձաք իւրաքանչիւր ի տեղիս մեր, և ամրացաք ի լերինս ուր և դժուարին էր»<sup>22</sup>, — գրում է Եսայի կաթողիկոսը: Իվան Կարապետը նույնպես հավաստում է, որ սղնախները տեղափոխած էին լեռնային անմատչելի տեղերում: «յամեն գեղ ա (1) բերթայ և ճանապարէն շատ դժուարայ, ոխչ սարայ, մեշայ, ճանապարէն կապերայ, տեղ ստէնք կայ, որ և (5) մարդ թվանկլի, ե՛թ (5000) մարդի ջողար կուտայ...»<sup>23</sup>:

Ղարաբաղում գործում էին հինգ սղնախներ: Այդ մասին ուղղակի նշված է Իվան Կարապետի նամակում. «և է Դ-ն (4—5) սղնաղի խայերէն յեփ շափուն ան դնում ան ի՛ն

20 Նույն տեղում, էջ 361—363:

21 ՌԱՔԱ, ֆ. ԲՀՊ, գ. 6, թ. 17:

22 Եսայի Հասան-Զալալեանց, նշվ. աշխա., էջ 51:

23 ՌԱՔԱ, ֆ. ԲՀՀ, գ. 2, թ. 64, տե՛ս նաև ՌԱՔԱ, ֆ. ԲՀՊ, գ. 4, թ. 251:

(20.000) մարթայ դուս գնում են շափում»<sup>24</sup>: Նույնն է հաստատում 1726 թ. մարտի 9-ին Դերբենդ եկած Մաթեոս Գառպարյանը: Նա հայտնում էր, որ ինքը 2 տարի մնացել է սըղնախներում, որոնք թվով հինգն են, դանվում են միմյանցից կեսօրվա հեռավորության վրա և ունեն իրենց հարյուրապետները (յուղբաշիները): Առաջին սղնախը Դիղակն էր, որի հրամանատարն էր Ավան յուղբաշին, երկրորդը՝ Խաչենը, թարխան յուղբաշու հրամանատարության ներքո: Այստեղ էր գտնվում նաև Խվան Կարապետը: Երրորդ սղնախը Ջրաբերդն էր, սրա յուղբաշին Սարգիսն էր, չորրորդ սղնախը Իգիրմիկորդն է, որը գտնվում էր մելիք Բաղիրի հրամանատարության ներքո: Այդ յուղբաշիներից վարձ ստացած զորքի թիվը հասնում էր տասը հազարի, իսկ ամբողջ զենք կրողների թիվը՝ վարձ ստացողները և շտացողները միասին վերցրած՝ 60 հազարի: Այդ սղնախների հայերը ոչ ոքի չէին հպատակում<sup>25</sup>: Նշված վարձ ստացող զորքը, որի թիվը, Մ. Գասպարյանի վկայությամբ, հասնում էր 10 հազարի, մելիքների զինված խմբերն էին, որոնք ուղմական իրադրության պատճառով այդշափ ավելացել էին:

Փաստաթղթում թեպետ նշվում են հինգ սղնախները, բայց ըստ անունների թվարկում են միայն չորսը, բացակայում է Շոշի սղնախը (Վարանդայի դավառում): Հավանաբար, դրա պատճառն այն էր, որ արդեն այդ ժամանակ (1726 թ. դարնանը) Ավան յուղբաշին տեղի տալով թուրքական հարձակումներին, ետ էր քաշվել իր սղնախից դեպի Դիղակ:

24 ՈԱՔԱ, ֆ. ԱՀՀ, գ. 4, թ. 31:

25 ՈԱՔԱ, ֆ. ԱՀՊ, գ. 4, թ. 215r:

բերդ սղնախի կենտրոնը ջրաբերդն էր, Գյուլիստանինը՝ «Երից մանկանց» վանքը, Վարանդայի (Վարանագի մի մասը) սղնախինը՝ Կոշիս-Ավետարանոցը, Շոշի (Վարդանայի մյուս մասը) սղնախինը՝ Շոշն էր, Խաչենինը՝ Գանձասարը, Դիլակինը՝ Դողլ գյուղը:

Սղնախների ղեկավարներն ու կաղմակերպիչները աղդեցիկ գործիչներ էին: Նրանցից մեկի՝ Ավան յուղաշու, մելիքներից ամենավզեցիկի, տաղանդավոր զորավարի և քաղաքական գործչի մասին վասիլի Լեաշովը, օրինակ, գրում էր. «Սղնախների հրամանատար Ավան յուղաշին, շնորհիվ իր հարստության, ողջ սղնախները փր հաշվին է պահում. և արդեն մի քանի տարի է, ինչ այդ ուղղությամբ ջանքեր է թափում»<sup>26</sup>:

Ցուրաքանչյուր սղնախ ուներ թվով 5—6 հազար զորք: Ի գեալ ասած՝ սղնախների ընդհանուր զորաբանակի մասին աղբյուրներում հանդիպում ենք տարբեր թվական տվյալների: Մինաս վարդապետը, օրինակ, Մակարովին ուղարկած իր մի զեկուցագրում (1723 թ. օգոստոսի 26) հայկական զինվորության թիվը հաշվում է 50.000<sup>27</sup>, իսկ քյոխավա Զալաբին Ղարաբաղի զինվորության թիվը համարում է 40.000, որից 30.000 հեծյալ, 10.000 հետևակ<sup>28</sup>: Ավելի ուշ, 1730 թվականին, թարխան յուղաշու ոռուական արքունիքին տված տեղեկության համաձայն, հայ զինվորության թիվը 30.000 էր<sup>29</sup>: Ղարաբաղի զինվորության թվի, ինչպես և նրանց ունեցած քաղաքական

26 ԲԱՔԱ, ֆ. ԲՀՊ, գ. 6, թ. 33:

27 Գ. է գով, նշվ., աշխ., էջ 359 (ռուսերեն):

28 Նույն տեղում, էջ 386:

29 Նույն տեղում, էջ 447:

կողմնորոշման մասին Հետաքրքրական է Պետրոս դի Սարգիս Գիլանհնցու վկայությունը. «...Հայոց ասկարն որ բոլոր վել ան՝ ասում ան թէ ԿՌ (60.000) մարդ այ, Գ (3) բօլիկան, որ Գ (3) տեղ նստած ան՝ նոցա մին աշքն աստուծոյ լուսին այ, մին աշքն մեծ թագաւորին (այսինքն՝ Պետրոս 1-ինի —Վ. Մ.) ճանապարհին այ»<sup>30</sup>: 1725 թ. նոյեմբերի 12-ին չուղայեցի վաճառականներ Հովհաննես Զաքարյանը և Հարություն Թորոսյանը ոռուսական հրամանատարությանը տեղեկացնում են, թե Գանձակի գավառում կա 40 հազար հայկական զորք, որ պատերազմում է թուրքերի դեմ: Նրանք ընդդում էին, թե «Հաջողությունը հայերի կողմն է, որոնց հրամանատարն է շիրվանեցի Հովհաննեսը»<sup>31</sup>:

Եերված թվական տվյալներից մեզ ամենից հավաստի թվում է Թարխան յուզբաշու նշած թիվը, քանի որ նա սղնախներին քաջատեղյակ անձնավորություն էր, այդ գործի անմիջական կազմակերպիչներից և ղեկավարներից մեկն էր: Բոլոր դեպքերում դժվար չէ կոռահել, որ զորքի թիվը սղնախներում տատանվել է 30—40 հազարի միջև:

Մուսական զորքերի վերադարձը և Թուրքիայի ներխուժումը Անդրկովկաս ծանր իրավիճակ ստեղծեցին աղատագրական պայքարի համար, որի հետեանքով շարժման ղեկավարները ստիպված էին գործել ավելի զգուց: Անտեսելով հարցի այս կողմը, որոշ հեղինակներ աղատագրական շարժման որոշ ղեկավարների մեղադրում են ոռուսական կողմնորոշում շունենալու և Թուրքիային հպատակվելու ցանկության մեջ: Սղնախների ղեկավարների միջև գոյություն ունեցող երկ-

30 «Կոռուկ Հայոց աշխարհի», 1863, № 3, էջ 202:

31 ՌԱ.ՔԱ., ֆ. ՌՀՊ, գ. 4, թ. 56թ:

պառակությունների և տարածայնությունների մասին խոսելիս Պ. Հարությունյանը գրում է. «Ներսես կաթողիկոսը և նրա եղբայրներ Սարգիս յուղբաշխն, Աբրահամ յուղբաշխն և Եսային» (Գյուլիստան, Զրաբերդ) մտադիր են եղել հապատակվելու թուրքերին, չեն ունեցել ոռւսական կողմնորոշում<sup>32</sup>:

Անշուշտ, Գյուլիստանի և Զրաբերդի յուղբաշխները քաղաքական իրազրությունից ելնելով, հարկադրված են եղել որոշ զգուշություն պահպանել: Այդ զգուշությունը թելադրվում էր նաև այն հանգամանքով, որ Գյուլիստանը և Զրաբերդը զբանը վում էին խամսայի մելիքությունների հյուսիսային ծայրամասում և հարեան էին Գանձակի ու Ղարաբաղի խանություններին: Սակայն այդ զգուշությունը չի փոխել նրանց կողմնորոշումը: Եվ ներսես կաթողիկոսը, և թե նրա եղբայրները իրենց ազատազրական նկրտումներով նույնպես ապավինել են ոռւսական զինվորական օգնությանը. «Եւ ես հարցուցի, — գրում է Իվան Կարապետը, — չում գուք Օսմանլվին էք ուղարկ և նրայ թարքը ելել, և ձեր մարթն զնացել այ Օսմանլվին զօշումնն: Սարգիսն և Աբրահամն ասացին, թէ մեք մեր աղին (իմա՞ Պետրոս 1-ինին—Վ. Մ.) արդ արարէլ, որ ի սէրն Քրիստոսի, գայ մեղ անօրինի ձեռնիցն ազատի, մեք ո՞նց գէ կնանք, անհաւատի զուլուղ անննք. օսմանլուն արեկ Գանջայ, ժ (10) սահաթէն ճանապար մնաց մինչի մեր բերթն, անձար մնացինք, տեսինք. որ մեր աղիցն շաղավաթ և քօմակ չէ խասաւ, անհարութեանէն, քանի հետ Օսմանլվին սարասքարն մեր վերէն գիր գրէց թէ ձեղէն մին երկու մարթ գէք իմ կոշտըն, թէ չէ զօշուն կուղարկեմ ձեր երկիրն քանդեմ և ձեր օղլուշաղն եսեր

32 Տե՛ս, Պ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 228:

կառնեմ: էս ջահատան վախեցանք, երկու մարթ ուղարկեցինք, սաբարըն մեր հավատին և մեր օղլուշաղին խամար, որ կորենք ոչ, մինչի մեր աղին գալն: Չուն որ մեր աղին գիրն եկալ աւբերէլ, մեք գլխօվլ, մեր մեծօվլ և փոքրօվլ աղին ծառայ անք»<sup>33:</sup> Օսմանցիների մոտ նրանց կողմից մարդ ուղարկելը, այսպիսով, զուտ դիվանագիտական մաներ էր՝ ժամանակ շահելու համար: Թուրքերին չգրգռելու և նրանց արշավանքի հետ կապված արհավիրքներից զերծ մնալու նկատառումներով են ներսես կաթողիկոսը և իր եղբայրները ընտրել ավելի զգույշ վարքագիծ, մանավանդ, որ խիստ երերուն էր մոտալուս ուսական օգնության հեռանկարը: Ներսես կաթողիկոսը մելիք թամրավին ուղարկած մի նամակում ուղղակի զգուշացնում էր, թե ինչպիսի ծանր հետևանք կունենա այդ օգնության բացակայությունը կամ չնշին լինելը, գրգռելով թուրքերին: «Քո թուղթն ինձ հասաւ, զամենայն որպիսութիւնտ իմացա (յ): Միայն այդ ըստացտ գալն չենք դիտում թէ ինչպէս է. այտպէս փոքրը գալն մեզ օգութ չկայ, յետուստ կողմանէ օսմանցիք լսեն, հայկական ասկին լաւ չի, մինչեւ թէ աստուած այց անէ, որ բազ(մ)այզօրք թագաւորիւ դան»<sup>34:</sup>

Քաղաքական բարդ կացությամբ և նուսաստանից սպասվելիք օգնության անորոշ հեռանկարով էր բացատրվում այն հանգամանքը, որ 1724 թ. Գանձասարի ժողովում Զբաբերդի և Գյուլիստանի մելիքները չհայտնեցին հպատակություն ուսական արքունիքին, որն, իհարկե, ամենենին էլ չէր նշանակում, թե նրանք ունեին թուրքական կամ պարսկական կողմ-

33 Ա.Ա.ՔԱ., ֆ. ՌՀՀ, գ. 4, թ. 22:

34 Ա.Ա.ՔԱ., ֆ. ՌՀՀ, գ. 2, թ. 56:

նորոշում։ Պարզապես պետք էր շրջահայաց լինել և խուսափել պարսիկների և թուրքերի վրեժինդրությունը գրգռելուց։ Եվ գեղքերի զարգացման ընթացքը ցույց էր տալիս, որ նրանք բավականին լուրջ հիմքեր ունեին այդպես վարվելու։ Ինչ խոսք, նկարագրվող ժամանակաշրջանում Ղարաբաղում տիրում էին ֆեռդալական հարաբերություններին բնորոշ մասնատվածություն, փոխադարձ թշնամանքի և երկպառակության որոշ մոմենտներ։ Մակայն դրանից բոլորովին չի կարելի եղրակացնել, թե մելիքների միջև գոյություն ունեցող թշնամանը նաև աղատագրական պայքարում իրարամերժ կողմնորոշումների առկայության արդյունք էր։ Եթե այդ այդպես լիներ, ապա ոչ իվան Կարապետին, ոչ Մահմեդ Ղուլի խանին (Կոստանդին) չէր հաջողվի վերահաս թուրքական ազրեսիային հակազրել ընդհանուր ճակատ կազմած մելիքների և մյուս ֆեռդալների միասնությունը։

Մեր կարծիքով, մելիքների միջև գոյություն ունեցող անմիաբանությունը առաջին հերթին արդյունք էր որոշ զգուշավորության, մանվանդ Կողիս-Ավետարանոցի ծայրամասային մելիքություններում։ Գյուլիստանի և Ջրաբերդի մելիքները հարկադրված էին ավելի շրջահայաց և զգոն քաղաքականություն վարել։ Այդ էր պատճառը, ըստ երեսութին, որ նրանք աղատագրական պայքարի առաջին տարիներին բացահայտուրեն չէին ելնում սեփյանների դեմ կամ իվան Կարապետի Ղարաբաղ գալուց հետո բացեիբաց չընդունեցին նրան։

Մակայն այդ ժամանակաշրջանի ամենապլիսավոր և էական հարցում՝ վրացիների հետ դաշնակից լինելու և թուրք զավթիչներին համատեղ ուժերով հակահարված տալու գործում, սղնախները հանդես էին դալիս կուռ միասնությամբ։ Եթե

Գյուլիստանի մելիքները՝ Եսային, Աբրահամը և Սարգիսը ու սրանց եղբայր Ներսես կաթողիկոսը թուրքերի կողմնակից լինեին կամ նրանց ենթարկվելու մտադրություն ունենային, ապա ի՞նչն էր նրանց խանգարում իրենց մտադրությունը իրականացնելու կամ ինչո՞ւ պետք է դաշնակցեին մյուս սրդնախների հետ և համատեղ պայքարեին թուրքերի դեմ։

\* \* \*

Սեֆյանների պետության անկումը, աֆղանների արշավանքը և Անդրկովկասի ժողովուրդների ազատագրական պայքարը իրենց վրա գրավեցին սուլթանական Թուրքիայի ուշադրությունը։ Թուրքական կառավարությունը պատեհ ժամանակ գտավ Անդրկովկասը և Պարսկաստանը գրավելու՝ իր վաղեմի մտադրությունները իրականացնելու համար։ Այդ նպատակով դեռևս 1722 թ. զարնանը Թուրքիան կապեր հաստատեց Դաղստանի ֆեոդալների, հատկապես Հաջի-Դառդի և Սուրխայ-Խանի հետ, որոնք պետք է իրենց ասպատակություններով հյուսիսից հեշտացնեին թուրքական արշավող բանակի կողմից Անդրկովկասի նվաճումը։ Անդրկովկասի սահմանների մոտ թուրքերը կինտրոնացնում են զորք և ռազմամթերք։ Ականատեսներից մեկը հազորդում է. «Սեպտեմբեր Ը (8) եկի Ղարս, տեսի՝ որ Ղարս փաշէն թողման շէ ցորէն գընայ Ղզլբաշի երկիրն և մարթ էլ շեն թողման գնայ, աղուզայ ան բոլորում, թունդ բանի վերայ ան...»<sup>35</sup>։ Նույն աղբյուրը վկայում է նաև երդրումում պատերազմական գործողությունների նախապատրաստական

35 Պետրոս դի Սարգիս Գլուխնենցի ժամանակագրութիւն, «Կոստնկ Հայոց աշխարհի», 1863, № 3, էջ 193։

միջոցառումների մասին. «օգոստոսի ի-ումն (20-ին) Տրավիդոնայ շախուր արեկ՝ թէ Քստամբոլու շատ նավայ եկել՝ որ ջաբայիսանայ բերէլ. տավար և մարդ օղարկիր Տրայալիդոն՝ որ ջաբայիսանէն բերեն Արզրում։ Արզրումայ փաշէն շատ մարթ և տավար աղարկէց Տրայալիդոն՝ որ ջաբայիսանէն կրեցին՝ բերին Արզրում՝ թոփ, զումբարայ, թվանկ, թուր, գուլուլայ, բարութ, նիզայ, թին, տօպրակ։ Ջաբայիսաննեն՝ որ արեկ խասավ Արզրում, փաշէն պաշբամիլ արար՝ թօփէրն և բօմբըն դձելն, որ տեսնէր ինչպես այ և Արզրում գօմբրակի փողն յավալայ ելավ՝ որ փաշէն յինք առու՝ որ աղուզայ և սուխարի շինի։ Արզրումու փաշէն սովորանին յուքմովն սարասկար դարցավ. բ (2). փաշայ որ Ղոլ բէկի և Բաեազիդին բէկն էլ որ ձեռնատակումն այ՝ որ յամէնու գրեց՝ որ ուրէնք ասկարօվն յազիր կան, որ յեփ Արզրումու փաշէն յուքմ առի, վեր կան դընան Ղարս, զամ լինեն Արզրումու փաշօվն»<sup>36</sup>։

Արեւլյան սահմանների մոտ թուրքական ուազմական նախապատրաստությունների մասին է խոսում նաև ոռուսական դեսպան Ի. Նեպլյումը, որը Կ. Պոլսից հայտնում էր, թէ Վրաստան արշավելու համար էրզրումի փաշայի տրամադրության տակ շուրջ 100.000 թուրքական զորք է կենտրոնացված և որ Բարձր Դուռը հրամայել է ասիական ամբողջ բանակը կենտրոնացնել պարսկական, այն է Վրաստանի և Հայաստանի սահմանների մոտ<sup>37</sup>։

Անդրկովկասը նվաճելու թուրքերի մտադրությունը արևմտաեվրոպական տերությունների և առաջին հերթին Անդր-

36 Նույն տնօրում, էջ 192—193։

37 ՌԱՔԱ, ֆ. ԹՀՊ, գ. 5, մ. 2, թ. 264 թ. Այս կատակցությամբ տե՛ս ՌԱՔԱ, ֆ. ԹՀՊ, գ. 6, թ. 20։

այի հավանությանն էր արժանանում։ Անգլիան, ի դեմս Ռուսաստանի տեսնելով իր տնտեսական և քաղաքական մրցակցին, ոչ մի կերպ չէր հաշտվում Անգրկովկասում Ռուսաստանի դիրքերի ամրապնդման հետ և հրահրում էր Թուրքիային՝ նվաճելու Անգրկովկասը, նրան խոստանալով նյութական և ուազմական անհրաժեշտ օգնություն։ Անգլիական դեսպանը Կոստանդնուպոլսում ձգտում էր հավատացնել թուրքական կառավարությանը, թե Ռուսաստանի դեմ պատերազմելու դեպքում Թուրքիան միայնակ չի լինի, որ Լեռաստանի, Պրուսիայի, Անգլիայի և Դանիայի թագավորները իրար հետ հարձակողական և պաշտպանողական դաշինք են կնքել՝ ուղղված Ռուսաստանի դեմ<sup>38</sup>։

Անգլիական դիվանագիտությունը ներշնչում էր՝ թուրքական կառավարությանը, որ եթե Աղրբեջանի, Հայաստանի և Վրաստանի Պարսկաստանին ենթարկվող մասերը ուղաները գրավեն, ապա Թուրքիայի քրիստոնյա հպատակները՝ հայերն ու վրացիները, իրենք կանցնեն ուստական հպատակության տակ և «...ժամանակի ընթացքում թուրքական կայսրությունը ծայրահեղ քայլայման կենթարկվի»<sup>39</sup>։

1722 թ. վերջերին և 1723 թ. սկզբներին Վրաստանում առաջացած քաղաքական ծանր դրությունը նպաստավոր էր թուրքական արշավանքի համար։ Քարթիի գահին տիրելու համար Վախթանգ Ե-րդի դեմ պայքարի էր ելել Կախեթի թագավոր Կոստանդինը (Մահմեդ-Ղուլի խանը)։ Դրությունը սպառնում էր հետագա բարդացմամբ, որովհետև օրավոր աճում էր թուրքական բանակի ներխուժման սպառնալիքը

38 ՌԱ.ՔԱ., ֆ. ԲՀՎ, գ. 3, թ. 63։

39 С. М. Соловьев, История России, т. 18, стр. 691.

Վրաստան։ Այս օրհասական վիճակում Վախթանգ 6-րդը Թետրոս 1-ինին խնդրում էր անհապաղ սուսական զորք ուղարկել Վրաստան։ Սակայն Վախթանգ 6-րդի այդ խնդրանքին, ինչպես ակնարկել ենք, պատասխանեցին, թե քանի դեռ Կասպից ծովի ափերին չեն ամբազնդվել և Բաքուն չեն գրավել, օգնական զորք ուղարկել Վրաստան անհնարին է, իսկ երբ Բաքուն կգրավեն և կամրանան Կասպիականի ափերին, ապա ինչ գնով էլ լինի օգնական զորք կուղարկվի Վրաստան<sup>40</sup>։ Ինչպես տեսանք, Վրաստան շմտավ նույնիսկ 2000-անոց այն զորախումբը, որին զեկավարում էր կապիտան Բասկակովը։

Վախթանգի վիճակը բարդանում էր նաև նրանով, որ պարսից շահ Թահմազը՝ զայրացած Վախթանգի անհնաղանդության վրա, ձգտում էր նրանից վրեժինդիր լինել։ Թուրքիան զորքեր էր կենտրոնացրել Վրաստանի սահմանի վրա և սպառնում էր գարնանը արշավել Վրաստան։

Կախեթի թագավոր Կոստանդինի նպատակն էր օգտվել Վախթանգ 6-րդի ծանր զրությունից, գահազուրկ անել նրան և տիրել Թարթլիի գահին։ Կոստանդինը լավ գիտեր, որ շահ Թահմազը թշնամաբար է տրամադրված Վախթանգ 6-րդի նկատմամբ, ուստի և շահից խնդրում էր իրեն տալ Թարթլիի թագը, պարտավորվելով փոխարինը նրան տրամադրել վրաց զորքը։ «Կախեթի տերը մարդ ուղարկեց շահի մոտ և ամբաստանեց Վախթանգ արքային։ Վախթանգն է քո թշնամին, նա հպատակվել է ուստաց կայսրին, նա ձեր հավատակիցներին ոչնչացրեց, տուր ինձ Վրաստանի գահը, քեզ օգնության կու-

<sup>40</sup> ՌԱՔԱ, ֆ. ԲՀՎ, գ. 2, թ. 4:

զարկեմ քարթիի և Կալեթի վորքը և կհաղթեմ քո թշնաւմիներին»<sup>41</sup>:

Վախթանգի և Կոստանդինի երկպառակությունը և վերջինիս առաջարկը շահ Թահմաղին մեծապես ձեռնտու թվաց: Շահը որոշեց Կոստանդինի միջոցով վրեժինգիր լինել Վախթանգից: 1723 թ. Հունվարին շահ Թահմաղը Կոստանդինին շնորհեց Քարթլիի գահը: Թբիլիսիում գտնվող պարսկական կայազորը շահից հրաման ստացավ՝ կրակ բացել քաղաքի վրա և այնտեղից վտարել Վախթանգին:

Վերը շարադրված փաստերը միանգամայն ակնհայտ են դարձնում այն պատճառները, որոնք զրդեցին շահ Թահմաղին Վախթանգ Ե-րդին գահազուրկ անելու հրովարտակ հղել Թրիլիսի պարսկական կայազորին։ Այդ փաստերը հիմք են տալիս շհամաձայնելու պատմաբան Օ. Պ. Մարկովայի հետ, որի կարծիքով շահի այդ հրովարտակի պատճառը ստույգ հաջտնի չէ<sup>42</sup>։

Շուտով թբիլիսիին մոտեցավ նաև Կոստանդինը իր զորքով և լեզգի վարձկաններով։ Կոստանդինին օգնում էին նաև Երևանի ու Գանձակի պարսից խանները. «...Կը գրի Յարեան՝ (Մահմադ Ղուլի խանը—Վ. Մ.), թէ Վախթանգ խանին նեղ տեղ ամ քցել, ասկար ուղարկեցէք և Յարեանայ քանի մեծ աղայ էլ կուզի։ Էս քանի աղէն ասկարովն կը գնան Կախէթ խանին կուշտն՝ որ խանըն էս ասկարովն էլ գնացել էր Վախ-

<sup>41</sup> სენატის წევიძე, ცხოვრება მეფეთა, ქართლის ცხოვრება, ტ. 2, 1854, გვ. 330.

<sup>42</sup> О. П. Маркова, Россия, Закавказье и международные отношения в XVIII веке, М., 1966, стр. 108.

թանկ խանին վերայ, էլ կոտրվել էր՝ յետ էին փախել»<sup>43:</sup> Վախթանգ 6-րդին օգնության եկան իմերելները և ռաճեցիները (Արևմտյան Վրաստանի Ռաճա շրջանի քնակիշները): Պայքարը տևեց երեք ամիս: Կոստանդինը, թեև պարտություն էր կրել, բայց իր մտադրությունից չէր հրաժարվում: 1723 թ. գարնանը նա նորից լեզդի վարձկաններով շրջապատեց քաղաքը և օգտվելով զավադիրների ծառայությունից, պարտության մատնեց Վախթանգ 6-րդին: Քաղաքը դրավեց և սոսկալի ավերածության ու թալանի հնթարկեց:

Թուրքիան շնառադեց օգտվել երկրի ծանր դրությունից: Դեռևս Կոստանդինի կողմից Թիֆլիսը դրավելուց առաջ էր զրումի փաշան առաջարկել էր Վախթանգ 6-րդին ընդունել Թուրքիայի հովանավորությունը, որին սակայն Վախթանգը բացասաբար էր պատասխանել՝ հույս գնելով ուստական զորքերի մոտալուս դալսույան վրա: «...Դեպի Երևան արշավելու և Աղրքեջանը դրավելու նպատակով Զարսում էր գրտնըլում էր զրումի փաշան, որը այսպես էր պատվիրում թագավորին, և թե Հակառակ շլինի իրենց, սուլթանը մեծ շնորհ կպարգևի նրան, զրա համար արքան ուղարկեց Ռոճիկաշվիլի էղիշերին և հրաժարվեց նրանց առաջարկը ընդունելուց. քանզի հուսով էր, որ գարնանը Ռուսաստանի թագավորը կդառ»<sup>44:</sup>

Թիֆլիսի համար բորբոքված կովի ժամանակ էր զրումի փաշան դարձյալ պահանջեց, որ Վախթանգ 6-րդը ճանաչի սուլթանի դիրիշխանությունը: Փաշան խոստանում էր Վախ-

43 «Կոռնկ Հայոց աշխարհի», 1853, № 3, էջ 202, Պետրոս դի Սարգիս Գիլանեցի ժամանակադրությունը:

44 Յանջ ԾՕ, Յնոցնեց յառողջությունը, յօ. Ծ. 2, 1854, զօ. 82.

թանգին թողնել Քարթլիի թագավոր։ Այս հարցի կապակցությամբ պալատական խորհրդակցության հրավիրված Քարթլիի իշխանները առաջարկեցին ընդունել Թուրքիայի պահանջները, որպեսզի դրանով իսկ պահպանն իրենց իշխանությունը և երկիրը վերծ պահեն ավերածություններից։ Ի. Տոլստոյը և Բ. Թուրքիստանովը հակառակ տեսակետին էին այն հույսով, թե ուստական զորքը շուտով կգա<sup>45</sup>:

Դրությունը արտակարգ սրվել էր, քանի որ Թուրքիան ժամառ ժամ կարող էր սկսել պատերազմական գործողությունները։ Վախթանգ Ե-րդը որոշեց ընդունել Թուրքական առաջարկները և առաջադրեց իր պայմանները։ Նա ձգտում էր ժամանակ շահել։ Մինչև էրզրումի փաշան կիսորհրդակցեր Վախթանգ Ե-րդի առաջադրած պայմանների շուրջ Բարձր Դուան հետ, բավական ժամանակ կանցներ, իսկ այդ ընթացքում Վախթանգ Ե-րդի հույսով էր, որ ուստական զորքը կհասցընի մանել Վրաստան։ Ստեղծված իրադրության պայմաններում Վախթանգ Ե-րդի ընդունած որոշումը տակտիկական նկատառումներով թելադրված միակ ճիշտ քայլն էր։ Ահա, թե ինչ է զրում ինքը այդ մասին Պետրոս 1-ինին։ «Եկավ էրզրումի փաշան, կանգ առավ մեր սահմանների մոտ։ Մարդուզարկեց մեզ մոտ։ Պահանջեց հպատակվել։ Մենք մերժեցինք Կոստանդինը շահին նամակ գրեց։ «Վտարիր», — պատասխանեց շահը։ Շահը Քարթլին շնորհեց Կախեթի տիրոջը։ Կախեթի իշխողը պարսկական զորքով եկավ Հայլաբար։ Այս կողմից էլ դիմավորեցին մեր վրացիները և շարունակ կովում ենք։ Հենց որ այս տեսավ Հոռոմը (իմա Թուրքերը—Վ. Վ.),

45 ՌԱՔԱ, ֆ. ՌՀՎ, 1723, գ. 3, թ. 1—2:

դարձյալ մարդ ուղարկեց: «Եթե չես հպատակվի, ապա մենք  
էլ այս կողմից կգանք»: Զեր (իմա Պետրոս 1-ինի—Վ. Մ.)  
գալը ուշանում էր, մենք չենք կարող երկու թագավորի դեմ  
մարտնչել. մենք համաձայնվեցինք հպատակվել սուլթանին,  
որպեսզի եթե արժանանանք Զեր գալստյանը, մինչ այդ  
մեզ պահպանենք, այնուհետեւ Զեր ծառան կլինենք»<sup>46</sup>:

Թուրք պատմի Զելեբի-պադեն ևս վկայում է, որ սուլ-  
թանական թուրքիան վաղօրոք մտադրված էր նվաճելու  
Անդրկովկասը: «Ինչպես նախապես հայտնված էր,—գրում  
է նա,—Թիֆլիսի գրավման և նվաճման համար նշանակված  
սերասքերը՝ երդրումի վալին, վեզիր Սիլահեր Իբրահիմ  
փաշան, էրզրումից շարժվելով՝ բնակություն էր հաստատել  
Կարսի ձմեռանոցում: Գրավոր կերպով առաջարկել և դրդել  
էր Թիֆլիսի խանին՝ Վախթանդին հպատակություն ցուց  
տալու օսմանյան պետությանը, միաժամանակ ցուց տվել  
ապստամբության ծայրաստիճան վտանգավորությունն ու  
սոսկալի հետեանքները: Սակայն վերօնիշյալը (Վախթանդը  
—Վ. Մ.) իր անկատ պատասխան նամակում, երբեմն հպա-  
տակության և հնավանդության հակամետություն էր ցուց  
տալիս, երբեմն էլ որոշ պայմաններ էր առաջարկում»<sup>47</sup>:  
Բերված քաղվածքից երևում է նաև, որ Վախթանդ 6-րդը սոսկ  
ժամանակ շահելու և թուրքական ազրեսիան հետաձգելու  
նպատակով էր բանակցությունների մեջ մտել նրանց հետ:

46 Մ. Բ ը ռ ս ե, նշվ. աշխ., էջ 148 (առանձին):

47 Ա. Խ. Ս ա ֆ բ ա ս տ յ ա ն, Թուրքական ազրյուրները Հայաստանի,  
Հայերի և Անդրկովկասի մլուս ժողովուրդների մասին, հ. Ա, էջ 128—129:

Սակայն վախթանգ 6-րդի հույսերը չարդարացան: Ինչպես նշվեց, զարնանը՝ մայիսի 4-ին, Կոստանդինը Թբիլիսին գրավեց, և վախթանգ 6-րդը հարկադրված էր պատսպարվել Յիհինվալում: Թուրքերը օգտվեցին դրանից և արշավեցին Վրաստան: 1723 թ. հունիսին նրանք մոտեցան Թբիլիսիին: Կոստանդինը չկարողացավ քաղաքը պաշտպանել և առանց կովի այն հանձնեց թուրքերին:

Թուրքական զորահրամանատարը Կոստանդինին կալանջալորեց ոչ թե նրա համար, որ վախթանգը թուրքերին ավելի մեծ գումար առաջարկեց և այդ իսկ միջոցով հաղթող դուրս եկավ իր մրցակցի հանդեպ, ինչպես այդ գրում է Օ. Մ. Մարկովան<sup>48</sup>, այլ այն պատճառով, որ թուրքերը քաջ տեղյակ էին Կոստանդինի և թահմալ շահի միջև հաստատված սերտ փոխհարաբերությանը, շահի կողմից նրան տրված շնորհագրին ու իշխանությանը ոչ միայն Արևելյան Վրաստանի, այլև Երևանի, Գանձակի և պարսկահպատակ շրջակա այլ մարզերի նկատմամբ: Թուրքերը, ինչպես այդ կտեսնենք դեպքերի հետագա շարադրանքից, հիմքեր ունեին շհավատալու և չվըստահելու Կոստանդինի շուտափույթ վերադիրքավորմանը, թեև ագահ իբրահիմ փաշայի գործելակերպում կաշառքն էլ անշուշտ որոշակի դեր է խաղացել: Այս իրադրածությունների մասին Պետրոս դի Սարգիս Գիլանենցը գրում է. «...Մամադ Ղուկի խանն լեկզօվն միատեղ Թիֆլիզ առել այ, լեկզին շատ ապրանքն յէսիր այ տարել Թիֆլիզու, յետոյ օսմանցին այ եկել, Թիֆլիզն առել, որ մոլ մարդը կը թալանի, մոլ յեսիր կառնի՛ էնպիս նստած այ: Էս խաքիաթն ոչ թէ մին մարդից

48 Օ. Մարկովա, նշվ. աշխ., էջ 113 (ոռուերեն):

անք լսել, օվ գոլման այ, էս այ ասում և Վախտանկ խանն փախել այ՝ գնացել այ Բաշազուղ»<sup>49</sup> (իմա իմերեթ—Վ. Մ.):

Գրավելով Թիֆլիսը, թուրքերը մտադիր էին արագ շարժվել դեպի արևելք և դավթել ողջ Անդրկովկասը: Թուրքերի արշավանքը է՛լ ավելի վատացրեց ապստամբ հայերի և վրացիների վիճակը: Այժմ արդեն Անդրկովկասի ժողովուրդները պետք է պայքարեին ոչ միայն իրենց քաղաքական հոգեվարքը ապրող սեփյանների ու պարբերաբար կրկնվող լիղզի լեռնականների ասպատակությունների, այլև թուրքական կանոնավոր բանակի գերազանց ուժերի դեմ:

Թուրքական զորքերի արշավանքը նոր իրադրություն ստեղծեց Անդրկովկասում, ահեղ մի վտանգ կախվեց նախկին Հակամարտ, միմյանց դեմ մարտնչող կողմերի գլխին, վտանգ, որը Հավասարապես սպառնում էր ինչպես ապրատամբներին, այնպես էլ նրանց դեմ պայքարողներին: Հանուն պատմական ճշմարտության պետք է ասել, որ ստեղծված իրազրությունը ճիշտ ընկալեց նաև Կոստանդինը, որին Թիֆլիսը գրավելուց հետո թուրքերը բանտ էին դցել: Սակայն նրան հաջողվում է Հաշտվել Վախթանգ 6-րդի որդի Բակարի հետ, որը այդ ժամանակ հարկադրված մահմեդականություն էր ընդունել և թուրքերի կողմից Քարթլիի վալի (կառավարիչ) նշանակվել: «Սակայն Սիլահդար իբրահիմ փաշան, էրզրումի «Սերդին կեշտի» աղաներից Ուզուն Մուստաֆա-աղա անունով անձնավորության միջնորդությամբ, Վախթանգի կողմից իբրև կաշառք տրված մեծաքանակ հարստությամբ շլացած՝ Թիֆլիդի կառավարությունը օջաքլցրի կարգով շտապել էր

49 «Կոռոնկ Հայոց աշխարհի», 1863, № 3, էջ 206—207:

տալ վերոհիշյալ Վախթանգի Շահնալաղ (Բակար) անունով որդուն, որը դեռ նոր խլամական կրոնն ընդունելով, իբրահիմ անունն էր ստացել, պետությանը տարեկան 40 հազար դուրս տուրք տալու պայմանով՝<sup>50</sup>։ Բակարի օժանդակությամբ Մահմեդ-Ղուլի խանը փախչում է բանտից։ Այս դեպքերի մասին Դիլանենցի օրագրում կարդում ենք. «օգոստոսի ԻԱ.-ումն (21-ին) Թիֆլիսիցի հայ բարիքալայ Յարութիւն որդի Թէջանն Թավրիզու և կալ՝ ասաց, թէ Թիֆլիզու շաթիրը արեկ, որ գրէլ են՝ թէ Օսմանլուն որ զը կոյ՝ Թիֆլիզու կը մօտկանայ Մահմադ Ղուլի խանն բերթի քարթերովն կը գնայ փիշվաղ Օսմանլուն կը բերեն Թիֆլիզ։ Օսմանլուն Թիֆլիզ զաֆտել է, Գ (3) օրէն յետ Մամադ Ղուլի խանին գութսաղ կառի վանդակին (Վախթանգի) որդի Շանավաղ խանին էլ բռնել զըննեն, որ Թիֆլիզու խանութիւնն տվել ան Շանավաղ խանին։ Էս Շանավաղ խանն Մամադ Ղուլի խանին կը փախցնի, էսպես որ մին զայեիս կը բերի՝ Քուռումն կը կանկնացանի, Մամադ Ղուլի խանն շվանօվ վերկիցն ներքե կը կախեն՝ կը գնեն զայեիսի միջումն կը փախցնեն և Օսմանլուն Շանավաղ խանին կասի, թէ պիտի որ զայվուխ գնես զլիսիտ և օսմանցու շոր խականես, սայ կասի՝ թէ շահն ինձ թաջթօմար այ աղարկում, զու զայվուխ աս թաթլիֆ առում։ Էս Շանավաղ խանն գիշերով կը փախի կը գնայ Օսհիթ։ Օսմանլիլի Գ (4) փաշայ ար ասկարօվն կը զընեանէ որ Շանավաղին բռնեն։ Շանավաղ խանն օսկրու ասկարօվն զուրս կը կայ՝ օսմանցին փիս տեղ գնի, կը տան շատ ասկարօվն կը զառթեն և գ (3) փաշէն կը սպանեն. Ա. փաշէն սադ կը բռնեն և Վախտանկ խանն էլ Օսհիթումն գնի,

50 Ա. Մաֆրասսան, Թուրքական աղբյուրները..., հ. Ա, էջ 135:

որ կը տայ Գօրկի էրէսթավին կը խեխտի և վախտանկ խանն նիաթ այ ունեցել՝ որ էլ ասկար բոլորին, զնան Թիֆլիզու վերայ, որ օսմանցուն Թիֆլիզու դուս առնէն»<sup>51</sup>:

Բերված հատվածը ուշագրավ է ոչ միայն Մահմեդ խանի փախուստի նկարագրությամբ, այլև նրանով, որ պարզ երևում է, որ սոսկ հարկադրանքից ստիպված էր Բակարը մահմեդականություն ընդունել, բայց ամենից արժեքավորը այս հատվածում այն է, որ վկայում է Վախթանգ Ե-րդի գլխավորությամբ թուրք նվաճողների դեմ մղած պայքարի մասին: Այս տեղիկությունները առավել արժեքավոր են այն տեսակետից, որ նման պայքարի մասին վկայություններ սակավ են ընդհանրապես: Թիֆլիզը թուրքերի կողմից գրավելուց հետո, դրում է վրաց պատմիչ Վախուշտին, «Բակարը վըշտացած հոռոմների (իմա թուրքերի—Վ. Մ.) կաշառակերությունից և անօրեն գործերից, թողեց Թիֆլիզը, հեռացավ հոռոմներից: Այնուհետև զնաց Մշխիթա, և այնտեղ եկավ նաև Մամադ Ղուկի խանը, միասնության դաշն կնքեցին»<sup>52</sup>:

Անդրկովկասի ժողովուրդների աղատագրական պայքարը սկսում է ուղղվել թուրք նվաճողների դեմ: Այս ժամանակաշրջանում Մահմեդ Ղուկի խանը եռանդուն գործունեություն է ծավալում Անդրկովկասի ժողովուրդների հակաթուրքական ընդհանուր ճակատ ստեղծելու ուղղությամբ: Եվ պետք է ասել, որ իր այս գործունեությամբ նա ընդառաջում էր նաև ուսասական քաղաքականությանը այդ պահին, քանի որ ըստ էության ուսասական կառավարությունն էլ, խուսափելով ակ-

51 «Կռունկ Հայոց աշխարհի», 1863, № 3,էջ 208—209:

52 Յանց Ծ օ, Ծինաց թագավորություն, յնչ., Ծ. II, էջ. 132.

տիվ միջամտություն ունենալուց Անդրկովկասում ծավալվող իրադարձություններին, 1724 թ. Անդրկովկասն է ուղարկում իր պատվիրակ Իվան Կարապետին նույն Հանձնարարությամբ, այն է՝ ստեղծել Անդրկովկասի ժողովուրդների միասնական Հակաթուրքական ճակատ և դրանով իսկ կասեցնել թուրքերի առաջխաղացումը դեպի արևելք:

\* \* \*

Անդրկովկասի ժողովուրդները միասնական ճակատով Համառ պայքար էին մղում թուրք նվաճողների դեմ նրանց Անդրկովկաս ներխուժելու առաջին իսկ օրից: Երևանի բնակչությունը թուրքերին դիմադրելու համար դիմում է Կոստանդինի օգնությանը: «Առնված կըզբլքաշ գերիների տված ցուցմունքից պարզվեց, — գրում է թուրք պատմիչ Զելեբի-զադեն, — որ Երևանի ժողովուրդը Գենչից, Շեմս Էլ-Թինլիից և Մուշամեդ Կուլի խանից օգնություն են խնդրել, որ Մուհամեդիդ Կուլի խանը իր Հայվաքած լեզգի և վրացի զինվորներով կհնարոնացել է Աղջա-Կալայում և մտադիր է Երևանին օգնության գնալը»<sup>53</sup>:

Թուրքական զավթիչներին միասնական դիմադրություն ցույց տալու հայ և վրաց ժողովուրդների համագործակցությունը Հավաստելուց բացի, թուրք պատմիչի այս վկալությունը արժեքավոր է նաև նրանով, որ այն հաստատում է Պետրոս դի Սարգսի Գիլանենցի Երևանին օգնության գնալու մասին տված տեղեկությունը: Մահմեդ-Ղուլի խանը, իրոք, լայն դործունեություն է ծավալում՝ Հայերին օգնելու համար:

53 Ա. Սաֆրաստյան, նշվ, աշխ., էջ 139:

Ս. Գիլանենցը գրում է. «օգոստոսի Բ-ումն (Զ-ին) թ. (2) շամախիցի թուրք Թավրիզու շահիցն շափար արեկ Քոեշտ՝ որ գնայ Թիմիջանայ վէզրին կուշտն։ Էս Բ. շափարն ասել ան, թէ Վախտանկ խանըն և Կախեթու վալի Մամատ Ղուլի խանն խաշտել ան և միայտեղ ուրէնց ասկարօվն գնացել ան Յարկան»<sup>54</sup>։

Բայտ Զելեբու, Կոստանդինը Համախմբել էր 10 հազար մարդուց բաղկացած մի բանակ և մտադիր էր այդ բանակով ու իր իշխաններով օգնության գնալ Երևանին։ «Մահմեդ-Ղուլի անունով անհավատն ու անկրոնը,—գրում է Զելեբիդանին,— քյաֆիրների սուտ Հավատքը ընդունելով, վրացի քաֆիրների (Փափաս) կողմից Կոստանդին անունն էր ստացել և անցել կառավարության վլուխը։ Նա հագել էր Վրաստանի խանության Հագուստը, էրիսթավներից, թավագներից և աղնամավորներից ներկա եղողները նրան Հպատակություն էին ցուց տվել։ Զորս կողմում գտնվող վրացի անիծյալները եկել Հավաքվել էին Հիշյալի մոտ, 10.000-ից ավելի սկ վահանավոր (կարակալքան) մարդկանցով և էրիսթավներով Ակշակալայում կզբաշ սիփահների հետ միացել և մտադիր էին Երևանին օգնության գնալ»<sup>55</sup>։

Այդ ժամանակաշրջանի իրադարձությունների գործուն մասնակից, հետագայում Խուսաստանում բնակություն հաստատած Հայազդի Փիլիքեկ Բասարութիւնի սուսական արքունիքին 1754 թ. գրած խնդրագրի մեջ նշված է, որ իրոք Վախ-

54 «Կոռնկ Հայոց աշխարհի», 1862, № 2, էջ 93։

55 Ա. Խ. Մաքրաստյան, Թուրքական աղբյուրները..., հ. Ա, էջ 139—140։

թանգ 6-րդը զինվորական մարդիկ է ուղարկել Արցախ և Երևան՝ տեղում հակաթուրքական ճակատ կազմելու նպատակով<sup>56</sup>:

Գրավելով Թբիլիսին, թուրքական բանակը 1723 թ. աշնանը էրդրումի փաշայի հրամանատարությամբ շարժվում է դեպի Գանձակ՝ այն զրավելու մտադրությամբ: Սակայն գանձակցիները համառ զիմադրություն են ցույց տալիս զավթիչներին, մի քանի օր տեսդ մարտերում ծանր պարտության մատնում թուրքական բանակին և հարկադրում նահանջել:

Թուրքերին զիմակայողները Գանձակի հայ և աղբեցանցի բնակիչներն էին, որոնց օգնության էր շտապել Մահմեդ Ղուլի խանը իր զորքով<sup>57</sup>: Գանձակի մոտ տարած հաղթանակն արդյունք էր այն իրողության, որ թուրքական արշավանքը նոր իրազբություն էր ստեղծել Անդրկովկասում: Նախկին հակամարտ ուժերը եկել էին այն գիտակցության, որ անհրաժեշտ է համատեղ պայքարել թուրք զավթիչների դեմ: Գանձակի հաղթանակը շրջադարձային կետ հանդիսացավ այդ տարիներին Անդրկովկասի ժողովուրդների աղատազրական պայքարում:

1724 թ. թուրքական զորքերը Թիֆրյուլյու-Աբդովլահ, Արիփի-Ահմեդ և Հաջի-Մուստաֆա փաշաների գլխավորությամբ հարձակում ձեռնարկեցին Երևանի ուղղությամբ:

56 «Հայոց զորքը XIII դարում», Հայուսական զինակցության պատմությունից, ուսումնասիրություն և փաստաթղթեր, աշխատասիրությամբ Հ. Ն. Խաչարյանի, Երևան, 1968, էջ 70:

57 Ա. Ք. Ա., ֆ. ԱՀՊ, գ. 7, թ. 71, տե՛ս նաև Եսայի Հասան-Զալալյանի 1724 թ. մարտի 17-ին իշխան Թորյատինսկուն հղած նամակը, նույն տեղում, թ. 96:

Արիֆի-Ահմեդ փաշան (Դիարբեքիրի նախկին վալին) 30000 զորքով ներխուժեց Երևանի խանություն։ Երևանը գրավելու համար սերասքեր է նշանակվում Արիֆի-Ահմեդ փաշան, իր տրամադրության տակ ունենալով 1000 մարդ սիփածի և զինակիր (սիլահար), 27000 ենիշերի և «սերդեն կեշտի» զինվորներ, 2500 զերեջի, թնդանոթածիկ և թնդանոթի կառապան, բոլորը միասին 60.000-ից ավելի զորք<sup>58</sup>։ Թուրքական աղբյուրի այս տվյալը ավելի մոտ է ճշմարտության, քանի որ Զելեբի-զագեն, լինելով արքունի պատմագիր, իհարկե, շահագրգոված չէր թուրքական զորքերի քանակի մասին ուսմացած տվյալներ հաղորդել։ Բնդհակառակը, թուրք պատմագիրները, ջատագովելով սովորական բանակի նվաճումները, միշտ ջանում էին ցույց տալ նրանց «քաջությունը» տարած հաղթանակներում, ուսմացնելով թշնամու և նվազեցնելով սեփական ուժերի քանակը։

Դեպի Երևան արշավող թուրքական բանակը ավագակացին ավերածություններ և գերեվարություններ էր զործում։ Ամբողջովին ամայացվում էին արշավանքի ճանապարհին գտնվող բնակավայրերը։ Արիֆի-Ահմեդ փաշան գերի վերցրեց (ստրկացրեց) 2000-ից ավելի մարդ։ Բարբարոսական այսօրինակ զործողություններով նա մոտեցավ Երևանին՝ նահանգի գլխավոր քաղաքին<sup>59</sup>։ Թուրքական բանակի առաջապահ զորամասերը (մոտ 1800 մարդ) Յալղուս-Հասանի և

58 Ա. Խ. Սաֆրաստյան, Թուրքական աղբյուրները..., Հ. Ա. էջ 141—142։

59 J. Hanway, Zuverlässige Beschreibung seiner Reisen von London durch Russland und Persien und wieder zurück durch Russland, Deutschland und Holland, I Band, Seite 160.

Դուշ-Ալիկի Հրամանատարությամբ Եղվարդի գյուղի մոտ մարտիք բռնվեցին Երևանի խանի 12 հազարանոց բանակի հետ, զախչախեցին և փախուստի մատնեցին նրանց: Երևանի խանը պարսիկ և հայ մհեծամհծների հետ պատսպարվեց քաղաքի բերդում<sup>60</sup>:

Հաղթանակ տանելով Եղվարդի մոտ, թուրքերը իրենց համար ճանապարհ բացեցին դեպի Երևան և հուսով էին առանց լուրջ դիմագրության մտնել քաղաք: Սակայն թուրքական զորքերի դեմ ելավ տեղական, ամենից առաջ մերձակա գյուղերի հայ բնակչությունը: Հիշատակության արժանիք Կարբի գյուղի բնակիչների ցուց տված դիմագրությունը: Երջապատված լինելով թուրքական հսկայական բանակի կողմից, կարբեցիները չեին հանձնվում թուրքերին, զինված դիմագրում էին նրանց: Դիմագրողների համառությունը վարժացրել էր Արգուլահ փաշացին և, գյուղը գրավելուց հետո, նա հարցնում է բնակիչներին. «Զի՞ կայ ձեր զինուորիլ վասն երկրիս, որոց տէրութիւնն ոչ է ձեր»<sup>61</sup>:

Երևանի հերոսամարտերի գունեղ նկարագրությունը տվել է ժամանակադիր Աբրահամ Երևանցին իր «Պատմութիւն պատերազմաց» աշխատության մեջ: Բատ պատմիչի տվյալների, Երևանի պաշտպանությունը տեսել է երկու ամիս: Կովող հիմնական ուժը շրջակա գյուղերի և բուն Երևանի հայ ազգաբնակչությունն է եղել: Արխիվացին վավերագրերը նոր լույս են սփառում այդ իրադարձությունների վրա: Ռուսական դեսպան ի. Նեպլյուսը, գտնվելով Կ. Պոլսում և շփմելով թուրքական կառավարող շրջանների հետ, իր վեկուցազրերում

60 Ա. Ե Ր Ե Վ Ա Ն Գ Ի, Պատմութիւն պատերազմաց, Երևան, 1938, էջ 22:

61 Նույն տեղում, էջ 11:

մանրամասն տեղեկություններ էր հաղորդում ոռւսական արքունիք՝ թուրքական բանակի ուազմական գործողությունների մասին։ Այդ զեկուցագրերից երեսում է, որ Երևանի պաշտպանությանը մասնակցել են նաև Մահմեդ Ղուլի խանին ենթակա վրացական զինվորական ուժերը և այդ պաշտպանությունը տեղի է ավելի երկար ժամանակ, քան մեղ հաղորդում է Ա. Երևանցին։

Նեղլլյուելք Կոստանդնուպոլսից 1724 թ. սեպտեմբերի 1-ին գրած իր զեկուցագրում, խոսելով Անդրկովկասում թուրքական ուազմական գործողությունների մասին, հաղորդում է, որ «Գանձակի գրավումը հետաձգված է մինչև որ Երևանը գրավեն, որովհետեւ Գանձակ ուղարկված զորքը հարկ եղավ ետ բերել Երևանը գրավելու համար»<sup>62</sup>:

Երևանի հերոսական պաշտպանությունը կասեցնում էր նաև Պարսկաստանում գործող թուրքական բանակի առաջընթացը։ Աբգուլաճ փաշան Խոյը գրավելուց հետո չի շարժվում Թավրիզի վրա, սպասելով Երևանի անկմանը։ Բարձր Դուանը նա հայտնում է, թե ինքը մտադիր է միանալ սերասկյար Արիֆի Ահմեդ փաշայի հետ Երևանի մոտ, որովհետեւ Արիֆի Ահմեդ փաշան ի վիճակի չէ գրավելու Երևանը՝ այնտեղ հանդիպելով պարսիկների և հայերի, ինչպես նաև որոշքանակի վրացիների համառ դիմագրությանը։ Փաշան միաժամանակ տեղեկացնում էր, թե թուրքերը թնդանոթներից քաղաքը չեն կարող վնասել, քանի որ բավարար քանակով արկեր չունեն, չեն կարող նաև գրոհով վերցնել այն, որովհետեւ քաղաքի կեսը շրջապատված է դառիթափ լեռներով,

62 ԱԱ.ՔԱ, գ. ԱՀԹ, գ. 6, մ. 2, թ. 445։

իսկ մյուս մասը՝ զրով։ Երեանը գրավելու համար թուրքերը կոստանդնուպոլսից լրացուցիչ զորք և հրետանի են ստացել, ուղարկվել է նաև ուղմական ինժեներ իսպանացի Կարդոսը<sup>63</sup>:

Նեպլյուսի հաղորդմամբ պաշտպաններին օգնության եկող պարսիկների 10 հազարանոց զորքը թուրքերի կողմից ջախջախվում է Նախիջեանի մոտ։ Նախիջեանը գրավելուց հետո, Երեանի կազը կտրվում է Պարսկաստանի հետ<sup>64</sup> և հետեւաբար, պաշտպանության ամբողջ ծանրությունը ընկնում տեղի ապաբարնակշության ու կայազորի վրա։

Նեպլյուսի այս զեկուցագրի տվյալները ուշադրավ են թե՛ Երեանի մոտ տեղի ունեցած պատերազմական գործողությունների նկարագրությամբ և թե՛ իրենց հետաքրքրական լրացումներով Ա. Երեանցու հաղորդումների համեմատությամբ։ Այդ լրացումներից ամենակարևորը, առաջին հերթին այն է, որ Երեանի պաշտպանությունը ավելի երկար է տևել, և երկրորդը, որ Երեանի պաշտպանությանը մասնակցել են Հայերը, ինչպես և լրացական որոշ քանակի զորք։ Այն հանգամանքը, որ Երեանի հերոսական պաշտպանությանը կարող էին մասնակցել նաև լրացական ուժեր, մեզ ամենեին էլ անհավանական չի թվում այն պատճառով, որ այդ ժամանակ Երեանի խանությունը հնիտարկվում էր Մահմեդ Ղուլի խանին, որը Կախեթի թագավորն էր միաժամանակ, ուներ լրացական զորք և համառ պայքար էր մզում Անդրկովկաս ներխուժած թուրքական բանակի դեմ։ Հավանաբար, հենց Մահմեդ Ղուլին էր Երեանի պաշտպանությունն ուժեղացնելու համար։

63 Նույն տեղում։

64 Նույն տեղում։

զլրացական օժանդակ ուժեր ուղարկել, մի բան, որ կարելի է եղարակացնել նաև Զելեբի-ղադեհի վերը բերված վկայությունից և Գիլանենցի օրագրից:

Երեանի պաշտպանները կենաց և մահու պայքար են մղում թուրքական կանոնավոր զորքերի դեմ և ի շիք գարձնում քաղաքը արագ դրավելու թուրքական պլանները: Նրանք թուրքերին մեծ կորուստներ և վնաս են պատճառում, որը և ստիպում է թուրքերին Երեան ուղարկել լրացուցիչ զորք ու հրետանի<sup>65</sup>: 1724 թ. Հոկտեմբերի 15-ին գրած իր զեկուցագրում Նեպլյուելը հաղորդում է, որ Երեանը գրավելու համար Կոստանդնուպոլսից Հոկտեմբերին լրացուցիչ 12 հազարանոց ենիշերիական ջոկատ է ուղարկված<sup>66</sup>: Նեպլյուելի մի այլ զեկուցագրից (զրված 1724 թ. սեպտեմբերի 25-ին) երեսում է, որ Երեանի դեմ էին նետվել Գանձակի մոտ գտնվող թուրքական զորքերը, ինչպես նաև Եգիսխոսից հետաձգությունում ջոկատը: Երեանի տակ, այսպիսով, ըստ Նեպլյուելի տվյալների կենտրոնացվել էր թուրքական 30 հազարանոց զինվորական և նույնքան էլ ոչ շարքային, օժանդակ ուժեր: Պաշտրելով քաղաքը, նախապատրաստվում էին գրո՞շի: Միաժամանակ թուրքերը գրեթե ամեն օր մարդ էին ուղարկում քաղաք՝ անձնատուր լինելու առաջարկով, որին քաղաքից պատասխանում են, թե թերեւս հանձնվեին թուրքերին, սակայն լավ դիտեն, «...որ պիտի գերեն և բարբարոսաբար վարվեն իրենց հետ, գրա համար էլ ավելի բարվոք են համարում մինչև վերջին մարդը կուվելով մեռնել, քան դերի դառնալ»<sup>67</sup>:

65 ՌԱՔԱ, ֆ. ՌՀԲ, գ. 6, մ. 2, թ. 440:

66 ՌԱՔԱ, ֆ. ՌՀԲ, գ. 5, մ. 2, թ. 342:

67 ՌԱՔԱ, ֆ. ՌՀԲ, գ. 6, մ. 2, թ. 457ա—457բ:

1724 թ. Հոկտեմբերի 10-ի Նևպլյուսի զեկուցագրից երեվում է, որ բերդի պարսկական կայազորը, թվով 5000 մարդ, պաշտպանվող ժողովրդից զաղանի բանակցությունների մեջ է մտնում թուրքական բանակի հրամանատարության հետ երեանի բերդը Հանձնելու առթիվ։ Թուրքական կողմից իրենց անձի և գույքի անձեռնմխելիության երաշխիք ստանալով՝ մի քանի օր անց, սեպտեմբերի 22-ին նրանք քաղաքը Հանձնում են թուրքերին։ Երեանի գրավման լուրը Կոստանդնուպոլիս է Հասնում Հոկտեմբերի 8-ին, իսկ Հաջորդ օրը թուրքական կառավարությունը պաշտոնապես այդ իրադարձությանը իրացել է զարձնում բոլոր օտարերկրյա դեսպաններին, այդ թվում նաև Խվան Նևպլյուսին<sup>68</sup>։

Նևպլյուսի զեկուցագրերից երեսում է, որ Երեանը թուրքերը գրավել են ոչ թե 1724 թ. Հունիսի 7-ին, ինչպես այդ Հաղորդում է Արքահամ Երեանցին, այլ ավելի ուշ, սեպտեմբերի 22-ին, հետեւաբար տեղի աղջաբենակշության դիմադրությունը թուրքական բանակին շատ ավելի տեսական ու համառ է եղել։ Երկրորդ՝ Երեանի Հերոսական պաշտպանության ժամանակ Հայերին օգնության էին եկել վրացիները։

Իգնատիոս Տիգրանակերտցի արեղան սերունդներին է թողել թուրք զավթիչների գործած վայրագ նախճիրների շափածո նկարագրությունը։ Երեանը և Նախիջեանը զրավելուց հետո թուրքերի կատարած վայրագությունների մասին նագրել է.

Վալեն յԱմթա նոյն վիճակեան  
Հնարիւք էառ զմհծն Երեւան

68 ՌԱՔԱ, ֆ. ՌՀՊՀ, գ. 6. մ. 2, թ. 512ա—512բ։

Եւս ի վերայ զնախշեւան  
 Վիճակ նորին եւ ի սահման:  
 Գրաւեաց զնոսա Ահմատ փաշայն  
 Հայոցս գաւառն Արարատեան,  
 Կեղեքեցին հարին թալան  
 Ուստերք, գստերք, կանայքն նոցայն,  
 Տրամազործեալ նշաւակեցան,  
 Յոգունք ի հաւատոյ անկան  
 Եւ արարին մահմետականք  
 Որ ոչ կարեմ յաճախական  
 Աղետ նոցին տալ վիպասան:  
 Սոսկայ հոգիս դողդողչական,  
 Սիրտս եւ աղիս խորովական,  
 Ներգործութեամբ ի սուր ածան,  
 Արինք նոցին հեղեղք դարձան:  
 Վայ և եղուկ Ռ (հազար) դարձան,  
 Հայոց ազգին մեծ խղճութեան  
 Այսքան աղետք որք պատմեցան  
 Վասն իմ մեղացն գործեցան<sup>69</sup>:

Երեանը գրավելուց հետո թուրքական զորքերը, շարունակելով ռազմական գործողությունները, շարժվում են Գանձակի և Ղարաբաղի, ինչպես և Նախիջևան-Թավրիզի ուղղությամբ: Թուրքերը ավերում էին ու թալանում իրենց ճանապարհին բնկած բնակավայրերը, սպանում կամ գերեկարում ազգաբնակչությանը: «Եւ հրամանաւ թագաւորին ի ՌՃՀ

69 Մաշտոցյան մատենադարան, ֆ. Կաթողիկոսական դիվան, թղթապանակ հ. 1, վալ. 81:

(1723 թ.) եկին ի Վան Ամասիոյ փաշայն, Ուրհայու փաշայն, և այլ փաշայք, զօրօք իւրեանց և Հեծելովք առ Ավտովլահ փաշան, որ եղե նոցա զօրագլուխ և սարասրար, և զնացին ի վերայ Պարսից և առին զեօյ, զՄրմի, զԵրեան, զԹավրիզ, զՀամատան, զՄուղան, և այլ բաղում փոքր քաղաքս:

Բայց թէ որչափ անողորմ արինս Հեղին և գերի բերին, որ ի թիւ և ի դիր ոչ մտանէ, զի ոչ մնայ աշխարհ, որ ԴՃ, ԵՃ (400—500) գերի ոչ տարան, մինչ զի յՍտամբոլ Անկիւրեցի նորընծայ կաթողիկոս ԷՃ (800) գերի զնեալ ազատեաց, թող զայն որ ուրացուցին և այլազգի գերիս կրկին էին քան զքրիստոնէից գերիս, որք ամենեքան ցիր եվ ցան եղեն, և ցրուեալ խառնեցան յայլ ցեղս և յազգս և ի լեզուս օտարս, և նեղեալք ամենայն յամենայնի»<sup>70</sup>:

Թուրքերի հարձակումը Գանձակի և Ղարաբաղի ուղղությամբ է՛լ ավելի սրեց զրությունը սղնախներում: Հստ երեւույթին, սղնախներում ստեղծված ծանր վիճակից զուրս գալու, ուստական զորքերի հետ միավորվելու նպատակով է, որ Ալան յուղբաշին որոշում է 10 հազարանոց զորքով զնալ Գիլան, սակայն զիշելով տեղի բնակիչների խնդրանքին, չի իրագործում իր մտադրությունը: Այս կապակցությամբ Դերբենդի պարետ զնդապետ Յունգերի կողմից սղնախները հետախուզության ուղարկված Հակոբը և Հովսեփիը հաղորդում էին, թէ Ավան յուղբաշին 10 հազար լավագույն մարտիկներով ուղում էր զնալ Գիլան՝ ուստաների մոտ, սակայն նրա մոտ եկան «սակավաղոր մարդիկ և սկսեցին լաց լինել, ասելով,

70 Դ. Սրվան ձտյան, Մանանայ, Ժամանակագրութիւն, էջ 377—378:

թե եթե դու (իմա՞ Ավան յուղբաշխն—Վ. Մ.) լավագույն մարտիկներով հանդերձ այստեղից մեկնես, ապա մեղ բոլորիս կխորտակեն, իսկ մեր հույսը դու ես, դու ես մեր տերը, թշնամիներից տղաշտպանողը, առանց քեզ բոլորս կկործանվինք, և Ավանը նրանց լսեց, որոշեց մնալ՝ ասելով, որ օդուտ չի լինի, եթե միայն ես փոքրաթիվ մարդկանցով հանդերձ այստեղից հեռանամ և փրկվիմ, այստեղ բազմաթիվ մարդկանց կործանման մատնելով»<sup>71</sup>: Ավան յուղբաշխն մնում է սղնախում և ամրոց կառուցում: Այստեղ նկատենք, որ ինչպես նշում է ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանը, այդ կառուցվող ամրոցը, ամենայն հավանականությամբ, եղել է Շուշուրեգը<sup>72</sup>:

Ինչպես սղնախների ղեկավարները, այնպես էլ թուրքերի ղեմ պայքարող մյուս ուժերը անհրաժեշտաբար զգում էին ընդհանուր ճակատ կազմելու, միացյալ ուժերով թուրքական հարձակվող բանակին դիմակայելու կարիքը: Վախթանգ Եղբը, թուրքերի կողմից Թիֆլիսը գրավելուց հետո, 1724 թ. Հուլիսի 15-ին մեկնեց Սստրախան՝ ոռոսական ուղարկան օդնությունը արագացնելու նպատակով: Սակայն Վրաստան և Հայաստան այդպես էլ ոռոսական զորք չուղարկվեց: Թուրքական ահավոր վտանգի առջե Անդրկովկասի ժողովուրդները մնացին մենմենակ՝ իրենց փոքրաթիվ զինվորական ուժերով: Այդուհանդերձ պայքարը թուրք նվաճողների դեմ ստանում էր էլ ավելի սուր և համառ բնույթ: Այդ օրհասական պահին,

71 Ա. Ք. Ա. Փ. Ա. Հ. Պ., գ. 5, թ. 334—336:

72 «Հայ-ոռոսական հարաբերությունները XVIII դ. առաջին երեսնամակական ժամանակաշրջանում (փաստաթղթերի ժողովածու), Երևան, 1964, էջ 11:

Երբ զրսից ակնկալվելիք օգնությունը անհուսալի էր դառել, է՛լ ավելի ամրապնդվեց բարեկամությունը և դաշինքը բախտակից ժողովուրդների՝ հայերի ու վրացիների միջև։ Թուրքերի դեմ հայերն ու վրացիները համառ մարտեր են մղում նաև Զավախքում։ «Գարնանը Բակարը զորք ուղարկեց, —պատմում է Վախուշտին, —որոնք Թրիալեթում գտնվող օսմանցիներին ոչնչացրին և Զավախքի Փոկա գյուղում կոտորեցին 500 օսմանցի հեծյաների, որոնք Թբիլիսի էին գնում։ Դրա համար օսմանցիները ուղարկեցին ինսեին և Ախալցիխեի փաշա Իսաղին Բակարի դեմ զորքով, որոնց Բակարը շկարողացավ դիմադրել, այլ քաշվեց լեռները...»<sup>73</sup>։ Փոկա (Ախալքալաքի շրջան) գյուղի մոտ Բակարի ուղարկած զորքերին նեցուկ են հանդիսացել հայ բնակիչները։

Թուրքերը գետի երեան շարժվելիս մեծ դիմադրության հանդիպեցին կոսի քաղաքի մոտ։ Կոսիի հերոսամարտը թուրք զավթիչների դեմ հայ և վրաց ժողովուրդների մղած համատեղ պայքարի փայլուն էջերից է։ Կոսին պաշտպանում էր տեղի հայ ազգաբնակչությունը, որի կողքին կռվում էին վրացական զորամասերը։ Թհհ երկար ժամանակ թուրքերը պաշտպան էին կոսին, բայց նրանց չէր հաջողվում զրավել քաղաքը՝ ջնորհիկ հայ-վրացական ուժերի ցուց տված համառ դիմադրության։ «...Սահմանի մոտ կա վրացական մի քաղաք կոսի կոչվող, —զրում էր իշխան Թուղեզը, —որի պարեաը Մահմեդ Ղուլի խանի ստորագրյալն է, այդ քաղաքի մոտ թուրքերը շատ օրեր են կանգ առել, սակայն չեն կարողացել

73 Կ ա խ ու շ տ ի, նշվ, աշխ., էջ 133 (վրացերեն)։

պրավել և երեք անգամ թուրքերը պարտություն են կրել այդ քաղաքի բնակիչներից»<sup>74</sup>:

Մահմեդ Ղուլի խանի՝ իվան Կարապետին գրած նամակից ևս երեսում է, որ թուրքերի գեմ հաջող պայքարելու նպատակով միավորվում էին տեղական մասնատված, նույնիսկ նախկինում իրար գեմ պայքարող ուժերը: Ահա թե ինչ է գրում նա իր նամակում. «...Գուցե դուք գիտեք այն անհամերաշխության և երկապառակության մասին, որ գոյություն ուներ մեր և Քարթլիի միջև: Այդ անմիաբանությունը առաջներում կար մեր մեջ, բայց այժմ մենք հաշտվել ենք իրար հետ, եղբոր և բարեկամի պես ենք ու պահպանում ենք նաև մեր գրավոր պարտավորությունը և պայմանագիրը: Որքան մենք հնարավորություն կունենանք հակահարված տալու Վրաստանի թրշնամիներին, մենք կցանանք այդ ուղղությամբ...»<sup>75</sup>:

Տեղերում գոյություն ունեցող հակասություններն ու անմիաբանությունը վերացնելու ուղղությամբ զանգեր էին թափում թե վրացական և թե հայկական ղեկավար գործիչները: Եվ պատահական չէր այն, որ Մահմեդ Ղուլի խանի և Վախթանգ Ե-րդի միջև հաշտությունը կնքվել էր Գյուլիստանի Եսայի յուղբաշու ներկայությամբ: 1724 թ. հունիսի 5-ին ոռուսական արքունիքին ուղարկած իր նամակում Եսային հետեւյալն է գրում. «Ես մինչև տոնը այստեղ էի (այսինքն՝ Թբիլիսիում—Ա. Ա.) և հետո գնացի Շահնավազ խանի մոտ: Մահմեդ Ղուլի խանը եկավ այնտեղ (Գորի) և Շահնավազ խանի

74 ՀԱՅԿԱՆ, գ. Պետրոս 1-ինի կարինետ, 2-րդ բաժ., գ. 66, թ. 543—546: 543—546:

75 ՌԱԶՐԱՄ, գ. ՌՀՎ, գ. 1, թ. 2:

Հետ հաշտվեցին և որքան մեծ ու փոքր թափաղներ կային, բոլորը միացան և խոսք տվին թուրքերին չծառայել, որպեսզի բոլորն իրենց զորքերը պատրաստեն, և ձերդ մեծությանն (են) սպասում»<sup>76</sup>:

Մահմեդ Ղուլի խանի եղբոր որդու Մահմեդ Միրզայի (սա Գանձակի ջանիշինը՝ տեղապահն էր) իվան Կարապետին գրած նամակից տեղեկանում ենք, որ համերաշխություն էր կայացվել նաև Հարաբաղի սղնախների ղեկավարության և Գանձակի աղբբեջանցիների միջև։ Այդ նամակով Մահմեդ Միրզան հավաստիացնում է, թե իվան Կարապետը վստահ կարող է լինել այն բանում, որ աղբբեջանցիները երբեք թուրքերի կողմը շեն անցնի և իրենց երդանը հավատարիմ կլինեն<sup>77</sup>։

Ինչպես կտեսնենք ստորև, 1724 թ. Գանձակի հայ-աղբբեջանական պայմանագրի կնքմանը ակտիվ մասնակցություն են ունեցել սուսական պատվիրակ իվան Կարապետը, Կախեթի թագավոր Կոստանդինը (Մահմեդ Ղուլի խանը) և նրա տեղապահ Մահմեդ Միրզան։ Այս հանգամանքը վկայում է այն մասին, որ Անդրկովկասի քաղաքական գործիչները ճիշտ էին կողմնորոշվում ստեղծված բարդ իրադրության մեջ և նպաստում էին տեղական ուժերի համախմբմանը ընդդեմ թուրք նվաճողների, մի բան, որ կազմում էր նաև իվան Կարապետի առաքելության գլխավոր նպատակը։

76 Ա. Աբրահամյան, Մի էջ..., էջ 66։

77 Ա. Աբրահամյանը իր «Մի էջ Անդրկովկասի ժողովուրդների և հայ-սուսական հարաբերությունների պատմությունից» աշխատության մեջ նամակի հեղինակ է համարում Մահմեդ Ղուլի խանին, իրականում, ինչպես հենց նամակից երևում է, այն գրել է Մահմեդ Միրզան։

Մահմեդ Ղուլի խանի ներկայացուցիչ իշխան Ռուզեպը  
այդ առթիվ 1724 թ. Հունիսի 4-ին հետեւալ հայտաբարությունն  
է արել ռուսական արքունիքում. «Գանձակեցիները հայերի  
հետ մեծ արյունահեղ կոփվներ ունեին, որոնց խանը (Կոս-  
տանդինը—Վ.) հաշտեցրեց և նրանց միջև պայմանագիր  
կնքել տվեց, որպեսզի նրանք երկպառակության կոփվներին  
վերջ տան և գաշինքի մեջ լինելով՝ թշնամու զեմ անհողողող  
կանգնեն»<sup>78</sup>: Հայտնի է, որ Գանձակի մահմեդական ֆեոդալ-  
ները սերտ կապի մեջ էին Սեֆյանների հետ և օգտվում էին  
մի շարք արտոնություններից: Ակսած XVI դարի առաջին կե-  
սից մինչև 1737 թ. (ընդմիջումներով) Գանձակի և Ղարաբաղի  
բեղլերբեկներ էին նշանակվում Զիադ-օղլի ֆեոդալական տան  
ներկայացուցիչները<sup>79</sup>:

Զինված պայքար մղելով Սեֆյանների դեմ, հայկական  
սղնախները դրանով իսկ հարվածում էին նաև Գանձակի ֆեո-  
դալների շահերին: Այդ հողի վրա էլ ծագել էր փոխագարձ թշ-  
նամանքը: Իվան Կարապետը Գանձակի աղբքեջանցի բնակչու-  
թյանը ուղղած իր 1724 թ. փետրվարի 22-ին դրած նամակում  
խոսում է այդ թշնամանքի մասին: «Իվան Կարապետէս բարե  
հասցէ Գանջոյ եղեալ աղալարի և քաթխուռէքոնց մեծիդ և  
փոքրիդ, մալում լինի ձեղ, որ ես եկի էս խայերին սղնախնին՝  
տեսի, որ քանի մարդ մինըզմինոյ խեդ խոօվին, բարըշացու-  
ցի, որ էլ մարդ չէ մնաց ողջին գլուխն ա արարի, և ես լսում  
եմ, որ դոք էս խայերին խետ ընդունաք մեկըզմինոյ շափմիշ

78 ՀԱԿՊԱ, ֆ. Պետրոս 1-ինի կարինետ, 2-րդ բաժ. գ. 66, թ. 544:

79 И. П. Петрушевский, Очерки по истории феодальных  
отношений в Азербайджане и Армении в XVI начале XIX вв., стр.  
122—124.

իք անում, էտ խօվլ լեվ չեք անում... և դոք որ թէ կողէք մեր թագաւորին թարէ լինէք, էս խայերին խետ պիտի զօստ լինէք, թէ կողէք որ Օսմանլին դուզուղ առէք, էն էլ դոք լեվ գիտէք, ախտիար ունէք էս գրին ջողաբն մեղ գրէք»<sup>80</sup>:

Ռուսական կառավարության պատվիրակ իվան Կարապետը Ղափանի Հայկական սղնախներին ոռուսական օգնությամբ հուսադրելու և նրանց հետ կապ հաստատելու նպատակով 1724 թ. մայիսին զնացել է նաև Ղափան<sup>81</sup>:

Իվան Կարապետի, Մահմեդ Ղուլի խանի ջանքերը իրենց արդյունքները տվեցին: Գանձակի ֆեռդալները ցանկությունն Հայտնեցին Հայկական սղնախների հետ հաշտվելու և համատեղ պայքարելու թուրքերի դեմ: Հայկական սղնախների ղեկավարները և Գանձակի մահմեդական ֆեռդալները համատեղ պայքարի դաշն կնքեցին ընդդեմ զավթիչների և նրանց դադստանցի գործակալ ֆեռդալների: Ըստ երեսութին, Գանձակի մահմեդականների հետ հաշտություն հաստատելու նախաձեռնող կողմը եղել են Ղարաբաղի հայերը, որոնք իվան Կարապետին տալիս են ազրեցանցիների հետ բանակցություններ վարելու լիազորություններ: «Մենք Շօշի եղեալ ուզպաշէքս, ևս Թարխանս, և ես Բաղիս, և ես Փանիս, և ես Սարգիսըս, և ես Սադեղս, մեր թաբուն թալեղօվս և մեր քելլսայ քաղսուղեքը և Գանջոյ խայերովս մեծօվ և փոքրով խնդրեցինք իվան Կարապետէն, — ասված է արխիվային փաստաթղթերից մեկում, — որ մեր կողմանց ա զիր գրէ Գանջայ մայալին քաղխուղէքանց վերէն, որ մեր մէջումն բարըշութիւնը ձգէ, որ մինըդ մինոյ խետ բարըշացուցանի, որ մեք և զան-

80 ՌԱՔԱ, ֆ. ԹՀՀ, գ. 2, թ. 37:

81 ՌԱՔԱ, ֆ. ԹՀՊ, գ. 5, թ. 17:

զեցիք բարիշ լինենք, մինչի մեր թագաւորն դայ մեղ հասնի, դրվեցաւ թվին ՌՃՀԳ (1724 թ.) փետրվարի ամսին իԲ (22) ումն»<sup>82</sup>:

Կնքված պայմանագիրը բովանդակում էր հետևյալ պայմանները. 1. Եթե թուրքական զորքերը կամ Դաղստանի ֆեռգալները հարձակվեն Գանձակի վրա՝ հայերը պարտավորվում են իրենց ուժերով և միջոցներով օգնել աղքաբանցիներին. «...որ թէ գանչեցոց վերէն թէ Օսմանլուի և թէ լազկու զօշուն զայ, մեր հայոց աղքս թամամի վերոյդրեալքս գնանք զանցեցոց քօմակ, չուն Գանչայ էլ մեր թագաւորին թարիան և թէ մեր հայոց աղքս գանչեցոց խաբենք գնանք ոչ քօմակ, և թէ գանչեցոց խաբենք կամ գանչեցոց ա մարդիկ կամ շատ փոքր բոնենք կամ սպանենք, կամ թալանենք, մեր գլուխն և ապրանքն՝ թագաւորին լինի»<sup>83</sup>:

Անշուշտ, 1724 թ. հայ-աղքաբանական պայմանագիրը իր նշանակությամբ ավելի մեծ էր, քան միայն գանձակեցի ֆեռգալների և Ղարաբաղի հայերի մարտական համագործակցությունը. այն պետք է դիտել որպես հայ, աղքաբանցի և վրացի ժողովուրդների համատեղ պայքարի մի փայլուն զրովագ ընդդիմ թուրք նվաճողների<sup>84</sup>:

82 ՌԱՔԱ, ֆ. ԹՀՀ, գ. 2, թ. 62, տե՛ս նաև Պ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 172—173 (առահերին):

83 ՌԱՔԱ, ֆ. ԹՀՀ, գ. 2, թ. 43, տե՛ս նաև ՀՍՍՀ ԳԱ հասարակական գիտությունների «Տեղեկադիր», 1951, Ա 12, Ա. Արրահամյանի հոդվածը այդ պայմանագրի մասին:

84 Պ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 172—176:

1724 թ. Հայ-աղբքեջանական պայմանագիրը կնքելուց հետո պայքարը թուրք զավթիչների դեմ նոր թափ ստացավ։ Ստեղծված պայմաններից ելնելով՝ Ղարաբաղի Հայկական սղնախների ղեկավարությունը պաշտպանական պայմանագիր կնքեց նաև պարսկական արքունիքի հետ, որպեսզի բոլոր ուժերը կենտրոնացնի թուրքերին հակահարված տալու համար։ «...Դարձեալ Փիլիպն գեանջցոց և մեր թղթովն գնաց շահին մօտն, հիմա Քալպալիալէկն այս բանիս վերայ բերինք մեր մէջս, Ղզլպաշին հետ հաշտեցինք, այլ և մեր մէջս որքան խռով մարդ կայր թէ մելիքներ, թէ ուղպաշինք, ամէնն մին եղան պարշէցանք, այլ զոկություն չկայ...»<sup>85</sup>:

Ազատագրական պայքարի տվյալ ժամանակաշրջանում թուրքիան էր հանդիսանում ամենից վատանգավոր թշնամին, ուստի և ուժերը չջատելու նպատակով միանգամայն նպատակահարմար էր դաշնակցել նաև Սեֆյանների հետ, որպես թուրքերին հակառակ կողմի, մանավանդ որ ինքը՝ Թահմաղը, Խունապես պատերազմում էր թուրք նվաճողների դեմ։

Անդրկովկասի ժողովուրդների անձնուրաց պայքարը թուրք նվաճողների դեմ ոչ միայն Հնարավորություն տվեց ուստական զորքերին ամրապնդվելու կասպիականի ափերին, այլև մեծապես օգնեց պարսիկ ժողովրդին պայքարելու իր վաղեմի թշնամու՝ սովթանական թուրքիայի դեմ, որ այդ տարիներին նպատակ ուներ ոչ միայն Անդրկովկասը, այլև Պարսկաստանը նվաճելու։ Հայերի և պարսիկների միջև պաշտպանական պայմանագիր կնքելու մասին մենք տեղեկանում ենք Եսայի Հասան-Ջալալյանի Վախթանգ 6-րդին գրած

85 Գ. է դով, նշվ. աշխ., էջ 420—421, փաստաթուղթ 275 (ուստեան)։

նամակից, որը Վախթանգ 6-րդը 1725 թ. դեկտեմբերի 18-ին հանձնում է ոռւսական արքունիք: Նամակում ասված էր. «...Թուրքերը Երևանը գրավել են, մենք տեղեկացանք նաև, որ Մահմեդ Ղուլի խանը 4 կամ 5 հազար զորք ունի հավաքած և որոշ վայրերում գործում է. իսկ մեզ մոտ թուրքական զորք 5000 հոգուց բաղկացած խաբեռթյամբ եկան, որոնց բոլորին մեր զինվորները ջարդեցին: ...նաև բոլոր պարսիկների հետ այժմ մենք դաշինքի մեջ ենք գտնվում...»<sup>86</sup>:

Գանձակեցիների հետ դաշն կնքելուց հետո հայկական զորքը ծանր պարտության է մատնում թուրքերին, ոչնչացնելով մոտ 5000 թուրքական զինվոր. Հայկական զորքի այդ հաղթանակին էլ հենց հաջորդեց պարսիկների հետ հաշտության կնքումը:

Այսպիսով, թուրքերի արշավանքի ընթացքում Անդրկովկասի ժողովուրդների ազատազրական ոլայքարի հիմնական ուժերը ուղղվեցին թուրք զավթիչների դեմ: Թուրք զավթիչների դեմ հայերը, վրացիները և ազրբեջանցիները հանդես էին դալիս համատեղ, որի շնորհիվ նրանց հաջորդեց մի շարք ծանր հարվածներ հասցնել թշնամուն: Թուրքական զորքերը, որոնք ձգտում էին կարճ ժամանակում գրավել Գանձակը, Ղարաբաղը և Ղափանը ու դուրս գալ Կասպիականի ափերը, հարկադրված եղան երկար ժամանակ գամված մնալ նույն տեղում և կրկի մեծ կորուստներ: Միևնույն ժամանակ այդ ժամանակաշրջանի բազմաթիվ արխիվային փաստաթղթերից ոլայքորոշ երեսում է, որ Անդրկովկասի ժողովուրդները իրենց պայքարի հաղթական ավարտը տեսնում էին միմիայն Թու-

86 ՌԱՐԱ, ֆ. ԲՀՀ, գ. 5, թ. 30:

սաստանի ղինված օգնության մեջ։ Եսայի կաթողիկոսը, օրինակ, 1725 թ. Հուլիսի 25-ին Մինաս վարդապետին գրած նամակում առաջարկում է, որպեսզի ոռւսական զորքերը դան Շամախի, Հայերի հետ միավորվին, Հակառակ դեպքում հայոց սղնախների դրությունը անելանելի կդառնա<sup>87</sup>:

1724—1730 թթ. անընդհատ կոիվներ էին տեղի ունենում Հայկական սղնախների և թուրք նվաճողների միջև։ Այդ պայքարում Հայերը մեծ օգնություն էին ստանում վրացի և աղբբեջանցի ժողովուրդների կողմից։ Անշուշտ, եթե շիներ Անդրբկովկասի մյուս ժողովուրդների պայքարը և օգնությունը, Հայկական սղնախները ի վիճակի չէին լինի այդքան տեսական դիմագրություն ցուց տալու թուրք նվաճողներին։

Երևանը և Գանձակը գրավելուց հետո թուրքական զորքերը, Սարի Մուստաֆա փաշայի գլխավորությամբ շարժվեցին մի կողմից Ղափանի, իսկ մյուս կողմից՝ Ղարաբաղի Հայկական սղնախների վրա։ Սակայն ունենալով Երևանի և Գանձակի գրավման դառը փորձը, թուրքական հրամանատարությունը փորձեց սղնախները հպատակեցնել բանակցությունների միջոցով։ Սարի Մուստաֆա փաշան դիմում է ինչպես Դավիթ-Բեկին, այնպես էլ Ավան յուղբաշուն, առաջարկելով ղենքերը հանձնել և հպատակություն Հայտնել, խոստանալով նրանց ամեն տեսակի ազատություն և անձեռնմխելիություն։ Սակայն Ավան յուղբաշին և Դավիթ-Բեկը գիտեին, թե ինչ արժեն թուրքական խոստումները, և դրա համար էլ փաշայի այդ առաջարկը վճռականորեն մերժվում է<sup>88</sup>։

87 ԱԱՔԱ, ֆ. Թ22, դ. 5, թ. 26:

88 ԱԱՔԱ, ֆ. Թ2Պ, դ. 5, թ. 334—336:

Գանձակի անկումից հետո շատ ազրբեջանցիներ պատըս-  
պարվեցին հայկական սղնախներում։ Հայազգի քյոլսված Զե-  
լեբին ուստական արքունիքում հայտնել է, որ «...ինքը  
այստեղ դալիս, Շամախիում իմացավ, որ թուրքերը  
Դանձակը գրավել են, և երբ թուրքերը սկսել էին մոտենալ  
այդ քաղաքին, ապա այդ քաղաքի սղջ բնակչությունը կանաչ-  
ցով և երեխաներով, իրենց գույքով՝ դուրս են եկել քաղաքից  
և եկել հայոց սղնախները»<sup>89</sup>։

1725 թ. գարնանը թուրքական զորքերը հարձակում գոր-  
ծեցին Վարանդայի վրա։ Տեսնելով թշնամու գերազանց ուժե-  
րը, հայերը որոշեցին դիմադրություն ցույց շտալ, առերիս  
հնազանդվել և խորամանկությամբ թշնամուն ծուղակը գցե-  
լով՝ ոչնչացնել։ Այսա թե ինչպես են նկարագրում իրենց այդ  
քայլը Եսայի կաթողիկոսը և հայ մելիքները Վախթանգ Երդին  
1725 թ. մարտի 10-ին դրած նամակում։ «...այս միջումս  
Դանջա շնարն և մեր եմք մնացեալ, իրար հետ լաւ եմք, մեր  
և նոցա մարդն գնամ են գալիս, ապա զայս յայտնի լիցի ձեր  
մեծութեանդ, զայս աղուհացիս Դ (4) շաբթումն, մարտի  
մէկումն, Գ (3) փաշայ, Շահին, Ապահ և Ալի անունով ԴՌեձ  
(4500) մարդով Դանջա ներքեց անցան, եկին մեղ մօտ Վա-  
րանդայ։ Մէկ Բ (2) օր տեսանք միտքներն ծուռ ա, կախ անե-  
լով էլ օ՞գէն կարել չեմք գալ, զօնադ արինք գեղուզեղ. Ճ  
(100)-ով, ԲՃ (200)-ով, ԴՃ (400)-ով, թամամ կոտորեցինք,  
միայն մէկ ՃԾ (150) մարդ փախան ԲՃ (200) էսիր թափե-  
ցինք»<sup>90</sup>։

89 ԱԱՔԱ, ֆ. ԹՀՊ, գ. 5, թ. 24։

90 Գ. էղով, նշվ. աշխ., էջ 419, փաստաթուղթ 275։

Հայերը, Ավան յուղքաշու գլխավորությամբ, գրեթե զլխովին ջարդում են Սարի Մուստաֆա փաշայի կողմից իրենց դեմ ուղարկված 3000-անոց բանակը։ Փրկվում են ընդամենը 60 զինվոր, որոնց հայերը հետապնդում են մինչև Գանձակ։ Շամախուց Դիրքենդ վերադարձած թարգմանիչ Դմիտրիյ Խոմգանովը, հայտնելով այդ մասին, միաժամանակ ավելացնում է, թե առջասարակ հայերի դեմ մղված իրենց բոլոր մարտերում թուրքերը միշտ պարտություն են կրել, մի բան, որն ստիպել է թուրք սերասքյարին զրելու սուլթանին, թե ինքը հայերին «չի կարողանում ընկնել», որ մի քանի անգամ հարձակման է գնացել նրանց դեմ, «սակայն անհավատները (հայերը—Վ. Մ.) թուրքերին ջախջախել են»<sup>91</sup>։

Ավանը մերժում է թուրքերի առաջարկությունը հպատակվելու մասին և, ինչպես հայտնում էր Խոմգանովը, «շարունակում է մեծամեծ վնասներ հասցնել նրանց»<sup>92</sup>։

1726 թ. ամռան սկզբներին թուրքերը, հարձակվելով Խաչենի վրա, դրավում են մի քանի գյուղեր, կողոպուտի ենթարկում և ավերում դրանք, բնակչության մի մասին ոչնչացնում, մյուս մասը՝ գերում։ Սակայն, հայերը, հակահարձակման անցնելով, ոչնչացնում են թշնամուն և զերիներին ազատագրում<sup>93</sup>, 1726 թ. թուրքական և հայկական զորքերի միջև ընդհարումներ են տեղի ունենում նաև Գյուլիստանի ու Զրաբերդի զավառներում։

Կոստանդնուպոլսում ուսւական դեսպան Իվան Նալյուելի 1726 թ. հուլիսի 26-ի զեկուցագրերից երեսում է, որ հայ-

91 ՌԱՔԱ, ֆ. Ռ2Պ, գ. 4, թ. 187—188։

92 Նոյն տեղում։

93 Տե՛ս Պ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 248։

կական սղնախների հետ մնելու թուրք զավթիչների գեմ պայքար էին մղում նաև Մուզանի հարթավայրում բնակվող աղբեկանցիները։ Գանձակի սերասքյար Սարի Մուստաֆա փաշան հայերի գեմ ուղարկելով 12000-անոց բանակ, նրանցից պահանջում է անվերապահ հպատակություն, սակայն հայերը մուղանցիների օգնությամբ ջախչախում են այդ բանակը<sup>94</sup>։ Հայերին օգնող աղբեկանցիները շահսեւանցիների շիա դավանանքին պատկանողներն էին՝ Զալիբեկի և Մուրզա Ալիբեկի զլսավորությամբ։ Մրանք միացել են հայերին և նրանց համաձայնությամբ բնակություն հաստատել Ավան յուղաշու սղնախում՝ թվով մոտ 15000 ընտանիք։ 1726 թ. ամռանը թուրքերը կրկին փորձում են գրավել սղնախները, սակայն տեղի ունեցած մարտում հայերից և սրանց օգնող աղբեկանցիներից մեծ կորուստներ են կրում և նահանջում։

Ահա այս ժամանակաշրջանում թուրքական հարձակումներից ահարեկված մոտ 40.000\* ընտանիք աղբեկանցիներ և քրդիր գալիս են սղնախները, հպատակություն հայտնում Ավան յուղաշուն, որը նրանց բնակության տեղ է հատկացնում սղնախներում։ Եկվորները երդվում են հնաղանդ լինել հայերին, հարկ և տուրք վճարել ու պայքարել թուրքերի դիմ<sup>95</sup>։

<sup>94</sup> ՌԱՔԱ, գ. ԲՀՊՀ, գ. 8, թ. 75բ—76ա։ Թուրք նվաճողների գեմ սղնախների 1726 թ. հունիսին տարած հաղթանակի մասին տե՛ս նաև սղնախներից թաքու եկած արաբկիրցի Զարար Լազարյանի վկայությունը, որը գալիս է հաստատելու նվան նեպլուսկի համապատասխան հաղորդումը։ Տե՛ս նույն տեղը, գ. 9, թ. 89—90։

\* Մեղ թվում է, որ թերքած թվերը երկու դեպքում էլ չափազանցված են, սակայն քննարկվող խողոքի առումով ոչ մենքնախների ստույգ քանակն է կարեւը, այլ բուն համագործակցության իրողությունը։

<sup>95</sup> ՌԱՔԱ, գ. ԲՀՊՀ, գ. 9, թ. 87—88։

Պարտություն կրելով, Սարի Մուստաֆան կրկին ու կրկին անգամ փորձեր է կատարում ստանալու Ավան յուղբաշու Համաձայնությունը՝ թուրքերին Հպատակվելու մասին։ Սակայն Ավան յուղբաշին միշտ անկուտրում է մնում և մերժում նրա առաջարկությունները։ Խոմգանովի նման Շամախուց Դերբենդ ժամանած Մարտիրոս Մեսիրյանը ևս իր հաղորդագրության մեջ հանգամանորեն գրում է. «Դանձակից թուրք փաշան դրել է սղնախի հայերին, որպեսզի վերջիններս նրան հինգ տարվա հարկն ուղարկեին, հակառակ դեպքում սպանում էր զորքով նորից հայերի դեմ դնալ, բայց սղնախի հայերը, վստահ իրենց ուժերի վրա, թուրք փաշայի ամբարտավան պահանջին տալիս են պատշաճ պատասխան, ասելով, որ իրենք փող չունեն, միայն ամեն տղամարդ մի հրացան և մի սուր ունի, և եթե թուրքերը թեկուզ դան իրենց դեմ, ապա հայերը աստծո օգնությամբ նրանց կղիմավորեն և շեն հպատակվի թուրքերին, քանի որ հայերը շուրջ 40 հազար զորք ունեն։ Իսկ Ավան զորավարը վերցնելով թուրքական փաշայի նամակը բզկառում է այն, լցնում մի բաժակ ջրի մեջ և հրամայում նամակաբերին խմել այն ու եղածի մասին փաշային զեկուցել»<sup>96</sup>

Սարի Մուստաֆայի զորքերը, որին միացել էին Հաջի-Դաւուդի հրոսակախմբերը, ծանր պարտություն կրեցին նաև Շոշի սղնախի վրա հարձակվելիս։ Մի քանի օր տեսած այդ մարտերում Սարի Մուստաֆան ստիպված է լինում կրկին բռնել նահանջի ճանապարհը<sup>97</sup>:

96 ՌԱՔԱ, ֆ. ԲՀՊ, գ. 4, թ. 213։

97 ՌԱՔԱ, ֆ. ԲՀՊ, գ. 9, թ. 121ա—121բ։

Թուրք զավթիչները մեկ այս, մեկ այն սղնախի վրա հարձակվելով, փորձում էին ջլատել նրանց գիմազրությունը և Ղարաբաղը նվաճել: Սակայն սղնախները սերտորեն համագործակցում էին միմյանց հետ, և թուրքերի ձեռնարկած հարձակումները շոշափելի արդյունք չէին տալիս: 1726 թ. մի քանի անգամ թուրքերին ջարդելուց հետո սղնախցիները թուրքերի կտրած գլուխները ուղարկում են շահին, որպեսզի «նորին մեծությունը» ըստ այդմ գործի:

Սղնախների հայ զորքերը, սակայն, միայն լիոնոտ շըրջաններում չեն, որ հաղթանակներ էին տանում: Ավան յուղբաշու անմիջական հրամանատարությամբ 1726 թ. նրանք Սարի Մուստաֆային նեղում են նույնիսկ դաշտավայրում և մոտենում Գանձակին: Գոտեպնդված հաղթանակից, Ավանը թուրք հրամանատարությանը առաջարկում է դաշտում հակատամարտի դուրս գալ, սակայն թուրքերը հրաժարվում են և պատսպարվում Գանձակում: «Ավան յուղբաշին,—գրում է Շամախուց Դերբենդ եկած Ալավերդի Այվաղյանը,—մարդ է ուղարկում սերասրյարի մոտ (Սարի Մուստաֆայի մոտ, Գանձակ—Վ. Մ.) և հայենում, որ ինքը իր հայերով այժմ լավ ջարդ տվեց թուրքերին և առաջարկում է սերասրյարին նորից կռվել, իսկ սերասրյարը Ավանի դեմ կռվելու զորություն չունի»<sup>98</sup>:

Հայերի այս հաղթանակը անմիաբանություն է մտցնում թուրքական լագերում, բարոյալքում է զինվորներին, որոնք վախենում են մարտի դուրս գալ հայերի դեմ: Այվաղյանի հաղորդման համաձայն, Դաուդ-բեկը հայերի այս հաղթա-

98 Պ. Տ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 240:

նակից աջաբեկված՝ մերժում է Սարի Մուստաֆայի առաջարկը՝ նրան օգնության գնալու մասին:

Մյուս կողմից, հայկական սղնախների տարած հաղթանակները բարոյալքություն էին մտցրել թուրքական բանակի շարքերում, առ ու սարսափ տարածել թուրք զինվորների վրա, որոնք վախենում էին մարտի գնալ հայերի դեմ:

«Թուրքերը մտադիր են գնալ Ղարաբաղի հայոց սղնախների, ինչպես նաև շահսկանցիների դեմ,—կարդում ենք 1726 թ. փաստաթղթերից մեկում,—սակայն թուրքական ենիշերիները հայերի դեմ գնալու ցանկություն չունեն, որովհետև երեք անգամ գնացել են, բայց բոլոր դերքերում էլ բախտը հայերին է ժպտացել»<sup>99</sup>:

1727 թ. նույնպես անբարենպաստ տարի էր թուրքական բանակի համար: Այդ թվականին մղված մարտերից մեկի ժամանակ հայերը ոչնչացրին յոթ հազար թուրքական զինվոր, զրավեցին հրանոթներ: Պարսկաստանում աֆղանները էշրեֆ խանի գլխավորությամբ զախշախիչ հարվածներ էին հասցնում թուրքերին: Այստեղ գործող թուրքական բանակի գլխավոր հրամանատար Ալի փաշան հարկադրված օդնական զորք է խնդրում Գանձակի Սարի Մուստաֆա փաշայից, բայց վերջինս մեծ դժվարությամբ կարողանում է ընդունենք 300 զինվոր ուղարկել, այն պարզ պատճառով, որ հայկական սղնախները դեռևս նվաճված չեն, և Գանձակում նստած թուրքական փաշան իրեն ամենեին էլ ապահով զգալ չէր կարող:

Պարսկաստանում և Անդրկովկասում գործող թուրքական զորքերի վիճակը վատթարանում էր նաև ծայր առած սովոր:

99 ՌԱԶԱ, գ. ԲՀՊ, գ. 9, թ. 194:

Հետևանքով: Բայց թուրքական բանակը սպասում էր օժանդակ ուժերի, որոնց թիվը, ըստ աղբյուրների, հազնելու էր 10 հազար հոգու՝ հրետանիով հանդերձ: Սրանք ստանալուն պես Սարի Մուստաֆան մտադիր էր ամբողջ ուժով հարձակում սկսելու սղնախների և նրանց օժանդակող աղբբեշանցիների դեմ<sup>100</sup>:

Արխիվային փաստաթղթերը հիմք են տալիս եղրակացնելու, որ չնայած 1726—1727 թթ. տեղի ունեցած մի շարք հարձակումներին, թուրքական բանակին չի հաջողվել նվաճել հայոց սղնախները: Այդ բանը Սարի Մուստաֆային չի հաջողվել նույնիսկ 1727 թ. օգոստոսին, երբ նա, ըստ երևութին, արդեն ստացել էր վերոհիշյալ օգնական ուժերը: Նոր համալրումով Մուստաֆա փաշայի հարձակումը սղնախների վրա այս անգամ էլ վերջանում է անհաջողությամբ և նա ստիպված կրկին վերադառնում է Գանձակ<sup>101</sup>: Գեներալ-ֆելդարշալ վ. Վ. Դոլգորուկովի 1727 թ. սեպտեմբերի 30-ի գեկուցագրում ասված էր, որ սղնախները դեռևս թուրքական հպատակություն չեն ընդունել<sup>102</sup>:

Ավելին, ստորև լուսաբանվող փաստերը ակնառու վկայում են, որ պայքարը թուրքերի դեմ սղնախներում շարունակվել է ընդհուպ մինչև 1730 թվականը, թեև 1728—1730 թվականներին սղնախների բնակչության նյութական և ռազմաստրատեգիական դրությունը գնալով ծանրացել էր բազմաթիվ պատճառներով: Դրանք էին՝ բնակչության երկրագործական աշխատանքների նորմալ ընթացքի ընդհատումը, ուստական

100 ՌԱՔԱ, ֆ. ՌՀՊ, գ. 4, թ. 88ա—88բ:

101 ՌԱՔԱ, ֆ. ՌՀՊ, գ. 11, թ. 16բ—27ա:

102 Նույն տեղում, գ. 8, թ. 93բ:

զորքերի օգնության շհասնելը և այլն։ Աղդեց նաև կաթողիկոս  
 Եսայի Հասան-Ջալալյանի մահը, որ տեղի ունեցավ 1728  
 թվականին։ Թեև թուրքերը մինչև այդ կրկին պարտություն  
 էին կրել սղնախներից, բայց սղնախների ղեկավարները  
 փնտրում են հաջող պայքարի նոր ուղիներ։ Ավան յուղբաշխն  
 մի քանի անձանց հետ և փոքրաթիվ զորախմբով նախ անց-  
 նում է Հյուսիսային Պարսկաստան՝ տեղում միացյալ ձակատ  
 ստեղծելու համար։ Սակայն զգալով տեղական ուժերի անզոր  
 վիճակը, գալիս է Բաքու՝ Ռումյանցեի մոտ և նրան առաջար-  
 կում միասին շարժվել թուրքերի դիմ<sup>103</sup>։ Այս բոլորի մասին  
 մենք տեղեկանում ենք Ռումյանցեի գեկուցադրից։ Սակայն  
 Ռումյանցեը ոչ միայն մերժում է համատեղ պայքարի մասին  
 Ավան յուղբաշխու առաջարկությունը, այլև զանազան պատրր-  
 վակներով արգելքներ է ստեղծում՝ նրա սղնախներ վերա-  
 դառնալու դիմ<sup>104</sup>։ Ռումյանցեի այդ արարքի մեջ ամենից առաջ  
 պիտի տեսնել նրա ձգտումը՝ հարազատ մնալու թուրքիա-  
 յի նկատմամբ այդ ժամանակ ուստական կառավարության  
 վարած քաղաքականությանը և առիթ չտալու թուրքիայի հետ  
 որևէ ընդհարման։ Բացի դրանից, Ավանի ձեռնունայն, առանց  
 ուստական օգնական ուժերի վերադարձը սղնախներ տեղացի  
 բնակչության աշքում անպայման կցցեր ուստական կողմի  
 հեղինակությունը։ Ռումյանցեը, ըստ երկուցին, գիտակցում  
 էր այդ և շանում էր նրան պահել Բաքվում։

Զնայած Ավան յուղբաշխու բացակայությանը, սղնախները  
 չեն դադարեցնում պայքարը։ 1729 թ. սղնախները կրկին  
 հաղթանակ են տանում թուրքերի դիմ։ Այդ հաղթանակի մա-

<sup>103</sup> ՌԱՔԱ, ֆ. ԲՀՊ, գ. 6, թ. 97:

<sup>104</sup> Նույն տեղում, թ. 26—27:

սին օգոստոսին Շամախուց Ռեշտ և կած թիֆլիսաբնակ Մովսես Մարտիրյանը հայտնում էր, որ սղնախի հայերը բազում թուրք են կոտորել «այնքան շատ, որ ոչ մի ճակատամարտում այդշափ թուրք չէր կոտորվել»<sup>105</sup>; Նույնն է հաղորդում զավվինցի Ալմուհամմեդ Արքերդիկը: «Թուրքերը,—զրում է նա, —որ գնացել էին սղնախի հայերի դեմ, պարտվել են հայերից և որ այդ թուրքերը կատաղելով սղնախի հայերի դեմ, Ղափանի հայերից շատ-շատերին գերել և բերել են Թավրիզ, որտեղ և վաճառում են գերիներին տեղի վաճառականներին: Արդեկի փաշան զորախումը է ուղարկել Մուղան՝ շահսեանցիների դեմ, վերջիններս զախշախել են այդ թուրքերին»<sup>106</sup>:

1729 թ. Սարի Մուստաֆա փաշան, շկարողանալով սեփական ուժերով վերջնականապես ընկճել սղնախցիների դիմագրությունը, դիմում է Սուրխայ-խանին, խնդրելով նրանից օգնական ուժ: 1729 թ. Հուլիսի 24-ին հայտնելով այդ մասին Ռումյանցկին, հայերը նրանից խնդրում են կամ զորք ուղարկել, կամ գոնք Շամախին գրավել, որպեսզի իրենք հնարավորություն ունենան ուստաների հետ միավորվելու<sup>107</sup>: Սակայն ոչ մեկը և ոչ էլ մյուսը ձիրագործվեց: Ռուսական կայսրությունը ուներ իր քաղաքական հաշիվները, որոնցից այն կողմ նա բոլորովին էլ չէր ուղում ոտք դնել:

Սուրխայը, երկյուղ կրելով ուստաներից, հրաժարվում է իր զորքից օգնական ուժ ուղարկել Մուստաֆա փաշային: Վեր-

105 ՌԱՔԱ, ֆ. ՌՀՊ, գ. 1, թ. 20, տե՛ս սույն փաստը հաստատող ևս մի վկայություն՝ նույն ֆոնդի գ. 3, թ. 101ա—101, 106բ—107:

106 ՌԱՔԱ, ֆ. ՌՀՊ, գ. 3, թ. 118ա—118բ:

107 ՌԱՔԱ, ֆ. ՌՀՊ, գ. 16, թ. 51բ:

շինս Ալի և Իսմեյ սուլթանների զինակցությամբ մի նոր հարձակում է ձեռնարկում սղնախների դեմ, բայց, ինչպես վկայում է գեներալ Ռումյանցելը, թե՛ Հիշյալ սուլթանների հրոսակախմբերը և թե՛ թուրքերը խիստ մեծ կորուստներ կրելով՝ ջախջախված վերադառնում են Գանձակ<sup>108</sup>: Այս հաղթանակի մասին Աբրահամ յուղբաշին վարդապետ Կիրակոսին գրել է. «Գանձակի մոտ գտնվող քոչվորներից մի մասը Կուր գետի այն կողմն է անցել, մի մասն էլ եկել է մեղ մոտ, այս տարի աստծո ողորմածությամբ և նորին կայսերական մեծության երջանկությամբ բազմաթիվ թուրք ենք կոտորել և նրանց մեծ երկյուղ ներշնչել, թուրքերը մեղ չեն կարողանում դիմագրել, սակայն թուրքերը մեղ այժմ սպառնում են, որ թեկուզ փողով Սուրբայից զորք կվարձեն և մեղ կոշնչացնեն: Մենք էլ հենց դրանից ենք վախենում»<sup>109</sup>:

Թե ի՞նչ պայմաններում էին ապրում և պալքարում սըղնախի հայերը՝ պարզ երևում է այն նամակից, որ Ավան յուղբաշին և իվան Կարապետը գրել են 1726 թ. ապրիլին ուս գեներալներին: Նրանք հայտնում էին, թե իրենք բնակվում են լեռներում, քարանձավլներում, առանց վարուցանքի, «անցյալ տարիներին եղել է սովլ, և որ այս պայմաններում երկար դիմակայել հնարավոր չի լինի»<sup>110</sup>:

Եվ իրոք, թեև Կիրակոսին գրած նամակում Աբրահամ, Ավագ, Եսայի, Ալավերդի յուղբաշինները հավաստում են թուր-

108 Նույն տեղում:

109 Նույն տեղում, թ. 59—60թ:

110 ԹԱՔԱ, ֆ. ԹՀՊ, գ. 7, թ. 292:

քերի դեմ տարած հաղթանակի և նրանցից վախ չունենալու մասին, սակայն պետք է կարծել, որ Եսայի կաթողիկոսի մահից, Ավան և Թարլսան յուղբաշխների ու իվան Կարապետի հեռանալուց հետո աստիճանաբար նվազել է սղնախների դիմադրական կարողությունը, և բնական է, որ այդպիսի պայմաններում Հայոց սղնախները չեին կարող տարիներ շարունակ դիմադրել պարբերաբար Համալրվող թուրքական կանոնավոր բանակին, որին զինակցում էին նաև զանազան լիոնական ֆեոդալներ իրենց հրոսակախմբերով, ուստի 1730 թը վականը, եղավ սղնախների անկման տարին:

Արտաքին գործերի կողեգիա հնած իր վեկուցագրում 1730 թ. օգոստոսի 29-ին գեներալ Ռումյանցել Հայտնում է, թե Բաքու ևն ժամանել Աբրահամ, Զելաղան, Ալավերդի, Բաղիր, Սիմեոն յուղբաշխները, որոնց հետ եկել են շուրջ 137 մարդ: Գալով Բաքու վերջիններս Հայտնել են, որ թողել են սղնախները, որովհետև Հարթավայրում ընկած Հայկական գյուղերը և մելիքները Հարկապրված Հպատակություն են Հայտնել թուրքերին, և որ սղնախի ժողովուրդը այլևս ի վիճակի վիճակով շարունակել պայքարը խնդրել է թողնել սրդնախները և հեռանալ այլուր<sup>111</sup>:

Թեև սղնախների պայքարը Հիմնականում ավարտվեց 1730 թ., սակայն, ինչպես վկայում են արխիվային փաստերը, նույն Աբրահամ յուղբաշխն մեկ տարի անց վերստին վերադառնում է սղնախներ և շարունակում տարտիղանական պայքարը թուրք նվաճողների դեմ:

111 ՌԱՔԱ, գ. ԲՀՊ, գ. 16, թ. 155ա—155բ:

Սղնախների հետ միասին թուրքական նվաճողների դեմ ազատագրական պայքար էր մղվում Սյունիքում։ Սկզբում, մինչև 1725 թ. վերջը կամ 1726 թ. սկիզբը այն զեկավարում է Դավիթ-Բեկը, իսկ նրա մահից հետո՝ Մխիթար Սպարապետը։

Նախիջևանում գտնվող թուրքական փաշան փորձեր է կատարում ստանալ Դավիթ-Բեկի համաձայնությունը թուրքերին հպատակվելու մասին։ Սակայն Դավիթ-Բեկը կտրուկ մերժում է փաշայի այդ առաջարկությունը։ «Թուրքական փաշան,—ասված է 1725 թ. արխիվային փաստաթղթերից մեկում,—նախիջևանից Դավիթ-Բեկի մոտ մարդ է ուղարկել և պահանջել նրանցից հպատակվելու սուլթանին։ Սակայն Դավիթ-Բեկը վճռականորեն մերժել է այդ առաջարկը և հայտարարել, որ ինքը նրանց (իմա թուրքերին—Վ. Մ.) հպատակվել չի կամենում և մինչեւ իր կյանքի վերջը կպայքարի նրանց դիմ»<sup>112</sup>։

Այս փաստաթուղթը, ի միջի այլոց, հետաքրքիր է նաև նրանով, որ արխիվային հազվագյուտ մի վավերագիր է, որտեղ հիշատակված է Դավիթ-Բեկի անունը, այն էլ մի հայ վաճառականի կողմից։ Առհասարակ մենք այն կարծիքին ենք, որ լինելով Վախթանգ Ե-րդի կողմից ուղարկված անձնավորություն՝ Դավիթ-Բեկը, հավանաբար, այդ պատճառով էլ ինքը անձամբ գրագրություն չի վարել ուստական կողմի հետ, ուստի և փաստաթղթեր չի ստորագրել։ Դրանով էլ, ըստ երեվույթին, պիտի բացարել արխիվներում նրա ստորագրությունը կրող փաստաթղթերի բացակայությունը։ Բացի գրանից,

112 ՌԱՔԱ, ֆ. ՌՀՊ, գ. 5, թ. 335ր:

իր կտրվածության հետևանքով Սյունիքը հնարավորություն չի ունեցել կանոնավոր կապ պահպանել ոռուսական կողմի հետ:

1725 թ. պարտություն կրելով Դավիթ-Բեկի զորքերից, թուրքերը շրաժարվեցին Ղափանը նվաճելու իրենց մտադրությունից: Մեկ տարի անց, 1726 թ. գարնանը՝ թուրքական զորքերի մհծաքանակ ուժերը կրկին ներխուժեցին Սյունիք: Բերքիր-փաշայի և Արաբ-Ալի փաշայի հրամանատարությամբ Ղափանի սահմանները մտած թուրքական զորքերին միացան Սյունիքի ազատագրական շարժման սխերիմ թշնամի Բարդուշատի սուլթան Ֆաթալի խանը, ինչպես նաև որոշ հայեր՝ Մելրիի, Զավլնդուրի, Ղափանի և Ագուլիսի շրջաններից:

1726 թ. Հալիձորում, Մխիթար Սպարապետի և Տեր-Ավետիսի զլխավորությամբ, ազատագրական շարժման մասնակիցները պարտության են մատնում թուրքական զորքերին: Թուրքական բանակը Հալիձորում կորցրեց 12.000 մարդ, մարտի դաշտում թողնելով նաև 148 զրոշակ<sup>113</sup>: Հալիձորի մոտ տարած հաղթանակից հետո Մխիթար Սպարապետին հաջողվեց ամբողջ Ղափանից դուրս քշել թուրքական զորքերին:

Դրանից հետո Մխիթարը ձեռնարկեց Մեղրիի ազատագրման գործը: Նրան հաջողվում է ժողովել թուրքերից փախած և լեռներում ապաստանած մեղրեցիներին, կազմակերպել և դարան մտնել Մեղրիի մերձակայքում: Մխիթար Սպարապետը և Տեր-Ավետիսը իրենց մարդկանցով սուսերամերկ հարձակվում են Մեղրիի բերդում եղած թուրքերի վրա: Նրանց հաջողվում է կոտորել պահպաններին և բացել դարբասները: Միա-

113 «Ընտիր պատմութիւն...», էջ 52:

ժամանակ թուրքերի վրա հարձակվում են դարան մտած մեղրեցիները։ Թուրքերը հարկադրված փախչում են։ Միսիթար Սպարապետը և Տեր-Ավետիսը շտապում են կտրել նահանջող թուրքական զորքի ճանապարհը, «...որն անցնում էր Արաքսի կիրճով, ուր Մեղրիի քարավաղներն են, ուր Արաքսի վրա Մեղրիի կողմից ցցվում են ժայռեր և այդ ժայռերով էլ անցնում է դժվար ու երկար ճանապարհը, որ թուրքերեն լեզվով կոչվում է Ուզուն-Բենդ (երկար անցք)»<sup>114</sup>։

Օսմանցիները մտնում են կիրճը ու ընկնում թակարդի մեջ։ Այս կովում թուրքերը մեծ կորուստ կրեցին, հայերին հաջողվեց շատ ավար վերցնել, գրավել և այրել հարկացուցակները։ Սակայն այդ հաջողությունները տեսական չէին կարող լինել, որովհետև փոքրաթիվ զորքով հնարավոր չէր երկարատև դիմադրություն ցույց տալ թշնամու դերադանց և շարունակ համալրվող բանակին։ Հետագա դիմադրության անհուսալի հեռանկարն ու նրա հետեանքների վտանգավորությունը առաջ են բերում երկպառակություն Սյունիքի ազատագրական պայքարի դեկավարության շրջանում։ Տեր-Ավետիսը հուսալքված գլորվում է դավաճանության ճահիճը, անցնում է թուրքերի կողմը։ Մեր կարծիքով Տեր-Ավետիսի այս քայլը կարելի է բացատրել միայն այն հանդամանքով, որ նա այլև չէր տեսնում պայքարը շարունակելու հնարավորություններ, մանավանդ որ ոուսական սպասվող ուղմական օգնությունը այնպես էլ չեկալ։

---

114 Հեռ, Հայոց պատմոթյուն, հ. 3, էջ 691։

Սյունիքի ազատագրական պայքարի հանդեսի թշնամական դիրք էին բռնել նաև Ագուլիսի հայ խոջանները՝ Մելիք Մուսիի գլխավորությամբ։ Ըստ երեսութին նրանց այդօրինակ վարմունքի մեջ գեր է խաղացել նաև այն հանդամանքը, որ ագուլիսցինները կապված լինելով թուրքական շուկաների հետ, չեին ցանկանում դիմադրել թուրքերին։ Այդ պայմաններում թուրքերը, նոր համալրում ստանալով, նորից պաշարեցին Հալիձորը, որտեղից Միհթար Սպարապետը հարկադրված եղավ քաշվել ինձորեսկ, ուր և սպանվեց դավաճանների կողմից 1727 թ.։

Դավիթ-Բեկի ոլխավորած ազատագրական շարժումը սկսեց վայրէջք ապրել։ Ազատագրական պայքարը Ղափանում, Ղարաբաղում, ինչպես և Անդրկովկասի այլ վայրերում շասավ իր նպատակին, որովհետեւ քաղաքական հոգեվարք ապրող սեֆյաններին եկան փոխարիննելու թուրք զավթիչները, թուրքական բանակը հանդիսացավ Անդրկովկասի ժողովուրդների XVIII դարի առաջին երեսնամյակի ազատագրական ընդվզումների դահիճը։ Այդ պայքարը պարտվեց նաև այն պատճառով, որ չիրականացվեց բազմիցս խոստացած ուսական ռազմական օդնությունը։ Այդ մասին, սակայն, կիսունք առանձին։

Ազատագրական պայքարի թույլ կողմերից էր նաև այն, որ շնայած Անդրկովկասի ժողովուրդների համատեղ պայքարին գոյություն ունեցող ֆեոդալական հարաբերությունները իրենց բացասական ազգեցությունն ունեցան այդ պայքարի վրա։

Անդրկովկասում գործող թուրքական բանակը 1725 թ. դարնանը հրաման էր ստացել հարձակում սկսել երկու ուղղությամբ՝ Թիֆլիս-Գանձակ-Ղարաբաղ և Երևան-Խոյ-Թավրիզ: Որպեսզի Թավրիզի ուղղությամբ գործող բանակի թիկունքը ապահով դարձնի, թուրքական հրամանատարությունը ձգտում էր ոչնչացնել հայերի ղինված ուժերը Ղարաբաղում և Ղափանում: Այդ նպատակով, ինչպես տեսանք, թուրքական զորքերը 1725 թ. մարտի սկզբներին շարժվեցին Գանձակից դեպի Ղարաբաղ և Նախիջևան-Օրդուքաղի կողմերից՝ դեպի Ղափան, սակայն նրանք ծանր պարտություն կրեցին հայկական զորքերի և նրան օժանդակող աղբբեջանական ուժերի կողմից Գանձակում և Ղարաբաղում, իսկ Դավիթ-Բեկի կողմից՝ Ղափանում:

1725 թ. փետրվարին թուրքական բանակը Երևանից շարժվեց դեպի Թավրիզ, սակայն այդ ճանապարհը անցնելու համար հարկավոր եղավ մոտ չորս ամիս: Թուրքական բանակի այդ «դանդաղաշարժությունը» բացարձում է այն հանդականքով, որ նա իր ճանապարհին հարկադրված էր հաղթաբարելու տեղական ազգաբնակչության, հատկապես հայերի համառ դիմագրությունը:

Վերը արդեն խոսվեց այն մասին, որ Ղարաբաղի մելիքների և պարսից կառավարության միջև հաշտություն էր կայացվել և պաշտպանական պայմանագիր կնքվել: Նույնը տեղի ունեցավ Դավիթ-Բեկի հետ: Ստեփաննոս Շահումյանը գրում է, որ 1727 թ. շահ Թահմազը իմանալով Դավիթ-Բեկի և նրա զորքի քաջագործությունների մասին, նվերներ և հրավարտակներ է ուղարկում Դավիթ-Բեկին, որով ճանաչում է.

նրա իշխանությունը և նույնիսկ նրան դրամ հատելու իրավունք շնորհում: Դավիթ-Բեկի կտրած դրամի մի երեսին գրված է շահ Թահմաղի անունը, իսկ մյուս երեսին գրված է. «Թրիստոսի ժառայ Դաւիթ»<sup>115</sup>:

Իրավացի է Պ. Հարությունյանը նշելով, որ հաշտությունը Դավիթ-Բեկի և շահ Թահմաղի միջև տեղի է ունեցել ոչ թե 1727 թ., այլ 1725 թ., այսինքն՝ Ղարաբաղի սղնախների հետ հաշտվելու ժամանակամիջոցին: Եվ հիրավի, 1727 թ. այն չեր կարող տեղի ունենալ նաև այն պատճառով, որ 1725 թ. օդուտուսին Թավրիզը գրավել էին թուրքերը և կազմ հայ զորապետների ու Թահմաղի միջև խղվել էր:

Հսկայական է Ղարաբաղում և Սյունիքում մղված աղատագրական կոփների նշանակությունը: Այդ նշանակությունը չի սահմանափակվում միայն նրանով, որ դրանք հայ ժողովրդի մղած աղատագրական պայքարի ամենափայլուն դրվագներից էին: Հայերի մղած աղատագրական պայքարը իր որոշակի դերն է խաղացել ժամանակի քաղաքական իրադարձություններում, մասնավորապես Ռուսաստանի, Թուրքիայի և Պարսկաստանի՝ Անդրկովկասում վարած քաղաքականության մեջ՝ առաջինի համար խաղալով գրական և նպաստավոր դեր, իսկ վերջինների համար հանդիսանալով խոշոր խոշընդուռ նրանց նվաճողական նկրտումները իրականացնելու ճանապարհին:

Հայերի մղած աղատագրական մարտերը Ռուսաստանի համար, իրոք, խիստ ձեռնտու էին և նրա վարած քաղաքա-

115 «Աղատագրական հանդես», Թիֆլիս, 1904, գիրք 12, տե՛ս ե. Լալաջանի «Զանգեղուրի գալառ» հոդվածը, էջ 185:

կանությանը մեծապես նպաստող: Հայերի երկարատև պայքարը թուրքերի, սկզբում նաև պարսիկների դեմ հեշտացրեց ուստական զորքերի առաջխաղացումը Կասպիականի ափերով և նպաստեց նրանց այնտեղ ամրապնդվելու գործին: Սկսած 1723—1724 թվականներից պարսիկների համար ևս հայերի պայքարը խիստ ձեռնտու էր, որովհետև այն ուղղված լինելով թուրքական առաջխաղացող բանակների դեմ, մեծապես խոշոնդոտում էր վերջիններիս ռազմական գործողությունները, որոնց նպատակն էր արագորեն տիրել քայքայում ապրող Պարսկաստանին: Եթե վիճեր Սյունիքի և Արցախի սղնախների պայքարը, թուրքերը, անշուշտ, ավելի արագ կմաքրեին հաշիվները պարսիկների հետ: Իզուր չէր հետագայում նադիրը իր առաջխաղացման ժամանակ բարեհաջ Ղարաբաղի մելիքների նկատմամբ:

ԳԼՈՒԽ ԶՈՐՅՈՒԴ

ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՆԴԻՌԿՈՎԿԱԾԱԾ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ  
ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԼԱՆՆԵՐՈՒՄ 1722—1730 թթ.

Զնայած 1720 թ. ռուս-թուրքական պայմանագրին, պայքարը արևելյան Անդրկովկասի համար Ռուսաստանի և Թուրքիայի միջն, մանավանդ պարսական արշավանքից հետո, դնալով սաստկանում է, տեղի տալով դիվանագիտական բավականին լարված հակամարտության։ Ռուսական զորքերի գործողությունները Կասպիականի ափին ըստ առիթ էին տվել Թուրքիային՝ ռազմական նախապատրաստություն սկսելու արևելյան Անդրկովկասի և Պարսկաստանի դեմ։ Ինչպես թուրքական զորքերի ռազմական նախապատրաստությունների, այնպես էլ դեպի Անդրկովկաս և Պարսկաստան նրանց ձեռնարկած արշավանքների ժամանակ ռուսական դիվանագիտությունը շանում էր խոշընդուռել Թուրքիայի ագրեսիվ նպատակների իրականացումը։

Քանի որ ռուսական դիվանագիտության այդ քայլերը ուղղակիորեն առնչվում էին Անդրկովկասի ժողովուրդների աղատագրական պայքարի, նրա ընթացքի և երկրամասի քա-

ղաքական վիճակի հետ, ապա հույժ կարևոր է համառոտակի կանդ առնել դրանց լուսաբանման վրա:

1722 թ. Հոկտեմբերին Թուրքիայի մեծ վեզիրը, որ երկյուղ էր կրում ոռոսական զորքերից՝ նրանց թուրքերից առաջ Վրաստան մտնելու կապակցությամբ, որոշում է վաղօրոք ոռոսական դեսպանին պաշտոնապես հայտնել Թուրքիայի որոշումը՝ Արևելյան Վրաստան զորք ուղարկելու մասին։ Նրա հանձնարարությամբ թուրքական թարգմանիչը Նեղլյուսկին տեղեկացնում է, որ Բարձր Դուռը տեղեկություն ստանալով սահմանապահ փաշաներից վրացիների ապատամբության մասին պարսկական շահի դեմ և Բարձր Դուան սահմանների ու լեզգիների վրա նրանց հարձակումների մասին, խորհրդակցություն է կայացրել, հրամայել է էրզրումի փաշային 50.000 զորքով մտնել «վերոհիշյալ պարսկական Վրաստան և Թիֆլի քաղաքը», ստիպել վրացական իշխանին, որպեսզի «նաուզ ոքի հովանավորության ներքո շանցնի» և լեզգիների ու Բարձր Դուան հպատակների վրա շհարձակվի<sup>1</sup>: Իր այդ ազգիսիան Թուրքիան փորձում էր քողարկել «սեփական անվտանգության» և «պարսից շահին պաշտպանելու» մասին ստահոդք հայտարարությամբ։ Էրզրումի իբրահիմ փաշային հոկտեմբերի 10-ին հրամանագիր է իշեցվում աշնանը զորքով (կամ թեկուղ ձմռանը) շարժվել Թիֆլիսի վրա<sup>2</sup>: Թուրքական հայտարարությունը ավարտվում էր այն երեսպաշտ խոսքերով, թե փաշային հրամայված է, որ եթե «այդ վայրում թուրքական զորքերը հանդիպեն ոռոսական զորքերի հետ, ապա այդ դեպ-

1 ՈԱՔԱ, ֆ. ՌՀՊ, 1722 թ., գ. 6, մ. 1, թ. 402:

2 Նույն տեղում։

քում էլ գժտության շնչին առիթ անդամ շտալ, այլ բարեկամական վերաբերմունք ունենալ, ինչպես ծովում նավերը բարեկամաբար հանդիպում են և ոչ մի գժտություն չի լինում, և դրանից բարեկամության մասին ոչ մի կասկած չի կարող լինել»<sup>3:</sup>

Թուրքիան, այսպիսով, եռանգուն կերպով պատերազմի էր նախապատրաստվում: Այդ ժամանակ սուլթանական դիվանում հաղթանակել էր ծայրահեղ ազրեսիլ խմբավորումը, որն անհապաղ պատերազմական գործողություններ սկսելու կողմնակից էր: Սակայն Թուրքիան մինչև 1723 թ. գարնանը, իրոք, չկարողացավ պատերազմական գործողություններ սկսել. դա այնքան էլ դյուրին գործ չէր նրա համար:

Վեղիրը, որ հրաման էր արձակել Արևելյան Վրաստանը գրավելու մասին, այդ գործը ամբողջովին վստահել էր էրզրումի փաշային: Վերջինս հայտնում էր, որ 1723 թ. գարնանից վաղ<sup>4</sup> շի կարող ձեռնարկել արշավանք դեպի Վրաստան: Փաշան փորձում էր իր նպատակին հասնել ավելի շուտ դիվանագիտական հանապարհով, քան թե ուազմական գործողությունների միջոցով: Ինչպես առիթ ենք ունեցել ակնարկելու, նա ձգտում էր ազգել Վախթանգ Ե-րդի վրա և հարկադրել նրան՝ ընդունելու թուրքական հովանավորությունը:

Թուրքիան Ռուսաստանի դեմ լուրջ պատրաստություններ էր տեսնում նաև Ղրիմում: Թուրքական կառավարությունը Պետրոս I-ինի հետ անձանք բանակցելու համար Պետերբուրգ ուղարկեց Մահմեդ ազային, որին հանձնարարված էր նաև

<sup>3</sup> Նույն տեղում:

<sup>4</sup> Նույն տեղում, թ. 489—490, մ. 2, թ. 463:

Հետախուզություն կատարել Ռուսաստանում, ինչպես և բանակցել Ղրիմի խանի հետ Ռուսաստանի դեմ պատերազմ սկսելու խնդրի շուրջ։ Թուրքիայի բոլոր մարզերը հրամանագրեր իշեցվեցին պատերազմական գործողություններին նախապատրաստվելու վերաբերյալ, իսկ դեպի Աղով և էրզրում անընդհատ ռազմական հանդերձանք և զենք էր ուղարկվում։ Միաժամանակ Թուրքիան բանակցություններ էր վարում Անգլիայի հետ՝ Ռուսաստանի դեմ դաշինք կնքելու նպատակով։ Ռուսաստանի հարավային սահմաններում հաճախակի էին դարձել թաթարական ներխուժումները, աշխուժացել էին թուրքական լրտեսների գործողությունները։

Այս բոլորի դեմ ռուսական կառավարությունը միջոցառումներ էր ձեռնարկում։ 1722 թ. նոյեմբերի 5-ին Ռուսաստանի ռազմական կոլեգիան հատուկ որոշում ընդունեց «Սահմանների վրա նախազգուշական միջոցներ ձեռնարկելու մասին» Ղրիմի և Կուբանի թաթարների, Զապորոժյեի և նեկրասովյան կազակների թշնամական հարձակումների դեպքում։ Ռուսականացում և Դոնում մինչև Յարկիցին սկսվեց աղդանշանային բուրգերի կառուցում՝ թշնամու ներխուժման դեպքում շտապ ազգարարելու համար։ Իսկ ռուսական դեսպանը Կոստանդնուպոլսում, համաձայն ստացված ցուցումների, ամեն միջոց ձեռք էր առնում, որպեսզի խանդարի Թուրքիային՝ նվաճելու արևելյան Անդրկովկասը։

Նեպլյումը անձամբ ձեռք առավ անվտանգության նախնական միջոցներ՝ Թուրքիայի հետ պատերազմ ծագելու դեպքում։ Նա բանակցել էր Կոստանդնուպոլսում հոլանդական դեսպանի հետ, որպեսզի նրա միջոցով կապ պահպանի իր կառավարության հետ։

1722 թ. նոյեմբերի 10-ին Պետերբուրգում՝ արտաքին գործերի կողեզիայում հատուկ «գաղտնի խորհրդակցություն» հրավիրվեց, որին կողեզիայի անդամներից զատ, մասնակցում էին Ա. Մենչիկովը, Ի. Բրյուսովը և Գ. Դոլգորուկովը: Խորհրդակցությունը քննարկեց Նեպլյուկի հոկտեմբերի 3-ի, 7-ի և 13-ի զեկուցագրերը և որոշում ընդունեց՝ նրան հատուկ հրավարտակ ուղարկել: Նեպլյուկին հրամայվում էր անհասկալ կրկնել Ռուսական զորքերի Մերձկաստյան շրջանները արշավելու պատճառների մասին հայտարարությունը, ինչպես այդ իր ժամանակին հայտնվել էր Մահմեդ ազային և Թուրքական կառավարությանը: Ռուսական կառավարությունը ձգտում էր դիվանագիտական հանապարհով հասնել այն բանին, որպեսզի Թուրքական բանակը շմացվի Անդրկովկաս, որա համար էլ Թուրքիայից գաղտնի էր պահում իր դաշինքը Վախթանգ Ե-րդի հետ, իսկ վրաց թագավորի Գանձակ գալը բացատրում պարսից շահի հանձնարարությունը կատարելով:

Միաժամանակ Նեպլյուկին հանձնարարվում էր հաստատապես հայտնել Թուրքական կառավարությանը, որ Ղրիմի խանի և Ռուսաստանի սահմանակից Թուրքիայի հպատակության ներքո գտնվող խանությունների պատերազմական նախապատրաստություններից ելնելով՝ Ռուսական կառավարությունը անհրաժեշտ է գտնում սեփական սահմանները պաշտպանելու համապատասխան միջոցներ ձեռնարկել: Եթե Թուրքիան, չնայած այդ ամենին, այնուամենայնիվ պատերազմական գործողություններ սկսեր, Ռուսական դեսպանը պարտավոր էր գրավոր բողոք հայտնել և նշել, որ Թուրքիան առանց պատճառի խախտում է «հավիտենական խաղաղությունը»:

Այսպիսով, ոռւս-թուրքական հարաբերությունները, ոռւսակառ զորքերի Մերձկասպյան շրջանները արշավելու հետևանքով, խիստ բարդացել էին և կարելի էր սպասել, որ տեղի կունենա ռազմական ընդհարում: Սակայն ոռւսական գեսպանը, որն ամեն միջոց գործի էր դնում խաղաղությունը ապահովելու համար, կարողացավ մեղմացնել լարված դրությունը:

1722 թ. դեկտեմբերի 20-ին Նեպլյուկը պաշտոնապես հայտնեց թուրքական կառավարությանը Պետրոս 1-ինի Աստրախան վերադառնալու մասին: Այս հանդամանքը որոշակի ազգեցություն ունեցավ թուրքական կառավարության վրա: Վեղիրը հայտարարեց, որ Պետրոս 1-ինի վերադարձը ամեն տեսակի կասկածները վերացրեց Թուրքիայում և որ Թուրքիան ճգուտմ է պահպանել և ամրապնդել բարեկամությունը Ռուսաստանի հետ<sup>5</sup>: «Թուրքական մինիստրները,—գրում էր Նեպլյուկը Պետրոս 1-ինին 1722 թ. դեկտեմբերի 25-ին, —Զերդ մեծության վերադարձի առթիվ դոհունակություն են հայտնում»<sup>6</sup>:

Ռուսական կառավարությունը միաժամանակ սկսեց բանակցությունները Պետերբուրգ ժամանած թուրքական դեսպան Մահմեդ աղայի հետ: Թվում էր, թե ամեն ինչ արված է ոռւս-թուրքական հարաբերությունները կարգավորելու և այդ հարաբերություններին բարեհաջող ընթացք տալու համար: Սակայն իրականում ստացվեց հակառակը: Թուրքիան որոշեց օգտվել ռուսական զորքերի վերադարձից և իրականացնել Անդրկովկասը նվաճելու իր ծրագիրը: Իր ագրեսիան հաջող

6 Ա. Սուլովյով, նշվ. աշխ., էջ 694:

6 ՌԱՔԱ, ֆ. ԲՀԹ, դ. 6, մ. 2, թ. 506:

կերպով գլուխ բերելու համար թուրքական կառավարությունը վճռեց պաշտոնապես իր հովանավորության տակ վերցնել Դառւդ-բեկին։ Այդ նպատակով նրան ուղարկվեց սովորական հրավարտակ, որով հաստատվում էր նրա անցումը թուրքական հովանավորության ներքո։ Փոխարենը Դառւդ-բեկին շնորհվում էր խանի կոչում և ճանաշում էին նրա իրավունքները ողջ Դաղստանի և Շիրվանի նկատմամբ։ Դաղտնի կերպով նրան հանձնարարվում էր ամեն զանք գործադրել Կասպիականի ափերից ուստական կայազորները վտարելու համար։

Զնայած Վրաստանի նկատմամբ հավակնություններ չունենալու վերաբերյալ ուստական կառավարությանը աված իր հավաստիացումներին, Թուրքիան, ինչպես վկայում է նեպլազումի 1723 թ. հունվարի 24-ի զեկուցագիրը, կրկին հրաման ուղարկեց էրզրումի փաշային, որպեսզի սա «...ամեն միշոց ձեռնարկի Վրաստանը թուրքական գերիշխանությանը ենթարկելու» համար<sup>7</sup>։ Թուրքիան ձգտում էր էրզրումի փաշայի միշոցով «...վրաց իշխանին հաշտեցնել Դառւդի հետ», նրան ճանաշել տալ «Բարձր Դուան հովանավորությունը» հետեւալ պայմաններով՝ վրացական պետությունը հանձնվում է Վախթանգի ժառանգական տնօրինությանը։ Բարձր Դուռը նրան ճանաշում է որպես այնտեղի քրիստոնյա իշխանների զլխավոր վախթանգի կողմից այս պայմանները շընդունելու դեպքում փաշային հանձնարարվում էր ահաբեկել նրան, «...որ նա օսմանյան զենքով կպրկվի իր տիրապետությունից և նրա տեսլությունը ծայրահեղ քայլքայման կհասցվի»<sup>8</sup>։ Այս բոլորի հետ

7 ՌԱՔԱ, ֆ. ՌՀԹ, 1722 թ., գ. 4, թ. 38:

8 Նույն տեղում, թ. 55—56։

միասին նեղլյոււել ուղղակի հայտնում էր ոռւսական կառավարությանը, թե քանի որ վրացիները, ունենալով ոռւսական կողմնորոշում, չեն ընդունի թուրքական այս առաջարկները, ապա թուրքական բանակը կշարժվի Վրաստանի վրա<sup>9</sup>:

1723 թ. փետրվարի 10-ին վեղիրը պաշտոնապես հայտնեց Ներլյոււելին՝ Դառնդ-բեկի կողմից թուրքական հովանավորությունը ընդունելու մասին: Նա միաժամանակ ասաց, որ եթե Պետրոս 1-ինը նոր արշավանք կսկսի Կասպիականի ափերին, այնժամ Դառնդ-բեկի զորքը կմիավորվի Միր-Մահմուդի զորքին և միասին կարշավեն ոռւսների դեմ, իսկ Թուրքիան էլ նման պարագայում պատերազմ կհայտարարի Ռուսաստանին<sup>10</sup>:

Անգլիական կառավարող շրջանների քաղաքականությունը, որն ուղղված էր Ռուսաստանի դեմ, թևավորում էր թուրքերին: Անգլիական դեսպանը գետես 1723 թ. սեպտեմբերին, ինչպես այդ դադանի կերպով իմացել էր Նեղլյոււել, թուրքիային հուշագիր էր հանձնել, ուր ասված էր, թե պրուսական արքունիքից ստացված տեղեկությունների համաձայն, Պետրոս 1-ինը մտադրվում է արշավել Դաղստան և ոռւսական տիրապետությունը տարածել մինչև Սև ծովը: Անգլիական դեսպանը հրահրում էր Թուրքիային, թե շատեք է վախենալ Ռուսաստանի դեմ պատերազմելուց, քանի որ բոլոր ևլրոպական պետությունները թշնամաբար են տրամադրված Ռուսաստանի նկատմամբ և այդ իսկ պատճառով Պետրոս 1-ինը չէ կարող հաջողություն ունենալ<sup>11</sup>:

9 ՌԱՔԱ, ֆ. ՌՀԹ, 1723 թ., գ. 5, թ. 160:

10 ՌԱՔԱ, ֆ. ՌՀԹ, 1724 թ., գ. 6, թ. 405:

11 Ս. Մ. Սուլովյով, նշվ. աշխ., էջ 695 (ռուսերեն):

Թիկունք ունենալով Անգլիային՝ թուրքական կառավարությունը պահանջեց ոռոսական զորքերը դուրս հանել Կասպիականի ափերից, սպառնալով հակառակ գեպքում պատերազմ սկսել: Թուրքերը հուսով էին, որ Պետրոս 1-ինին կհարկադրեն թողնել Անգրիովկասը: Սակայն հեշտ չեր վախեցնել Պետրոսին, որը Կասպից ծովի ափերի գրավումը համարում էր Բալթիկ ծովի ափերի միացման անհրաժեշտ լրացումը: 1723 թ. ապրիլի 9-ի հրովարտակում, որը ուղարկվեց Նեպլյուկին, Պետրոս 1-ինը մեծ վճռականություն է հանդես բերում Թուրքիայի ռազմական ձեռնարկումների գեմ, եթե դրանք կփորձեին ուղղվել Կասպիականի ափերի ոռոսական շրջանները գրավելու նպատակին: Նա գրում էր. «Եվ երբ Բարձր Դուռը լեզգիներին, որոնք մեր բացահայտ թշնամիներն են, իրենց խնդրանքով իր հովանավորության տակ է առնում, որը համաձայն հավիտենական խաղաղության, չպետք է արվեր և Բարձր Դուան տված հավաստիացումներին ուղղակի հակասում է, ապա Բարձր Դուռը առավելապես գեմ չպետք է լիներ, որ մենք էլ նրանց, ովքեր մեղ խնդրում են, և որոնք ոչ մի առջնշություն չունեն Բարձր Դուան հետ, նույնպես մեր հովանավորության ներքո վերցնենք առավել ևս, որ այդ վայրերը բավական հեռու են թուրքական տիրապետության սահմաններից և գտնվում են Կասպից ծովի մոտ, որին մոտենալ, ինչպես վերը նշվեց, մենք ոչ մի պետության թույլ չենք կարող տալ: Իսկ եթե Բարձր Դուռը, չնայած մեր պատասխանում ցուցաբերած բոլոր ներողամտությանը, կնքված հավիտենական խաղաղությունը առանց մեր կողմից որևէ չնշին պատճառի խախտել է կամենում, ապա նրանց նման ապօրինի արարքը մենք աստծո

պատաստանին ենք հանձնում, և պատերազմից բխող բոլոր  
շար հետևանքների և արյունահեղության համար մեղավոր  
շնչար լինի և աստծո օգնությամբ մեզ պաշտպանելու անհրա-  
ժեշտ միջոցներ կդանենք: Եվ քանի որ Բարձր Դուռը քեզ արած  
հայտարարությունից երեսում է, որ նա մեզ հետ պատերազմ է  
մտադիր սկսելու, և իրոք մեր սահմանների վրա ուղղմական  
պատրաստություններ է տեսնում, դրա համար էլ մենք նույն-  
ովես հրամայել ենք մեր բանակին նույն սահմանների վրա  
հավաքվել և անհրաժեշտ ուղղմական պատրաստություններ  
տեսնել, սակայն նրանց հրամայված է, որպեսզի ոչինչ հա-  
կառակ հավիտենական խաղաղության համաձայնագրի շարվի,  
միայն իրենց պաշտպանության համար պատրաստ լինեն»<sup>12</sup>:  
Ինչպես տեսնում ենք, երբ խոսքը վերաբերում էր Կասպիա-  
կանի ափերը կորցնելուն, կայսրը ոչնչի առաջ կանգ չէր առ-  
նում, ընդհուպ մինչեւ պատերազմի մեջ մտնելը. իսկ Վրաս-  
տանի և Հայաստանի հարցում, որոնք կանգնել էին թուրքա-  
կան ազրեսիայի գնմ-հանդիման և որոնց խոսառմներ էին  
տրված, անընդհատ զգուշություն էր ցուցաբերվում և խուսա-  
նավումներ կատարվում, և ի վերջո հայերն ու վրացիները  
պայքարում մնացին միայնակ:

1723 թ. ապրիլին Պետրոս 1-ինը, իրոք, սկսեց անհրա-  
ժեշտ նախապատրաստություններ տեսնել Թուրքիայի հետ  
պատերազմելու համար: Կայսրը Մ. Մ. Գոլիցինին գլխավոր  
հրամանատար նշանակեց Ուկրաինայում և հատուկ հրահանգ  
տվեց Թուրքիայի հետ ընդհարվելու դեպքում ձեռնարկվող

12 ՌԱԶՅ, ֆ. ՌՀԹ, գ. 3, թ. 29:

միջոցառումների վերաբերյալ, իսկ Մերձկասպյան շրջանները լրացրուիլ զորքեր ուղարկեց:

Պետրոս 1-ինը, այնուամենայնիվ, փորձում էր խուսափել թուրքիայի դեմ պատերազմելուց և ձգտում էր հարցերը կարգավորել խաղաղ ճանապարհով: Նա դիմեց անդամ մի շաբթ զիջումների: Նա համաձայն էր հրաժարվել լեզվիների նկատմամբ իր հարուցած պահանջներից և ճանաշել թուրքիայի հովանավորությունը նրանց վրա, միաժամանակ Վրաստան զորք չուղարկելու պայմանով, որ թուրքիան ճանաչի.

1. Մերձկասպյան շրջանների միացումը Ռուսաստանին.

2. Զորքեր չուղարկի իրան, Դալստան և Վրաստան,

3. Բնդհանրապես հրաժարվի որևէ հավակնություններ ունենալուց Արևելյան Վրաստանի նկատմամբ.

4. Արգելի լեզվիներին հարձակվել ուստական զորքերի կողմից գրավված տերիտորիաների վրա<sup>13</sup>:

Մինչ նեպլյուսը կստանար Կոստանդնուպոլսում Պետրոս 1-ինի այս ցուցումները, թուրքական կառավարությունը, օդարլվելով Արևելյան Վրաստանում ստեղծված իրազրությունից, որոշեց նվաճել այն և Արևելյան Հայաստանը: Դրա հետ միասին թուրքիան որոշ շափով մեղմացրեց հարաբերությունները ուստական գեսպանի հետ: Թուրքական կառավարությունը հուսով էր իր այդ վարմունքով թմբեցնել Ռուսաստանի զգոնությունը և կանխալ ուստական զորքերի մուտքը Անդրկովկաս: Ի. Նեպլյուսը 1723 թ. փետրվարի 22-ի գաղտնի զեկուցագրում նշում էր. «Ներկայումս թուրքերն իրենց մեղմ և նրբանկատ են ձեւացնում հետեւյալ մտադրությամբ, ու ցանկությամբ, որ-

13 Նույն տեղում, թ. 11—12:

պեսզի Զերդ գերազանցությունը Պարսկաստան արշավելուց  
հրաժարվի: Իսկ, ի միջի այլոց, թուրքերը մտադիր են տիրել  
Թիֆլիսյան Վրաստանը, և դրա հետ մեկտեղ ամբողջ Պարս-  
կաստանը, քանի որ թուրքերը երկյուղ են կրում Զերդ մհծու-  
թյան արշավանքից, որովհետեւ պարսից շահի որդին (որը  
Թավրիզում է զորքով հանդերձ) նույնպես և Թիֆլիսյան Վրաս-  
տանը նրանց՝ թուրքերին, չեն հպատակվում: Թուրքերը այն-  
պես են դատում, թե շահզագեն և վրացիները հակառակվում  
են ոչ թե հույս դնելով սեփական ուժերի վրա, այլ հայտնի է,  
որ նրանց հուսագրել է սուսական միապետը՝ օգնելու և իր  
հովանավորության ներքո վերցնելու խոստումով: Եվ եթե  
սուսական միապետը ներկա կամպանիայի ժամանակ Պարս-  
կաստան մտնի, ապա նման դեպքում անկասկած շահզագեն  
և վրացիք նրան կհպատակվեն, որի հետևանքով Զերդ մհծու-  
թյունը Պարսկաստանում շահած կլինի և նրանց՝ թուրքերին,  
վնաս կարող է հասցնել, մի բան, որ Զերդ մհծությունը՝  
պարզորոշ կերպով կարող է տեսնել թուրքական առա-  
ջարկներից, քանի որ նրանք ոչ շահզագեի, ոչ վրացիների մա-  
սին չեն հիշատակում, որովհետեւ նրանք թուրքերին չեն հպա-  
տակվում, և վերը շարադրված ամեն ինչ հավաստի է<sup>14</sup>:

Նեպլյուսը ձգտում էր կանխել թուրքական ինտերվենցիան՝  
Անդրկովկաս: Իրանի և Անդրկովկասի հարցի վերաբերյալ  
սուս-թուրքական բանակցությունները սկսելուց նա ջանում էր  
Թուրքիայից նախապես հավաստիացում ստանալ այն մասին,  
որ նա արևելյան Անդրկովկաս չի ներխուժի: Այդ դեպքում նա  
պարտավորեցնում էր, որ Թուսաստանը նույնպես ձեռնպահ

14 Նույն տեղում, գ. 5, մ. 1, թ. 167:

կմնա Վրաստան զորք ուղարկելուց: 1723 թ. ապրիլի 14-ի իր զեկուցագրում նեպլյուկը ուղղակի հայտնում էր, որ իրեն հայտնել են, թե Թուրքիան մտադիր է զորք մտցնել Վրաստան և իր հովանավորության տակ վերցնել լեզգիների ու Կասպիականի ափերը: Նա թուրքական վեղիրին առաջարկում է ողենք գործադրելուց ձեռնպահ մնալ» և պարտավորվել, որ «Բարձր Դուռը պարսկական այդ երկրները, շրացառելով նաև Վրաստանը, իր զորքը շմտցնի», մինչև որ հարցը կկարգավորվի ուստական կառավարության հետ<sup>15</sup>:

Սակայն Թուրքիան ակնհայտորեն խուսափում էր այս պայմաններն ընդունելուց: Նա միտում էր կանխել Ռուսաստանին, գրավել Քարթլին և Արևելյան Հայաստանը, ամրանալ արևելյան Անդրկովկասում և հարկադրել Ռուսաստանին՝ ճանաշելու Թուրքիայի իրավունքները զավթած երկրների նկատմամբ<sup>16</sup>: Զուտ ժամանակ շահելու մտադրությամբ թուրքական

15 Նույն տեղում, թ. 196:

16 Այս հարցի ասթիվ նեպլյուկը ապրիլի 14-ի զեկուցագրով հայտնում էր. «...մտածում էինք մենք (իմա նեպլյուկը և զե-Յոնակը—Վ. Մ.) բարեկամաբար, թե ինչու Թուրքերը այժմ զենք չգործադրելու մասին չեն խոսում, զրա իսկական պատճառը մեզ թվում է այն է, որ Թուրքերը կամենում են այդ ժամանակամիջոցում, մինչև որ Զերդ մեծության հետ համաձայնության կզան, հաստատապես տիրել վրացիներին, և այդ հարցը քննարկելիս՝ նրանց իրենցը համարեն, թե իբր նրանք կամովին են (Թուրքերի) հովանավորություն ընդունել: Կարող է նաև պատահել, որ նրանք Վրաստանի վրայով իրենց զորքերն են ուղում ուղարկել լեզգիների մոտ և միավորների շայխ Դառնդի հետ Շիրվանի մոտ, որպեսզի կարողանան իրենց նախկին պահանջների համաձայն այդ վայրերն իրենց վերցնել... Ինձ բոլոր բարեկամներս պնդում են, որ Բարձր Դուռը այդ ընթացքում կամենում է նախ Միր-Վեյսից պատասխան ստանալ, Վրաստանին տիրել և այնտեղ զորք մտցնել, նախքան

կառավարությունը հայտարարեց, որ մինչև հուլիսի 1-ը չի սկսի կոնֆերանսը ուուս դեսպանի հետ և շի ընդունի ֆրանսիական դեսպան դե-Բոնակին, որը ուուս-թուրքական բանակցություններում միջնորդի դեր էր կատարում:

Պետրոս 1-ինը անշուշտ գիտակցում էր Քարթլիի նշանակությունը, և զրա համար էլ որոշել էր այնտեղ ուղարկել երկու հաղարանոց մի ջոկատ՝ Ա. Բասկակովի գլխավորությամբ: Նա հուսով էր, որ զրանով կամրապնդի Վախթանգ Ե-րդի ուժերը, կողքորի նրան և կկասեցնի էրզրումի փաշայի մուտքը Վրաստան: Սակայն այդ որոշումը արդեն ուշացումով էր ընդունվել: Մուսական այդ ջոկատը շմտավ Վրաստան, և Թուրքիան կարողացավ կանխել Պետրոս 1-ինին: Ինչպես տեսանք, էրզրումի փաշան օգտագործեց Վրաստանում բորբոքված ներֆեղալական գժությունները, ներխուժեց Քարթլի և գրավեց Թբիլիսին: Եվ երբ թուրքական կառավարությունը արդեն հասել էր իր նպատակին, որոշեց կատարված փաստի առաջ կանգնեցնել Մուսատանին, բանակցություններ սկսել ուուս դեսպանի հետ, որպեսզի իր ուղածի պես վճռի իրանի և Անդրկովկասի հարցը: Այս բանակցություններում մասնակցություն ուներ ֆրանսիական դեսպան դե-Բոնակը<sup>17</sup>:

---

ինձ հետ բանակցությունների մեջ մտնելը, և այնժամ Վրաստանը իրենը կհամարի» (ՌԱՔԱ, ֆ. ՌՀԹ, 1723 թ., գ. 5, մ. 1, թ. 196):

17 Հարկ է նշել, որ ֆրանսիական դեսպանը իր կառավարության թուլավորմանը համաձայնեց ուուս-թուրքական բանակցություններում միջնորդի դեր ստանձնել միայն այն բանից հետո, երբ դե-Բոնակի միջոցով ֆրանսիական կառավարությունը հայտարարեց, որ մետաքսի առևտուրը այսուհետեւ էլ նույն ուղիներով դեպի Թուրքիա կցնա, ինչպես այդ լինում էր նախկինում և որ Մուսատանը ոչ մի խոշնդու չի հարուցի զրա դեմ (տե՛ս ՌԱՔԱ, ֆ. ՌՀԹ, 1723 թ. գ. 3, թ. 47—55): Թե որքան անաշառ էր ֆրանսիական դես-

Կոնֆերանսի առաջին նիստը տեղի ունեցավ 1723 թ.  
Հուլիսի 14-ին: Նիստի ժամանակ ուստական դեսպանը առաջարկ մտցրեց, որ մինչև քննարկվող հարցերի վերջնական լուծումը թուրքիան դադարեցնի պատերազմական գործողությունները և ձեռնպահ մնա որևէ նվաճում կատարելուց Անդրբկովկասում և Իրանում: Սակայն թուրքական կառավարությունը կատեզորիկ կերպով հրաժարվեց այդ առաջարկը ընդունել: Թուրքերը հայտարարեցին, որ իրը իրենք լիիրավ են ողջ Արևելյան Անդրբկովկասը տիրելու, քանի որ նախկինում այդ երկրներն իրենց են պատկանել, և այդ իսկ պատճառով ուրիշ ոչ ոք իրավասու չէ հավակնություններ ունենալ այդ տերիտորիաների նկատմամբ:

Ուշագրավ է թուրքական այս հայտարարությանը ներլլյուսի տված պատասխանը: Ծուսական դեսպանը մասնավորապես շեշտում էր Ծուսաստանի անզիջող ձգտումը կասպիականի ափերը պահպանելու ուղղությամբ, այնինչ Վրաստանի և Արևելյան Հայաստանի առթիվ, որոնց կոնկրետ վերաբերում էր թուրքական կողմի հայտարարությունը, նա նման վճռականություն հանդիս շբերեց: Արևելյան Անդրբկովկասի և Գիլանի նկատմամբ «օրինական իրավունքների» մասին թուրքական հայտարարության կապակցությամբ նա բավարարվեց

---

պան դե-Բոնակի միջնորդությունը, երեսում է թեկուզ նեպլյուսի հետևյալ տողերից. «...սակայն ես քաջ զիտեմ, թե ինչի համար են ֆրանսիացիք ջանում: Նրանք ցանկանում են, որ Զերդ մհծությունը (իմա Պետրոս 1-ինը — Վ. Մ.) Բարձր Դռան հետ հաշտությունը շխախտի և եթե ի վիճակի լինեին, կորոշեին թեկուզ Ռվարախնան տալ թուրքերին, միայն թե հաշտություն կայանա, քանի որ նրանք Ծուսաստանի մասին ավելի քիչ են մտահոգվում, քան Ֆրանսիայի (տե՛ս ՌԱՔԱ, ֆ. ՌՀԹ, 1724 թ., գ. 6, մ. 1, թ. 14):

միայն այն խոսքերով, թե անցյալում կատարված նվաճումները այժմ չեն կարող սահմանաբաժանման հիմք դառնալ պետությունների միջև։ Նա այս առթիվ հիշեցրեց, որ եթե այդ սկզբունքով դեկավարվենք, այնժամ Ռուսաստանը իրավունք կունենա պահանջներ ներկայացնել հենց Թուրքիայի մայրաքաղաքի նկատմամբ, քանի որ անցյալում ուստական զորքերը եղել են Կոստանդնուպոլսում<sup>18</sup>:

Թուրքական կառավարությունը նոր «փաստարկ» առաջարեց, նա հայտարարեց, թե Կասպիականի ափերում մահմեդականներ են բնակվում։ Նեպլյուեր սրան պատասխանեց, որ եթե հավատը սահմանազատիչ սկզբունք լինի, ապա այդ դեպքում ինչ իրավունքով քրիստոնյա ժողովուրդները Թուրքիայի իշխանության ներքո պիտի լինեն։

Այսպիսով, Ռուսաստանը ձգում էր, որպեսզի Թուրքիան ճանաչի Մերձկասպյան շրջանների նկատմամբ Ռուսաստանի իրավունքները և միաժամանակ ձեռնպահ մնա ինչպես արեվելյան Անդրկովկասը, այնպես էլ իրանը տիրելուց։ Սակայն Թուրքիան, որը հասցրնել էր արդեն զորք մտցնել Քարթլի, իր մտադրությունները իրագործելու համար ոչնչի առաջ կանդ չէր առնում և համառում էր։ Թուրքական կառավարությունը չէր ուզում ճանաչել 1723 թ. ուսւագարսկական պայմանագիրը այն պատրվակով, որ իբր թե Թահմազը օրինական շահ չէ։ Թուրքիան շտապեց պաշտոնապես հայտարարել, որ նա Թահմազին չի ճանաչում որպես իրանի շահի ժառանգորդ<sup>19</sup>։

18 ԹԱՐԱ, ֆ. ԹՀԹ, գ. 5, մ. 2, թ. 321—322:

19 ԹԱՐԱ, ֆ. ԹՀԹ, գ. 6, մ. 1, թ. 23—24:

Այս ամենը սրում էր ոռու-թուրքական հարաբերությունները և Ծուսաստանի առջև մեծ դժվարություններ հարուցում: Սակայն ոռուական դեսպանին, այնուամենայնիվ, հաջողվեց վերացնել Թուրքիայի հետ ընդհարվելու վտանգը: Ինչպես ստորև կտեսնենք, այդ նրան հաջողվեց ի հաշիվ անդրկովկասյան ժողովուրդների շահերի՝ Վրաստանն ու Արևելյան Հայաստանը Թուրքիային զիջելու պայմանով:

1724 թ. հունիսի 12-ին բազմաթիվ նիստերի արդյունքը եղավ այն, որ ստորագրվեց պայմանագիր, որի համաձայն Թուրքիան ճանաշում էր Մերձկասպյան մարզերը Ծուսաստանին միացնելու փաստը, մի բան, որ վավերացված էր ոռուարսկական 1723 թ. պայմանագրով: Իր հերթին Ծուսաստանն էլ ճանաշեց Թուրքիայի իրավունքները նվաճված երկրների նկատմամբ:

Կատարվեց տերիտորիաների բաժանում երկու պետությունների միջև: Պայմանագրի համաձայն, Թուրքիան ստացավ Հյուսիս-արևմտյան Պարսկաստանը և արևելյան Անդրկովկասը: Արաքս և Կուր գետերի միախառնման տեղը գարձավ Ծուսաստանի, Թուրքիայի և իրանի սահմանաբաժան կետը: Այդտեղից ուղիղ գծով մինչև Քիրման անցնում էր թուրքիրանական սահմանը: Շամախին ճանաշվեց որպես թուրքական վասալ Դառնադրեկի տիրապետության կենտրոն: Ծուսաստանին հաջողվեց պայման դնել, որ Թուրքիան զբարք չմտցնի Շամախի և այնտեղ ամրություններ չկառուցի:

Թուրքիան պարտավորվում էր Թահմաղին ճանաշել որպես իրանի օրինական շահ այն դեպքում, եթե վերջինս ճանաշի Թուրքիայի իրավունքները նվաճված երկրների նկատմամբ:

Այս հարցում Պետրոս 1-ինը խոստացավ օգնել Թուրքիային։ Նա միաժամանակ երաշխիք տվեց շահ Թահմաղին՝ օգնելու նրան աֆղանների դեմ մզվող պայքարում, մի բան, որ ելնում էր 1723 թ. ռուս-պարսկական պայմանագրից։ Թահմաղ շահի կողմից ռուս-թուրքական 1724 թ. պայմանագրիը շընդունելու դեպքում, Ռուսաստանը և Թուրքիան պարտավորվում էին համատեղ ելնել իրանի դեմ և գահին այլ օրինական շահ բաղմեցնել։<sup>20</sup>

Ռուս-թուրքական բանակցություններին ակտիվ մասնակցություն ուներ ֆրանսիական դեսպան դե-Բոնակը։ Ակնարկվեց, որ նպատակ ունենալով պաշտպանելու Թուրքիային, ֆրանսիական դեսպանը, սակայն, դեմ էր, որպեսզի ռուս-թուրքական դիվանագիտական հակամարտությունը հասնի նրանց միջև պատերազմական գործողությունների։ Ֆրանսիական դեսպանը մշտապես ճնշում էր զործադրում նեպլյուսի վրա։ 1724 թ. պայմանագրիրը ձեռնտու էր ֆրանսիայի համար, որովհետեւ, շընդհարկվելով Ռուսաստանի հետ, Թուրքիան հնարավորություն էր ստանում մշտապես վտանգ ներկայացնել ֆրանսիայի թշնամու՝ Հաբսբուրգների կայսրության համար։ Ահա թե ինչու համոզիլ է ակադեմիկոս Աշ. Հովհաննիսյանի այն կարծիքը, թե 1724 թ. ռուս-թուրքական պայմանագրիրը ֆրանսիական դիվանագիտության հաղթանակն էր։

Թուրքիայի հետ կնքված պայմանագրիրը հետեանք էր այն բանի, որ Ռուսաստանը, շցանկանալով պատերազմ սկսել Թուրքիայի դեմ, Հարկադրված դիմեց զիջումների Հայաստանի և Վրաստանի հարցում։ Ռուսաստանին չհաջողվեց դիվանա-

20 ՊԾՅՐԻ, տ. VII, № 4531, սր. 503.

գիտական ճանապարհով կանխել թուրքական ազրեսիան դեպի այդ երկրները:

Թուրքիայի դեմ պայքարելիս և նրա հետ հարաբերությունները կարգավորելիս Ծուսաստանին իրական օգնություն ցուց տվեցին միայն Անդրկովկասի ժողովուրդները, որոնք արեելյան Անդրկովկասում, թուրքերի ներխուժման պահից, անձնուրաց պայքար էին ծավալել զավթիչների դեմ և լուրջ հարվածներ հասցրել նրանց:

Այս հանգամանքը առանձնահատուկ աղղեցություն ունեցավ թուրքիայի վրա և հարկադրեց նրան ավելի հանդուրժող լինել ուստական դեսպանի հետ ունեցած իր բանակցություններում, քանի որ թուրքական կառավարությունը զգում էր իր խախուտ դրությունը Անդրկովկասում:

Այսպիսով, ստեղծված իրազրության հետևանքով Պետրոս 1-ինի և անդրկովկասան ժողովուրդների համատեղ պայքարի ծրագիրը շիրագործվեց: Արեելյան Անդրկովկասը թուրք ազրեսորները զավթեցին և միայն Մերձկասպյան մարզերը, որոնք գրավվեցին ոստական զորքերի կողմից, շընկան թուրքերի տիրապետության տակ: Զնայած կնքված պայմաններին, թուրքիան պատրվակ ունենալով այն, որ շահ Թահմազը շի ճանաշում պայմանադիրը՝ շարունակեց իր ազրեսիան դեպի Պարսկաստան: Թուրքիան նպատակ ուներ ողջ Պարսկաստանը վերածել Օսմանյան կայսրության ծայրագալառի և ի վերջո Ծուսաստանից խլիլ Կասպիականի առափնյա շրջանները<sup>21</sup>: Ծուսաստանն, իր հերթին, նույնպես չէր հրաժարվում բարենպաստ պայմանների առկայության դեպքում չեղյալ

21 ՌԱՔԱ, ֆ. ՌՀՊ, գ. 4, թ. 386:

Հայտարարել 1724 թ. պայմանագիրը և իր զորքերը շարժել դեպի Հայաստան ու Վրաստան:

Այս մտադրությունից ելնելով էր, որ Ռուսաստանը թե-պետ բացահայտորեն չէր միջամտում Անդրկովկասի ժողովուրդների հակաթուրքական պայքարին, բայց այլևայլ մի-ջոցներով կազ էր պահպանում պայքարող ուժերի հետ, հու-սադրում նրանց մոտ ժամանակներում օգնության գալու պատրաստակամությամբ և հորդորում շարունակել պայ-քարը:

Առաջացած ուայմաններից ելնելով՝ ռուսական դիվա-նագիտությունը մեծ ջանքեր էր գործադրում համոզելու շահ Թահմաղին, որպեսզի նա ճանաշի ինչպես 1724 թ. ռուս-թուրքական, այնպես էլ 1723 թ. ռուս-պարսկական պայմա-նագրերը, մի բան, որ կարող էր թուրքական առաջխաղացում-ների դեմ օրինական արգելք ծառայել: Բայց էության, այդ խնդրի իրականացմանն էին հետամուտ լինելու ոչ միայն Սի-մեոն Ալբամովը, որ 1723 թ. ի վեր դեգերում էր մշտական նստավայր չունեցող շահ Թահմաղի արքունիքի հետ, այլև 1726 թ. Պարսկաստան ուղարկված գեներալ Վ. Դոլգորուկովը և վրաց գահազուրկ թագավոր Վախթանգ Ե-րդը: Վերջինիս մերձավոր պալատականներից էր Պ. Նաղարովը, հայաղի իշխանը, որը նույնպես գործուն մասնակցություն է ունենում շահ Թահմաղի հետ վարվող բանակցություններին: Սակայն ինչպես վկայում են աղբյուրները, ռուսական դիվանագիտու-թյան՝ այդ ուղղությամբ գործադրած ջանքերը ցանկալի արդ-յունքներ չափին. ոչ Ս. Ավրամովին, ոչ էլ Վախթանգին և իշ-խան Վ. Դոլգորուկովին չհաջողվեց ստանալ շահ Թահմաղի համաձայնությունը:

XVIII դ. 20-ական թվականների մանավանդ երկրորդ կեսին Մերձավոր Արևելքի նկատմամբ ոռուսական պետության քաղաքականության բացահայտման և ճիշտ գնահատման հարցի վրա լուս է սփռում 1726 թ. մարտի 28-ին գերազույն գաղտնի խորհրդի «պարսկական գործերի» մասին ընդունած որոշումը: Որոշման հեղինակները գտնում էին, որ Ռուսաստանի կողմից զրավրած պարսկական շրջանները պահպան ոչ միայն խիստ դժվար է, այլև գրեթե անհնարին մեծ ծախսերի, ծանր կլիմայական պայմանների<sup>22</sup>, զորքի մշտական համալրումների պահանջի և այլ պատճառներով: Գերազույն գաղտնի խորհրդությը նպատակահարմար էր գտնում կամաց-կամաց զուրս գալ պարսկական այդ վայրերից, բայց այնպես, որ թուրքերը այդ վայրերում շնչիմնավորվեն:

Գերազույն գաղտնի խորհրդությը որոշում է.

1. Շուտափույթ կարգով շահ Թահմազին հակել Ռուսաստանի կողմը.

2. Այդ նպատակով վրաց թագավոր Վախթանգին ուղարկել Գիլան.

3. Շահ Թահմազին տեղյակ պահելու համար, որպես ի գիտություն Վախթանգին հայտնել, որ նորին կայսերական մեծությունը հաստատակես մտադիր է հանաշելու Թահմազին իբրև պարսկական միապետ և փրկելու քրիստոնյա ժողովուրդներին, որի համար նորին մեծությունը այդ ուղղությամբ

22 1727 թ. Հնանվարի մեկից մինչև Հուկիսի մեկը Գիլանում հիմնադրություններից մահացել էին 1559 զինվոր, խակ Կուր գետի շրջակայրում զանվոր ոռուսական երեք զնդից 1726 թ. Հոկտեմբերի մեկից մինչև 1727 թ. սեպտեմբերի մեկը մահացել էին 1804 մարտ (ՌԱ.ՔԱ., ֆ. ՌՀՊ, գ. 8, թ. 35<sub>թ</sub>):

իրոք նախապատրաստություններ է կատարում և անհրաժեշտ  
միջոցներ ձեռնարկում:

Որոշման 5-րդ կետով՝ Վախթանգ 6-րդին հանձնարար-  
վում էր բացատրել շահին, որ թուրքերի հետ 1724 թ. պայ-  
մանագիր կնքելու նպատակն էր թուրքերին ետ պահել հետա-  
զա առաջխաղացումից և ժամանակ տալ շահին էշրեֆին գա-  
հընկեց անելու և աստիճանաբար իր ողջ թագավորությունը  
վերստին ձեռք բերելու համար:

Թուրքական հետազա առաջխաղացումները կանխելու  
հակաթուրքական ճակատի ստեղծման համար Վախթանգ  
6-րդին հանձնարարվում էր նույնիսկ շահին զիջել ոչ միայն  
Մաղանդարանը և Աստրաբագը, այլև Գիլանը, առժամանակ  
այնտեղից (Գիլանից) ոռւսական զորքերը դուրս չբերելու  
պայմանով։ Հիշյալ որոշման համաձայն Վախթանգը պետք է  
կապ հաստատեր նաև հայկական սղնախների հետ և նրանց  
ներշնչեր ոռւսական զորքերի մոտալուս օդնության հույսով։

Սակայն հենց որ թուրքական կողմը 1724 թ. պայմանա-  
գիրը իրականացնելու ձգտում էր ցուցաբերում, ոռւսական  
կառավարությունը հրաժարվում էր իր վերոհիշյալ մտադրու-  
թյունից։ Այսպես, օրինակ, եթե թուրքերը էշրեֆից և հայկա-  
կան սղնախներից կրած պարտությունից հետո պատրաստա-  
կամություն են հայտնում 1724 թ. պայմանագրի համաձայն  
սահմանադատում անցկացնել, ոռւսական հրամանատարու-  
թյունը արգելում է Վախթանգ 6-րդին կապի մեջ մտնելու  
սղնախների հետ, նշելով միաժամանակ, որ անօգուտ են նաև  
շահի հետ վարվող բանակցությունները<sup>23</sup>.

23 ՌԱՔԱ, ֆ. ԲՀՊ, գ. 9, թ. 42ա—42բ։

Եթե 1726 թ. առաջին կեսին դեռևս կարելի էր սպասել, որ թուրքերն իրենց առաջընթացով կարող են ներթափանցել նաև ոռւսների օկուպացրած Կասպիականի ափերը և դրանով իսկ բորբոքել թուրք-ոռւսական պատերազմ, ապա նույն թվականի վերջերին և 1727 թ. սկզբներին դրությունը բոլորովին այլ էր, թուրքերը ծանր պարտություններ էին կրել էշրեֆից, որի հետևանքով փոխվել էր նրանց վարքագիծը սահմանադատման խնդրում։ Դրան համապատասխան փոխվել էր նաև հայերի և վրացիների հետ անմիջական կոնտակտի մեջ մըտնելու ոռւսական կառավարության մտադրությունը։

1726—1727 թթ. ընթացքում բարենպաստ պայմաններ էին ստեղծվել թուրքական զորքերին Պարսկաստանի և Անդրբկովկասի այն շրջաններից որուս քշելու համար, որոնք նրանք գրավել էին 1723—1726 թթ.: Այդ տարիներին վերաբերող բազմաթիվ փաստաթղթեր վկայում են թուրքական տժերի նվազման, նրանց կրած պարտությունների մասին։ Հենց այս կոնկրետ պայմանները նկատի ունենալով, գեներալ-ֆելդմարշալ Վ. Դոլգորուկովը առաջարկում է ոռւսական կառավարությանը ընդառաջել հայերի և անդրբկովկասյան մյուս ժողովուրդների բուռն ցանկությանը և ոռւսական զորքերը միավորելով տեղական ժողովուրդների դինված ուժերի հետ՝ շարժվել թուրքերի դեմ։ «Ինչպես քրիստոնյաները, այնպես էլ մահմեդականները, բոլորը պատրաստ են ընդդեմ նրանց (թուրքերի—Վ. Մ.), միայն խնդրում են, որ մեզանից իրենց հույս լինի»<sup>24</sup>, — գրում էր հիշյալ գեներալ Վ. Դոլգորուկովը իր 1727 թ. փետրվարի 22-ի զեկուցագրում։

24 ՀԱԿՊԱ, ֆ. 9, գ. 85, թ. 410—411։

Սղնախներում պայքարող հայերը տեղյակ էին, որ ոռւսական կառավարությունը մտադիր է օգնական զորք ուղարկել, դրա համար էլ 1726—1727 թթ. նրանք ոռւսական հրամանատարությանը հայտնում էին այն պատրաստությունների մասին, որ սղնախցիները տեսնում էին ոռւսական զորքին դիմավորելու համար։ Չնայած ծանր պայմաններին՝ սղնախներում փոխադրական միջոցների, սննդամթերքի, հացի և անասնակերի զգալի պաշար էր կուտակված ոռւսական զորքի համար։

1726 թ. մարտի 17-ին սղնախներից ոռւսական հրամանատարության հղած նամակում Ավանը, Սարգիսը և մյուս յուղբաշխները նշելով, թե ինչպիսի անհամբերությամբ են բոլորը սպասում ոռւսական զորքի գալստյանը, միաժամանակ շեշտում էին, որ կառավարությունը պարենի մասին կարող է անհոգ լինել, որքան ի վիճակի է, թող այնքան շատ զորք ուղարկի<sup>25</sup>։ Սակայն, ինչպես նշվեց, փոխվել էր իրադրությունը, և ոռւսական կառավարությունը նորից խուսափում էր Թուրքիայի հետ պինված պայքարի մեջ մտնելուց։ Գեներալ Վ. Դոլգորուկովի 1727 թ. հունվարի 14-ին առաջ քաշած այն հարցադրմանը, թե ժամանակը հարմար է թուրքերին Պարսկաստանից և Անդրկովկասից դուրս քշելու համար, կառավարությունը տվել է մի ընդարձակ պատասխան։ Հանգամանորեն վերլուծելով Եվրոպայում 1726—1727 թթ. գոյություն ունեցող միջազգային դրությունը, ոռւսական կառավարությունը այդ պատասխանում նշում էր, թե ինչու առաջմ հնա-

25 ՌԱՔԱ, ֆ. ԲՀՊ, գ. 7, թթ. 212, 292—293։

բավոր չէ թուրքերի դեմ ռազմական գործողություններ սկըսել, թեկուզ այդ բանի համար իրավիճակը Պարսկաստանում և Անդրկովկասում նպաստավոր է: Գերագույն գաղտնի խորհուրդը ընդգծում էր հետեւյալ կարևոր հանգամանքները, որոնք թելադրում էին ավելի զգույշ և շրջահայաց քաղաքականություն վարելու թուրքիայի նկատմամբ:

Գերագույն գաղտնի խորհուրդը նշում էր, որ Պարսկաստանում թուրքական ուժերի ներկայիս նվազման դեպքում խիստ հարմար կլիներ նրանց դեմ հայերի հետ միավորվելով գործել, եթե իրադրությունը և գործերի արդի վիճակը Եվրոպայում թուլատրեին Օսմանյան կայսրության դեմ պատերազմ սկսել: Սակայն Եվրոպայում տիրող իրադրությունը թույլ չէր տալիս ոռւսական կառավարությանը դիմելու այդ համարձակ քայլին:

1726 թ. փետրվարին Ռուսաստանը Ավստրիայի հետ կընքել էր փոխօգնության գաշինք: Սակայն Ավստրիան դաշինքով նախատեսված օգնությունը պիտի ցուց տար միայն այն դեպքում, եթե Ռուսաստանը հարձակման կենթարկվեր որևէ այլ պետության կողմից:

Հետեւաբար, եթե ռուսները միավորվելով հայերի հետ թուրքերի դեմ հարձակման անցնեին և ծագեր ռուս-թուրքական պատերազմ, այդ դեպքում Ավստրիան չէր օգնի Ռուսաստանին: Սակայն այդ չէր միակ խոշոնդուղ պատճառը: Դիմավորը Անդրկովկայի նախաձեռնությամբ 1725 թ. կազմված այսպես կոչված հանովերյան դաշինքի առկայությունն էր: Մի դաշինք, որ կնքվել էր Ֆրանսիայի, Անգլիայի միջև ուղղված Ավստրիայի, ինչպես և Ռուսաստանի դեմ: Եռանդուն

գործունեություն էր ծավալել Անգլիան նաև Շվեդիայում, որի հետ թեև Ռուսաստանը պաշտպանական դաշն ուներ կնքած, բայց և այնպես լրիվ ապահով լինել չէր կարող նաև Շվեդիայի կողմից: Այնուհետև, Ֆիշալ պատասխանում նշվում էր, որ անգլիական ռազմանավերը դանիականի հետ միասին Բալթիական ծովում՝ Ռևել նավահանգստից ոչ հեռու, մասներ էին կատարում:

Եվրոպայում դրությունը սրված էր այն աստիճան, որ բացառված չէր պատերազմը. մի կողմից Անգլիայի և Ֆրանսիայի, մյուս կողմից՝ Իսպանիայի և Ավստրիայի միջև: Իսկ վերջինիս, համաձայն փոխօգնության պայմանագրի, Ռուսաստանը պետք է օժանդակեր զինված ուժով: Ահա այս իրադրությունը Ռուսաստանին ստիպում էր խուսափել ավելի ակտիվ գործողություններից Պարսկաստանում և Անդրկովկասում:

Ճիշտ է, Պետրոս 1-ինը իր 1722 թ. հուշագրով խոստացել էր Կասպիականի ափերին ամրանալուց հետո, անգամ Թուրքիայի դեմ պատերազմ սկսելու գնուվ, օգնության գալ հայերին և վրացիներին, սակայն վերը շարադրված պայմանները նկատի ունենալով ռուսական կառավարությունը չէր դիմում այդ քայլին: Օգնական գորք ուղարկելու վերաբերյալ հայերի և վրացիների բազում դիմումներին միշտ միենույն պատասխանն էր տրվում, թե պետք է շարունակել պայքարը թուրքերի դեմ, միաժամանակ սպասելով ավելի բարենպաստ պայմանների, եթե իրոք Ռուսաստանը հնարավոր կդանի այդշափ բաղձական ստրկությունից ձերբազատվել տենչացող, թուրք նվաճողների

դեմ անհավասար պայքար մղող անդրկովկասյան ժողովուրդ-ներին:

Բայց օգնական զորքը ոչ միայն շուղարկվեց, այլև ռուսական կառավարությունը Կասպիականի ափերում գտնվող ռուսական զորքի գլխավոր հրամանատար Վ. Դոլգորուկովին հանձնարարում էր Հնարավորության դեպքում սղնախների զորքի մի մասն ընդունել ծառայության և օգտագործել տեղում եղած կարիքներին համապատասխան<sup>26</sup>: Սակայն այս հանձնարարականի դեմ իրավացիորեն առարկեց գեներալ-ֆելդմարշալ Դոլգորուկովը, գտնելով, որ այդ ոչ Հնարավոր է և ոչ էլ նպատակահարմար այն պատճառով, որ Հայերի դեմ կանգնած է մի այնպիսի վտանգավոր և ուժեղ թշնամի, որպիսին թուրքական զորքն է՝ Սարի Մուստաֆա փաշայի հրամանատարությամբ<sup>27</sup>:

Հայերին հուսախար շանելու և վերջնականապես իրենցից շվանելու նպատակով Վ. Դոլգորուկովը առաջարկում էր շարունակել նրանց հուսադրել, նշել թուրքերի օրավոր ուժասպառ լինելը, ինչպես և Կուր գետի մոտ ամրոց կառուցելու հանգամանքը, ամրոց, որի շնորհիվ պիտի հեշտանար Հայերի հետ հաղորդակցությունը: Դոլգորուկովը գիտակցում էր, որ Հայերից պետք է թաքուն պահել թուրքիայի հետ կնքված պայմանագրի պատճառով նրանց օգնություն ցուց տալու անկարելիությունը և առաջարկում էր այդ մասին սղնախներին ոչինչ շհայտնել:

26 ՌԱՔԱ, ֆ. ՌՀՊ, դ. 6, թ. 19բ:

27 ՌԱՔԱ, ֆ. ՌՀՊ, դ. 8, թ. 30ա—30բ:

XVIII դ. 20-ական թվականների վերջին արդեն ոռւսական կառավարող շրջանները, ելնելով Ռուսաստանի ներքին և արտաքին շահերից, պատրաստ էին Պարսկաստանին վերադարձնելու իրենց կողմից օկուպացրած շրջանները, միայն նախապես համոզված լինելով, որ այդ շրջանները չեն դառնարության մի մասը:

Վերը շարադրածից պարզ է դառնում, որ այդ ժամանակաշրջանում Ռուսաստանը նպատակահարմար չէր գտնում հայ-վրացական ազատագրական ուժերին անհրաժեշտ ուղղմական օդնություն ցույց տալ, սակայն չէր էլ ուզում այդ մասին բացեիբաց հայտնել շարժման ղեկավարներին, հուսալով, թե գուցե միջազգային դրության մեջ բարենպաստ փոփոխությունները Ռուսաստանին ավելի եռանդուն գործողությունների հնարավորություն կընձեռեն: Ռուսական կառավարող շրջանները շարունակում էին հուսադրումների և խոստումների իրենց քաղաքականությունը հայ-վրացական ազատագրական շարժման նկատմամբ, նպատակ ունենալով առաջին հերթին տեղի ուժերը օգտագործելու թուրքերի դեմ, որպեսզի վերջիններս ոչ մի պայմանով հնարավորություն շունենան ամրանալու կասպիականի ափերին և այնտեղից վտանգելու ռուսական սահմանները և ռուսական արևելյան տուետուրը: Այս ամենի հետևանքով Անդրկովկասի ժողովուրդների ազատագրական պայքարը չհասավ իր նպատակին: Եվ ուժասպառ Պարսկաստանի փոխարեն առժամանակ Արեկելյան Անդրկովկասը տիրելու եկավ ավելի գիշատիչ ու հզոր թուրքիան:

Անդրկովկասի բախտակից ժողովուրդները ևս մեկ հարյուրամյակ մնացին թուրք-պարսկական բռնապետական լծի

տակ, մինչև որ հզորացած Ռուսաստանը կարողացավ տեղի ժողովուրդների աջակցությամբ տիրել Անդրկովկասին։ Ռուսական տիրապետության հաստատումը Անդրկովկասում անշուշտ առաջադիմական քայլ էր, այն տեղի ժողովուրդներին բերեց աղքային ինքնապահպանման ու զարգացման համեմատաբար նպաստավոր պայմաններ։

## Յ Ա Ն Կ

ԱՊՐԵՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

### Ա. Զապագրված աղբյուրներ

#### Արխիվային ֆոնդեր

Центральный государственный архив древних актов.

Фонд Сношения России с Арменией, дела 1700—1720 гг.

Фонд Сношения России с Грузией, дела 1700—1711 гг.

Фонд Кабинет Петра Первого I и II отд. книги 20, 54, 59, 63, 67, 98.

Фонд Сношения России с Персией, дела 1700—1720 гг.

Архив Внешней политики России.

Фонд Сношения России с Арменией, дела 1720—1740 гг.

Фонд Сношения России с Грузией, дела 1720—1735 гг.

Фонд Сношения России с Турцией, дела 1720—1735 гг.

Фонд Сношения России с Персией, дела 1720—1735 гг.

Центральный государственный Военно-исторический архив.

Фонд 2, опись 1/3, Сб. 97, дело 1.

### Բ. Հրատարակված աղբյուրներ

#### ա) Հայերեն

Արքանամ Երեանցի, Պատմութիւն պատերազմացն 1721—1736 թթ., Երևան,  
1938:

Արքանամ կարողիկոս Կրետացի, Պատմութիւն անցիցն իւրոց և Նատիր շահ-  
հին պարսից, Վաղարշապատ, 1870:

Թիվան Հայոց պատմութեան, գիրք Ը, Ժ, ԺԱ, Թիֆլիս, 1908—1912 թթ.:  
Եսայի կարողիկոս Հասան Զալալեանց, Պատմութիւն համառօտ Աղուանից  
երկրի, Երուսաղեմ, 1888:

Զախարիա Ազուկեցի, Զաքարիա Ազուկեցու Օրագրությունը, Երևան, 1938:  
Ժամանակագրականի, Հրատ. Գ. Մրվանձայանի, «Մանանայ...» Կ. Պոլիս,  
1876:

Ժամանակագրութիւն Պետրոս դի Սարգիս Գիլանենցի, «Կոռունկ Հայոց աշ-  
խարհի» ամսագիր, Թիֆլիս, 1863:

Խաչատուր աբեղա Ջուղայեցի, Պատմութիւն պարսից, Վաղարշապատ,  
1905:

Հակոբ Ջուղայեցի, Մի զրություն ուսւա արքունիքին, «Արարատ» ամսագիր,  
1915:

Հայոց նոր վկաներ, Հրատ. Հ. Մանանդյանի և Հ. Աճառյանի, Վաղարշա-  
պատ, 1903:

Նյուրեր Հայ ժողովրդի պատմության, գիրք Երրորդ, Մանր ժամանակա-  
գրություններ XIII—XVIII դգ., կազմեց Վ. Հակորյան, Երևան, 1951:  
Նյուրեր Հայ մելիքության մասին, պրակ Ա., «Դիլակի մելիքությունը»,  
Վաղարշապատ, 1913, պրակ Բ., «Դօփեանք և Մելիք-Շահնաղարեանց»,  
Էջմիածին, 1914:

Նյուրեր Դավիթ-Բեկի պատմության վերաբերյալ, «Արարատ» ամսագիր,  
1905:

Նոր փաստաթղթեր Դավիթ-Բեկի մասին, Հրատ. Ա. Արահամյանի և Գ.  
Գարբիելյանի, «Սովետական զրականություն» ամսագիր, Երևան, 1942:  
Նախումեան Ս., Ընտիր պատմութիւն Դավիթ-Բէղին և պատերազմացն Հա-  
յոց Խափանու որք Եղեն ընդդեմ Թիւրքաց ի մերում ժամանակի, այն է  
յամի տեառն 1722 և Հայոց 1171..., Վաղարշապատ, 1871:

Ա. Սաֆրաստյան, Թուրքական ազրյուրները Հայաստանի և Հայերի, Անդըր-  
կովկասի մյուս ժողովուրդների մասին, Երևան, 1961:

Վալերագրեր Հայ-պարսկական Հարաբերությունների մասին, Հրատ. Հ.  
Աճառյանի, Երևան, 1927:

Վիմական տարեգիր, կազմեց Կ. Կոստանդյան, Ս. Պետերբուրգ, 1913:

Վրաց աղբյուրները Հայաստանի և Հայերի մասին, հրատ. լ. Մելիքսեր-  
Բեկի, հ. 2, Երևան, 1936:

Յուզակ Հայերէն ձեռագրաց Վասպորականի, կաղմեց Ե. Լալայան, պրակ  
1, Թիֆլիս, 1915:

Յուզակ ժողովածուաց Դադեան Խաչիկ վարդապետի, մասն Բ (1878—1898)  
կաղմեց Յ. Թոփճեան, Վաղարշապատ, 1900:

բ) ուսմերեն

**Адам Олеарий.** Описание путешествия в Московию и через Московию в Персию и обратно. СПб, 1906.

**Арутюнян П. Т., Тер-Авакимова С. А., Акопян В. А.** Армяно-русские отношения в первой трети XVIII в., Сборник документов под редакцией академика А. Г. Иоаннисяна, т. II, ч. I—II, Ереван, 1965, 1967.

**Бель Д.** Белевы путешествия через Россию в разные азиатские земли; а именно: в Испагань, в Пекин, в Дербент и Константинополь, Перевод с французского М. Попова, ч. I—III, СПб., 1776.

Переписка на иностранных языках грузинских царей с российскими государями от 1639 по 1770 г., СПб, 1861.

**Петрос ди Саркис Гиланец.** Дневник осады Исфагани афганцами, веденный Петросом ди Саргис Гиланец в 1722—1723 гг. СПб., 1870.

Полное собрание законов Российской империи с 1649 г. Т. I—X, СПб., 1830.

Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа, ч. I, II, III, M., 1833—1838.

Сборник материалов для описания местностей и племен Кавказа, выпуск XXIX, 1901.

**Соймонов Ф. И.** Описание Каспийского моря и чиненных на оном российских завоеваний, СПб, 1763.

«Сочинения и переводы к пользе и увеселению служащие», СПб., 1760.

Стрейс Я. Я. Три путешествия достопамятных и исполненных многих превратностей путешествия по Италии, Греции, Лифляндии, Московии, Татарии, Мидии, Персии... различным другим странам, М., 1935.

Хачатрян А. Н. Армянское войско в XVIII веке; Из истории армяно-русского военного содружества (исследования и документы).

Цагарели А. Сношения России с Кавказом в XVI—XVIII столетиях, СПб, 1891.

Эзов Г. А. Сношения Петра Великого с армянским народом, СПб, 1898.

#### գ) Վրացերեն

Յան Շո, Ճռիկա Տամբովսա Տայարտզելուսա, տօնլուսո, 1941.

Յան Շո, Աթոզրեծա յարտլուսա, յարտլուս Աթոզրեծա, տօնլուսո, 1854.

Ինգուջ Սանիս, Աթոզրեծա Թյուտա, յարտլուս Աթոզրեծա, Ֆոցնո II, տօնլուսո, 1854.

#### դ) Գերմաներեն

Hanway I. Zuverlässige Beschreibung seiner Reisen von London, durch Russland und Persien und wieder Zurück durch Russland, Deutschland und Holland. (Թարգմանություն անգլերենից) Hamburg und Leipzig, 1754.

Hanway I. Beschreibung der neuesten Reichsveränderung in Persien, II Teil Hamburg und Leipzig, 1754 (Թարգմանություն անգլերենից),

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

##### ա) Հայերեն

Արքանամյան Ա., Մի էջ Անդրկովկասի ժողովուրդների և Հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից, Երևան, 1953:

Արքահամյան Ա., Նոր վավերագրեր Պետրոս Մեծի ժամանակաշրջանի հայուսական բարեկամական հարաբերությունների, «Էջմիածին» ամսագիր, փետրվար-մարտ, 1946:

Արքահամյան Ա., Նոր վավերագրեր Դավիթ-Բեկի ու նրա գլխավորած ազատագրական շարժման մասին, Հայկ. ՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» հասարակական գիտությունների, 1951, № 8:

Ալիշան Դ., Մինիք կամ Միսական, Վենետիկ, 1893:

Ալիշան Դ., Այրարատ, Վենետիկ, 1880:

Այվազովսկի Գ. Վ., Պատմութիւն Օսմանեան պետութեան, Վենետիկ, 1841: Բարխուդարյան Մ., Արցախ, Բաղու, 1895:

Բարխուդարյան Մ., Պատմութիւն Աղուանից, Հ. Բ, Թիֆլիս, 1907:

Գեղամյան Ե., Հայերի աղատազրական շարժումները XVIII—XIX դ., Բագու, 1915:

Լալայան Ե., Զանդեղուրի գավառ, «Աղգագրական հանդէս», 1904, № 12:

Լալայան Ե., Միսիան, «Աղգագրական հանդէս», 1898, № 1:

Լալայան Ե., Գանձակի գավառ, «Աղգագրական հանդէս» 1898, № 2:

Լալայան Ե., Վարանդա, Թիֆլիս, 1898:

Լեռ, Հայեկական տպագրություն, Թիֆլիս, 1902:

Լեռ, Հայոց պատմություն, Հ. Յ, Երևան, 1946:

Կենազյան Հ. Ա., Աղատազրական պայքարը Դավիթ-Բեկի գլխավորությամբ, Երևան, 1963:

Հարուրյունյան Հ. Հ., Խորայի Օրի, Երևան, 1945:

Հովհաննիսյան Ա. Գ., Դրվագներ հայ աղատազրական մտքի պատմության, Հ. Հ, Երևան, 1959:

Հուայան Մ., Դավիթ-Բեկ, Երևան, 1943:

Մանուկյան Ռ., Հայ-ուստական հարաբերությունները Պետրոս Մեծի ժամանակ, Երևան, 1947 (ձեռագիր):

Միրզոյան Ա., Հայ աղատազրական շարժումները Սյունիքում 1722—1730 թթ., Երևան, 1950:

Միրզոյան Ա., Մինիթար-բեկի կողմից ոստական կառավարությանն ուղղված ուղերձի շուրջը, Հայկ. ՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1952, № 8:

Ներսիսյան Մ. Գ., Դավիթ-Բեկի շարժման արձագանքները Վասպուրակա-

նում և հարկան դավառներում, ՍՍՌ ԳԱ Հայկական ֆիլիալի «Տեղեկագիր»  
1941, № 5-6, 10-11:

Ասկանյան Վ. Կ., Հայութական տնտեսական հարաբերությունները XVIII դարում (գիտերացիալի թեղիները):

Ասկանյան Վ. Կ., Հայ-սուսական հարաբերությունները XVII դարում, Հայի ՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», 1948, № 1:

Ասկանյան Վ. Կ., ի. Օրու կողմից Պետրոս 1-ինին ներկայացված նորահայտքարտեզը, ԳԱ «Պատմաբանասիրական հանդես», 1961, Խ 3-4:

Ուսկանյան Վ. Կ., Մարտիրոսյան Վ. Մ., Նոր վակերագիր 1720-ական թվականների հայ աղատագրական շարժման վերաբերյալ, ԳԱ «Թատմա-բունասիրական հանդես», 1962, № 4:

Ասկանյան Վ. Կ., Դիլոյան Վ. Ա., Բուտաստանի քաղաքականությունը Անգրակովկասում XVIII դարի 20-ական թվականներին (նոր վավերագրեր), ԳԱ «Պատմա-բանասիրական հանդես», 1964, № 2:

Զամշյան, Պատմութիւն Հայոց, հ. Պ, Վենետիկ, 1786:

Պողոսյան Ա., Հայոց պատմություն, Երևան, 1941:

Սմբատյանց Մեսրոպ Եպ., Զաքարիա Նկարչի ձեռագիրը և Գալլիլի-Բեկի մասին Հիշատակարանը, «Բանքեր» Հայաստանի դիտական ինստիտուտի,  
1921—1922 թթ.:

Р) *ннннбпбн*

Арутюнян П. Т. Борьба армянского и азербайджанского народов за присоединение к России в 20-х годах XVIII века, «Ученые записки Института востоковедения АН СССР», т. III, 1951.

Арутюнян П. Т. Освободительное движение армянского народа в первой четверти XVIII века. Ереван, 1954.

Ашрафян К. Падение державы Сефевидов (1502—1722). Сборник «Очерки по новой истории стран Среднего Востока», М., 1951.

Бартольд В. В. Место прикаспийских областей в истории мусульманского мира. Баку, 1925.

Белокуров С. А. Сношения России с Кавказом. Т. I. М., 1889.

Бутков П. Г. Материалы для новой истории Кавказа с 1722 по 1803 г. Ч. I—III. СПб., 1869 г. «Вопросы истории», № 4, 1952.

- Восканян В. К. Ново-торговый устав и договор с армянской компанией в 1667 г. «Известия АН Арм. ССР», № 6, 1947.
- Глинка С. Обозрение истории армянского народа. Ч. II, М., 1833.
- Заозерская Е. И. Мануфактуры при Петре Первом. М.—Л., 1947.
- Зевакин Е. Персидский вопрос в русско-европейских отношениях в XVII веке. «Исторические записки», 1940.
- Записки графа Бассевича «Русский архив», № 8, 1865.
- Иванов М. С. Очерк истории Ирана, М., 1952.
- Иоселиани П. Исторический взгляд на состояние Грузии под властью царей—магометан. Тифлис, 1849.
- История армянского народа (учебник), ч. I, Ереван, 1951.
- Карл Маркс, Фридрих Энгельс. Сочинения, Т. IV, XVI, часть 2.
- Лалаян А. К оценке деятельности Исаиала Ори и Минаса вардапета. «Известия АН Арм. ССР», 1955, № 1.
- Лысцов В. П. Персидский поход Петра Первого. М., 1951.
- Мельгунов П. И. Очерки по истории русской торговли IX—XVII вв., М., 1905.
- Мельгунов П. И. Поход Петра Великого в Персию. «Русский Вестник», 1874.
- Меликсе-бек Л. М. К биографии сподвижников Исаиала Ори—Минаса вардапета, «Известия АН Арм. ССР», № 1.
- Пайчадзе Г. Г. Русско-грузинские отношения в 1725—1735 гг., Тбилиси, 1965.
- Петрушевский И. П. Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI начале XIX вв. Л., 1949.
- Полиевктов М. Экономические и политические разведки Московского государства XVII в. на Кавказе, СПб., 1932.
- Полиевктов М. К истории прикаспийского вопроса, Тифлис, 1934.
- Полиевктов М. Европейские путешественники XIII—XVIII вв. по Кавказу. Тифлис, 1935 г.
- Романовский В. Вахтанг VI—и Петр Великий, «Кавказский вестник» 1905 г. № 2.
- Соловьев С. История Росс. и, т. 18, 19. М., 1878 г.

Соловьев С. Петр Великий на Каспийском море. «Вестник Европы», 1868, март-апрель.

Татиашвили Вл. Грузины в Москве. Тбилиси, 1950 г.

Тер-Аветисян С. В. Город Джуга. Тифлис, 1937 г.

Чулков М. Историческое описание Российской коммерции. М., 1785 г.  
т. II, кн. 2.

**Хаханов А.** Из истории сношений Грузии с Россией в XVIII в., Царь Вахтанг и император Петр Великий. «Журнал Министерства Народного просвещения», май, 1899 г. «Чтения в обществе истории и древностей российских», М., 1868, кн. III.

### 7) Արագերեն

ბერძენიშვილი 6. რუსეთ—საქართველოს ურთიერთობის ისტო-  
რიიდან XVI—XVII საუკუნეთა მოჯვაზე.

ბ ე რ ძ ე ნ ი შ ვ ი ლ ი 5. XVIII საუკუნის საქართველოს ისტორიიდან. „მა-  
სალები საქართველოს და კავკასიის ისტორიისათვის“, ნაკვეთი I, თბი-  
ლისი, 1944.

გა ბაშვილი ვ., ქართული დიპლომატიის ისტორიიდან, მასალები საქართველოს და კავკასიის ისტორიისათვის\*, ნაკვეთი 31, თბილისი, 1954.

დონდუა ვ. ვახტაევ მე-ნ-ის დროინდელ საქართველოს პოლიტიკური ისტორიიდან (1712—1745). (მიმომზილველი”, ტ. III, თბილისი, 1953.

პაიჭაძე გ. რუსეთ-საქართველოს ურთიერთობის ისტორიისათვის, თბილისი, 1960.

სურგულაძე ივ. საქართველოს სახელმწიფოსა და სამართლის ისტო-  
რიისათვის, თბილისი, 1952.  
ჯავახიშვილი ივ. დამიკიდებულობა რუსეთსა და საქართველოს  
შორის მე 18-ე საკუთრივი, თბილისი, 1919.

դ) անզլերին և զերմաներին

Cook John, Voyages and Travels through the Russian Empire, Tartary and Part of the Kingdom of Persia, vol. II, Edinburgh, 1778.

Lang D. M. Georgia and the Fall of the Safavi Dynasty, „Bulletin  
of the School of Oriental and African studies“. University of  
London, vol. XIV, Part 3, 1952.

Shay M. Z. The Ottoman Empire from 1720 to 1734. Urbana, 1944  
Hammer J. Geschichte des Osmanischen Reiches, 2-te verbessert  
Ausgabe, Pesth, 1834—1836.



Բ Ո Վ Ա Ն Գ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Խ Ե

<b>Առաջաբան</b>	5
Գլուխ I Դրույյունը արևելյան Անդրկովկասում XVIII դարի առաջին ժառարդում	9
Գլուխ II Թուա-վրաց-հայկական ռազմա-հաղաքական դաշինքի ստեղծումը 1721—1724 թվականներին	32
Գլուխ III Հայ և վրաց ծողովուրդների համագործակցությունը ազա- տագրական պայքարում	108
Գլուխ IV Արևելյան Անդրկովկասը Թուաստանի արտաքին հաղաքա- կան պլաններում 1722—1730 թթ.	180
<b>Հանկ Աղբյուրների և դրականության</b>	209

ՎԱՀՐԱՄ ՄՈՒՇԵԽ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ  
ՎԱԳՐԱՄ ՄՈՒՇԵԳՈՎԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՅ ԵՎ ՎՐԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ  
ԱԶՍՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐՈՒՄ  
(XVIII դարի 20-ական թվականներ)

Տպագրվում է Հայկ. ՍՍՀ Գ.Ա.  
Պատմության ինստիտուտի  
Գիտական խորմրդի որոշմամբ

Պատ. Խմբագիր՝ Վ. Ա. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ  
Հրատ. Խմբագիր՝ Ս. Ա. ԱՆԱՍՏԱՍՅԱՆ  
Կազմը ՅՈՒ. Ս. ԱՌԱՋԵԼՅԱՆԻ  
Տեխն. Խմբագիր՝ Ս. Կ. ԶԱՔԱՐՅԱՆ  
Սրբագրիչ Ռ. Ս. ՄԱՆՈՒԿՅԱՆ

Վ.Ֆ. 03413

Պատվեր 23

Տպարանակ 2000

---


ԽՀԽ 1262 Հրատ. 3318 Հանձնված է արտադրության  
21/I 1971 թ.: Ստորագրված է տպագրության 5/VII 1971 թ.,  
տպագր. 13,75 մամուլ, նրան. 7,6 մամուլ, պայման. 9,63 մամուլ,  
թուղթ № 1, 70×1081/<sub>32</sub>: Գիճը 95 կուգ.:

---

Հայկական ՍՍՀ Գ.Ա. նրատարակչության տպարան,  
Երևան, Բարեկամության 24:







ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0049817

A i  
11329